Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8388

4939

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՄՏԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԳԻՒՒԹ ՔՒՀԱՆԵԱՑ ՍԱՐԳՍԵԱՆ

ՕՐՁԱՑ ԴԵՂՋ ՆԱՀԱՆԳԻՆ ԱԻԼՔԱԼԱԿԱՑ, ԳԱՂԹԱԿԱՆ Ի ԿԱՐՆՈՑ ՔԱՂԱՔԻ.

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԻԳ.—1874

Ք.Ջ.Գ.Գ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Ընդունդ և փափաք մտաց մարդկան՝ աղ-
դեցութեամբ և ի ձեռն առաջնորդութեան լու-
սաւոր բանականութեան յար և միշտ ճգնի,
տքնէ և բուռն մղմամբ սրտին որոնէ և ի խըն-
դիր է հանդիպել ի գահոյս բաղդի, կէտ նպատա-
կի եդեալ կամ զփառս և զպատիւ իշխանու-
թեան, կամ զհարստութիւն, կամ զյաղթա-
կան հանդիսանալն ի մարտս պատերազմի և
զպանկն գաբնեաց, և կամ զայլ ինչ՝ որ աշ-
խարհի է: Իսկ ինձ նուաստիս յօրէ անտի մը-
տանելոյ իմ ընդ քաղցր միանգամայն և ծանր
լծով սրբազան աստիճանի Քահանայութեան՝
ոչ ինչ առաւել ընտրելի եղև քան զբան սրբա-
զան առաքելոյն Պօղոսի, թէ Յամենայն ժամ
ի հոգևորսն պարապեցարուք· կամ թէ՝ նա-
խանձաւոր լերուք շնորհացն որ լաւքն են:

Ուստի այն ինչ սկսան աշակերտք գիւղա-
կան վարժարանիս իմոյ փոքր ի շատէ յառա-
ջանալ ի հանդիսի Վերականութեան և Ընե-
տարանական բացատրութեան, Տարկեցին ապա
զտկարս գրաւոր աւանդել ինքեանց զհամա-

ռօտ մկնութիւն Հնոյ Կտակարանին առ Նո-
ըբա։ Օրհնեալ իմ յայնպիսի ստիպմունս սիրե-
լի աշակերտաց իմոց, և յուսացեալ յամենա-
սուրբ աղբիւրն իմաստութեան ի Հոգի սուրբ,
ձեռն ի գործ արարի ըստ իմոյ աղքատ մտաց
և կարողութեան յօրինել զգրքոյկս ‘‘Խաղա-
դութիւն մտաց,,’ ի ձեւ հարցման և պատաս-
խանւոյ՝ առ ի խաղաղել և անդորրել զմիտս
նոցա, որ վըդովեալն էին տեսանել զկատա-
րումն բաղձանաց սրտի իւրեանց։

Ուստի և յանձն առնեմ զսա ուսումնա-
տենչ Համբակաց սիրելի Աղգիս՝ առ ի խոկալ
և պարապել յԱստուածայինսն, և ի միտ առ-
նուլ զանճառելի Հրաշս Աստուծոյ և զնա-
խազգեցիկ մարդարէութիւնս սրբոց գուշակաց՝
որ յաղագս վերակենդանութեան մարդկայինս
ազգի ի ձեռն մարմնառիկ տնօրէնութեանց Աս-
տուածորդւոյ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի
Քրիստոսի, որով և խոտորիլ ի չարեաց և ըզ-
հետ երթալ բարեաց, իբրև երախտապէտ և հա-
ւատարիմ ժառանգք Աստուծոյ և ժառանգա-
կից Քրիստոսի, ըստ առաքելական պատգա-
մին, և այն շատ է ինձ տրիտուր փոխարէն այս
իմ նախընծայ վաստակոցս։

Վասն որոյ աղաչեմ զԱստուածաբան ըն-
թերցողսդ և վայելողսդ յայսմ փոքրատեսիլ և

չնչին նուիրաց ընծայի՝ ի սուրբ Նկեղեցի Նո-
րավարժ մանկանց սիօնի, վստահութեանս մե-
ծում՝ ներող լինել, և զսխալանս մեր, որ աստ
ի բառս և ի տեսութիւնս, հարազատ սիրով
ուղղել. քանզի բնաւորեալ է սէր՝ զբազմու-
թիւն եղբօր յանցանաց ծածկել, և զաչխա-
տանս երկանց մերոց ձեր օգտելովն քաւել։

ԴԱՒԻԹ ՔԱՀԱՆԱՑ ՍԱՐԳՍԵԱՆ ՕՐԱՑԻՑ.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Յաղագս երկնաւոր-ընդհանուր ամենատէր Աստուածութեան։

Հ.—Ո՞վ արար զերկինն և զերկիրն, և զորմէ՞։

Պ.—Իսկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիրն (յոյնէ, Genesis. C. 1)։ Ըստ այնմ, «Ընդ արարեալ միասնական Երրորդութեանն, միով զօրութեամբ համայն ամենազօրաց, միախոհ, միակամ, միաբուռն, ինքնութեամբ. և ամենայն ի նմանէ եղեալ երկինք և երկիր, արարեալ զերկինս խորհրդով հաստատութեան, և զերկիրն թանձրացեալ, աղևեալ սեղմեալ, և զերկինս կախեալ յոչնչէ, և զերկինն ի վերայ ոչնչի կացուցեալ. և ի նմին զանդունդս համատարածս խաւարազգածս, անեղբևոյթս, անկազմս, անարատս, և անյարդարս, անպատրաստ, պատերազմածս»։ (Գր. Լ. ՀԱգաթ. յեր. Ն՚Լ. ըստ հին տպ)։

«Օ՛ի որպէս արարչութեամբն յոչնչից ի լինելութիւն էած զերկեալքս ամենայն, նոյնպէս և գթութեամբն միշտ խնամէ»։ (Խոսրով. ի Մեկն. ժամակարգ. յերես. ԺԱ)։

Հ.—Ո՞ւմ ստուգաբանի Աստուածդ անուն։

Պ.—Ըստ ած, կամ հաստատեաց և կամ հաստատեաց զմեզ։ Ըստ այնմ. «Ընծեալ Աստուծոյ զարարածս իւրոյ արարչութեան առ Ադամ . . . . զարարիչն անուն յառաջ քան զայս ծանուցեալ . . . . . ի հարկէ իսկ նախ զարարիչն անուանէր Ադամ, յորոյ երեսաց իսկ զկենդանութիւնն ընկալաւ, նախ քան զամենայն զնա ետես»։ (Գրիգ. Լուս. ՀԱգաթ. յերես. Ա՚Ժ.Ջ)։

«Յայնժամ ասացի՝ Ե՛ւ անաւասիկ գամ ես. ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ»։ Սաղմ. Է՛Թ. 8։

«Բազում մասամբք եւ բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն զոր ետ ժառանգ ամենայնի. որով եւ զյաւիտեանսն արար»։ Եբրայ. Ա. 1—2։

«Քանզի ստուեր հանդերձելոցն բարեացն ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանդ. որք ոչ են կարողք զմատուցեալսն կատարել»։ Նոյն, անդ. Ժ. 1։

«Որ նախիմաց իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ, խորագոյն արկեալ հիմունս հաստատութեան զրաս արդարոց»։ Ի Շարակ։

Իսկ Աստուած անունն արարչական է, որ զնախանձամեղն յայտ առնէ ըստ Փիլոնի։ Նա առ մեզ աստուգաբանի թէ աստ էած զմեզ։ (Խոսրով. ի Մեկն. Ծամակարգ. յերես. 165)։

«Նախ զանունն Աստուծոյ՝ զոր դուն մարդիկ, նմին անուանէք, անուն ասեմ, ոչ բնութեանն՝ որ է աքանչելի և անհաս, այլ՝ փառացն և ներգործութեանն. քանզի ստեղծիչ արարածոցս գիտացեալ միայն զնա, այսր աղագաւ յարդեանց իբրայն կոչեցաք զարարիչն Աստուած, այս ինքն աստ ածող զոչ էսն յէութիւն և ի գոյութիւն՝ զերկնաւորս և զերկրաւորս»։ (Ներսէս. Ղամբ. ի Մեկն. պատ. յերես. 81)։

Ը.—Աստուածային անձինք քանի՞ն։

Պ.—Երիք, Հայր, Որդի և Հոգի սուրբ։ Զայսմ անճառելի խորհրդոյ կանուխ ուրուճն ճանուցին մարգարէք ի հնումն՝ յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ, որպէս Աստուածահայրն Դաւիթ ասաց. «Ողորմութեամբ Տեառն (Հօր) լի եղև երկիր. և բանիւ (Որդի) Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով (Հոգի սուրբ) բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»։ (Սաղմ. Ղ. 6)։ Պայծառնամաքուրն Եսայիաս ասաց. «Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ. և լի էր տունն փառօք. և սերովբէք կային շուրջ զնովաւ. . . . աղաղակէին մի առ մի և ասէին, Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա։ (Եսայի. Զ. 1)։

Ահա աստանօր երից Սուրբ ասելով զերրորդութիւնն յայտ առնէ, և մի Տէր ասելով՝ զմի Աստուածութիւն։ Մարգիս Շնորհալին ասէ, ի Մեկնութեան առաջին թղթոյն պետրոսի, «Պարձակել և սրբութիւն Հոգւոյն միայնոյ տալով ոչ երէք զՀայր և զՈրդի զատանէ ի սրբութենէն, վասն զի սուրբ է և Հոգին սուրբ ոչ այլ և այլ սրբութիւն առացեալ, այլ մի սրբութիւն զհօրն ունելով. վասն զի ի միոյնոյ սուրբ հօրէ ծնեալ սուրբ որդի, և յառաջ եկեալ սուրբ հոգին, ըստ վկայութեան սերովբէիցն, երից Սուրբ ասելով և մի անդամ Տէր։ (Մարգիս. Շնորհ. ի Մեկն. Ս. պետր. ճառ առաջին. Ս. 1)։

«Երիս դաւանութեամբ զանձինս՝ և ոչ առաւել կամ նուազ քան զերիս»։ (Ներս. Շնորհ. ի թուղթ գրեալ առ Մանուէլ կայսր. յերես 77. ի տիպ պօլսոյ)։

Ը.—Երիք անձինքդ ինչ զանազանին ի միմեանց։

Պ.—Ընձնաւորութեամբ միայն և դիմաւ, զի այլ է անձն Հօր, այլ Որդւոյ, և այլ Հոգւոյն սրբոյ. և զի՝ Հայր չէ ծնեալ՝ ծնող է, Որդին չէ ծնօղ՝ ծնեալ է, իսկ Հոգին սուրբ ոչ ծնօղ է և ոչ ծնեալ, այլ ելող, իսկ էութեամբ, զօրութեամբ և Աստուածութեամբ մի են և հաւասար, և չիք ամենևին ի նոսա մեծ կամ փոքր՝ ըստ այնմ. «Ոչ ոմն յերից հաւասարացն մեծ ի բնութենէ, քան ընդ որս կարդացան. զի թէպէտ և մեծ ասացաւ Հայր, յաղագս պատճառին է մեծ և ոչ վասն բնութեանն. քանզի բնութեամբ հաւասարակից է Որդւոյ և Հոգւոյ»։ (Ներս. Շնորհ. գրեալ թուղթ առ Մանուէլ կայսր. յերես 77)։

«Օ՛ի այն ինչ մի անդամ աստուածութենէ առաջին բնութեան, հաւասարակից է, բայց ի հայրութենէ՝ որ Որդւոյ ոչ է, և յորդիութենէ՝ որ Հօր և Հոգւոյն ոչ է, և անճառ բնմանէն՝ որ Որդւոյ և Հօր ոչ է»։ (Սարգիս Շնորհ. Ս. պետր. ճառ առաջին, Ս. 2)։

«Եւ այս զբնութեան նոյնութիւն յայտնէ. զի թէ և անձամբ բաժանեալք, ըստ որում ոչ է անձն Հօր՝ անձն Որդւոյ. զի մի՛ հրէօրէն և սաբելլեան նեղեալ և ամփոփեալ զաստուածութիւնն թուիցի՛ք, սակայն համաբնութեամբ ընդ Հօր դաւանիմք զէութիւնն Երրորդին»։ (Ներս. Ղամբր. ի Մեկն. պատ. յերես 53)։

Հ. — Որպիսի՞ օրինակաւ մարթ է խնդրուած առնել, թէ Որդին Ծնունդ է ի Հօրէ։

Պ. — Օրինակաւ Ծագման լուսոյ արեգական, որ միշտ յարեգականէ ճառագայթեալ սփռի՝ և ոչ երբէք սպառի, որ սակս ասի ի Հանգանակին, ‘‘Լոյս ի լուսոյ,,, և իբանից մարդկան, զի որպէս բանք մարդկան ի մտաց առնուն զծնունդ և ծագումն, այսպէս իմա և զծնունդ գոլն Որդւոյ ի Հօրէ. որպէս գրէ և Հնոլհալի Հայրապետն մեր սուրբ Ներսէս. ‘‘Օրինակ անօրինակ ծննդեան Որդւոյ ոչ այլ ինչ է, բայց որ ի մեզ մտացս ծնունդ զբան,,. (Ընդհ. երես 10)։

‘‘Ըստուածն՝ արարչութեան և նախախնամութեան է անուն, այլ ոչ հիմ բնութեան։ Վասնզի անգիտելի է այն մեզ, և ի վեր քան զամենայն միտս և զնշանակս։ Այլ զի Ըստուած է նա յԸստուծոյ, որպէս և ծնունդ ի Հօրէ. արարիչ է նա ընդ հօր իւրում՝ իմանալեաց և զգալեաց և նախախնամող կայից և հաստատութիւն եղելոց։ Լոկ լոյսն ի լուսոյ, և այս ևս՝ նոյնաբնութեան է նշանակիչ, ոչ իրր լուսաւորեալ ի լուսոյ. ըստ որում Մովսիսին պայծառացան երեսք՝ ի տեսանելն Ըստուծոյ, կամ որպէս միտք կամ տեսլաբան սրբոց մարգարէիցն ի տեսլենէ ուժեքէ, կամ որպէս մեք՝ զգալի կամ իմանալի իմաստութեամբն լուսաւորեցաք. որպէս և Ճշմարիտն լոյս լուսաւորեաց զեկեալս յաշխարհ, այլ ըստ խոսկան և գերապայծառ լուսոյ Ըստուածութեանն Հօր՝ լոյս է և Որդին, և նմանապէս,,։ (Ներս. Լամբ. ի Մեկն. Պատ. երես 53)։

‘‘Եւ ի Հօրէն ասելով՝ զՈրդի և զՀոգին կամի առ մեզ հաստատմացուցանել, իբրու թէ՝ մինն ծնունդ է, ի Հօրէ որպէս որդի, և միւսն բղխումն ի նորին բնութենէ, ոչ որպէս որդի՝ այլ որպէս Հոգի, և երկոքինն նորին հօրն են անձնաւորութեամբ ի նմանէ են բաժանեալք, և ոչ բնութեամբ որոշեալք, որպէս նորին արեգական ջերմութիւնք և ճառագայթքն՝ ոչ անջատեալք ի նմանէ, թէպէտ այլ և այլ իցեն,,։ (Սարգ. Հնորհ. ի Մեկն. Յակ. ճառ չորրորդ Ե. 17)։

Հ. — Որպէս է հլուծն կամ բղխումն Հոգւոյն սրբոյ ի Հօրէ։

Պ. — Որպէս ջերմութիւն արեգական յարեգականէ յառաջանայ, և աղբիւր անդստին յականէ միջէ բղխի, այնպէս և Հոգին սուրբ՝ ի Հօրէ անհատաբար՝ ըստ այնմ, ‘‘Եղեն և նորման հօր և որդւոյ, հոգիդ անիղ և համադոյ, բղխումն հօր անքննաբար, առողջ յորդւոյ անճառաբար,,։ (Ի Հարակ)։

‘‘Ընակիզքն հայր, և յանակզբնականէն հօրէ սկսեալ որդի և հոգի՝ անեղապէս և անժամանակաբար, անհաս մտաց և անճառ բանից։ Մի կամք և մի զօրութիւն և մի իշխանութիւն, մի արարչութիւն եղելոց և մի նախախնամութիւն ի վերայ ամենայնի,,։ (Ընդհանրական, յերես 92)։

‘‘Վասն զի ջերմութիւնք և ճառագայթք արեգական յարեգականայինք ոմանք են՝ և ոչ անձնաւոր արեգականք, նմանապէս և ի հօրէ որդի և հոգի նորին բնութեանն և ոչ (որպէս) առանձին արեգականք և կատարեալք սորին վասն ասացի,,։ (Սարգ. Հնորհ. ի Մեկն. Յակ. ճառ չորրորդ Ե. 18)։

‘‘Լոկ կատարեալ, զի անթերի է ամենևին ըստ աստուածական բնութեան և էութեան, և կատարելագործ անկատարից, և լցուցիչ բոլորից, երկնաւորաց և երկրաւորաց, առ ամենեցուն և ընդ ամենեսեան. ի կենաց լցուցանելն, ի շնորհաբաշխութեանն, ի սրբելն, յարդարացուցանելն, յառաջնորդելն, ի կատարումն ածել, և ինքեան ըստ բնութեան զամ և որիշ և գոր ի վերոյ ամենայնի կալով, պաշտի և պատուի յիմանալեաց և ի զգալեաց, ի հրեշտակաց և ի մարդկանէ, իբրև զՀայր և զորդի ամենայնիւ կատարեալ.

իբրև զհայր՝ բայ ի հայրութենէն. ամենակատար իբրև ղորդի՝ բայ յորդիութենէն ,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատ. յերես 58):

,,Ըստուած է և Հոգին սուրբ հաւասար հօրն՝ անձնաւոր և նմին հաւասարգոյ. զանուանն ոչ գիտեմք, այլ անուանեմք զնա ըստ ներդործութեանն, ազբիւր, որպէս զհայր՝ հուր վասն կիզողական զօրութեանն, զորդի՝ գառն վասն անմեղութեանն, այսպէս և զհոգին՝ ազբիւր վասն զանազան շնորհաբաշխութեանն, զոր բաշխէ սիրապէս, և ոչ բաշխի յայլոց՝ էութեան ծախամբ իբրև զջուր, քանզի ազբիւր ասէ զնա, և առ վինքնէ զզոհաւճն ,,: (Նոյն անդ. յերես 150):

Հ.—Բ՛նչ պէտս, և առ բ՛նչ վախճան ստեղծան հրեշտակք և մարդիկ:

Պ.—Տեսակ ամենաբարւոյն Ըստուծոյ զանքննին բարութիւնս իւր, և չհանդուրժեալ ինքեան միայնոյ թողուլ զվայելուչն նոցին, արար զհրեշտակս և զմարդիկ փառաբանիչս և ժառանգակիցս ինքեան, և և՝ պատկերակից ինքեան զմարդն, ըստ այնմ, ,,Օ,ի Ըստուած հաստատեաց զմարդն յանեղծուածիւն, և ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա ,,: (Ումասա. Ր. 23):

Եւ Շնորհալի սուրբ Հայրապետն մեր Ներսէս Լդէ յերգս արարչականին. ,,Չհանդուրժեալ բնութեամբ բարւոյն ունել միայն զանձառ բարին, այլ ստեղծեալ զմարդ իւր պատկերին ի վեցերորդ առաւօտին. և ի յերորդ ժամ զկոզածինն ի յօգնութիւն առ հողածնին. զորս ի դրախտին առ վայելել, բայց ի պտղոյն մահու արգել ,,: (Ի Ժամակ):

,,Ա՛ստն զի գիտէին՝ եթէ մեր օրհնութիւնս միայն կարի լինի նուազել առ մեծութիւն պարգեւացն Ըստուծոյ, նորին յաղագաւ զամենայն արարածական բնութիւնս՝ որ ինչ ի անդամ յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ օրհնաբանութիւն զոչէին, զի այնու գեթ սակաւ ինչ մասն վճարեսցին ի սիրոյն, և մի՛ ոք փոքր ինչ գործ զօրհնութիւնն Ըստուծոյ վարկանիցի. այլ մեծի սիրոյ նշանակ և ընտանի Ըստուծոյ, և հրեշտակական գործովս, զի անմարմին բնութիւնքն և վերին դասապետութիւնքն չէնէին այլ ինչ տալ Ըստուծոյ քան եթէ զօրհնելն զնա և զփառաւորելն, և նորին յաղագաւ յաղագաւ յաւիտենական հոգւոյն՝ որ զմեզ տնօրինէր զփրկութիւն՝ փոխոխեալ կարգեաց զսա Ա՛ստուածս, զի և մարդիկ ընդ սերովբեան սրբասանութեամբ փառաւորեն զԸստուած ,,: (Ասող. Շնորհ. Ը. Պատմ. ձառ երկրորդ, Ը. 3):

,,Ա՛նգիւ օրհնութիւնն՝ է յերից բարեաց մեր եգեալ Ըստուծոյ բարերանութիւն. իբր թէ ասէիցէ, դու արարիր զմեզ՝ քեզ պատկերակից, և մեք փոխանակ այդորիկ օրհնեմք զքեզ, և գովեսցեն՝ վասն հրաշիցն գովասանութիւն. որպէս մեզ ասէ. ամենայն հրեշտակք իմ գովիցին զես մեծաձայն՝ յորժամ երգեն աստեղք ցերեք ,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատ. յերես 35):

,,Յաղագս այնորիկ հանդուցանելոյդ զօրացուցեր զմարմինս մեր, և հոգւոյս օժանդակես ընդ հրեղէն փառաբանիչսն զքո փառաւորեալ անուանդ փառաւորել, որ յիսկզբանէն փառաւորեր, և անկաթօտ էր եղելովքս փառաւորիլ: Այլ առ դութ արարչութեանն հաճեցար յարարածոցս պաշտօն առնուլ ,,: (Խոսրով. ի Մեկն. Ժամակարգ. յերես 52):

Հ.—Մ՛իթէ կարօտ էր Ըստուած փառաբանութեան մարդոյն:

Պ.—Ո՛չ բնաւ, այլ՝ զմեզ ինքեանս ինքեան կարօտացոյց՝ ըստ այնմ. ,,Ո՛չ կարօտեալ իմոյս ինչ ձայնի՝ այսու մեծանաս. որ մինչ չև էր ստեղծեալ քո զամենայն, նախ քան զը-

լինելն երկնի փառս որանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօքն, դու քեզէն ի քումմէ լրութենէ փառաւորեալ իսկ էիր,,: (Նար. Ղ. 8):

,,Օ՜ի փառաւորի Հայր յորդի և որդի ի Հայր, փառաւորի Հոգի յորդի և որդի ի Հոգի, նա ասէ. զիս փառաւորեսցէ զի յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ. և թէ Հայր փառաւորեա զորդի քո. և ապա ի դէմս հօր՝ես զքեզ փառաւոր արարի յերկրի,,: (Սարգ. Ճ՝նորհ. ի Մեկն. Ե. Պետր. Ճառ ինններորդ Գ. 11. յորդորակ):

,,Ո՛չ զի ինքն յաւելուած կամ փառս առցէ՝ որ ամենակատարն է և անփոփոխ, այլ զի փառաւորիչքն պատուեսցին զփառաւորեանն օրհնելով, քան զոր պատիւ մեծ այլ ոչ գոյ,,: (Խոսրով ի Մեկն. Ժամակարգ. յերես 52):

,,Նա ոչ եթէ ի մաուցանելն զայս՝ յաւելուած ինչ լինի ցի անկարօտ բնութեանն Աստուծոյ. զի նա ի փառս իւր փառաւորեալ է, լիով և անթերի և յառաջ քան զլինիլն աշխարհի,,: (Նոյն անդ յերես 94):

,,Բայց զի՞նչ յայտ առնէ զուզակցութիւնս, թէ որ զքեզ օրհնեն, ապա ի քէն օրհնին. ցուցանէ այսու ոչ զկարօտութիւն Աստուծոյ առ ի մէն օրհնութիւն, այլ զմեր սէրն առ նոյն և զհաւատս, զի օրհնութիւն յայտնանէ զայ յառաջ, և մեք օրհնեմք զնա, զծանրագոյն հասուցմն կամայ մերոց տալով նմին,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատ. յերես 169):

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

Ընթրեցողաց՝ի՝ աշխարհէ, Երկինք և Երկիր:

Ա.—Օ՞ի՞նչ արար Աստուած յառաջնումն աւուր:

Պ.—Իսկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր (և ապա զլոյս): (Ծննդ. Ա. 1):

Ա.—Որպիսի՞ զրութեան էր երկիր:

Պ.—Էր աներեւոյթ և անպատրաստ: (Ծննդ. Ա. 2):

Ա.—Ո՞ր էր խաւարն:

Պ.—Ի վերայ անդնդոց: (Ծննդ. Ա. 2):

Ա.—Յո՞ր ի վերայ ջրոյն Հոգին Աստուծոյ:

Պ.—Ի վերայ ջրոց: (Ծննդ. Ա. 2):

Ա.—Օ՞ի՞նչ արար Աստուած զլոյսն:

Պ.—. . . . Մեկնեաց ի մէջ լուսոյն, և ի մէջ խաւարին, և կոչեաց Աստուած զլոյսն ցիւ, և զխաւարն կոչեաց գիշեր: (Ծննդ. Ա. 4):

Ա.—Օ՞ի՞նչ արար յերկրորդումն աւուր:

Պ.—. . . . Հաստատութիւն եղ ի մէջ ջրոյն, զոր և կոչեաց երկինն. և եաես Աստուած զի բարի է: (Ծննդ. Ա. 8):

Ա.—Օ՞ի՞նչ արար Աստուած յերրորդումն աւուր:

Պ.—Ասաց Աստուած, ժողովեսցին ջուրքդ . . ի ժողով մի, և երեւեսցի ցամաքն . . . : Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր, և զժողովս ջուրցն կոչեաց ծով: Եւ եաես Աստուած զի բարի է: Եւ յորժամ երեւեցաւ ցամաքն, Ասաց Աստուած. բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ . . . և ծառ պաղաբեր առնել պտուղ ըստ ազգի իւրոմ: (Ա. 11. Ծննդ):

Ա.—Օ՞ի՞նչ արար ի չորրորդումն աւուր:

Պ.—Օ՞արեգակն, զլուսին և զաստեղս՝ կարգեալ զնոսա ի հաստատութեան երկնից առ ի լուսաւորել լինիլ յերկիր, զլու-

սաւորն մեծ՝ յիշխանութիւն տուննջեան, և զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ, և զաստեղս . . . առ ի մեկնել ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին: Եւ եռաս Աստուած զի բարի է: (Ծննդ. Ա. 14,—19):

Հ. — Օրինակ արար ի հինգերորդումն աւուր:

Պ. — Ասաց Աստուած. հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց. և թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից, զի զեռունք լուղիցին ի ջուրս . . . և թռչունք բազմասցին ի վերայ երկրի: (Ծննդ. Ա. 20, 21, 21, 23):

Հ. — Օրինակ արար ի վեցերորդումն աւուր:

Պ. — Ասաց Աստուած. հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և սողունս, և գազանս երկրի ըստ ազգի. և եղև այնպէս: (Ծննդ. Ա. 25, 26):

Հ. — Աստուած որպիսի արար զմարդն:

Պ. — Ասաց, արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամենայն անասնոց: Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա. արու և էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. աճեցէք և բազմացարծուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամենայն անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ի վերայ երկրի: (Ծննդ. Ա. 26, 28):

Հ. — Օրինակ արար Աստուած յաւուրն եօթներորդի:

Պ. — Հանգաւա . . . յամենայն գործոց իւրոց՝ զոր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ. և սրբեաց զնա: (Ծննդ. Բ. 2, 3):

ՄԵՆՈՒՆԱ.

Հ. — Որ է առաջին օր արարչութեան, և զինչ նշանակէ ի նմին աւուր սահմանիլ լուսոյն:

Պ. — Առաջին օր արարչագործութեան կիւրակէն, և լոյսն օրինակ է յարութեան Քրիստոսի՝ որով լուսաւորեցաք ի խաւարային գործոց, որպէս երգեաց մարգարէն. ,,Լուսաւորեաց, լուսաւորեաց՝ Երուսաղէմ. զի հասեալ է լոյս քո. և փառքն Տեառն ի վերայ քո ծագեաց: (Եսայ. Ղ. 1):

,,Նորաստեղծեալ բանն յանէից խնկեցանէ զերկինս երկնից, և զերկնային զօրս անմարմնոց լամանալեացն ընդ գուարթնոց, և զգալի տարերց քառից հակառակաց միաբանից,,: (Ի Շարակ):

,,Եւ յարուցեալ ըմբռնիչ և լուծիչ մահու և ապականութեան. որպէս ասէ մարգարէն, և մեկնէ առաքեալն. ընկլուզ մահ յաղթահարեալ ի կենաց. առ որ հեղնականաբար ասացեալ: ո՞ւր է մահ յաղթութիւն քո, որով զօրանայիր. և ո՞ւր է դժոխք խայթոց քո, որով սպանանէիրն,,: (Ովսէ ԺԳ. 14.—Ա Կորնթ. ԺԵ. 55.—Ներ. Լամբ. ի Ս Հոգն. Պատարագի յերես 56):

Հ. — Որո՞յ օրինակ է լինել խաւարին ի վերայ անդնդոց:

Պ. — Խաւարն նշանակէ զասատանայ, որ զանդունդս դժոխոց ունէր սեպհականեալ, որում մատնեցաւ և աշխարհս, և սիրեցաւ զնա՝ ըստ այնմ. ,,Ընդ՝ եղեալ է կենցաղս ի նահապետեան, և ոչք բնակին ի նա թարց նշուլի,,: (Գ. Նեղ. ԺԴ. 20): ,,Ընդ՝ ոմն ի վերին զօրաց իշխանութեան հրեշտակացն, իբրև տեսանէր զեռաստումն բարեացն ի բարերար արարչէն՝ որ առ մարդն, և մարդոյն կալ ի բանի արարչին իւրոյ. և զգուշացեալ պահել զպատուիրանն,,: (Գրիգ. Լուսա. ՀԸգաթ. յեր. Ա՛ԺԻ):

,, Դարձեալ խաւար ասէ զկերպարանս առելութեան բանսարկուին, որով մարդիկ զլիաեանս առէին, որով խռովութիւն անհնարին և պատերազմ զբնութիւնս պաշարեաց,,: (Սարգ. Ը. Նորհ. ի Մեկն. Ա. Յովհ. ճառ երկրորդ Ե. 11: — Խոսրով. ի Մեկն. Յամակարգ. յերես 113):

,, Ի փառաց անփառունակ, ի լուսոյն խաւար, յանուշահոտութենէ չարահոտ. ի բարւոյն չար. ի հրեշտակապետական անուանէն սատանայ, ի ծայրագոյն անպատուութիւնս անկաւ, և երկնայինն սանդարամետական եղև, և ի կերպարանս շանց և խոզից և ամենայն զազրալից սողնոց նմանեցաւ,,: (Նոյն անդ, ճառ ի Մեկն. Յուդայ Ա. 6):

,, Յորմէ զգուշանալն է վայելուչ եղբարք, որքան ի սէ և ի մուր կեանքս պանդխտիմք՝ խելս խառնել ընդ մեզ. և մի՛ անձամբ անձին դրժող լինել. այլ խնամով՝ թէ ունիմք հանապազորդ թշնամի. յորմէ փրկեսցուք Տէրամբ մերով Յիսուսիւ. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն,,: (Ներ. Լ. ի Մեկն. Պատ. յերես 110:

Հ.—Օ, ի՞նչ գուշակէը շրջելն Հոգւոյն սրբոյ ի վերայ ջրոց:

Պ.—Օ, արդեաւ խորհուրդ սուրբ աւազանին. վասն զի՝ իբրև զհաւ թխսեալ ի վերայ ձուոց՝ զձագս զմեզ ծնանէը՝ ըստ այնմ. ,,Եւ որպէս յառաջագոյն շրջէը Հոգին ի վերայ ջուրցըն, նոյն օրինակ բնակեսցէ ի ջուրս, և զամենեսեան ընկալցի որ ծնանին նովաւ,,: (Գրի. Լուսա. ՀՆգաթ. յեր. Ռ՛Հե. ըստ հին տիպ):

,, Հ՚ոջէը նկարէը և կերպարանէը ամենուսնակ ջուրըքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ ի կատարումն արդեան խորհրդոյս զսուրբ աւազանն լուսոյ,,: (Նար. Հե. 8):

,, Ասկ՝ զի ասացաւ շրջէը ի վերայ ջուրց, նոր խորհրդոյս էր ապացոյց. զի որպէս անդ շրջելով ի ջուրսն՝ յառաջ էած ի նոցանէ զէքս ամենայն, և աստ նոյն ինքն շրջի յարգանդ Եկեղեցւոյ՝ յաւազանն, և ծնանի որդիս Աստուծոյ զմարդիկ,,: (Ներ. Լ. ամբ. ի Մեկն. Պատարագի յերես 11):

Հ.—Օ, ի՞նչ նշանակէը մեկնիլ լուսոյն ի խաւարէ:

Պ.—Նշանակէը զմեկնիլն լոյս հրեշտակաց ի խաւար սատանայէ, և որդւոց լուսոյ՝ յորդւոց խաւարայնոց՝ յարութեամբն Քրիստոսի՝ ըստ այնմ. ,, Յողովուրդ՝ որ գնայր ի խաւարի, տեաս զլոյս մեծ. և որ բնակեալդ էք յաշխարհիդ և ի սուսերըս մահու՝ լոյս ծագեսցի ձեզ,,: (Եսայի. Թ. 2): ,, Լուսափայլ յարութեամբդ քո կենագործեցեր զազգս մարդկան,,: (Ի Հարակ):

Հ.—Օ, ի՞նչ է խորհուրդ երկրորդ աւուր արարչութեան:

Պ.—Ի խորհուրդ երկրորդի գարուն և հրեշտակաց՝ որք բաժանեցան ի յանցուցեալ հրեշտակացն, և կացին անշարժ ի հաստատութեանն ըստ երկնային ջրոցն ի յերկնայնոց՝ ըստ այնմ, ,, Եթէ ծառայից իւրոց ոչ հաւատայցէ, և զհրեշտակաց խոտորնակացն ինչ իմացաւ,,: (Յոբ. Դ. 18):

,, Ասկ՝ որ անմտացաւ ի նոցանէ ընդվզեալ ընդդէմ Տեառն Աստուծոյ ամենակալի, կորոյս զիշխանութիւնն իւր. և ոչ միայն զիշխանութիւն իւր կորոյս, այլ ամենայնիւ այլ ընդ այլոյ եղև,,: (Սարգ. Հ՚նորհ. ի Մեկն. Յուդ. ճառ առաջին Ա. 6):

Հ.—Որո՞վ յանցեան հրեշտակքն:

Պ.—Հպարտութեամբ և զինքեանս Աստուած կարծելով ըստ բացատրութեան իշխանին Տիւրոյ. զորս նախատէ Աստուած ի ձեռն մարգարէին և ասէ. ,, Փոխանակ զի հպարտացաւ սիրտ քո, և ասացեր՝ Թէ աստուած եմ ես, և զբնակութիւն աստուծոյ բնակեցի ի սիրտ ծովու, մարդ ես դու՝ և ոչ աստուած, և ետուր զսիրտ քո իբրև զսիրտ Աստուծոյ,,: (Եզեկ. ԻԸ. 2):

,, Իբրև անյոյս արար զամբարտաւանն՝ և ահագինս եցոյց զզօրութիւնն ամբարտաւանութեանն զառաջին ամբարտաւանին ունել զօրինակն, որ ամբարտաւանեալ ընդդէմ Աստուծոյ ամենակալի և ընդվզեալ ասաց, եդից զաթոռն իմ յամպս և եղեց նմանող բարձրելոյն. վասն որոյ յերկինից յերկիր կործանեցաւ, և սանդարամետական եղև և խաւարային՝ զԱստուածառնելով միշտ հակառակ և պատերազմող ,, : (Աբդ. Հ՚նորհ. ի Մ՚ևին. Յակոբ. ձառ ԺԵ՚ներորդ, Գ. 6) :

,, Որպէս և ընդդէմ՝ որ փքանայ բարձրութեան՝ ընկճեսցի ի խոնարհ. իբր գառոյն այն, որ դնէր զաթոռն յամպս, անկաւ ի ներքին յալս, որպէս փայլակն ,, : (Յովհ. Ծորմօր. ի Մ՚ևին. Մ՚ատ. ԻԳ՚. 12):

,, Նոյն և Նասայի՝ զկործանուածն սատանայի ի դէմս իշխանին Ծուրայ ,, : (Նար. Լ՚ամբ. ի Մ՚ևին. Պատարագի յերես 11):

,, Եւ որ սակս պայճառութեանն արուսեակ անուաներ, վասն ամբարտաւանութեանն խաւարեալ նսեմացաւ, և փոխանակ հրեշտակի՝ սատանայ անուն ժառանգեաց ,, : (Խոսրով ի Մ՚ևին. Ժամակարգ. յերես 113):

Ա՚. — Ջուրք ի հաստատութեան անդ յերկնային կամարան որպէս մնացին անթափ :

Պ. — Ձզօրագոյն բանիւն Աստուծոյ, ըստ այնմ, ,, Սահման եդեր և ոչ անցանիցեն ,, : (Սաղմ. ՃՀ՚Գ՚. 9):

Եւ թէ՝ ,, Ջուրք հաստատեալ կան բանիւն Աստուծոյ. և կամ հողմունք եղեալ են իբրև զպիւնս ի ներքոյ հաստատութեան առ ի բառնալ զնա ,, : (Ր. Պետր. Գ՚. 5) : Ըստ այնմ թէ՝ ,, Օ՚վ ոչ իբրև ի տիկս արկ զնա սքանչելի բանն Աստուծոյ, և ոչ պարսպաւ իւիք ամրացոյց զնա շուրջանակի. այլ զթոյլ և զտարած բնութիւն օդոյ եդ սահման ի ներքոյ

նորա նեղուիլ նմա և հնազանդութիւն որպէս ղեւաղ ,, : (Աբդ. Հ՚նորհ. ի Մ՚ևին. երկրորդ պետր. Գ՚. 5. — Յաճախապատճառ ԻՒ՚. յերես 242):

Բ՚. — Օ՚րինէ՞ խորհուրդն երրորդ աւուր ստեղծութեան:

Պ. — Ի՚ օրինակ երրորդի դարուն, և Յովհաննու Մկրտչի, ըստ այնմ՚. ,, Ընդ ճառոյ երկրի զգալոյս՝ անկեաց և զտունկս կրս հմանալոյս, զհրկիզ մեղացն ցաճուցանել՝ զպաս արդարոյ բազմացուցանել, յորոց և մեծն ի ծնունդս կանանց մինչ նորդ շնորհաց և օրինաց ,, : (Ի Հ՚արակ):

Բ՚. — Օ՚րինէ՞ նշանակեր բաժանիլն ջուրց ի ցամաքէ:

Պ. — Օ՚այն, թէ որպէս յերեւիլ ցամաքին պատգաբերեցին ճառք և բոյսք, այսպէս և բոյսքն արդարութեան Յովհաննէս և այլ մարգարէք երեւեալ ի յերկրի, պատգաբերեցին ի ժամանակս ժամանակս. ըստ որում՝ ջուրք ծովուց օրինակ են աշխարհակուլ մեղաց՝ որք հանդարտեցան գալստեամբ և քանիւն Յիսուսի Քրիստոսի՝ ըստ այնմ, ,, Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ ,, : (Մատ. Ը՚. 26):

,, Իբրև զի այս էին մեծագոյն սքանչելիք, քան զայն՝ որ ի ծովուն յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեանց ծովուն, և դադարեցոյց զամենայն բնութիւնն մարդկան առլիսկոծեալ ի ծովուս մեղաց հանդարտեցուցանել ,, : (Աբդ. Հ՚նորհ. ի Մ՚ևին. Յուդայ. ձառ Ը՚ներորդն Ը՚. 2):

,, Իսկ առ ի միոս ծովին աշխարհիս էր օրինակ՝ որ հանդարտելոց էր քարոզութեամբ յառաքելոցն, յորմէ հետէ մուտ և ել արար Տէր մեր Յիսուս Քրիստոս ,, : (Յովհ. Ծորմօր. ի Մ՚ևին. Մ՚ատթէոսի ԻԳ՚. 32, և Լ՚. 27. յերես. 198 և 328):

Հ.— Կարելո՞ ցուցանել ի դրոց, թէ ծովք օրինակ են մեզ։

Պ.— Ո՛ւ քեզ օրինակ ղՊետրոս, որ նշանակեր զմարդիկ յինս բնութիւն. զի մինչ ալիք ծովուն կամին ընկղմել զնա, կարկառեաց Տէր Յիսուս զձեռն իւր ի նա և բուռն եհար ըզնմանէ՝ ըստ այնմ, ‘‘Ո՞ աղվադակի ձգեաց զձեռն իւր կալաւ զնա և ասէ. Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր’’։ (Մատ. ԺԴ. 31)։

Նա թէ, ‘‘Նաւապետ բարեգութ, առ քեզ ապաւինիմ, տուր ինձ ձեռն որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփիմս ալեկոծեալ յանցանօք մեղաց’’։ (Ի ժամակ)։

‘‘Օ՛ի որչափ արտաքոյ կամացն Աստուծոյ լինիմք, որպէս ի ծովու ալեկոծին մեր ոգիքս ազգի ազգի մեղօք և ցանկութեամբք, անթիւ հոգւօք և զանազան արտմութեանց արկածիւք’’։ (Խոսրով ի Մեկն. Ժամակարգ. յերես 65)։

‘‘Օ՛Պետրոս՝ որ ղերծեր առ Յաչին Վրիատոսի Տեառն, և ղպրեալն ի հաւատս հաստատեր, որ ուրանայրն՝ դաւաներ դարձեալ, որ արտասուէրն՝ և լայր դառնապէս, ըստ նմա-նութեան նախնոյն Ադամայ՝ զրկեալ ի դրախտէն, որ ապաշխարութեամբն զՀոգին առաքինութեան ո՛չ կորոյս՝ և ի հիմանէ եկեղեցւոյ արտաքս ո՛չ անկաւ’’։ (Արդ. Շնորհ. Ա՛առ. երկրորդ Ե. 14 յորդորակ)։

Հ.— Օ՞րինչ է խորհուրդ չորրորդ աւուր արարչութեան։

Պ.— Ի խորհուրդ չորրորդի դարուն, և աւետաց սուրբ Աստուածածնին, ըստ այնմ, ‘‘Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ՝ չորրորդ դարուն Յսահակաբ, ի չորրորդ օր դարձեալ հրեշտակին ետ զաւետիսն կուսական, թէ լոյսն որ ո՛չ բովանդակի՝ ի քէն մարմնով պարունակի’’։ (Ի ժամակ)։

Հ.— Որո՞յ օրինակ է արեգակն։

Պ.— Աստուածային անփոփոխելի բնութեանն, և և արեգականն արդարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ծագեալ ի հօրէ լուսոյ աստուածութեան աւետաւքն Գաբրիէլի ի չորրորդումն աւուր, պարագրեցաւ անպարագրելին յարգանաի ամենամաքուր կուսին Մարիամայ՝ լոյսն միշտ պայծառ հաւաքեալ ի նիւթ արեգականն կամ նոր օրինացս, ըստ այնմ. ‘‘Աստուածութեամբ բնակիչի Աստուած ընդ մարդկան ի վերայ երկրի։ Օ՛ի եթէ երկինք՝ և երկնից երկինք ո՛չ են բաւական քեզ, և զի՞նչ է տունն այս զոր շինեցի’’։ (Ա. Մնացորդաց Օ. 18)։

‘‘Ուրեմն և լուսաւորըդ որ յերկինս ասացին անդոյ, աբեգական և լուսին և աստեղք, զի օրինակք ասին և տոքա, և ոմն նոր օրինացս և ոմն հնոյն և ոմանք բազմութեան արդարոյն’’։ (Ներ. Ը. Նորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յայմայք նահանգի, յերես 162)։

‘‘Լոյս սքանչելի՝ Թուի թէ զՔրիստոս ասէ՝ որպէս ինքն իսկ ասաց, ես լոյս յաշխարհ եկի, և թէ ես եմ լոյս աշխարհի, նմին իրի և արեգական արդարութեան անուանեցաւ’’։ (Արդ. Շնորհ. Ա. Պետր. Ճառ. չորրորդ Ր. 9)։

‘‘Նա և ո՛չ վայրապալ երևոք նորա իրև զարեգական լուսաւորիալ, զի արեգական արդարութեան գոլով՝ այրէր զդրօճս խաւարայինս’’։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԺԲ. 2. յեր. 359)։

Հ.— Օ՞րոյ օրինակ ունի լուսինն։

Պ.— Նոյ օրինաց՝ կամ մարդկայինս փոփոխական բնութեան, որ ի բարութենէ ի չարութիւն, ի լուսոյ ի խաւար, ի կենդանութենէ ի մահ փոխեալ հնացաւ, և դարձեալ նորացաւ, ի մահուանէ ի կեանս, ի խաւարէ ի լոյս, ի չարութե-

8388

նէ յարդարութիւն՝ որպէս լուսինն առանէ յաճիս ի տարուընջ, ըստ այնմ՝ ,,Դարձցի Թագաւորն անդրէն ի մանկութիւն իւր,,: (Երդ. Ը. 2):

,,Ուրեմն և լուսաւորըդ որ յերկինս ասացին անդոյ, արեգական և լուսին և աստեղք, զի օրինակ ասին և տոքա, ոմն նոր օրինացս և ոմն հնոյն և ոմանք բազմութեան արդարոցն,,: (Ներ. Ը. նորհ. դրեալ Թուղթ առ Վահանայս Յամայք նահանդի, յերես 162):

,,Զմանաւանդ և լուսինն զիւրն ունի զսպասաւորութիւն, ի ժամանակաց զիւրոխառնին, ի մաշելն և ի նորանալն: Օ՜ի նոյնաբ ծանիցուք զմարդուն երկրաւորացս և զնորոգումն ի յարութեանն,,: (Գրիգ. Նարեկ. Յաճախ. ԽԲ. յերես 239):

,,Զմանաւանդ և ամենայն մարդ մինչ դեռ յանմեղութեանն կատարեալ՝ ունէիր զլոյսն արդարութեան, ապա թէպէտ լինէիր նմա մեզաց ինչ փոքրագունից և լուծանէ զնա ի կատարմանէն, առ սակաւ սակաւ ողոքելով զդատաստանն՝ պակասէ ի նմանէ լոյս անմեղութեանն և բոլորովին խաւարադղաճ եղեալ մերձ առ արևմուտս ոտի. ապա երթէ դարձեալ դէպ լինէիր նմա զդջման՝ մինչդեռ ի մեղացն է, տաղնապեալ ի խղճէ չարեացն՝ և ապա ընծայի, դարձեալ ի նմանէ խորհուրդ լուսաւոր խոստովանութեան՝ և առ փոքր ածելոյ ապաշխարութեամբ և արտասուացն ջրով լուանայ զսևաւոյակ ափիճն մեզացն, և յաւաջին սրբութիւնն և ի լուսաւոյակ կերպարանն ի վեր ելանէ,,: (Սարգ. Ը. նորհ. Ը. պետր. ճառ. Ը.—Ը. 11 յորդորակ):

—Որո՞վ ի հնութենէ մեզաց նորոգեալ՝ յայդչափ բարութիւնս փոխադրեցաք:

—Արիւնաւոիկ անօրէնութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առեցելոյ յարենէ սրբոյ կուսին Մարիամայ, որ

յաղթեաց ակարացեալ բնութեանս, և էարկ ընդ ոտիւք զլուսինն, և զդեցաւ զարեգական արդարութեան՝ ըստ այնմ, ,,Կին մի արկեալ զիւրև զարեգական, և լուսինն ի ներքոյ ոտից նորա, և ի վերայ գլխոյ նորա պսակ յաստեղաց երկոտասանից,,: (Յայտ. ԺԲ. 1):

,,Որ ի բարձրութիւնս երկնից բարձր՝ բանիւք բարեբանիս սրբուհի՝ ի Լիբանանէ դիմեալ՝ հարսն զդեցեալ այսօր զարեգական արկեալ զքև՝ և ընդ ոտիւք զլուսինն ստուերատեսակ՝ օրհնութեամբ երդով երկեցիք տիեզերաց՝ այսօր ծոնեն ըզյիշատակ ծննդեան քո ի մօրէ,,: (Ի Շարակ):

—Որո՞ց օրինակ ունին աստեղք:

—Սրբոց առաքելոց, մարգարէից և ամենայն արդարոց. որք խառնեալ ի գունդս հրեշտակաց ի հաստատութեան երկնից՝ ցնծան և բերկրին ընդ նոսա, ըստ այնմ. ,,Յորժամ ետղեն աստեղք ծիրք՝ ամենայն հրեշտակք աստեղայ օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին,,: (Յոբ. Լ. 7):

,,Ուրեմն և լուսաւորըդ որ յերկինս ասացեն անդոյ, արեգական և լուսին և աստեղք, զի օրինակ ասին և տոքա, և ոմն նոր օրինացս և ոմն հնոյն և ոմանք բազմութեան արդարոցն,,: (Ներ. Ը. նորհ. դրեալ Թուղթ առ Վահանայս Յամայք նահանդի, յերես 162):

,,Ընդ այսօր աստեղք և լուսին ընդ արևուս հրճուելով, գովին զլոյսն ի հօրէ յաւուր ծննդեան լուսոյ մերոյ,,: (Ի Շար):

—Օ՜ի՞նչ է խորհուրդ արարչութեան հինգերորդի աւուրն:

—Ի օրինակ հինգերորդի դարուն, և սրբոց առաքելոցն Քրիստոսի՝ ըստ այնմ. ,,Մաքրապէս օրինակի Առաքելոցն Քրիստոսի, որք ի ծովէն Տիբերական ի յերկնայինսն կոչեցան,

անցին ընդ ծով աշխարհական և ի Հոդին Մկրտեցան ,,։ (Ի Ղ. արակ)։

Հ.—Ո՞րչ նշանակէ հանելն ջրոց զեռունս շնչոց կենդանեաց՝ և զթռչունս թևաւորս ի վերայ երկրի ըստ տատուբեան երկնից։

Պ.—Հանելն ջրոց զեռունս շնչոց կենդանեաց նշանակէ զանսուրբ մարդիկն եղեալք ի կենցաղոյս ծովէ իրրև զեռունս սուրբս և անսուրբս. իսկ թռչունքն թևաւորք օրինակ են երկոտասան Առաքելոց, որք խակղբանէ աշխարհի ընտրեալ հրաւիրեցան ի Տերերական ծովէն յառաքելութիւն, և ի թևս հոգւոյն սրբոյ թռուցեալք եկեն ի կամարն երկնից, խառնեցան ի գունդս զուարթնոց, ըստ այնմ. ,, Ոչ արթնով է կոչումն բանին կենաց ըստ պէսպէս շնորհացն, ընդ զարժանն և զերծուն, առնով յուսով զառհատատչեայ աւետիսն, և թռչել թևօք հոգւոյն յերկնից արքայութիւնն, և զեղեցիկ վարուք լինիլ ճանապարհ բարւոյ ի կեանսն ,,։ (Գրի. Լուսա. Յաճախ. ձառ ԺԹ. երես 161)։

,, Որ զօրինակ գոլ գերազանցութեան սրբոց Առաքելոց՝ որք ի հողեղէն բնութիւնս գոլով գերակատար առաքինութեամբ քան զհրեղէնսն գերազանցեցին նոքա, և քարինք սուրբք գոլով հաստատեալ ի վերայ վէմի ,,։ (Յովհ. Օրծոր. ի Մեկն. Մատթէոսի ԺԲ. 1)։

,, Հոդիք թեթեւք ի թանձր մարմնի ,,։ (Գրի. Դար. ի գովեստ Առաքելոց, երես 87)։

,, Զմայրն ահագին զարմից լուղակաց, և անապատաբեկ ոտիցն հետովք ընդ անկոխն ընթացաւ սահման յատակի, և զանհուն ծովուն միացեալ ծոցն, բաժանեաց ըստ մեծին Մովսէսին ,,։ (Նոյն անդ, երես 89)։

Հ.—Զի՞նչ խորհուրդ ունի արարչութիւն վեցերորդ աւուրն։

Պ.—Ունի զխորհուրդ վեցերորդի դարուն և խաչելութեանն Քրիստոսի՝ ըստ այնմ. ,, Զ՝ինչել փուխթայր հայրն փառաց զդէր պալատեաց մեր յանցանաց, որով զգեցաւ որդին գթած ի վեց դարուն զմարմին մեղաց, Հօր հաճութեամբ ի մահ խաչին եկն կամաւ ի յուրբաթին, Գառն զինաւ ի հին զատկին՝ փոխան գառանցն օրինակին ,,։ (Ի Ղ. արաւանի)։

,, Յակ նոր ադամդ ի վեց դարուն այդ արարեր կորուսեալն ,,։ (Նոյն անդ)։

,, Խորհուրդ տի օրէնութեանն Քրիստոսի յառաջ քան զյայտնութեանս ծածկեալ էր առ Հրէորդութեանն . . . . բայց կատարեցաւ ի վախճան ժամանակաց ի դարուն վեցերորդի ,,։ (Ներ. Ղ՝նորհ. ի թուղթ զոր գրեաց հրամանաւ Գրի. ԿԹղ. առ Յահաննայս Յամայք նահանգի ի Միջագ. Ասոր. երես 215. 170)։

Հ.—Յորժամ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդք նոցա՝ արդեօք մարդն ըստ նմանութեանն և համեմատ նոցին արարաւ։

Պ.—Ո՛չ. ասաց և եղեն նոքա, հրամայեաց և հաստատեցան՝ ըստ Դաւթայ. ,, Զ՝ինա ասաց, և եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան ,,։ (Սաղմ. ՃԽԸ. 9)։ Այլ երբ կամեցաւ ըստ մարդն առնել, ո՛չ այնպէս, այլ ասաց. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան. ըստ այնմ, ,, Երե Հօր արարչի խորհուրդ ի մէջ եդեալ ընդ արարչակից որդւոյ և հոգւոյ, իրրև զխորհուրդն առաջին ի նախաստեղծ մարդոյն. զի որպէս անդն ասաց թէ, արասցուք մարդ ինանութիւն պատկերի կերպարանաց մերոց, և անդէն ստեղծեալ զՆդամ ի կենդանութիւն, ի չգոյէն հաստատեցաւ ,,։ (Գրի. Լուսա. ՀՆգաթ. երես 117. ըստ հին տպոյ)։

Հ.—Ո՞րչափ օրինակ ունի իվեցերորդութիւն աւետարանիչ մարդոյն։

Պ.—Ունի զօրինակ Յովհաննէս Ասուածոյ, որ ի վեց գարուն ընկալաւ զմարգարէութիւնն՝ որ յառաջ քան զլինել մարդոյն ծածկեալ էր յաւերժութիւնն, ըստ այնմ, «Խորհուրդ անօթութենեան Քրիստոսի յառաջ քան զյաւիտեանս ծածկեալ էր յաւերժութեանն»։ (Տես. Ճ. Նորհ. գրեալ Թուղթ առ Վահանայս Յամայք նահանգի, յերես 170)։

«Պատք հօր եմուտ (Յովհաննէս Ասուածաբան) յարգանդ կուսին և ո՛չ գարշեցաւ. վասն զի ինքն էր սրբիչ ամենայնի։ (Գրիգոր Լուսաւորչի Ագաթանգեղոս)։

«Խորհուրդն անճառ ծածկեալն յաղթայ և յաւիտեանց՝ յայտնեցաւ իջմամբ հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ»։ (Ի Ճարակ)։

Հ.—Օ՞րչափ իմանի մարդ ասելն։

Պ.—Իմաստութիւն՝ որպէս գրէ Ճ. Նորհալի Հայրապետն մեր Տէրեսէս. «Զայն զի մարդն անուն՝ որ է մարդուն՝ այս ինքն իմաստուն, ո՛չ մարմնոյս է, այլ հոգւոյս»։ (Տես. Ճ. Նորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յամայք նահանգի, յերես 175)։ Եւ զի իմաստութիւնն Հօր Յիսուս եկեալ մարդացաւ առեալ զհոգի՝ զմիտ՝ զմարմին և զամենայն որ ինչ է ի մարդ, և զի մարդն եղեալ էր պատկեր ինքեան, և ինքն եղև մարդոյն՝ ըստ այնմ, «Իմաստութիւն երկնային իջեալ ի վերուստ, զընտրեալսն իսկզբանէ զյիմարս աշխարհի, և լցեր լուսով քո՝ իմաստութեան, հալածել սոքօք զխաւարն անգիտութեան ի մէնջ»։ (Ի Ճարականի։—Գրի. Լուսա. Յաճախապատ. յերես 72)։

Հ.—Օ՞րչափ էր ասելն Յովհաննէս՝ արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում։

Պ.—Ի այն, զի նախատեղծն Ադամ եղև պատկերակից արարչին, և զի չէկաց ի պատուիրանին, ինքն նկարագիրն և պատկեր հօր բանն Յաստուած մարմնացեալ հաճութեամբ Հօր և Հոգւոյն սրբոյ, եղև պատկեր և որդի մարդոյ, ըստ այնմ, «Քանզի նշոյլ է միանչեւնաւոր լուսոյն, և հայելի անարատ Յաստուծոյ ազդեցութեանն, և պատկեր առաստութեան նորա»։ (Իմաստ. Ը. 26)։

«Ըստ պատկերի իւրոյ արար զնա, որ ըստ Քրիստոսի մարմնանալոյն է իմանալ»։ (Գրի. Լուսա. Յաճախապատ. Ճառ Գ. յերես 29։—Յագաթ. յերես 113 ըստ հին թիւ)։

«Պատկերակից եղեր հողեղէն բնութեանս, անօրինեցար յարդանտի կուսին՝ բանդ Յաստուած, զմերս վերանորոգել պատկեր»։ (Ի Ճարակ)։

Հ.—Ու՞ր ինչ օրինակ ստեղծանիլն Ադամայ յետ երկնից և երկրի, և ո՛չ յառաջն։

Պ.—Վասնզի բանն Յաստուած ո՛չ եթէ նախ քան զօրէնս և զմարգարէս մարդացաւ, զի մի ասիցեն թէ օրինաւքն փրկեցաք, ըստ այնմ, «Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զոր եւս ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանսն արար, որ է լոյս փառացն՝ և նկարագիր էութեան նորա»։ (Եբր. Ա. 2)։

«Երդ, ասէ, յայսպիսի հայրենատուր աւանդիցս զոր ըստ օրինացն և արտաքոյ օրինացն գործէին և ի նմին ձգնէին, և բազմապատիկ աշխատէին ի շարաթեան, ի թլփատութենէն, ի զոհաղործութենէն, ի պէսպէս լուացմանէն մարմնոյ, և ինչ շահ անտի ի փրկութեան սակս ո՛չ գտանէին, և որք զնոսա անտի ազատել ո՛չ կարէր արծաթեղինօք՝ և ոսկեղինօք՝ և պատուականէրպ երնջոյն մատուցմամբ, ապա յայտ է՝ եթէ աբեան Միածնին կատարեալ հրէայք և հեթանոսք առ ի փըր-

կութիւն, որում և հանդիպեցան իսկ ,, : (Արգ. Հնոր. ի Մեկն. Ը. Պետրոս. Ը. 19):

Ա.—Ո՞ինչ է խորհուրդ հանգստեանն Աստուծոյ յաւուրն եօթներորդի:

Պ.—Ի խորհուրդ դարուն եօթներորդի՝ ըստ այնմ, ,, Բաբունաբար վարդապետիմք, յօրինակէ Տեառն խրատիմք, որ ի յերկրորդ արարչութեանն՝ յետ կատարման անօրէնութեանն՝ յեօթներորդ օր հանգստեան լքեալ մարմնով ի գերեզման՝ զկապեալ Հոգիսն վերածեաց, զանանց հանդիստն պատրաստեաց ,, : (Ի Հարականի):

Ա.—Ո՞ինչ իմանամք բառիս հանդիստ:

Պ.—Պարապել ի գործոց և հանդչել յաշխատութենէն:

Ա.—Մի՞թէ մա՞թ է այպէս ասել Աստուծոյ:

Պ.—Այդ ասի զԱստուծոյ յայն միտս, զի յետ առնելոյ նորա զմարդն ի պատկեր իւր հանգեաւ, և զայլ ևս նոր ինչ ո՛չ արար, ըստ այնմ, ,, Որ տկարութիւն դնէ աստուածութեան զօրութեանն, արտաքոյ ձշմարտութեան հաւատոյ է: Ո՛չ ասեն, երբեմն կարող է, և երբեմն ոչ: Ընդհակառակ, եթէ Աստուած ակարանայ, ո՞վ է որ զօրացուցանէ զնա: Ի բաց լեկին չար վարդապետին չար ուսմունքն. զի Աստուած կարօղ է և կատարեալ, ո՛չ երբէք նուազի ի կատարելութենէն և ի զօրութենէն, այլ զամենեսեան ընու և զօրացուցանէ, և ինքն յոմանէ ո՛չ ընդի և ո՛չ զօրանայ ,, : (Կիրիլ. Լուսաւ. Յաճախապատ. ձառ ԻԲ. յերես 239):

Ա.—Ո՞ինչ այլ խորհուրդ ունի հանդչելն Աստուծոյ:

Պ.—Ոչն, զի ի վախճան ժամանակին մարդացաւ Տէրն մեր, և զամս երեսուն շրջագայեալ յաշխարհի՝ քարոզեաց մեզ փրկութիւն՝ և ի վերջորդումն աւուր եկեալ կամաւ ի խաչ և ի չարչարանս, մեռաւ մարմնով, և նոր նորոգեալ զնա-

դամ ի հնութենէ մեղաց՝ եդաւ ի նոր գերեզմանի. իսկ յաւուրն եօթներորդի հանգեաւ հանդիստն ամենեցուն, ըստ այնմ, ,, Ընդհակ խաղաղութեամբ գերեզման նորա ,, : (Ընտիր Ծն. 2):

,, Ինքն ի գերեզմանս գնաց, և ի տապանի աքնեցաւ, քաղցրացան նմա խիղճք հեղեղատի, և զհետ նորա ամենայն մարդ գնասցէ ,, : (Յոբ. ԻԸ. 32):

,, Որ և այս օրինակ իսկ էր երկրորդի արարչութեանն Ադըմատոյ Աստուծոյ մերոյ, որ յետ կատարման անօրէնութեանն խորհրդոյն ի նոյն օր հանգստեան շաբաթու մարմնով էջ, որպէս զի ընդ ինքեան ի վեր բերցէ զկապեալ Հոգիսն, և զանանց հանդիստն պատրաստեսցէ նոցա ,, : (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԻՐ. յերես 609):

Ա.—Ո՞ինչ այլ ևս ցուցանէ յեօթներորդին հանգստանալն:

Պ.—Ո՛իւր օրինակն մեզ, թէ որպէս ես հանգեայ յաւուրն եօթներորդի, և դուք հանդչելոց էք յեօթներորդումն դարու կատարածի աշխարհիս. որով զյոյս հանգստեան ընկալան սուրբք և արդարք, ըստ այնմ, ,, Լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս, գրեա՛, երանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի, զայս ասէ Հոգին. քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոքան զկնի նոցա ,, : (Յայտն. ԺԴ. 13):

,, Թէ որք զգործս Աստուծոյ աստէն գործեն՝ անդրէն ընդ Աստուծոյ հանդչելոց են իբր մանկունք յանկողինս իւրեանց ,, : (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԻՐ. 1.—ԺԲ. 8. յերես 268. –611):

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս կազմո-ղեան մարդոյն՝ և դրախտին՝ զոր պնդեաց
Աստուած յերեմ ընդ ասելն, և եդ անդ զմարդն։

Ա.—Որպէ՞ս կազմեաց Աստուած զմարդն։

Պ.—(Ոմանքն նախամարդոյն Ադամայ) ստեղծ Տէր Աստուած ի հողոյ երկրի, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի ,, ։ (Ծննդ. Ր. 7)։

Ա.—Յորժամ ստեղծ Աստուած զմարդն՝ ո՞ւր եդ զնա։

Պ.—Տնկեաց Աստուած դրախտն եդեմ ընդ արևելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ ,, ։ (Ծննդ. Ր. 8)։

Ա.—Ո՞րչափ իմանի անուամբ դրախտ։

Պ.—(Ծառատունկ պարտէզ և բուրաստան) յորում տնկեաց Աստուած ծառն կենաց և ծառն գիտելոյ զբարի և զչար ,, ։ (Ծննդ. Ր. 9)։

Ա.—Ուրանի՞ գետ ելանէն յԱդեմայ, և յի՞նչ պէտս։

Պ.—(Մի գետ միայն ելանէ) ոռոգանել զդրախտն, և անտի բաժանի ի չորս առաջս։ (Ծննդ. Ր. 10)։

Ա.—Ո՞րչափ անուանքն են գետոցդ։

Պ.—Փիսոնն, Գեհոնն, Տիգրիս և Եփրատէս, (որք ոռոգանեն զդրախտն։ Ծննդոց. Ր. 11)։

Ա.—Որո՞վք սահմանօք պատեն և գնան։

Պ.—Երկրաւն Եւղատայ և Եթովպացւոց, որ է յանդիման Սորբեստանի. (այսոքիկ են գետք դրախտին փափկութեան) և էառ տէր Աստուած զմարդն . . և եդ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել։ (Ծննդ. Ր. 12. 13. 14. 15)։

Ա.—Ո՞րչափ չէ գոյր անդ ի գործել և ի պահել։

Պ.—Գործել զարդարութիւն, և պահել զպատուիրանն Աստուծոյ։

Ա.—Ո՞րչափ էր պատուիրանն Աստուծոյ։

Պ.—Յամենայն ծառոյ օրք են ի դրախտի՝ ուտելով կեաս, (ասաց), բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի՝ մի՛ ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք։ (Ծննդ. Ր. 16. 17)։

Ա.—Ադամ միայն գտանէր ի դրախտին։

Պ.—(Նախ միայն էր և ապա ի կողէ նորա ստեղծաւ օգնական նմա կինն Եւայ) ըստ այնմ, ,, Ասաց Տէր Աստուած, ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինիլ, արասցուք դմա օգնական ըստ դմա ,, ։ (Ծննդ. Ր. 18)։

Ա.—Որպէ՞ս ստեղծ Աստուած զԵւայ։

Պ.—Եւթե . . թմրութիւն ի վերայ Ադամայ, և ննջեաց, և էառ մի ի կողից նորա, և լիից ընդ այնր մարմին, և շինեաց . . զկողն զոր էառ յԱդամայ՝ ի կին. և ած զնա առ Ադամ, (և բացեալ Ադամայ զաչսն ի քնոյ անտի, և տեսեալ զկինն իւր առ իւր, մարգարէացաւ) և ասէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկուքեան ի մարմին մի։ (Ծննդ. Ր. 21.—24)։

Ա.—Ո՞րչէ էր զգեստ նախաստեղծիցն ի դրախտի անդ։

Պ.—(Եթէնարփեան շնորհք Հոգւոյն սրբոյ՝ որով փառօք զարդարեալ, ուստի և թէպէտ ի նիւթական զգեստուց) էին երկոքեան մերկ Ադամ և կինն իւր, և ո՛չ ամաչէին։ (Ծննդոց Ր. 25)։

Ա.—(Ո՞ւմէ էր ապա մերկանալ նոցա, և ասէն էր մերկացան)։

Պ.—(Մերկանալ նոցա էր զրկելն ի լուսեղէն փառացդ, և պատճառն էր անցանել նոցա զպատուիրանսն Աստուծոյ և ճաշակել իբրական բարի բնութեան)։

Ա.—Ո՞ եղև պատճառ անցանելոյ նոցա զպատուիրանսն Աստուծոյ։

Պ.—(Նախաչար բանսարկուն սատանայ, որ յօձ կերպարա-նեալ՝ մատեաւ առ Եւայ) և ասէ . . ,,Ո՞վ է պիտոյ Աստուած թէ յամենայն ծառոյ որ իցեն ի դրախտի այդը, մի՛ ուտիցէք ,,։ (Ծննդ. Գ. 1)։

Ա.—Ո՞վ պատասխանեաց Եւայ։

Պ. Ի պտղոյ ծառոյ դրախտիդ կերիցուք, (ասէ.) բայց ի պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին, ասաց Աստուած՝ մի՛ ուտիցէք ի նմանէ, և մի՛ հուպ լինիցիք, զի մի՛ մեռանիցիք ,,։ (Ծննդ. Գ. 2. 3)։

Ա.—Ո՞ր խորամանկութիւն հնարեցաւ ապա սատանայ։

Պ.—(Ոչայս բան խաբէական թէ,) ,,Ո՛չ եթէ մահու մեռանիցիք. զի գիտէր Աստուած թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ բանայցին աչք ձեր, և լինիցիք իբրև զաստուածս, ճանաչել զբարի և զչար ,,։ (Ծննդոց Գ. 4. 5)։

Ա.—Իբրև լուաւ Եւայ զաստուածանալն, զի՞ եղև նմա։

Պ.—(Վառեալ բորբոքեցաւ ի սէր աստուածանալոյ). ,,Եւ հառեալ կինն՝ զի բարի էր ծառն ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ ի տեսանել, և էառ ի պտղոյ նորա, եկեր, ևետ առն իւրում ընդ իւր, և կերին ,,։ (Ծննդոց Գ. 6)։

Ա.—Ո՞վ պատահեցաւ նոցա յետ ուտելոյ զպտուղն արգելեալ ծառոյ։

Պ.—Բացան աչք երկոցունց, և գիտացին զի մերկ էին, և կարեցին տերեւս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս ,,։ (Ծննդ. Գ. 7)։

Ա.—Ո՞վ լետոյ։

Պ.—,,Լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ՝ ընդ երեկս, և թաքեան . . . ի մէջ ծառոց դրախտին ,,։ (Ծննդ. Գ. 8)։

Ա.—Ո՞վ առ նոսա ձայներ Երարիչն։

Պ.—,,Ասէ ցնա, (Ադամ) ո՞ւր ես ,,։ (Ծննդ. Գ. 9)։

Ա.—Եւ զի՞նչ պատասխաներ Ադամ։

Պ.—,,Ասէ. լուայ զձայն քո ի դրախտի այդ՝ և երկեայ. քանզի մերկ էի՝ և թաքեայ ,,։ (Ծննդոց Գ. 10)։

Ա.—Ո՞վ առ նա Երարիչն։

Պ.—,,Ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես. բայց եթէ ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ՝ անտի և եթ չուտել, կերար արդեօք ի նմանէ ,,։ (Ծննդոց Գ. 11)։

Ա.—Ո՞վ պատասխանեաց Ադամ։

Պ.—,,Կինն զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ ,,։ (Ծննդոց Գ. 12)։

Ա.—Ո՞վ առ կինն հարց Աստուած։

Պ.—,,Ասէ . . կինն. զի՞նչ գործեցեր զայդ ,,։ (Ծննդ. Գ. 13)։

Ա.—Ո՞վ նա պատճառեաց յայնժամ։

Պ.—,,Օձն խաբեաց զիս և կերի ,,։ (Ծննդ. Գ. 13)։

Ա.—Ո՞ր անէծս կարդաց յայնժամ Աստուած ցօձն։

Պ.—,,Ասէ . . . փոխանակ զի արարեր դու զայն, անիծեալ լիջիր դու յամենայն անասնոց և յամենայն գազանաց երկրի. ի վերայ լանջաց և որովայնի քո գնասցես, և հող կերիցիս զամենայն աւուրս կենաց քոց։ Եւ զդիմ թշնամութիւն ի մէջ

քո և ի մէջ կնոջդ, և ի մէջ զաւակի քո և ի մէջ զաւակի նո֊ր֊ա. նա սպասցէ քոյմ գլխոյ, և դու սպասցես նորա դարշապարի ,, : (Ծննդ. Գ. 14. 15)։

Ա.—Եւս քան զանիծանելն զրպիսի կերպարանս ունէր օձն։

Պ.—,, Էր խոհականագոյն քան զամենայն գազանս որ էին երկրի, զոր արար Տէր Աստուած ,, : (Ծննդ. Գ. 1)։

Ա.—Ասկ կնոջն և Ադամայ զրպիսի՞ անէծս եւս։

Պ.—,, Յկինն ասէ, բազմացուցանելով բազմացուցից ըզտրտմու֊թիւնս և ըզհեծու֊թիւնս քո. տրտմու֊թեամբ ծնցես որդիս. . և առ այր քո դարձ քո, և նա տիրասցէ քեզ. և Ադամ ասէ. փոխանակ ղի լուար ձայնի կնոջդ քո, և կերար ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, և կերար ի նմանէ, անիծեալ լեցի երկիր ի գործս քո, տրտմու֊թեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց, փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի, քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քոյ, մինչև դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր և ի հող դարձցիս ,, : (Ծննդ Գ. 16—19)։

Ա.—Ադամ զի՞նչ կոչեաց անուն կնոջ իւրոյ։

Պ.—,, Կեանս, զի նա է մայր ամենայն կենդանեաց ,, : (Ծննդ. Գ. 20)։

Ա.—Օ՛ի՞նչ զգեցոյց Աստուած Ադամայ և կնոջ նորա, յորժամ արտաքսեաց զնոսա յերանութեան վայրէն։

Պ.—,, Անդերձս մաշկեղէնս ,, : (Ծննդ. Գ. 21)։

Ա.—Օ՛ի՞նչ ասաց ի զգեցուցանելն։

Պ.—,, Ընդ . . ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ՝ դիտել զբարի և զչար, և արդ դուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան ,, : (Ծննդ. Գ. 22)։

Ա.—Յետ ելանելոյ նոցա ի դրախտէն փափկութեան ո՞ը բնակեցոյց։

Պ.—,, Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեանն՝ գործել զերկիր ուստի առաւ . . . և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան ,, : (Ծննդ. Գ. 23)։

Ա.—Կարելի չէր արդեօք նախատատիճից երթևեկել ի դրախտն՝ յետ զգեկելոյ և վայելչութեանց նորին։

Պ.—(Ո՛չ երբէք։ զի) ,, Ըստ այնմ (Աստուած) քերովբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց ,, : (Ծննդ. Գ. 24)։

ՄԵՌՈՒԼԻ.

Ա.—Օ՛ի՞նչ օրինակեր ի հողոյ երկրի լինել մարդոյն։

Պ.—Օրինակեր զբանն Աստուած, որ ընդ հողոյդն բնութեանն պարտնակեցաւ և մարմնացաւ՝ որ Տէրն էր երկնից, ըստ այնմ, ,, Առաջին մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդ մարդն Տէր երկնից ,, : (Ա. Կորնթ. ԺԵ. 47)։

,, Ընդ Տէրն մեր նորոգ արարչութեամբն, ոչ զհողն պատկեր իւր առնելով, այլ զպատկերն Աստուծոյ անձնաւորութեամբ ընդ հողանիւթեայ զանդուածոյս խառնելով զհողս աստուածացոյց և ընդ աջմէ Հօր նստոյց ,, : (Մարգ. Շնորհ. ի Մեկն. Ը. պետ. Ը. 3)։

Ա.—Ընդէ՞ր ո՛չ նախ մարդն արարեալ քան զերկինս և զերկիր։

Պ.—Վասն այն՝ զի էէ պատկան յաւուրք քան զպատրաստութիւն արքայութեան և աթոռոյն պարքայն օծանիլ, կամ ժողովրդեան՝ զքահանայն՝ ըստ այնմ, ,, Աստուած նախ զար-

զարեաց զերկինս լուսաւորօքն, և զերկիրս ծաղիօք և ազդի ազդի արարածովք. և հուսկ ամենեցուն ստեղծ զմարդն իբրև զարքայ և իբրև զքահանայ առ ի իշխել արարածոց, և ի զբօսնուլ և ցնծալ նովիմբք: Ընտաւսիկ ցուցանի քահանայութիւն և թագաւորութիւն նորա և յերդս Հարականաց՝ որպէս երդէ «Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեր օծմամբ Հոգւոյն: (Ի Հարակ):

«Օ՜ի տիրական պատիւ մարդոյն նշանակէ բանիւ, զոր ի ստեղծմանէն յԱստուծոյ ընկալաւ, զի և զնա Տէր և իշխան, և թագաւոր, որ կացոյց երևելի արարածոց»: (Սարգ. Հ՝նորհ. ի Ծնկն. Յակ. ճառ Ութերորդ. Գ. 7):

«Աստուած Ադամայ երկիս շնորհս ետ, թագաւորութիւն՝ զի ասաց տիրեցէք ամենայնի, և քահանայութիւն՝ զի անուանս եդ, և մարգարէութիւն՝ զի մարգարէացաւ վասն կնոջն. իսկ յետ յանցմանէն կորուսին զշնորհն»: (Յովհ. Ծործոր. ի Ծնկն. Մատ. Ժ՝Գ. 57, գլ. Ի. 38):

Հ.—Օ՜ինչ նշանակէր վիճակաւ կենդանացուցանէն Աստուծոյ զմարդն:

Պ.—Օ՜յանալ բանին Աստուծոյ ի Հոգւոյն սրբոյ, որ է Հոգի կենդանարար, ըստ այնմ, «Եղև մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ՝ ի Հոգի կենդանարար»: (Ա. Կորնթ. ԺԵ. 45):

«Բայց զի Քրիստոս զնա նախ ընկալաւ յինքն ըստ մարմնոյ, նորն Ադամ պայծառացեալ վիճակն՝ զոր կորոյս առաջինն Ադամ, և ի մեզ շնորհն ի ձեռն Քրիստոսի՝ նովաւ, և ի նմանէ տարածեցաւ. վասն այսորիկ և Հոգի Քրիստոսի անուանի»: (Ներս. Լամբ. ի Ծնկն. Պատ. յերես 111):

«Իսկ առ ի միտս՝ քանզի Ադամն առաջին երևանամեայ ստեղծեալ՝ ընկալաւ զիշխանն Հոգւոյն, և ոչ պահեաց. երկրորդ Ադամն տէր առեալ նորին բնութեամբ զհօթնեկի շնորհս յիջմանէ Հոգւոյն ի Յորդանան, և յետ հանօլէն ծննդոց նորին առաքանին վերստին ծննդեամբ. այլ յաղագս այսորիկ պատճառանաց գայր ի Յորդանան մկրտիլ ի Յովհաննէ»: (Ներս. Հ՝նորհ. ի Ծնկն. Մատ. Գ. 13. յերես 64):

Հ.—Որո՞յ օրինակ է դրախտն փախիստութեան:

Պ.—Սրբոյ կուսին Մարիամայ և եկեղեցւոյ, որ են դրախտ և արևելք ծագման Երեքականն Երկրաբնութեան, ըստ այնմ, «Դրախտ աստուածային և արևելք իմանալի»: (Ի Հարակ):

«Եւ այլ իմն ազատութիւն քան զառաջինն և անախտութիւն շնորհեաց մեզ, և առանց ցաւոց կեանս՝ և հրեշտակական վարս, և փոխանակ դրախտին զկերեցի՝ փոխանակ փայտին կենաց զխաչն»: (Սարգ. Հ՝նորհ. Ա. պետր. Գ. 3):

Հ.—Որո՞յ օրինակէր ծառն կենաց անկեալ ի մէջ դրախտին:

Պ.—Իր օրինակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի Հոգւոյն անկեցաւ ի դրախտի Տիրամայրն կուսին՝ ըստ այնմ, «Պարտէզ փակեալ Աստուածամուտն եղեմ, որ և ծառն կենաց ի մէջ դրախտի քո ի Հոգւոյն անկեալ, անմահական պտղոյն եղեց զտիկերս»: (Ի Հարակ):

«Բայց վարդապետք եկեղեցւոյ ի պէսպէս օրինակս համեմատեն զսուսա ձշմարտութեան, զդրախտն եկեղեցւոյ, զծառն կենաց Քրիստոսի, և զծառն գիտութեան՝ չարին մասին, յորմէ հեռանալ և ոչ հատ լինել պատուիրեալ է մեզ»: (Ներս. Հ՝նորհ. դրեալ Թուղթ առ Վահանայս Յամայք Նահանգի, յերես 163):

Հ.—Որո՞յ օրինակ է մի գետն ի չորս յառաջս բաժանեալ:

Պ.—Աստուածանին Քրիստոսի, որ ի Քրիստոսէ աւետարանեցաւ, և ի ձեռն չորից Աստուածչաց իբրև ի միոյ ակունէ բղխեալ ուղղութեանց գաշխարհս քրիստոնէական հաւատով, որով

զօրացան եկեղեցիք, և տապացեալ հոդիքն զովացեալ ջրովն աւետարանական վարդապետութեան, պաղատելեցան յարքայութեան, ըստ այնմ, ,, Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ ,,: (Սաղմոս խե. 4):

,, Եւ զի չորք միայն սոքա և ոչ առաւել կամ նուազ, զնոսին ճանաչել՝ զի և զայս նկարագրեաց Հոգին օրինակօք, նախ չորիւք վտակօքն՝ որ յեդեմայ: Ոչ որպէս նոքա ոռոգանին և զովացուցանեն զամենեսին ի տապոյ չերմութեան, սոյնպէս և սոքա Հոգւոյն բղխմամբ՝ աւազանին ջուրքը շինուցին զրոց մեղացն՝ որ վառեցաւ յԱստուած ընդ չորս անկիւնս աշխարհի ,,: (Ներս. Հնորհ. ի Մեկն. Մատ. յառաջաբան. յերես 18):

,, Եւ զգետոցն բղխումն չորից Աւետարանչացն և այլ ևս բազմապատիկ խորհրդոցն ,,: (Ներս. Հնորհ. գրեալ Թուղթ առ Յահանայս Յաճախք նահանդի, յերես 163):

,, Ոչ այժմ ի ծով առակաւ ասէ, յետ փոքու հանգերձեալ է տուն Աստուծոյ անաւանել, որ է եկեղեցի սուրբ, որ աքանչելի և ուրախարար զբօսանք գնէ բազմապատիկ ջուրցն ձայնք. և ձայն ջրոյն է ազդումն Հոգւոյն, խրաքանչիւր ոք ի սրբոցն, որով գնացս և ճանապարհ արարեալ յեկեղեցիս պէս պէս և բազում ձայնս շնորհաց ժողովեաց աստ և ծով արար, զի ի ծովն որպէս ոչ մի գետ՝ այլ բազումք մուտանեն. այսպէս և եկեղեցի՝ ոչ մի շնորհ Հոգւոյն, այլ բազում և զանազան է ժողովեալ, և որպէս նոքա թէպէտ և գետքն զանազան են, սակայն բնութիւն ջրոյն մի է ,,: (Ներս. Լամբ. ի Մեկն. Պատ. յերես 20):

Հ.—Որոց օրինակ ունին անուանք չորեցունց գետոց:

Պ.—Չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, և Յովհաննու. ըստ այնմ, ,, Եւ զգետոցն բղխումն չորից աւետարանչացն և այլ ևս բազմապատիկ խորհրդոց, և

զհին Ադամն նորոյն Ադամայ ,,: (Ներս Հնորհ. գրեալ Թուղթ առ Յահանայս Յաճախք նահանդի, յերես 163):

Հ.—Որոյ օրինակ ունին սահմանքն ընդ որով գնային և պատճին չորեքին գետքն:

Պ.—Չորեցունց քաղաքացն, յորս գրեցին Աւետարանիչքն զԱւետարանն սուրբ, այն է՝ Երուսաղէմայ, Աղէքսանդրիոյ, Անտիոքայ և Եփեսոսի, ըստ այնմ, ,, Եւ զի չորք միայն սոքա և ոչ առաւել կամ նուազ, ունիմք ճանաչել՝ զի և զայս նկարագրեաց Հոգին օրինակօք, նախ չորիւք վտակօքն՝ որ յեդեմայ, զի որպէս նոքա ոռոգին և զովացուցանեն զամենեսին ի տապոյ չերմութեան, սոյնպէս և սոքա հոգւոյն բղխմամբ՝ աւազանին ջուրքը շինուցին զրոց մեղացն, որ վառեցաւ յԱստուած, ընդ չորս անկիւնս աշխարհի ,,: (Ներս. Հնորհ. ի Մեկն. Մատ. յերես 18. յառաջաբան):

Հ.—Ո՞ւր էր պատուիրանն Աստուծոյ առ Ադամ ի գործել զերկիր և պահել ի դրախտի անդ:

Պ.—Յր հրաման գործելոյ զարդարութիւն և պահելոյ զպատուիրանս արարչին իւրոյ, ըստ այնմ, ,, Այլ տունկն պատուիրանացն Աստուծոյ, որ բարիք են և բարեաց պատճառք ուստոցան զնոսա, զորս և ուսեալ հրաման ընկալաք՝ գործելոյն և պահելոյն ,,: (Ներս. Հնորհ. գրեալ Թուղթ առ Յահանայս Յաճախք նահանդի, յերես 163):

,, Ոչ եթէ գործոց ինչ, կամ պահպանութեան պէտս ունէր զրախտն, որ ամենայն վայելչութիւն, և Աստուածային պահպանութիւն էր, այլ գործել զարդարութիւն, և պահել զպատուիրանն յառաջադոյն վարդապետեաց ,,: (Գրիգ. Նար. ի Մեկն. Երգոց. Ա. 5):

Հ.—Ո՞վայդ ինչ կատարեաց նա սրբութեամբ։

Պ.—Ո՛չ, այլ՝ մեզաւ ձաշակմամբ պտղոյն արգելեալ Ծառոյն. նմին իսկ և փոխանակ նորին նորն Ադամ Տէր մեր Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ, և գոլծեաց զամենայն արդարութիւնս՝ առնելով և ուսուցանելով ըստ աւետարանագրին, թէ՝ ,,Ես յերկնից ո՛չ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ, որ առաքեացն զիս,,։ (Յովհ. Ը. 38)։

,,Եւ Տէր մեր զգեցեալ զեզծեալ պատկերն Ադամայ, և նովին հնազանդի Հօր. զի զկեանս և զանապականութիւնն ի մարդիկ աղբերացոյց,,։ (Աարդ. Հ. Նորհ. Ե. Պետր. Ճառ առաջին Ը. 2)։

,,Եւ զի անհնազանդիւն սակս ճաշակման պտղոյն, և անմահ բնութեան ապուաժանալոյն էրև, որով մահ թագաւորեաց. իսկ հնազանդիւն ընդդէմ նմին առ մահ խաչին ցուցաւ՝ որով և կեանք թագաւորեցին,,։ (Նոյն, անդ, Ճառ Ը. 2)։

,,Եւ կամք Առաքչին նոյն էին. զի մահուամբ որդւոյն առաքեալ փրկեսցին. ի պատճառ որոյ առաքեացն զնա յաշխարհս և այս սակս անհնազանդութեան նախնոյն Ադամայ, որով գտապականութիւն ևհղեալ ի բնութիւնս,,։ (Նոյն, անդ, Ճառ առաջին. Ը. 9)։

,,Այլ զի տէրն երկրորդ Ադամ եղև և պատուիրանն Հօր պահեաց մարմնովն Ադամայ, վասն այսորիկ և ամենայն բնութիւնք կենդանեաց հնազանդեցան նմա,,։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԻԸ. 7. յերես 442)։

Հ.—Ո՞րպէս միաս կինն օգնական առն իւրում արարաւ։

Պ.—Այն միաս՝ զի որպէս անդ նախապիտութեամբն Աստուծոյ՝ որ զիսաակն է ծածկեալ խորհրդոց ապագայից՝ արարեալ կինն լծակցեալ զուգակցութեամբ գործակից առն իւրում

ամենայն բարեաց։ Եւ յետ յանցմանն զպատուիրանաւն Աստուծոյ անձնիշխան կամօք՝ կրել զոյգ և հաւասար զամենայն դիպուածս աշխարհի զչարչարանս և զնեղութիւնս և զանձկութիւնս և զհալածանս, և ժուժկալեալ համբերութեամբ տանել ամենայնի, կամ զփառս և զպատիւ և զիշխանութիւն. նմանապէս եկեղեցի հարսին և ժառանգակցին Քրիստոսի սրբեալ ի յանցանաց հնոյն Ադամայ արեամբ անբիծ և անարատ Գառնին Աստուծոյ. վասն որոյ ըստ տնօրինական խորհրդոյն այլաբանօրէն է օգնական եկեղեցի Քրիստոսի Աստուծոյ, որպէս Սիմէօն Սիւրինացին զնաչափայան Յիսուսի բառնալով՝ և երթալով զհետ նորա, յօրինակ հանրական եկեղեցւոյ չարչարակցին Քրիստոսի, ըստ այնմ, ,,Որ ըստ մարմնոյ չարչարանացն քոց՝ եղեր կամաւ չարչարակից՝ որոց ի փառան հայրենի լինիլ նման քեզ խոստացար,,՝ (ի Շարակ.) և ո՛չ ըստ Աստուածութեանն. զի Աստուած յումեքէ ոչ օգնի՝ այլ ինքն է օգնական ամենայն յամենայնի՝ որպէս գրի, ,,Ո՛չ օգնութիւն առնու արարիչն յարարածոցս, այլ նա նոցա է օգնական և զօրացուցիչ վերնոյն և ներքնոցս,,։ (Գրիգ. Լուսա. Յաճախապատում ճառ ԻԲ. յերես 240)։ Եւ ընդ Քրիստոսի չարչարեալ և ընդ նմին պսակելոց է, ըստ այնմ, ,,Եւ եթէ օրդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ՝ ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք,,։ (Հռոմ. Ը. 17)։

,,Հաւատարիմ է բանս. զի եթէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և կեցցուք. և եթէ համբերիմք, ընդ նմին և թագաւորեսցուք,,։ (Բ. Տիմոթէոսի Բ. 11)։

,,Խաչակից լալք ընդ Քրիստոսի և ընդ նմին թագաւորեալք, ի միասանգամ գալստեան նորա նստելոց էք դատաւորք,,։ (Ի Շարակ. կանոն երկոտասան առաքելոց)։

Հ.—Որո՞յ օրինակ է նա։

Պ.—Հարսին Պրիսկոսի սուրբը նկատելոյ, որպէս մարգարէն ասէ, «Պատցե զհոգի ընդ աջմէ քումմէ ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ»։ (Սաղմ. ԽԴ. 10)։

«Նա զնեալ եկեղեցւոյ՝ գարձեալ որ շինեցաւ ի կողմին Պրիսկոսի, և զօձն սատանայի»։ (Ընդ. Հնոր. գրեալ Թուղթ առ Վահանայս Յամոյք նահանգի, յերես 163)։

«Նա առաջին վանն նախնականի ինքնութեանն ասէ. որպէս և մեկնէ Պօղոս առ Հեթանոսս, ասէ, խօսեցայ զքեզ հաստատութեան իբրև կոյս մի սուրբ՝ յանդիման կացուցանել Քրիստոսի . . . զամենայն սիրելիդս իբրև զկարան դարձուցանել առ մի միտս. այնպէս նշանակէ այրն որ յերկնից եկն որդին Աստուծոյ։ (Գրիգ. Լուսա. ՍՔգաթ. յերես 185. ըստ հին տիպ.)։

«Նա ով լոյէ հարան, եթէ ո՛չ եկեղեցի հեթանոսաց. կամ ով լոյէ փեսայն՝ եթէ ո՛չ Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ, որ էջ յերկնից՝ և նուաճեաց զամենայն յերկրպագութիւն ՟օր»։ (Նոյն, անդ. յերես 186. ըստ հին տիպ.)։

Հ.—Որո՞յ օրինակ է թիւրութիւնն և ննջումն Ղազարայ։

Պ.—Մահուանն Յիսուսի որ ի խաչին, քանզի մահն Յիսուսի ննջումն լինի էր համարեալ, զի որ ննջէ՝ յառնէ. այսպէս և ձշմարտապէս Քրիստոս մեռաւ և յարեաւ. ըստ այնմ, «Հաւատամք եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա»։ (Առաջին Թեսաղ. Դ. 13)։

«Նա ի կողից իւր կրկին վտակաց չինեաց զեկեղեցի որպէս զՆաւայ ի կողին Ադամայ»։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մ՚ին. Մատ. Ժ. 15. յեր. 210)։

«Զնաւայ եկեղեցւոյ գարձեալ՝ որ շինեցաւ ի կողին Քրիստոսի, և զօձն սատանայի»։ (Ընդ. Հնոր. գրեալ Թուղթ առ Վահանայս Յամոյք նահանգի, յերես 163)։

Հ.—Ի՞նչ ի կողին Ադամայ ստեղծ Տէր Աստուած զկինն, և ո՛չ այլ ոտանէք։

Պ.—Վասն այն, զի որպէս Նաւայ եկեալ ի կողին Ադամայ, մայր եղև ամենայն կենդանեաց և օրինակ հոգևոր սիրոյ եկեղեցւոյ և զարդարեցաւ երկնաձիր պարգևօք, այսպէս և ի կողէն Յիսուսի հեղեալ արիւն և ջուր՝ զարդարեաց զեկեղեցի Աստուածային պէսպէս շնորհօք, ըստ այնմ, «Արկնավտակ կողէն աղբերիք եկեղեցի իւր հաստատեի, ջրոյն մաքրի՝ զաւրիւնն ըմպել, զորդի ընդ Հօր փառաւորել»։ (Ի Շարականի)։

«Որպէս անդ ի կողին Ադամայ շինեցաւ Նաւայ՝ մարմին ի մարմնոյ նորա և ոսկր յոսկերաց նորա, այնպէս և եկեղեցի ի կողէ երկրորդն Ադամայ եղև հարսն Քրիստոսի, ըստ Յովհաննու թէ՝ որ ուներ զհարսն՝ նա է փեսայ»։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մ՚ին. Մատ. ԺԹ. 6. յերես 400)։

«Եալ և լոցմամբ կողին և չարչարանացն՝ վերս կողին և ղցաւս նախնոյն բժշկեալ առողջացուսցէ»։ (Նոյն, անդ. ԻԲ. 50. յերես 601)։

«Կանդի որպէս ի կողէն Ադամայ շինեցաւ կին ի հոգւոյ և ի մարմնոյ, այսպէս և ի կողէն երկրորդն Ադամայ շինեցաւ եկեղեցի՝ ջրոյն մաքրի և զարիւնն ըմպել»։ (Նոյն, անդ, ԻԲ. 50. յեր. 601՝)

Հ.—Ո՞վ ինչ իմաստ ունի ասելն, Թողեք այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զկին կնոջ իւրոյ։

Պ.—Այն անուանի կնքոզն, և զի մարդս եկեղեցի կնիք է Աստուծոյ, որպէս և Պօղոս ասէ, «Տալ եաւս կնիք

տանն Աբեխանեայ»։ (Ա. Կորնթ. Ա. 16)։ Ուստի Որդին Աստծին իջեալ ի 4օրէ յերկնից, թողեալ և զմայրն առ պատուականն խաչին, գնաց զինի եղծեալ պանակերին ըստ առաքելոր բանի Եւետարանին՝ թէ՝ «Ոչխ ինչ կին, որոյ լցեն զրամք տասն, և եթէ կորուսանիցէ դրամ մի, ոչ լուցանիցէ ձրագ, և ածիցէ տալ ի տան, և խնդրիցէ ստէպ մինչև գտանիցէ զնա»։ (Ղուկ. Ժե. 8)

«Եւ եթող զհայր յերկինն՝ և զմայրն լալագին առ խաչին, և չոգաւ զինի հարսին եկեղեցւոյ, ի մահ և ի դժոխս, որով վերածեալ միաձրեաց հաւատովք առ ինքն զաշխարհական բնութիւնն»։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. Ժ. 15. յերես 210։)

«Զատն որոյ թողեալ զհայրն յերկինս, և զմայրն մերձ առ խաչին, չոգաւ ի մահ և ի դժոխս և շինակաց իւրոց մարմնոյն, և դշխոյ պանծալի զաւրութ զինկզնցի»։ (Նոյն, անդ, Ժ. 6. յերես 200։)

4.—Օ՛ինչ միաւ ասի, թէ էին երկոքեան մերկ Ադամ և կինն իւր և ոչ ամաչէին։

Պ.—Ընդ այն միաւ, զի անձառելի և անբաւելի ծածկաբար խորհուրդ տնօրէնութեան Տեառն ի սահմանին նախաստեղծին, աստէն կատարեցաւ ի վերայ արդարոյն Յովսեփայ, և սրբուհւոյ անարատ կուսին Աստուածածնի Մարիամու, յորմէ անսերմնաբար յղացեալ ճնաւ Աբարիչն Նոցին, որք մերկ էին ի յարիաճից չարեաց, և ի մերոց առանց խղճի ամօթոյ ի մէջ դրախտի եկեղեցւոյ, ըստ այնմ, «Եւ դարձեալ՝ ըստ խորհրդոյ, զի որպէս ի դրախտին մերկ էին Ադամ և Եւայ, և ոչ ամաչէին՝ զի անմեղք էին, նոյնպէս և Յովսէփ և Մարիամ ի դրախտի եկեղեցւոյ մերկ էին ի մեղաց և առանց խղճի ամօթոյ»։ (Ներս. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ե. 18. յերես 31։)

4.—Որո՞ օրինակ մերկութիւնն Ադամայ։

Պ.—Ի օրինակ այնմ՝ յորժամ ունկնդիր եղև Ադամ պատրոպական բանից նախանձոր բանսարկուին, մերկացեալ զինուս Երաշխին իւրոյ, զրկեցաւ զկամուրս մեղանչական զգեստիւթիւնն, մինչ ի գալ Փրկչին մերոյ Յիսուսի ծածկել զմերկութիւն նորա, որ ի խաչին մերկացեալ սպան զմեզ Ադամայ, որով մերկացեալն էր նա ի շնորհաց և ի փառաց, ըստ այնմ, «Եւ կարը իղինեայ և արբեցաւ և մերկացաւ ի տան իւրում»։ (Ծննդ. Թ. 21։— Կոսմով. ի Մեկն. Ղամահարդ. յերես 293։)

4.—Որո՞ օրինակ էր նախանձ բանսարկու օձին։

Պ.—Նախանձու քահանայապետին 4րէից. որք նախանձեալ ընդ երկնատոր վարդապետութիւնս Յիսուսի՝ մահանեցին զնա ի մահ, ըստ այնմ, «Ա՛ւ նախանձու մահանեցին զնա»։ (Մատ. Իէ. 18։)

Օրս և յանդիմանէր Մկրտիչն Քրիստոսի Յովհաննէս՝ ասելով, «Ծննդեանդ իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոցն է»։ (Նոյն, անդ. Գ. 7։— Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. Իէ. 18. յերես 588։)

4.—Ա՛ւ ի՞նչ հրամայեաց Աստուած Ադամայ չուտել ի պտղոյ արգիլեալ ի ծառոյն։

Պ.—Ա՛ւ այն, զի ցուցցէ թէ նա ստեղծուած գողով սպրտի հնազանդ կալ և հպատակ Երաշխին իւրոյ և պահել զպատուիրանս նորա. այլ զի Ադամ ո՛չ զործեաց զհամեմատն Աստուծոյ, նորին Ադամ մարդ եղև, և փոխանակ նորա ինքն կատարեաց զհամեմատն Աստուծոյ, ըստ այնմ, «Օ՛ի ես զհամեմատն նորա առնեմ հանապազ»։ (Յովհ. Ը. 29։)

«Լսակ Տէր մեր զգեցեալ զերծեալ պատկերն Ադամայ և նովին հնազանդի 4օր։ զի զկեանս և զանապականութիւնն ի

մարդիկ աղբերացոյց ,, : (Սարգ. Հ. Նորհ. Ա. Պետր. Ճառ Ա. ա. 2։)

,, Եւ զի անհնազանդութեանն սակս ճնշակման պատիժ ծառոյն, և անմահ բնութեան ատուածանալոյն եղև՝ որով մահ թագաւորեաց, իսկ հնազանդութիւնն ընդ դէմ նմին առ մահ խաչէն ցուցաւ, որով և կեանք թագաւորեցին ,, : (Նոյն, անդ. Ա՛առ. Ա. ա. 2։)

Հ.—Ովքինչ էր ասել բանասարկուին առ նախաստեղծն, թէ լինիք իբրև զաստուածս ճանաչել զբարի և զչար։

Պ.—Բանասարկուն սատանայ չգիտելով, թէ մարդն ատուածանալոյ էր ի ձեռն Որդւոյն Աստուծոյ. զի թէպէտ ի պատրել զնաա ասաց զայդ բան, բայց իրօք կատարեցաւ այնու. զի որդին Աստուծոյ մարդ եղև, և զմարդն աստուածացոյց խաչն և արեանն գնելով, ըստ այմ, ,, Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատացանն յանուն նորա ,, : (Յովհ. Ա. 12)։

,, Ոչք ո՛չ յարինէ և ոչ ի կամաց մարմնոյ, և ո՛չ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան. և Բանն մարմին եղև՝ և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ ,, : (Նոյն, անդ. 15։)

Հ.—Ո՞ր մեղք յառաջին եկին պատիւ։

Պ.—Հպարտութիւն և որկորատութիւն։

Հ.—Որո՞վ հպարտանայր։

Պ.—Գոռոզ զլխովն ընդ գոռոզ սրտին։

Հ.—Որո՞վ քաւեցաւ մեղք հպարտութեան զլխոյն Աղամայ։

Պ.—Խոնարհութեամբ զլխոյն Յիսուսի ի վերայ խաչին յանդիման զհոգին, ըստ այմ, ,, Եւ խոնարհեցուցեալ զգլուխն, աւանդեաց զհոգին ,, : (Յովհ. ԺԹ. 30։) Կամ յորժամ խոնարհացաւ գլուխն Յիսուս ի լուանալ զոտս աշակերտացն, յառնէ յընթրեացն անտի, և դնէ հանդերձն, և առեալ զնեցակ մի՝ սփածաւ, ըստ այմ, ,, Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր զնոցա՝ զոր սփածեալն էր ,, : (Նոյն, անդ. ԺԳ. 5. ԺԹ. 30)։

,, Օ՛ի թէպէտ և մեծատուն ոք իցէ, ասէ, սակայն ո՛չ իրու զԱստուած և ո՛չ ընչաւէտ իբրև զնա. որոյ իւր են ստացուածք երևելիք և աներևոյթք. զկտաւ սփածաւ և խոնարհեցաւ ի ծունկս հողեղէնս իւրոց աշակերտացն և ծառայաբար լուաց զոտս նոցա ,, : (Սարգ. Հ. Նորհ. ի Մ՛ևին. Յակոբ. Ճառ երկրորդ, Ա. 10)։

Հ.—Որո՞վ լուաւ զԱստուածային զձայնն։

Պ.—Ընդուր ախանջօքն։

Հ.—Որո՞վ քաւեցան մեղք ականջացն Ադամայ։

Պ.—Ականջօքն Յիսուսի, յորժամ ,, Ընդ անցանէինն հայհոյէին զնա, շարժէին զզլուխս իւրեանց ,, : (Մատ. ԻԷ. 39։—Ղուկ. ԺԹ. 41)։

Հ.—Որո՞վ հայեր ի գեղեցկութիւն ծառոյն։

Պ.—Ընտաւոս աչօքն։

Հ.—Որո՞վ քաւեցան մեղք աչացն Ադամայ։

Պ.—Աչօքն Յիսուսի, որովք եւեաց ի վերայ չորեքնիւթեայ բնութեանս, առակելով ի Նազարէթ, կամ ի քաղաք, ըստ այմ, ,, Եւ արտասուեաց Յիսուս ,, . և թէ ,, Տեսեալ զքաղաքն, եւեաց ի վերայ նորա ,, : (Յովհ. ԺԱ. 35։—Ղուկ. ԺԹ. 41)։

Հ.—Որո՞վ տենչալը ի հոտ պաղղին։

Պ.—Հոտոտելիքօքն։

Հ.—Որո՞վ քաւեցան մեղք հոտոտելեացն Ադամայ։

Պ.—Հոտոտելօքն Յիսուսի, որովք ղդառնութեան հոտ լեղւոյն և քացախին էառ, ըստ այնմ, «Եւ անդ կայր ամանն լինչ լի քացախով»։ (Յովհ. Ի֊Թ. 29)։

«Լայց նախ փոխանակ քացախին՝ զոր ընկեաց եղեգամբ, ղքացախուտ չարութիւնն հեթանոսաց քաղցրացուցեալ հոգովն՝ իբր սպունգաւ յերկինս»։ (Յովհ. Խործոր. ի Մեկն. Մաա. յերես 600)։

Հ.—Որո՞վ ձաշակեաց ղքաղցրութիւն պտղոյն։

Պ.—Շ֊րթամբք, քմօք, և բերանով։

Հ.—Որո՞վք սրբեցան մեղք բերանոյն և շրթանց Ադամայ։

Պ.—Ամենասուրբ շրթամբքն և բերանով Յիսուսի, որովք ձաշակեաց ղդառնութիւն գինւոյն ընդ լեղի խառնեալ, ըստ այնմ, «Եւտուն նմա ըմպել գինի ընդ լեղւ խառնեալ. և իբրև ձաշակեաց՝ ոչ կամէր ըմպել»։ (Մաա. Իշ. 34)։

«Վարձեալ ղդառնութիւն ձաշակաց պտղոյն քաղցրացոյց յուսով օրհնացն ի ձեռն լեղւոյն ձաշակման՝ որ բոլորովին քաղցրութիւն է և ամենևին փափաքուն»։ (Յովհ. Խործ. ի Մեկն. Մաա. Իշ. 34, յերես 594)։

Հ.—Որո՞վ հատանէր ղպտուղն։

Պ.—Շեռօքն մահաձիկ։

Հ.—Որո՞վք քաւեցան մեղք ձեռացն Ադամայ։

Պ.—Արարչագործ ձեռօքն Յիսուսի, զորս տարածեալ բեւռեցին ի փայտի, ըստ այնմ, «Ծակեցին զձեռս իմ»։ (Սաղմ. Իշ. 18)։

«Որ զանարատ բազուկս քո տարածեցեր ի վերայ խաչին ժողովել զՀեռացեալսն ամենակարող զորութեամբ»։ (Ի Շարականի)։

«Որ ի խաչին բարձեր զդատաւկնիք մահու, ապրածծովով զբազուկս քո, արձակեա և զհս ի կապանաց քանսարկուէին»։ (Նոյն, անդ)։

Հ.—Որո՞վ ընթանայր ի ճանապարհ ծառոյն։

Պ.—Ջարտուղի և մոլորաշաւիղ ոտիւքն։

Հ.—Որո՞վք քաւեցան մեղք ոտից Ադամայ։

Պ.—Սարսափելի ոտիւքն Յիսուսի, որք ընդ ձեռացն հնոզսեալ բևեռեցան ի խաչին, ըստ այնմ, «Եւ զոտս իմ, և թաւեցին զոսկերս իմ»։ (Սաղմ. Իշ. 18)։

«Տարածեալ ձեռք ընդ ձեռացն՝ ոտք ընդ ոտից ընթանալեացն, փայտ ընդ փայտի դառն պտղոյ՝ կեանք ընդ մահու փոխարկելոյ, ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուօղն օրհնաց, զոր ո՛չ տեսին ազգն կուրացք բայ ի միոյն աւազակաց»։ (Ի Շարականի)։

«Բևեռեցաւ ի խաչին, զի զմեզ արձակեացէ ի կապանաց և շնորհեսցէ փայտ կենաց փոխանակ փայտին մահու»։ (Ներ. Շնորհ. գրեալ Թուղթ առ Ալէքս, յերես 58)։

«Որպէս զի փայտիւ զյանցանս առողջացուսցէ»։ (Յովհ. Խործոր. ի Մեկն. Մաա. Իշ. 37)։

Հ.—Որո՞վ կորոյս զբնութիւն։

Պ.—Որկորատութեամբ որովայնին յոտիցն ցգլուխ ի նմին կելով, ըստ այնմ, թէ՝ բնութեանս կորուսաւ օրկորատութիւնն կղև։

Հ.—Որո՞վ թողան մեղք օրկորատութեանն Ադամայ։

Պ.—Վաստասնօրեայ պահօքն Յիսուսի, որպէս գրի, «Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ»։ (Մաա. Դ. 2)։

«Պահեաց քառասնօրեայ աւուրբք երկրորդ Ադամ վասն առաջնոյն Ադամայ, զի ո՛չ պահեաց, և յաղթեաց երեք փոր-

ձուլեւամբքն՝ յաղթողին մարդիկան ,, : (Ներ. Հ՚նորհ. դրեալ Թուղթ առ Ալէքս, յերես 58):

Հ.—Որո՞վ ծածկեցաւ մերկութիւնն Ադամայ:

Պ.—Նախատանաց քղամիդաւն, զոր զգեցուցին Յիսուսի, ըստ այնմ, ,, Եւ զգեցուցին նմա քղամիդ կարմիր և ծիրանի ,, : (Մարկ: Ժ՚Ե: 17):

,, Մերկացաւ, զի զամենից ծածկոյթ նախահօրն պատուհաս ,, : (Ներ. Հ՚նորհ. դրեալ Թուղթ առ Ալէքսի, յերես 58):

Հ.—Որո՞ց օրինակ էր աւրհնաբեր սպասանիլն Ադամայ:

Պ.—Էր օրինակ Ադամայ մերկանալոյն ի պտուղոյ՝ և մեղաց հանդերձիւ սպասանիլն օրինակաւ աւրհնոյ թզոյ՝ զոր սպասաւ. որպէս ի սուրբ գիրս գրի. ,, Հինգերորդ՝ քանզի ի ժամուն յորժամ մեղաւ Ադամ, մերկացաւ ի պտուղոյն զոր ուներ, և ի աւրհնոյ թզոյ տրաւ իւր սպասանելին, եկն մարմնոյ Տէր մեր յիրկիւր, անէծ ղեղչելին յօրինակ մեղացն Ադամայ, և բևեռամանն ի խաչին, որպէս զի յայտ արասցէ թէ՝ ոչ այնուհետև պիտոյ է աւրհնաբեր թզենւոյ ի հանդերձս Ադամայ, քանզի զդեցաւ նա զարձեալ զփառս իւր ,, : (Յովհ. Ծործոր. ի Մ՚եկն. Մատ. Ի՚Ը. 19. յերես 452): — Կամ նշանակեր զարկանելն պետրոսի զիւրեաւ զսպասանելին՝ որ է օրինակ ի շնորհաց մերկացեալ բնութեանս, ըստ այնմ, ,, Սիմոն Պետրոս իրրև լուաւ թէ Տէրն է՝ արկաւ զիւրև զսպասանելին, քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծով ,, : (Յովհ. Ի՚Ը. 7):

Հ.—Ո՞վ ինչ դուշակեր ձայն զգնալոյ ոսից Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ:

Պ.—Դուշակեր զխորհուրդն Յովհաննու Մկրտչի. զի որպէս անձայն եկն յապաշնորհութիւն և ի դարձ հրաւիրել զնախաստեղծն, նոյնպէս և Յովհաննէս իրրև զձայն բարբառոյ բանին Աստուծոյ եկն ի կազմել զժողովուրդ Տեառն, և քարոզել զապաշխարութիւն, ըստ այնմ, ,, Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն՝ և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ ,, : (Ես. Լ՚. 3):

,, Լսեք բարերարին քաղցրաձայնեալ ասէ, ո՞ր ես Ադամ. և գալստեամբն նորա ի դրախտն, նկարագրեցաւ գալուստն միածնի բանին յաշխարհս, և ձայն ոտից նորա դրոշմեաց զՅովհաննէս Մկրտիչն ,, : (Ողբք Յովհ. Ոսկեբերան. առ քահանայս և առ ժողովուրդս ասացեալ):

,, Տէրն որչափ մերձաւոր և ծանօթ էր Աստուծոյ մինչ ոտնաձայնին անգամ չլինել անտեղեակ. քանզի բարերարն յանպէտս պատճառեալ, նախ ոտնաձայնն առնէ. զի յոտն քաւութիւնարերս հասեալ մարդոյն՝ ինքնագործում զյանցանացն փրկութիւն գտանիցէ ,, : (Գրի. Լու. յԱգաթ. յերես 120, ըստ հին տիպ):

Հ.—Ո՞վ ինչ նշանակեր երեկոյն՝ յորում լսելի եղեւ ձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ:

Պ.—Երեկոյն նշանակեր զխաւարն մեղաց. յոր մանանեայն նախաստեղծ պատուիրանազանցութեամբ ըստ այնմ, ,, Օ՚ի զիշերը ալտմալից էր, և խաւար խոր և աղջամուղջ հոգւոց սակս մեղացն զանազանութեան և կամայականութեան և զիւրաքանչիւրութեան, և ամենայն մարդիկ իրրև ի զիշերամատոյց թիւնն դանդաղէին, և ա՛չ տրոշել կարէին զիմչնամին. և զրահ լուսոյն, զի չև ևս էր ծագեալ արեգականն արդարութեան, և ո՛չ վէմն ի սուրբ լինէին հատեալ առ ի կործանութիւն անօսի պատկերացն և ի վանումն խաւարային մեղացն ,, : (Սարգ. Հ՚նորհ. Մ՚եկն. Ե. Պետ. ա. 11):

Ա.—Ովի՞ է նշանակեր Թագչին Ադամայ։

Պ.—Նշանաւէր զԱդաւկեցին և զՓարիսեցին, որք իբրև լսեան զձայն քարոզութեանն Յովհաննու, փախեան ի բաղկութենէ որդւոյն Աստուծոյ՝ ըստ պատմութեան աւետարանագրին, «և տեսեալ զբազումս ի Սադուկեցւոցն և ի Փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւնն նորա՝ ասէ ցնոսա. Ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ վախչել ի բարկութենէն որ գալոց է»։ (Մատ. Գ. 7)։

Ա.—Որո՞յ օրինակի էր ժանտաթգնէին։

Պ.—Մեզաց ծածկութի՝ որով ծածկեցան յերեսաց Տեառն և եղեն անպատշաճք ի բարին, և ունի զօրինակ այնր թգնւոյ, զոր Տէրն գօսացոյց ըստ գրնգեղումն ՅԱբեատարանէ, թէ «Նա տեսեալ թգնէն մի ի վերայ ձանապարհին, նկն ի նա ևս ինչ եգիտ ի նմա, բայց միայն տերև, և ասէ ցնա. մի՛ այսուհետև ի քէն պտուղ եղիցի յաւիտեան, և առ ժամայն չորացաւ թգէնին»։ (Մարկ. ԻԱ. 19)։

«Նոր նորոգող բնութեան մերոյ Յիսուս, որ ի խորհուրդ հնութեան մարդոյն, զանպտուղն այսօր չորացուցեր զթգենին՝ և զմեզ ի հնացեալ մեղաց նորոգեաց ի կեանս անմահ»։ (Ի Շարակ)։

«Եկն Տէրն մեր մարմնով յերկիր՝ անէծ զթգենին, յօրինակ մեղացն Ադամայ և բևեռամբն ի խաչին. որպէս զի յայտ արասցէ թէ ոչ այնուհետև պիտոյ է տերև թգենւոյ ի հանդերձս Ադամայ. քանզի զգեցաւ նա զարձեալ զփառս իւր»։ (Յովհ. Նորձոր. ի Մեկն. Մատ. ԻԱ. 19. յերես 452)։

«Այս ինքն ոչ միայն զմեզս թողցեն մարդկան՝ զոր թգենին առակէ, այլ և զառաջնորդ մեզացն զկատն հպարտ և զմեծ՝ յանդուգն ընկղմեսցեն»։ (Նոյն, անդ. ԻԱ. 22)։

«Ասէ Քրիստոս զալստեամբն իւրով ցամաքեցոյց զնա աստիճանաւ, մի՛ եղիցի ի քէն պտուղ յաւիտեան, այս ինքն ըստ առաջին յանցանացն մեղք՝ որով մահացաւ բնութիւնս. քանզի երբէք խաչիւն զմեզս մարդկան և դարձոյց զադամս վերստին ի դրախտն առաջին»։ (Նոյն, անդ ԻԳ. 33. յերես 513)։

Ա.—Ովի՞նչ գործակեր ձայնին Աստուծոյ, Ադամ ո՞ւր եւս։

Պ.—Այն՝ զի յորժամ թագեալ ընկղմեցաւ ի մեզս մարդկային բնութիւն, նորոգող ձարտարապետն ևկեալ ի խնդիր՝ նորոգեաց զայն օրինակաւ Դ՚աղարու առ որ ասաց, «Դ՚աղարէ, արի եկ արտաքս»։ (Յովհ. ԺԱ. 43)։ Կամ հզօրապէն ձայնիւ ի վերայ խաչին իբրև զառիւծ գոչիւով ըստ նախադուշակութեան Յակոբայ Պատրիարքի, թէ «Որբիւն առիւծու Յուդայ, ի շառաւիղէ ելեր որդեակ իմ. ելեր բազմեցար, ննջեցեր իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու, ո՞ յարուցանիցէ զնա»։ (Ծննդ. ԽԹ. 9)։

«Եւ ձայն զառիւծուն գոչեմ, որ գոչէր ի քառաթեւին, ի քառաթեւին գոչէր, ձայն առնէր ի սանդարամետն»։ (Ի Մեղեթիկ Յարութեան)։

Ա.—Ընդէ՞ր զկնոջէն իբրև զանդատեաց։

Պ.—Վասնզի զոմանձն իբր անմեղ կացուցեալ, պատճառ մեղանչելոյն զԱստուած դնէր, որ ստեղծ և եւս նմա զկինն, որով և յանցեալ՝ ըստ այնմ, «Երդ մի՛ զղպարեր զԱստուածութիւնն և մի՛ Ադամայ նմանիր նախնին Հոր քո. որ վասն զպատուիրանաւն անցանելոյ զԱստուած պարտական առնէր, կինս՝ ասէ, զոր ետուր ընդ իս, սա խաբեաց զիս և կերի»։ (Պարգ. Ը. Նորհ. ի Մեկն. Յակոբ. Ձառ Երորդ, ա. 20. Յորդորակ)։

«Որպէս Ադամն առաջին զի՛ոչ զանձին մեղկութիւն, այլ զԱստուած որ ստեղծ զկինն, ասաց պատճառ զոր Երին»։ (Յովհ. Նորձոր. ի Մեկն. Մատ. ԻԵ. 25)։

Ա.—Ո՞րի՞նչ նշանակէր անուն Աստուծոյ առ օձն, անիծեալ լինել յամենայն անասնոց և յամենայն գազանաց երկրի։

Պ.—Նշանակէր զանիծանելի գոլն բանսարկուին ի մէջ ամենայն արարածոց, հրեշտակաց և մարդկան, և ի մէջ արգասեաց և մեղաւորաց, զի մեղաւոր և ո՛չ զկնի առնէ, ո՛չ դարձաւ ի չարեացն, ըստ այնմ, ‘‘Ո՛վ որդիք աշխարհիս այսորիկ իմաստունագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց’’։ (Ղուկ. ԺԶ. 8)։

‘‘Եւ այսու առնուել հնարաւոր երևեցաւ հողանիւթեայ բնութիւնս և իմաստնագոյն առ ի լաւութիւն, քան զանմարմինն և հրեղինիւթեայ բնութիւնս. զի յետ մեղանացն՝ ապաշխարութեամբ հաճոյ գտան Աստուծոյ’’։ (Յոսեբով ի Մեկն. Ժամակ. յերես 162)։

‘‘Որ զսիրականս առ ի քէն կարգեալ տնտես բնութեան մերոյ, իմաստութեամբ գպարտիս եթող քոյոց պարտապանաց, թող և զմեր գյանցանս ողորմութեամբ քո Քրիստոս’’։ (Ի Հարակ)։

Ա.—Իմաստութիւն բանսարկու օձին ո՞ինչ եղև։

Պ.—Պարեաւ, և յիմարեալ անկաւ ի լուսոյ ի խաւար, ի փառաց անփառունակ, ի հրեշտակաց սատանայ, և հեռացեալ յԱստուծոյ, մերժեալ զամենայնն, զոր ընկալաւն էր յԱստուծոյ, և կորուսանելն զերանելոն իւր նախկին վիճակ՝ ըստ Վիոնէսիոսի ասելոյն. քանզի չար ո՛չ այլ ինչ է քան թէ հեռանալ յԱստուծոյ’’։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԻԲ. 30. յերես 477)։

Ա.—Ո՞ր օրինակ ունէր որովայն օձին։

Պ.—Ոմանք, որ պատրաստակաւն էր վասն սատանայի, ըստ այնմ, ‘‘Ո՛վ թէ ի հրեշտակս յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան’’։ (Երկրորդ Պետրոս Բ. 4)։

‘‘Եւ սեսեալ զնա իշխանին մահու ի կերպարանս հոգւոյն Ադամայ՝ փութացաւ կլանել զնա որպէս զգայլ ամենայն հոգիսն, և գտաւ նա յորովայնի նորա որպէս սուր երկսայրի պատառել զնա, և զարգելեալ հոգիսն ազատել ի նմանէ’’։ (Սարգ. Շնորհ. Ե. Պետ. ձառ ուԹերորդ, Գ. 19)։

‘‘Երաքնոնէն ցուցանէ զի և նեղբէին գոյ՝ և կամ զի ծանր և չօշափելի է խաւարն արտաքոյ մարմնական խաւարիս, զի քնաւին ո՛չ լուսաւորի լուսով. կամ Թէ՝ յեզը արտաքոյ աշխարհիս, ժողովեալ մրուրն հրոյ առանց լուսոյ, տեղի տանջանաց սատանայի և իւրոցն’’։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատթ. Ը. 12. յերես 192)։

‘‘Ասի խաւարն արտաքին կամ զբանսարկուն ասէ, որ արտաքսաց զինքն ի լուսոյ և խաւարեալ է իւրովին, դառն տրամաբեթեամբ անդր առաքէ՝ յորում ո՛չ առնէ այցելութիւն Տէր լուսով իւրով’’։ (Նոյն, անդ, ԻԱ. 30. յերես 537)։

Ա.—Ո՞րի՞նչ նշանակէր հող ուտելն։

Պ.—Ոմանք զամբարիշտան ասեն. զի որպէս որովայն ժողովէ զկերակուրս, այնպէս և սատանայ որսայ յորովայն իւր ի զբաղմունս զամբարիշտան, ըստ այնմ, ‘‘Եւ ելցեն և տեսցեն զդիակունս մարդկան առ իս յանցուցելոց, զի որդն նոցա ոչ վախճանեսցի, և հուր նոցա ոչ շիջցի, և եղիցին ի տեսիլ ամենայն մսեղեաց’’։ (Եսայի. ԿԶ. 24)։ Եւ ըստ Պօղոսի Թէ՝ ‘‘Ընդ մսեղեաց’’։ (Եսայի. ԿՉ. 24)։ Եւ ըստ Պօղոսի Թէ՝ ‘‘Ընդ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն՝ որ ուզէ զհակառակորդսն’’։ (Եբր. Ժ. 27)։

‘‘Եւ դուք էք աղ երկրի, փոխանակ նախատեղծին՝ որ հող եղև կերակուր իւրոյ պատրողին’’։ (Ներ. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ե. 17. յերես 102)։

Հ.—Որոյ է օրինակ գլուխս օձին, զոր ջախջախիլ հրամայեաց Աստուած։

Պ.—Պարտութեան, զոր ջախջախեաց Որդին միածին անձառելի մարդեղութեամբ իւրով Լիակատար Յորդանանու, որպէս երգէ եկեղեցի, «Օգնուս վիշապին Փրկիչն ջախջախեաց ի Յորդանան ի գետն»։ (Ի Շարականի)։

«Եւս բարերար միածինդ քո բարբառեալ քաղցր ձայնիւ ասաց, եթէ՝ եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ քաղցր լծով և փոքր բեռամբ, և ժողովեալ զամենայն բարերարութեամբն իւրով, էած ի Յորդանան ի գետ, և տեսեալ զվիշապն ահագին բունեալ ի ջուրսն, որ կամէր կլանել զմարդիկ, և զյորդահոսեալսն վտակն Յորդանանու, յակնապիշն իւր ընդունէր, որպէս ասէ իսկ Յոբ. իսկ միածին որդիդ քո ինքնին իսկ մեծաւ զօրութեամբն իւրով զջուրսն գարշապարացն կոխան արարեալ՝ զվէմ գաղանն թշնաւառացոյց ըստ առաջնոյ մարգարէին, թէ՝ զոհ՝ ջախեցեր զգլուխս վիշապին ի վերայ ջուրց»։ (Օրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է սրբոյ Յարսղի Պեսարացւոյ)։

Հ.—Որոյ օրինակ ունի գարշապարն, որում սպասել հրամայեաց օձին։

Պ.—Ծոյլ, պղերգ, և մերկ ի բարեգործութենէ և բոկ գալշապարացս մտաց մերոց քրիստոնէիցս, որ եմք մարմին և գարշապար՝ յօգեալ ի գլուխն մեր Քրիստոս, ըստ այնմ, «Եթէ՝ այլ գուք մարմին Քրիստոսի էք, և անդամք յանդամոց նորա»։ (Ա. Կորն. ԺԲ. 27)։

«Որպէս զի մշանջենաւորն ցուցցէ զանճախելի մատուցումն, զի որքան ի մարմնի եմք յանդամք նորա ըստ դիւրագոյնի մարմնոյս՝ ականայ կամօք անկանիմք ի յանցանս, գլուխն մեր ըստ իս իջեալ պատարագելով զինանի միշտ ներկեղեցի քաւելով գլուխ»։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատթ. Ի.Օ. 28. էրես 561)։

«Ըստ նմանութեան այնմիկ որ գերիվեր փշաքեր կոխեն բոկոտամբ, անմաքուր է անխոցոտելի ճնալ գարշապարացն, սոյնպէս և մեք՝ ոյք զձանապարհս աշխարհիս գնամք, որ լի է սատանայական տատասկօք և փշօք, եթէ զգարշապարս մտաց մերոց ինձա հաստատեմք, անհնար է մեզ անխոցոտելիս կալ և ճնալ՝ կամ առանց արատոյ»։ (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յակ. Ճառ հինգերորդ, Ա. 27)։

«Ոտից գերազանցեալ առաքեալք և ամենայն սրբազնասուրբ արք չէն այնպէս բոկոտն, այլ ամրացեալ զգարշապարս կօշկօք արդարութեան և պատուիրանապահութեամբ շրջէն ի վերայ երկրի, անկասկած ի խայթմանէ թիւնից աներևոյթ վիշապ օձին, ըստ այնմ, «Ահա որ լուացեր մկրտութեամբ զգարշապարս և զոտս որպէս գերազանցի առաքելոց, և ամրացուցեր ի թիւնից խածանող օձին, զիարդ աղտեղացուցից զսա մեղաց ընթացիւք ի պոռնկութիւն, կամ ի սպանումն, կամ ի գրկութիւն, և որ սոցին նման, և որ լուսով զգեցայ, և իշխանութիւն ունիմ յերկինս ուղևորիլ, և ընդ հրեշտակս պարել»։ (Գրի. Նար. ի Մեկն. Երգոց, Ե. 3)։

«Տե՛ս, զոր յառաջ Աբեթնացի կոչեաց զՀարսնն փեսայն, զոր և յառաջ հրեշտակքն կոչէին Սիդոնացի, ասա դուստր նապարայ անուանեաց, ցուցանելով՝ թէ որոց պղծոց նախնեաց ծնունդք և զատերք՝ ծնունդ և դուստր և Հարսն եղևն Քրիստոսի, զի ո՛չ և ս ունին գարշապարս բոկս կասկածաւորս օձին խայթոցաց, այլ կօշկօք արդարութեան ամրացեալք՝ անկասկած են ի թիւնից խածանող օձին։ Եւ լուացեալք ի մեղաց, որպէս զոտս առաքելոցն ջրով և հոգւով ի փրկչէն, որ և առին իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամե-

նայն զօրութիւն թշնամոյն, վասն այսորիկ առաւելական գիտ-
ցիկութեամբ՝ զի ազատեան ի յոյս պատարաստութիւն Հա-
տարանին խաղաղութեան, որպէս առաքեալ ասէ,, : (Նոյն,
անդ. Ը. 1):

Ա.—Ըս ի՞նչ միտս թշնամութիւն օձին ի մէջ կնոջն և
զաւակի նորա դնի, և ո՛չ ի մէջ Ադամայ:

Պ.—Օձի զաւակ կնոջն, որ է Յիսուս Քրիստոս որդին Ս-
տուծոյ, անսերմին յղութեամբ իւրով և անապական ծնընդ-
եամբն ի կուսէ՝ ջախջախելոց էր զգլուխ աներևոյթ օձին, որ
թշնամին էր սերնդոց Եւային, ըստ այնմ, ,, Մարդարէին ձայ-
նեալ զքո քաջութիւնդ, ասէ, երեր դու ի կառս քո փրկու-
թեան՝ և խաչիւն ջախեալ զգլուխ վիշապին, սուրբ յարու-
թեամբդ զմեզ կենդանարծիցեր,, : (Ի Հաբակ.):

,, Առաքեցար ի դժոխս, յուցանելով զզօրութիւն աստուա-
ծութեանդ, ջախեցեր զգլուխ խաղդախօղին՝ խափանեցեր զը-
զօրութիւն մահու,, : (Նոյն, անդ, Յովհ. Ե. 46):

Ա.—Ո՞վ երբէք զանէծս երկանցն Եւայի):

Պ.—Ամենօրհնեալ կոյսն Մարիամ, որ անսերմին յղու-
թեամբ յղացեալ ծնաւ զփրկիչն աշխարհի յայրն Ներքինի,
որպէս երբէք եկեղեցի Հայաստանեայց, ,, Որ զնախամօրն անի-
ծից երկանց լուծեր զդատակնիքն, որ զարտմական սահմանեաց
ծնունդ, անախտաբար ծնանելով ի քէն,, : (Հաբակ):

,, Կրկին լիս իմանամ զօրհնութիւնս զայս առացեալ մի և
առաջին ծննդեանն Քրիստոսի՝ որով օրհնեցան ամենայն
ազգք ծննդոց կանանցն և արձակեցան ի դատակնիքէ անի-
նիծից և քրտանց ցաւոց և տրտմութեանց,, : (Մարգ. Հ-
նորհ. ի Ս-ին. Ը. Պետր. Ճառ Հօթնեքսրդ, Գ. 9):

Ա.—Ո՞վ երբէք զանէծս նախահօրն Ադամայ:

Պ.—Երկրորդն Ադամ Յիսուս Քրիստոս, որ բարձրա-
ցեալ ի խաչին, եղև անէծք վասն նորա, ըստ այնմ, ,, Անի-
ծեալ ամենայն մարդ, որ կախեալ կայցէ զփայտէ,, : (Երկ-
րորդ Օրինաց, ԻԱ. 23):

,, Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն
մեր անէծք, զի գրեալ է թէ անիծեալ ամենայն՝ որ կախեալ
կայցէ զփայտէ, զի իհեթանոսս օրհնութիւն Աբրահամու եղի-
ցի ի Քրիստոս Յիսուս, զի մեք զխոստում հոգւոյն սրբոյ առ-
ցուք հաւատովք,, : (Գաղատ. Գ. 13):

,, Ընակիզեն բանն Աստուած, որ վասն մեր համբերէ մահու,
բառնալով զդատակնիք անիծիցն ի մէնջ,, : (Ի Հարակ):

,, Որ պատուական արեամբդ քո ազատեցեր զաշխարհս յա-
նիծից,, : (Նոյն, անդ):

,, Ջկամ փրկեցեր զաշխարհս ի յանիծիցն Ադամայ,, :
(Նոյն, անդ):

,, Քրիստոս բևեռեցաւ ի խաչին, և ելոյծ զդատապարտու-
թիւն Ադամայ նախասահմանին,, : (Նոյն, անդ):

,, Քրիստոս Աստուած, որ տարածեցեր զձեռս քո ի խաչին
և լուծեր զկնիք դատապարտութեան,, : (Նոյն, անդ):

Ա.—Ո՞վ երբէք զփշաղրութեան զանէծն:

Պ.—Ամենօրհնեալ ձակատն Յիսուսի՝ փուշ պսակաւ քան
զրեցելոյ, ,, Եւ Յիսուս արտաքս, և ուներ պսակ ի փշոց,, :
(Յովհն. ԺԹ. 5):

,, Եւ Սողոմոն զրէ մարգարէաբար, ,, Ելէք տեսէք դստերք
Սիովնի յարքայ Սողոմոն ի պսակն, որով պսակեաց զնա մայր
իւր յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր ուրախութեան
սրտի իւրոյ,, : (Երգոց Գ. 11):

,, Սէր ի դասերաց Երուսաղէմի, սրբակիցս և սիրակիցս,
և գոհացողակիցս իւր կոչէ զդստերս Երուսաղէմի, զհրեշտա-

կըս, և յորոյ ազագաւ փոխեցաւ լիրմանն անտառացեալն մեղօք, և եղև գահաւորակ Քրիստոսի պէսպէս սաւքինութեամբք զարդարեալ պսակաւն վիշապ՝ զոր ի գլուխ իւր ետ արքայ Սողոմոն՝ այս ինքն Քրիստոս, և օրհնեաց պերկիր, զաւնէծան ի գլուխ իւր բառնալով՝ որ ասացն, թէ փուշ և տատասկ բուսցի քեզ ,, : (Գրի. Նար. ի Մեկն. Նրբ. Գ. 11):

,, Այլ և բարձի պսակաւ գլխոյ նորին անէծքն Ադամայ և փուշ մեղացն Ադամայ ,, : (Յովհ. Օրծոր. ի Մեկն. Մատ. Ի. 23. յերես 591):

Հ.—Որովք բարձան անէծք քրտանցն Ադամայ:

Պ.—Հոմանք քրտունքն Յիսուսի ի պաշտաիցին՝ ըստ աւետարանագրին, հոսեին ի նմանէ քրտունք իբրև կաթիլս արեան ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր ,, : (Ղուկ. ԻԲ. 44):

,, Երկեաւ, զի ձերկիւղն լուծցի զմահու, քրտնեցաւ՝ զի զքրտան երեսացն Ադամայ ջնջեսցէ ,, : (Ներ. Շնորհ. գրեալ Թուղթ առ Ղէոքոն, յերես 58):

,, Եւ դարձեալ քրտնեցաւ, զի ողջացուսցէ զՀոգւոյ հանդոյս, միանգամայն և զքրտան երեսացն նորայ բարձցէ՝ որով զհաց ուտել հրամայեաց, այլ և մարդկութիւն ձշգրտեսցէ ,, : (Յովհ. Օրծոր. ի Մեկն. Մատ. Ի.Ջ. 42. յերես 571):

Հ.—Որո՞վ լուծան անէծք յատկականութիւն և ի հող դառնալոյն Ադամայ:

Պ.—Ննապական Թաղմամբ Տեառն ի նոր դերեզմանի, որով և զմարդն վերածեաց ի յաւէրժական կենդանութիւն, ըստ այնմ, ,, Ջոր Աստուածն յարոյց՝ ոչ հաս զապականութիւն ,, : (Գործ. Ի.Գ. 37):

,, Լակից Հօր և Հոգւոյն բանդ Աստուած ի գերեզման իջեալ ննապական ,, : (Ի Շարականի):

,, Նկիր ի չարչարանս՝ կամաւորապէս, Աստուած, և խաչեցար վասն ազդի մարդկան, և ի գերեզման իջեր անապական ,, : (Նոյն, անդ):

,, Քրիստոս գովեցէք զչարչարեալն ի գերեզմանէն անապական մարմնով ,, : (Նոյն, անդ):

,, Ջանապական զառաջածայեալ մարմին պատեալ սուրբ կտաւօք և կոչ ի գերեզմանի ,, : (Ի Շար):

,, Լջ սիրով իւրով՝ ընդ մարմինն՝ ի գերեզման, և վասն այսորիկ և ոչ ապականեաւ թիւն տիրեաց նմա ,, : (Նիւրեմ ի Մեկն. Ի. Կորնթ. յերես 122):

—,, Որպէս Քրիստոսի փառաւորեալ էր յարքանալն հոգւոյն, և ոչնչէր մարմին չարչարվէլն, բայց անապական ըստ գերեզմանի և ըստ մեղաց և ըստ կրից, այսինքն անլուծանելի ի հող և անմեղանչական՝ և անբռնադատելի ի կրից՝ ի զոր կրեացն, կամօք կրեաց և ճշմարտապէս ,, : (Ի Սահման. Յոզովոյն Շի-բակաւանայ գումարելոյ յամի 862. տես ի Զաքէնան. Պատ. Հայ. Հատոր երկրորդ. յերես 686):

Հ.—Եթէ ծառն այն մահու էր պատճառ, վասն ի՞նչ անկեաց Աստուած ի դրախտի անդ:

Պ.—Յանցանքն չէր ի ծառն, և ոչ էր նա մահաբեր, այլ երբ կերին ի նմանէ նախածնողքն պատուիրանազանցութեամբ, յայնժամ յիրաւի մահ պատճառեաց նոցա, ըստ այնմ, ,, Մահ ոչ էր, մինչ մեղք ոչ էին ,, : (Յաճախապատում Ջ. 57):

,, Ըստ որում և ի պատուղ գիտութեան ծառոյն՝ եթէ ոչ նախ քան զժամանակ հրամանատուութեանն Աստուծոյ մերձենալ էր մարդն՝ ոչ մեռանէր, այլ մնասանդ անմահհանդերձութեամբ՝ յորժամ կամ գիտութեան ծառոյն ի ծառն կենաց մերձենայր ըստ հրամանի արարչին, բայց նոյն պատուղ՝ որ

հրամանաւն ուսելով բարի էր, առանց հրամանին չարի եղև պատճառ որոց կերան,, : (Ներսէս Տեառն Ներսէսի թուղթ գրեալ ի Կոստանդնուպօլիս առ ոմն Պօղոս քահանայ Ջայկաղն ի Տարօնէ Կիլիկիացւոց, յերես 129):

,, Ծառն կենաց և ծառն դիտութեան՝ ծառք են առնգապէս ըստ այլոցն ի չորից տարերաց բնութեամբ գոյացեալք, որպէս այսոքիկ որ առ մեզս են, բայց այլանմանք ի նոցանէ և յոյժ վայելուչք, և պտուղքն պտուղք հաւասարի, ըստ ազգի անգիտելիք մեզ, ոմն կենաց ըստ բնութեան, և ոմն մահու ոչ ըստ բնութեան, այլ յաղագս պատուիրանազանցութեանն եղեալ, և գնաքն գնաք ջրեղէնք ի միոյ ականէ ի չորս բաժանեալ առաջս, ըստ պատմութեանն Մովսէսի ,, : (Ներ. Ը. Նորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յամայք նահանգի, յերես 162):

Ա.—Ցիա՞նչ միտս ունէայ կոչեցաւ կեանք, զի մահու եղև նա առիթ:

Պ.—Կեանք կոչեցաւ՝ ունելով զնմանութիւն ակզբնացոյց, որ է կեանք և մայր կենդանութեան՝ ըստ այնմ, ,, Ծննդեալք ի վերնոյն ոչ յայսականութեան սերմանէն, այլ յանապական նացուէն, կենդանի և մշտնջենական բանիւն Աստուծոյ ,, : (Ա. Պետր. Ա. 23):

,, Նա և յետ ուտելոյն ի պտղոյն՝ գիտաց մարգարէութեամբ զփրկութիւնն մեր զոր ի ձեռն կնոջ էր լինելոց՝ այս ինքն ի սուրբ Աստուածածնին. վասն որոյ և կեանս կոչեաց զկինն, ապա թէ ոչ այդպէս, զիա՞րդ կոչէր զնա կեանս՝ որ առանց ծննդոց Ադամայ՝ մահու պատճառն եղև ,, : (Գրիգ. Նար. ի Մեկն. Եղծող. յերես 14, յառաջաբան):

,, Բանդի երկնեաց սիրէն մայր ակզբնացի և ծնաւ ոչ ազգ մի ողջոյն միայն՝ այլ զամենայն ազգս միանգամայն ,, : (Սարգ. Ջնորհ. ի Մեկն. Ը. Պետրոս ձառ երկրորդ. ա. 23):

Ա.—Օ՞րինչ նշանակէին մաշկեղէն հանդերձք:

Պ.—Անմաքրական վարուց մեղացն և մեռելութեան Ադամայ, զի մաշկին է մորթ անբան կենդանեաց, որք կենդանի ասին՝ զի շնան և շարժին, և անկենդան՝ զի են անբանք և շնչաւորք միայն, այսպէս և սերունդք Ադամայ կոչին միանգամայն կենդանի և մեռեալ, ըստ պատմելոյ աւետարանական առակին:

,, Էր մի իշխանի յերուսաղէմ յերիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց՝ որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին ,, : (Ղուկ. ժ. 30):

,, Այլ մեր դատապարտութիւնս է արդար և արտասուաց արժանաւոր և բիւրապատիկ հառաչանաց և անդադար ողբոց. զի պատուիրանազանցութեամբ մերկացաք ի փառացն, և պատմուճան մաշկեղէն՝ որ է օրինակ մեռելութեան ախտից և ապաշնարհութեան, մեք ո՛չ զգեցաք վերստին ,, : (Սարգ. Ջնորհ. ի Մեկն. Ը. Պետր. ձառ ժ. Ա, է. 7):

,, Նա և թէ կամիս ընդ առաջին մարդն հայեաց. զի յետ դատակնքին, որ ի վերայ եղաւ նորա, մահու դատապարտեալ՝ զքաղցր ամն եւեաց կենդանի, սակայն չէր կենդանի, զի ի մեռելոյ համարի էր այնուհետև ,, : (Սարգ. Ջնորհ. ի Մեկն. Յակոբ. ձառ երրորդ. ա. 19):

Ա.—Ցիա՞նչ միտս ասաց Աստուած, ահա Ադամ եղև իբրև զմի ի մեզ:

Պ.—Այսու նախասահմանեցաւ մարդեղութիւն Բանին Աստուծոյ, որ ի վախճան ժամանակաց իջեալ յարգանդ ամենամաքուր կուսին Մարիամու, և առեալ զմարդկայինս բնութիւն, վերաճեաց զմարդն յառաջին փառս իւր, որով և Աստուածն եղև մարդ, և զմարդն աստուածացոյց անձառ անօրէնութեամբ իւրով, ըստ այնմ, ,, Խորհուրդն անձառ ծածկեալն յազգաց և յաւիտեանց՝ յայտնեցաւ յիմամբ

հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ,,։ (Ի Շաբաթա-
նի)։

,,Իսկ Մատթէոսի հարսանիքն ասէ ընդ. զի հարսանիք
ոչսաք զբանին խառնուումն առ մարմնոյն միութիւն, որ եղև
գլուխ եկեղեցւոյն. և եկեղեցի սուրբ յօդմամբ հաւատոյ միա-
ցաւ ի գլուխն իւր, որով լրացաւ մարմին նորա բազում ան-
դամօք՝ յորմէ և ի գլխոյ անտի աճէ զաճումն իւր լցեալ սուրբ
շնորհօք նորա,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մատ. Մատ. ՀՐ.
10. յերես 468)։

,,Այլ ըստ առաջաւորութեան իսկզբանն՝ կատարեաց ի
վախճանի. զի խորհուրդն ծածկեալ առ Աստուած յաղագս
յաւիտենից, այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց . . . . . Տի-
սանն զմասունսն և զօրինակն և զմարգարէսն յաճախագոյն.
և Աստուած մի որ վասն միոյ Մխածնին իւրոյ խօսէր . . . .
զի խորհուրդն լուեցեալ ի ժամանակաց, և յայտնեալ մար-
գարէական գրովք վասն միայնոյ իմաստնոյն Աստուծոյ։ (Գրի.
լուսա. ՀԱգամ. յերես 145. ըստ հին տպ)։

Հ.—Որո՞ է օրինակ անմահաշէն ճանապարհ ծառոյն կենաց
պահեալն ի Վերովբէից և ի բոցեղէն սրոյ։

Պ.—Ի օրինակ ամենամաքուր կուսին Մարիամու ճանա-
պարհի որդւոյն Աստուծոյ, յորմէ ծնաւ նա ինքն մարդացեալ
Աստուածն բոլորից, և կնիք կուսութեան ծնողին միաց անդու-
ծանելի, որ և անճառելի է մեզ և անքննելի՝ ըստ իմաստնոյն
բանից, թէ՝ ,,երեք են, զորս անհնարին է ինձ իմանալ, և
զչորրորդն ոչ ճանաչեմ, այս ինքն՝ զճանապարհ առն երի-
տասարդի,,։ (Առակ. Լ. 18)։

,,Ո՞հեռաւ արծաթոյ թռուցիկոյդ, և զճանապարհն օձի ի վէ-
մայ վիմի և զշաւիղն նաւու ընդ ծով գնացիկոյ,,։ (Նոյն,
անդ. 19)։

,,Ես դարձոյց զիս ընդ ճանապարհ արտաքին դրանն սրբո-
բութեանցն՝ որ հայէր ընդ արեւելս, և այն էր փակեալ։ Եւ
ասէ ցիս Տէր, այդ դուռն փակեալ կացցէ՝ և մի բացցի՝ և մի՛
ոք անցցէ ընդ դա, զի Տէր Աստուած Իսրայէլի մացէ ընդ դա,
և եղիցի փակեալ,,։ (Եզեկիէլ. ԽԴ. 1—2)։

,,Պատուար ամենահրաշ ըստ Եզեկիէլի, ապեհալ զմուտ
քո ձշգրտապատում դրանց,,։ (Գրի. Նար. ի գովեստս Աս-
տուածածնի. 24)։

,,Դուռն փակեալ և աղբիւր կնքեալ նախատեսացն գու-
շակեալ մայր և կոյս,,։ (Ի Շաբաթ)։

,,Օ՛քեզ դուռն երկնից և ճանապարհ աղքայութեան,
բարձող անլծիցն և սերովբէ հողեղէն,,։ (Նոյն, անդ)։

,,Ծառն կենաց անմահից բոցեղէն սրովն պարունակեալ,,։
(Նարեկ. Գ. 1)։

Հ.—Որո՞յ օրինակ է բոցեղէն սուրն։

Պ.—Ամենասուրբ երրորդութեանն հրամանաւ հրեշտակա-
կան թևոցն պահպանութեան, որք բոցանիւթ հրեղէն թև-
ւօք պարունակեալ պահէին իբրև զդրախտն ադին անախտ ի
կենցաղականս մարմնական կրից, և անմուտ արկածից խաբէու-
թեան թշնամւոյն նախնոյ մերն Եւայի, գնայրն ըստ սուրբ
գրեալսն Աստուածածնին պատրաստեալն ընդունակ որդ-
ւոյն Աստուծոյ, ըստ այնմ, ,,ի բարձրեալն Հոգւոյ զօրացեալ
և հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ և մաք-
րագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղա-
վարեալ,,։ (Նարեկ. Ջ. 1)։

,,Որ զնախ քան ծնանիլ Բանին առ ի քէն անթերի լսա-
կանութեամբ հրեշտակական թևոցն սքողմամբ յանկարկեալ
պահէիր անախտ անբծութեամբ, առ որ հաճեալ հաւանու-
թեամբ երրորդական փառք աստուածութեանն՝ ճանապարհ

արար Հանդստեանս, քանզի ՚ողին սուրբ ևկն ի քեզ յօրի-
նողն անախտ սրբութեան՝ և բարձրելոյնը ՚օրն ղօրութիւն
մօրդ հովանացաւ, որդւոյն պատրաստեալ ղքեզ ընդունակ ,,։
(Նար. դուամար խմբից. Ն)։

՚.—Ո՞ւր գտանի դրախտն Եդեմական։

պ.—Ոմանք ի վարդապետաց Եկեղեցւոյ ասեն զնա
յերկրին աւետեաց մերձ Յերուսաղէմ, և այլք՝ ի ՚այսմտան
յերկրին Կորդուաց և Վանայ, ի տեղւոջ ՚սղնբահինեան աղ-
բերաց, որ ի տաճկաց բարբառ (,,Լին կեօլ ,, ասի)։ Բայց
մեզ անդիտելի է, վասն որոյ չետ արտաքսելոյն Ադամայ որդիք
նորա բնակէին յանդիման դրախտին, որպէս ի բազում տեղիս
ասացեալ է ի սուրբ գիրս մինչև ցջրհեղեղն. տեսանէին զնա
առ ի ղեջմէն վասն կրկնակի մտից առ նա. և չետ ջրհեղեղն
անհետացաւ ի տեսից աշաց նոցա, ըստ այնմ, (,,Յանդի չա-
ռաջ քան զջրհեղեղն մերձ էին ազգ մարդկան ի դրախտ անդր,
որպէս և չետ առնէ Մովսէս, ևհան Տէր Ստուածծ զԱդամ
և բնակեցոյց զնա, ասէ, յանդիման դրախտին փափրութեան,
որպէս զի միշտ հայելովն ի նա՝ փափագեսցեն վայելչութեան
նորա և զջացեալք ապաշխարեսցեն յառաջին յանցանացն և
արժանաւորք լիցին վերստին դառնալոյ ի նա, ըստ մեկնելոյ
սրբոց վարդապետաց, որում ոչ ոք արժանացաւ յորդւոցն
Ադամայ, բայց Ենովք միայն, որ հաճոյ գտեալ Ստուածոյ՝
փոխեցաւ կենդանւոյն ի դրախտն. որպէս չետ առնեն հոգե-
կիքն առ չետս և օրինակ ամենայն արդարոց, թէ որ պահէ
զպատուիրանս՝ Ստուածոյ չուսասցի ժառանգել զնա որպէս
զԵնովքն. և որ ստունդանէ պատուիրանացն Ստուածոյ՝ ա-
բաքիր կցի ի նմանէ, որպէս չայիժամ Ադամն, իսկ չետ ջըր-
հեղեղն չետս առնեն զիրք սուրբք, եթէ փակեցաւ առ ի
մարդկանէ ճանապարհ դրախտին, վասն զի մի և տեսութեան

նորա արժանացին վասն բազմանալոյ անօրէնութեանն մինչև
ի դալուստն երկրորդ, որ(տայ զնա ի ժառանգութիւն չար-
տեւական, որք արարին զպատուէր նորա, ընդ որում և աբա-
զակին խոստացաւ ասելով՝ այսօր ինձ ընդ ես ի դրախտին ,, ։
(Տես. Ճնորհ. դրեալ Թուղթ առ քահանայս Յամսէք
նահանգի. չրես 163)։

՚.—Եւ ո՞ր իցէ այն տեղի, որ ասի չանդիման դրախտին,
չոլուսմ քնակեցան նախաստեղծքն։

պ.—Ասեն վարդապետք Եկեղեցւոյ, Թէ Երիքով է տեղին
այն, և կամ Յերուսաղէմ որպես երբէ Եկեղեցի մեր, ,,Ի սուրբ-
գրեանն Ադամայ և կինն ածրձ ի դրախտին, խոնարհ պատ-
ճառն ընծայեն վայելուչ գիտութեան, օճաչամբ պատրանօքն
ճաշակեալ ի պտղոյն, և եղեալ վայրաբնակիկ. վայելաքաղաքն Ե-
րուսաղէմ ,,։ (Ի Հ ապականիկ)։

,,Վասն չորժամ վերձեցաւ ժամանակ չարչարանացն և Յա-
րուսաղէմ նշանէր նախ Յերիքով գայ, զի զանկեալն ի ձերս
աւազակաց ողջացուսցէ, ուսաւ զբազում կոչէ ձեռն Օ աքեի
իրացն, և զանհաւանն խոշտանկէ՝ որք ոչ կամեին զԹագաւո-
րին նորա, և ապա չլանէ անտի բազում հաւատացեալ ժո-
ղովրդով ,, ։ (Յովհ. Ծորճոր. ի Մեկն. Մատ. Լ. 29. չի-
քես 430)։

ԳԼՒՒ Զ ՈՐՈՐԴ.

Ծնունդ կայենի և ՚աբէլի։

՚.—Ծնաւ Ադամայ որդիք։

պ.—(Չո), ,, եմուտ Ադամ առ Եւայ կին իւր, չղացաւ
և ծնաւ (զորմի անդրանիկ, և կոչեաց զանուն նորա) կային,
և ասէ. ստացայ մարդ Ստուածով ,, ։ (Ծննդոց Դ. 1)։

Ա.—Ո՞վ ինչ առաքեալների անունն կոչին։

Պ.—(Ատտուսն կամ սաստկալ)։

Ա.—Այլ որդի ևս ծնանի՞։

Պ.—(Ց յո) ‘‘Յաւել ծնանիլ զերբայր նորա զԱբել,,։ (Ծննդոց Գ. 2)։ (Որ թարգմանի ունայնաբեթեան կամ շնչառութիւն)։

Ա.—Ո՞վ ինչ գործելին նոքա։

Պ.—‘‘Եղև Աբել հովիւ խաշանց, և Կայեն գործեր երկիր,,։ (Ծննդ. Գ. 3)։

Ա.—Ա՞ստուծո՞ն նոքա պատարագս Աստուծոյ։

Պ.—(Ց յո) ‘‘Եղև յետ աւուրց՝ երբեր Կայեն ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ, ած և Աբել յանդրանկաց խաշանց իւրոց և ի պարարտից նոցա,,։ (Ծննդ. Գ. 3. 4)։

Ա.—Հաճեցաւ Աստուած ընդ պատարագս նոցա։

Պ.—Հայեցաւ Աստուած յԱբել և ի պատարագս նորա, և ի Կայեն և ի ողկոյս նորա ո՛չ նայեցաւ։ (Ծննդ. Գ. 4. 5)։

Ա.—Ո՞վ ինչ յայնժամ պատահեցաւ կայենի։

Պ.—‘‘Տրտմեցաւ յոյժ, և խոնարհեցան անկան երեսք իւր,,։ (Ծննդ. Գ. 5)։

Ա.—Ո՞վ ինչ ասաց Աստուած առ Կայեն։

Պ.—(Կայեն), ‘‘Ընդէ՞ր տրտմեցար, կամ ընդէ՞ր խոնարհեցան անկան երեսք քո. ո՛չ եթէ ուղի՛ղ մատուցանես, և ուղիղ ո՛չ բաժանես՝ մեղա՛ր, լո՛ւռ լեր. առ քեզ լեցի դարձ նորա, և դու տիրեսցես նմա,,։ (Ծննդ. Գ. 6. 7)։

Ա.—Սարջացաւ Կայեն ընդ արարս իւր։

Պ.—(Ոչ), այլ՝ նախանձեալ ընդ եղբայր իւր, երկներ ի մտի սպանանել զնա)։

Ա.—(Նա որպէս ծածկեաց զչարութիւն սրտին յեղբօրէ իւրմէ առ ի որսալ զնա յորդայթ սոսկալի եղբայրասպանութեան)։

Պ.—(Ց՝ի դէմառորոգութիւնն գազելալ խարակ՝ բարեկամաբար խօսեցաւ ընդ եղբօր իւրում)։ ‘‘Եւ ասէ Կայեն ցԱբել եղբայր իւր. Երթիցուք ի դաշտ։ Եւ եղև՝ երբ էրքան ի դաշտ անդր, յարեաւ Կայեն ի վերայ Աբելի եղբօր իւրոյ և սպան զնա,,։ (Ծննդոց Գ. 8)։

Ա.—Ո՞վ ինչ առնա Աստուած ձայնից յայնժամ։

Պ.—‘‘Ասէ Տէր Աստուած ցԿայեն, ո՞ր է Աբել եղբայր քո,,։ (Ծննդ. Գ. 9)։

Ա.—Եւ զինչ Կայեն պատասխանեաց։

Պ.—‘‘Ոչ գիտեմ. միթէ պահապան իցեմ եղբօրն իմոյ,,։ (Ծննդ. Գ. 9)։

Ա.—Յայնժամ զոր անէծս կոչեաց Աստուած ի գլուխ Կայենի։

Պ.—‘‘Ո՞վ ինչ գործեցեր զայդ. գոչէ՛ն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ. և այդ անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, որ երաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քո ի ձեռաց քոց։ Ո՛վ գործելիցես զերկիր՝ և ոչ կարելցէ տալ քեզ զպտուղ իւր, երերեալ և տատանեալ եղիցիս ի վերայ երկրի,,։ (Ծննդ. Գ. 10—12)։

Պ.—Կայեն պատասխանեաց հինչ առ Աստուած։

Պ.—(Պատասխանեաց). ‘‘Մեծ է պատիժ իմ քան զթողութիւն ինձ։ Եթէ հանես զիս այսօր յերեսաց երկրի, և յերեսաց քոց թագուայց, և լինիցիմ երերեալ և տատանեալ յերկրի. և եղիցի ամենայն որ գտանիցէ զիս՝ սպանցէ զիս,,։ (Ծննդ. Գ. 13. 14)։

Ա.—Ո՞ւ այս զինչ յաւել Աստուած ասել ցնա։

Պ.—‘‘Ո՛չ այդպէս. ամենայն որ սպանանէ զԿայեն, եօթն վեցիժս լուծցէ. և եդ Տէր Աստուած նշան ի Կայենի՝ չսպանանել զնա ամենայնի որ գտանիցէ զնա,,։ (Ծննդոց Գ. 15)։

Ա.—Ձեռ ոպնդանելոյ զկղբայր իւր՝ կայինն զի՞նչ արար։

Պ.—Եւ կայինն յերեսաց Աստուծոյ, և բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման Եդեմայ։ Եւ ծնաւ զՆոք։ Եւ եղև որդի Նոքայ Հայիրիդատ։ Եւ Հայրիդատ ծնաւ զՄայիել։ Եւ Մայիել ծնաւ զՄաթուսաղայ։ Եւ Մաթուսաղայ ծնաւ զԼամէք։ Եւ առեւ Լամէք ցկանայս իւր երկուս՝ և անուն միոյն Ադա և անուն երկրորդին Սելլա։ Եւ ունկնդիր բանից իմոց՝ զի այր սպանի ի վերս ինձ, և երիտասարդ՝ ի հարուածս ինձ. զի թէ եօթն անգամ վրէժ խնդրիցին ի Կայինէ, ապա և ի Լամէքայ եօթանասնևկին եօթն։ (Ծննդ. Գ. 16—24)։

Ա.—Ի մեռանիլն անպարտ և անմեղ արդարոյն Աբելի որդւոյ իւրոյ՝ Ադամ զի՞նչ արար։

Պ.—«Ետուա Ադամ առ Եւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ որդի, և անուանեաց զանուն նորա Սէթ. ասէ. Յղի յարոյց ինձ Աստուած այլ փոխանակ Աբելի՝ զոր սպանին Կայինն։ Եւ Սէթայ եղև որդի, և անուանեաց զանուն նորա Ենովս. նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ»։ (Ծննդ. Գ. 25. 26)։

Ա.—Ադամ որչափ ամն եկաց կենդանի։

Պ.—«Եղեն ամենայն աւուրք Ադամայ զորս եկաց, որք հինն հարիւր և երեսուն, և մեռաւ»։ (Ծննդ. Ե. 1—5)։

Ա.—Որդին Սէթայ Ենովս զո՞ ծնաւ։

Պ.—«Ենովս ծնաւ զԿայինան. և Կայինան ծնաւ զՄաղաղիէլ. և Մաղաղիէլ ծնաւ զՅարէթ. Յարէթ ծնաւ զԵնոք. և Ենոք ծնաւ զՄաթուսաղայ։ Եւ հաճոյ եղև Ենոք Աստուծոյ, և ոչ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած։ Մաթուսաղայ ծնաւ զԼամէք։

Եւ Լամէք ծնաւ որդի, և անուանեաց զանուն նորա Նոյ. ասէ՝ սա հանդուցցէ զմեզ ի գործոց մերոց և խորամանկութեանց ձեռաց մերոց, և յերկրէ զոր անէծ սէր Աստուած»։ (Ծննդ. Ե. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23 24. 25. 26. 27. 28. 29)։

Մեղսբնէն.

Ա.—Որո՞մ նման կայինն։

Պ.—Ըզդին հրէից և չարանախանձ քահանայից նոցին, որք յառաջն անդրանիկք էին Աստուծոյ և սիրելիք ըստ գրեցեալն՝ թէ «Որդի անդրանիկ իմ Իսրայէլ, և ապա եղեն ստակիք նորա, ըստ այնմ, «Ուսուցէն անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ և սկիզբն որդւոց իմոց, խստութեամբ դնացեր, և խստութեամբ յանդիմանութեամբ թշնամանեցեր»։ (Ծննդ. Խթ. 3)։

«Եւ եթէ սէրն իւրով անեղրական բարեգործութեամբն առեցաւ յաշխարհէ»։ (Սարգ. Շնորհ. Ս. Պետր. ձառ վեցերորդ, Գ. 12)։

Յովհան. Ոսկեբերան, ի Մեկն. Մատ. դիրք Ս. ձառ իններորդ, յերես 135։ — Յովհ. Ոսկեբեր. ի Մեկն. Մատ. ԺԴ. 56. յիր. 315)։

Ա.—Որո՞մ նման Աբելն։

Պ.—Տրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ըստ մարդկութեանն կրտսեր էր հրէից, և օրհնեալ է քան զամենայն ազգս, ըստ այնմ, «Այլ եղբայր դորա կրտսեր՝ եղեցի մեծ քան զդա, և զաւակ սորա եղիցի ի բազմութիւն ազգաց»։ (Ծննդ. Խլ. 19),

«Փոքր էի ես յաղբարս իմ, և կրտսեր ի տան հօր իմոյ, արածէի զհաւկինս հօր իմոյ»։ (Սաղմ. արտաքոյ թուոց)։

Հ.—Ովքե՞ր գուշակեր հովուութիւնն Հաբէլի,

Պ.—Զհովուութիւնն Քրիստոսի՝ բանաւորացս հօտի, որ զամենայն ցրուեալս ժողովեաց ի մի՝ ըստ այնմ, «Իբրև հովիւ մի հովուեսցէ զնաճշինս իւր, և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառունիս, և ի ծոց իւր կրեսցէ զնոսա, և մխիթար լեցի յղեաց»: (Եսայի, Խ. 11):

«Ամենայն դիրք հոգելից մարգարէիցն՝ զՏէր մեր հովիւ անուանեն, և զմարդկային բնութիւնս ոչխար»: (Մարգ. Ը՝նորհ. Ե. Պետր. Ճառ վեցերորդ, Բ. 25):

Հ.—Ովի՞նչ նշանակէր մշակութիւնն և երկրագործութիւն կայենի:

Պ.—Զաստուածային այգւոյ մշակութիւնն հրէից, զոր տուաւ Աստուած ի ձեռս նոցա, ըստ այնմ, «Ընկր ոմն տընկեաց այգի, և կատ զնա մշակացն, և ինքն գնաց ի ձանապարհ ժամանակս բազումս»: (Ղուկ. Ի. 9):

«Ընկի եղև սիրեցելոյն յանկեան ի տեղւոջ պարսպութեան, ցանկով փակեցի՝ ցողաբարձ զարդարեցի՝ և տնկեցի որթ սորեկ, աշտարակ շինեցի ի մէջ նորա, և գոբ հնձան փորեցի ի նմա՝ և ինացի, զի բերցէ ինձ խաղող, և եբեր փուշ»: (Եսայի, Ե. 1—2):

«Սրբասիրեալ պձնեալ զարդուն՝ զոր ղեկուցեր Ընհարօնին՝ փոխան պսակ ի փշոց եղին մշակք այգւոյն Իսրայէլի, զիուշ մեզաց հանցեալ չինեն, զի չիս կհար իմ թշնամին, և ողջացի զնայեցուած վերին, զի սպիք մեզացն ջնջեսցին»: (Ի Ը՝արկ. կանոն մեծի Ներսիսեան):

Հ.—Որո՞ց պատարագացն նմանի պատարագն կայենի:

Պ.—Նմանի այնոցիկ պատարագացն հրէից, զորս մատուցանէին նոքա անմաքուր սրտիւ և սիրտ խորհրդով, ըստ այնմ, «Ընդ զոհս նոցա և ընդ պատարագս ոչ հաճեցար, լեալ հաստատեցիր ինձ, զոր ջակէիս և զվատ մեղացն ոչ խնդրեցեր»: (Սաղմ. Լ՝Թ. 10):

«Բայց արդ առատագոյն ևս պաշտաման կհասու Յիսուս, որչափ լաւագոյն ևս ուխտի է միջնորդ՝ որ յաւուրսն յառաջին օրինադրեցաւ, նա աւանիկ բարեբաստ զնոսա, և ասէ ահաւասիկ աւուրք եկեսցեն՝ ասէ տէր, և կատարեցից ի վերայ տանն Իսրայէլի և ի վերայ տանն Յուդայ՝ ուխտ նոր: Որդ՝ ասելովն նոր, հնացոյց զառաջինն, և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն»: (Եբրայ. Ը. 6. 8. 13. Թ. 5):

«Ո՛չ եթէ միայն ի ժամանակն անտի գալստեան Տեառն մերոյ անարգեցան զոհք և պատարագք նոցա, այլ ևս յառաջ քան զայն ժամանակ ո՛չ քաղցրացան նմա զոհքն նոցա, որպէս գրեալ է՝ ո՛չ ուահմ ես զմիս զուարակաց քոց»: (Յակոբ, Ա՝գօն. Ճառ երկրորդ):

«Եւ այնուհետև ոչ բաղում պատարագս մատուցանի որպէս հրէականն, որ այսօր այլ ոչխար պատարագէր՝ և վաղիւն այլ որ յետ այնորիկ այլ բազումք»: (Մարգ. Ը՝նորհ. Ե. պետր. Ճառ չորրորդ, Բ. 5):

Հ.—Ո՞ւմ նմանի աստուածահաճոյ պատարագն Հաբէլի:

Պ.—Նմանի երկնաւոր գառինն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի խաչին պատարագեցաւ վասն մեզոյ մերոյ, «Իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ»: (Եսայ. Ծ՝Գ. 7):

«Յիրաւի ի բաց թողաք մեք զդառն յորմէ ոչ արդարացաք, և զՔրիստոս ընկալաք զձշմարիտ Գառն Աստուծոյ, զառն խափանեցաւ և փոխանակ գառին Քրիստոս զենաւ, ի վերայ նոր սեղանոյ, և արիւն նորա փրկեաց զՅոբս Իսրայէլ»: (Յովհան. Ոսկերբերան, ի Ճառ հաղորդութեան):

«Եւ զկնի այնորիկ զձշմարտութիւն խորհրդոյն ի խաչն կատարեաց, պատարագելով ի վերայ նորա Գառն Աստուծոյ,

որ եթարձ զմեզս աշխարհի ,, : (Սարգ. Շ. Նորհ. Ն. Պատր. ձառ չորրորդ, Ժ. 5)։

Հ.—Ո՞րչափ նշանակէր սրամտութիւն և խոնարհութիւն երեսաց Կայենի։

Պ.—Նշանակէր զորամտութիւն քահանայիցն Հրէից, որք միշտ հառաչէին և ի նախանձ բրդէին առ ամենաբարին Յիսուս սակս անաչառ վարդապետութեանց նորա, ըստ այնմ, ,, Դու զարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս և ասել զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ, և հնազանդին նմա ,, : (Մարկ. Ա. 27)։

,, Դանդի դիտեր թէ առ նախանձու մատնեցին զնա ,, : (Մատ. Ժ. 18)։

Հ.—Ո՞րչափ նշանակէր մեղադրելն և զվայ տալն Աստուծոյ առ Կայեն։

Պ.—Նշանակէր մեղադրելն և զվայ տալն Յիսուսի դպրաց, փարիսեցւոց և քահանայիցն Հրէից՝ վասն փառամոլութեան և ալտաքնայարդար մաքրութեան անձանց նոցա, ըստ այնմ, ,, Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակին, և ի ներքոյ լի էք յափշտակութեամբ և անխառնութեամբ ,, : (Մատ. ԻԳ. 25)։

,, Վա՛յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առանձինն. վա՛յ անօրինիս. չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա ,, : (Եսայի. Գ. 9—11)։

Հ.—Ո՞րչափ նշանակէ սպանանել Կայենի զեղբայրն։

Պ.—Նշանակէր զխորհրդածութիւն քահանայիցն և դպրաց Հրէից առ ի սպանանել զՅիսուս՝ ըստ գրեցելոցն, ,, Դու խայտառակեսցես զամենայն դանօրէնութիւնս նորա և ասաս-

ցես, այսպէս ասէ Տէր Աստուած, Ո՛ քաղաք՝ որ հեղուս զարիւն ի միջի իւրում, ի հասանել ժամանակի իւրոյ, և խորհի զնորհուրդս զանձնէ՝ պղծել զանձն իւր ,, : (Ազկիէլ ԻԲ. 3)։

,, Ո՛յք մատուցին ինձ չար փոխանակ բարւոյ, չարաթօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան ,, : (Սաղմ. Լ. 21)։

,, Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրինութեան եդին ի վերայ իմ ,, : (Նոյն, անդ. Խ. 9)։

,, Դանդրէին դպիրքն և քահանայապետք արկանել ինա ձեռս ի նմին ժամու ,, : (Ղուկ. Խ. 19)։

Հ.—Ո՞րչափ իմանի կեղծաւորութեամբ մատոյն Կայենի, և բարեկամաբար խօսելովն ընդ եղբօրն։

Պ.—Իմանի կեղծաւորեալ դատաձանութիւնն Հրէից, որք բարեկամաբար խօսէին ընդ Յիսուսի, իսկ ի ներքուստ լի թշնամանօք որոգայթս լարէին նմա, ըստ այնմ, ,, Լեզուք նոցա նենգաւորք, և բանք բերանոց նոցա ընդ ընկերի իւրում խօսին զնաղաղութիւն ,, : (Երեմ. Թ. 8)։

,, Յարմար անուն կա նոցա կեղծաւորս կոչելով, զի չարք կին, և բարիք ձևանային, մատնիչք նմին և գովիչք երեսին ,, : (Յովհ. Ոսկեբեր. ի Մատ. Մատ. ԻԲ. 15. Հատոր 473)։

Հ.—Ո՞րչափ նշանակէր ասելն Կայենի առ եղբայր իւր, Եկ երթիցուք ի դաշտ։

Պ.—Նշանակէր Հանելն հրէից զՅիսուս յԵղեսաղեմ և տանելն ի Գողգոթայ առ ի սպանանել՝ ըստ Աւետարանական առակին, թէ ,, Եւ առեալ Հանին զնա արտաքոյ քան զպարսպն և սպանին ,, : (Մատթ. ԻԱ. 39)։

,, Զան որոյ և Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդ, արտաքոյ դրանն չարչարեցաւ ,, : (Եբրայ. Ժ. 12. — Գ. Առաք. Ժ. 27)։

«Ձանին արտաքս՝ իբր ողջակէզ»։ (Նարկ. Ձև. 3)։

Ձ.—Ո՞րինչ նշանակեր կապին Ձարելն ի ձեռաց եղբօրընն։

Պ.—Նշանակեր զկապին Յիսուսի յոգւէն իւրմէ՝ ըստ Ա-ւետարանական պատմութեան, «Առաքեցի զՅիսուս և կապեցին։ Եւ ածին զնա նախ՝ առ Աննա, որ էր աներ Կայիափայ»։ (Յովհ. ԺԸ. 12—13)։

«Եւ ասեն՝ կապեսցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ. այսուհետև զարդիւնա գործոց իւրեանց կերիցեն»։ (Նոսիր. Գ. 10)։

«Որ կամաւ զանկապելին՝ կապեալ ձեռն արձակողին, ի յապարանն տանէին՝ Կայիափայ և Աննայի. ծառայն ղերեսն այն ապտակէր՝ յորմէ սրօվքէն Թևսաքօղէր, Թուք արձակեալ պիղծ բերանով՝ յայն որ կուրին լոյս ծագեաց Թքովն»։ (Ի Հաւրակ)։

«Ձար կապանաց մարդկան լուծիչ, որ կապեցար ընդ կապելոյն, դիս արձակեա յինքնակապէս մեզաց կապից դժոխայնոյն. որ ընդ մեզօք պատրաւորին՝ կացեր անմեղդ ի յատենին. յորժամ փառօք դաս հայրենին՝ մի դատեսցես զիս ընդ նոսին»։ (Նոյն, անդ)։

Ձ.—Ո՞րինչ խորհուրդ ունի հարցանելն Ստուածոյ առ Կային, Թէ ո՞ւր է եղբայր քո։

Պ.—Ունի զխորհուրդ վերջին դատաստանի, յորում ժամանակի վրէժս պահանջեսցէ Ստուած յանիրաւ աղէն հրէից՝ ասելով, ո՞ւր են Մարգարէքն. ո՞ւր է Միածին որդին իմ. ո՞ւր և առաքեալքն, զորմէ դրէ և մարգարէն, «Ստուած վրէժխնդիր. Տէր Ստուած վրէժխնդիր յայտնեցաւ»։ (Ասղ. Ղ. 1)։ Եւ Երեմիա ասէ. «Եւ ի կատարիլ ամացն հօԹանասնից խնդրեցից զվրէժ ի Թագաւորէն Բաբելացւոց և յաղղէն յայնմանէ՝ ասէ Տէր, ըստ անօրինութեանց նոցա»։ (Երեմ. ԽՀ. 12)։

Ձ.—Ո՞րինչ նշանակեր ասէն կայենի առ Ստուած, Թէ չգիտեմ, միԹէ պահապան իցեմ։

Պ.—Նշանակեր ուրանալն հրէից զմարդեղութիւն բանին Ստուծոյ. զոր տեսին աչօք և ո՛չ հաւատացին, և մինչև ցՅաւիտեան ուրացօղ լինին, Թէ չեռասք զնա. զորոց դանգատէ Տէրն բերանով մարգարէին և ասէ, «Տէս զիՀշտամիս իմ՝ զի բաղում եղեն, ատելութեամբ որք ինձանիր ատեցին զիս»։ (Սաղմ. ԺԹ. 19)։

«Եւ ասէ, երԹ և այս ցժողովուրդն ցայն, լսելով լսիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի դիտասջիք»։ (Նոսիր. Օ. 9)։

Ձ.—Ո՞րինչ զոչակէր զոչումն արեան եղբօրն, և բողոքին յերկրէ։

Պ.—Պնուչակէ զմեղսաքաւիչ կենդանի և կենդանարար զաՀրեղէն Յիսուսի Քրիստոսի Ստուծոյ մերոյ, ոչ որպէս զԱբելին՝ որ զղատակնիքն բողոքէր, այլ յամենայն խորանս վկայութեան պատարագիալ մատուցանի հօրն երկնաւորի, և կեանս ընձեռէ իւրոց հաւատացելոց քրիստոնէից զՅաղԹանական բարեաց յիւրումն հանդիսի՝ քան զղատակնիքն մահուն Ձաբելի՝ ըստ այնմ, «Որ յամենայն վայրի կատուցեր զխորանն վկայութեան արեան քո ոչխարի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն՝ քան զղատակնիքն մահու Ձաբելի՝ զՅաղԹանակ բարեաց քոյոմդ հանդիսի, կեանս կրկին անմահական-նըս շնորհեաց, վկրատութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ հոգւոյդ սրբոյ միաբանութեան, քաՀութեան, ազատութեան, լուսաւորութեան, միանձնաւոր մաքրութեան, իսկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցոր-

դուքեան, անհապուռ փառացն, ի շքեղունս մեր ձայնիւ՝ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից ազաչանք ,, : (Նարեկ Ծն. 2):

,, Որպէս զի՝ եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ մինչև ցարիւնն Զաքարեայ որդւոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ միջ տաճարին և սեղանոյն ,, : (Մատ. ԻԳ. 35: — Յովհ. Ծորբոր. ի Մեկն. Մատ. ԻԳ. 35. յերես 494):

,, Երդ անկաւ արիւնն տէրունական ի վերայ նոցա, որպէս արիւնն Աբելի արդարոյ ի վերայ Կայենի սպանողի, և ելեն նոքա հաղորդք ամենայն արեան անպարտ հեղելոյ երկրի, որպէս Տէր մեր դատեցաւ զնոսա ասելով՝ յարենէ Աբելի արդարոյ մինչև ցարիւնն Զաքարիայ սպանելոյ ընդ տաճարն և սեղանն ,, : (Մարդ. Շնորհ. Ե. Պետր. ձառ չորրորդ, Ր. 7):

,, Իսկ անհաւատքն հատուն անձամբք և որդովք զվճիռն՝ զոր ընկալան ի ձեռն սրոյ Յովսէփայ, և մակաբերն մինչև ցայսօր լսելեանս կրեն յամենայն ազգաց վասն արեան արդարոյն ,, : (Յովհ. Ծորբոր. ի Մեկն. Մատ. ԻԶ. 25. յերես 590):

— Ո՞վ ինչ նշանակէր ասել Կայենի առ Աստուած, թէ ,, Մեծ է պատիժ իմ քան զթողուլդ ինձ ,, :

Պ.—Նշանակէր զանյուսութիւն հրեական ազգին, որք մինչև ցայսօր անցեալ և անտեղեակ են գալստեան մարդացեալ բանին Աստուծոյ, և սպասեն դերաքրիստոսին, ըստ բանից Փրկչին մեր Աստուծոյ թէ՝ ,, Ես եկի յանուն Հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս : Եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք ,, : (Յովհ. Ե. 43):

,, Եւ ընդէ՞ր գայթ դնէ. զի ասաց նախ՝ թէ աւետարանն քարոզեսցի ի վկայութիւն հրեանոցա՝ որք ոչ հաւատան,

յայնժամ գայ մարդն անօրէնութեան՝ որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է, և հաւատան ի նա՝ որ չիւր սնունդն եկն, որք ոչ հաւատացին ի Քրիստոս՝ որ յանուն Հօր իւրոյ գործէր և խօսէր ,, : (Յովհ. Ծորբոր. ի Մեկն. Մատ. ԻԳ. 15. յերես 503):

— Ո՞վ ինչ նշանակէր երերեալ և տատանեալ լինել սէն Աստուծոյ առ Կայեն:

Պ.—Նշանակէր զհրեայսն, որք իբր երերեալ և տատանեալ շրջելով յաշխարհի, յերկեայս են զգալստենէ Մեսիային, ըստ այնմ, ,, Ընդքն ասէին՝ սա է Քրիստոսն: Իսկ կէսքն ասէին՝ մի՛թէ ի Գալիլեէ գալոց իցէ Քրիստոսն ,, : (Յովհ. Ը. 41):

— Ո՞վ ինչ էր նշանն Կայենի ի ճակատն:

Պ.—Ըստ ոմանց հաւանական թուիմ ասել, թէ իցէ եղջիւր խաչանման, որ գոռայր և գոչէր, թէ ահա գայ սղոսպրատողն:

— Ո՞վ ինչ նշանակէր գոչել եղջերն ի ճակատ Կայենի, թէ սա է եղբայրասպանն Կայեն:

Պ.—Նշանակէր և իբրև մատնանիշ ցուցանէր զՅայտնի տիրասպան և աստուածուրաց լինելն ազգին հրէից, որպէս դրէ մարգարէն, ,, Ա՛յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առանձինն, և ասեն. կապեսցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ ,, : (Եսայի. Գ. 10): Եւ Սողոմոն ասէ. ,, Դարանակալ լեցուք արդարոյն, զի դժպհի եղև մեզ, և հակառակ կայ գործոց մերոց: . . . . Խոստանայ ուսնել զգիտութիւն Աստուծոյ, և որդի Տեառն զանձն իւր անուանէ ,, : (Իմաստ. Բ. 12):

,, Հաղորդակից է աստուածասպանիցն, և որոց զառաքեալսն Տեառն կոտորեցին ,, : (Ննդնաւիոս աստուածազգեաց ի Թուղթ Ժ.Գ):

«Եթէ ոք ոչ երկիրս պագանիցէ խաչելոյն՝ նզովեալ եղիցի և կարկեսցի ընդ անատուածասպանն»: (Գրիգ. աստուածաբան Ընդ Որս. Ճառ լինելոյ առ Աղոքսնիոս):

«Աստուածածնէարչար աղիին հրէից յանդիմանիչ»: (Պրօսկող պատրիարգ Կոստանդնուպօլսոյ ի Ներբող Ստեփանոսի):

«Վասն որոյ ասէ Թէ՝ այն ամենայն՝ ակիզբն է երկանց, այս ինքն՝ հանդերձեալ դատաստանին յաւիտենական պատժոյն՝ որ պատահելոց է ոչիրանպան աղիին»: (Յովհ. Օրոծոր. ի Մեկն. Մատ. ԻԳ. 8. երես 500):

Ա.—Օ՞րինչ դուշակեր ասելն Վամէքայ ցկանայս իւր՝ լուարուք կանայք ձայնի Վամէքայ՝ եայլն:

Պ.—Ապաշաւանս և զխոստովանութիւնս. եթէ կայրն խոստովանեալ ապաշաւեալ եր զնզեղս իւր ի հարցանելն Աստուծոյ Թէ ո՞ր է եղբայր քո, Թողոյր նմա Աստուածն. բայց վասն անապաշաւութեան խնդրելոցն չնմանի եօթն վեցիցն, նմանապէս և ի Վամէքայ եօթանասնեկին եօթն, զի առաջնումն ոչ խրատեցաւ, այլ կեցոյ ապաշաւեալ ասէն Թողաւ նմա. նմանապէս և մեք եթէ յորժամ մեղն զղջմամբ սրբեսցի խոստման լինիմք զնզեղս մեր առաջի քահանային՝ յուսով ընդունիմք զԹողութիւն մեղաց արդեամբք չարչարանացն Քրիստոսի, զի Աստուած խոստացեալ է՝ կամի և կարող է սրբել զմեզ յամենայն մեղաց, ըստ այնմ, «Եթէ խոցեն մեղք ձեր իբրև զձանձախարիսխ իբրև զձիւն սպիտակ արասցի. և եթէ կարմիր իբրև զորդան կարմիր, իբրև զանբր արասցի»: (Նահաշ. Ե. 18):

«Բայց յուշ լեզի քեզ՝ և ընդ միմեանս գնատեսցուք, ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս»: (Նոյն, անդ. Խզ. 26):

«Ձէ կամիմ զմահ ամբարշտին՝ որպէս դարձնալ նորա ի չար ճանապարհէ իւրմէ և կեալ»: (Նզեկիել Ի. Գ. 11):

(Օրի առանց խոստովանութեան չէք հնար քաւութիւն գտանել):

«Առանց խոստովանութեան չէք հնար քաւութիւն դրատանել. վասն այսորիկ պարտ է փութալ ի խոստովանութիւն, քահանային խոստովանել միանգամ, և Աստուծոյ՝ հանապազ»: (Նոյն, անդ):

«Թէպէտ և բիւր չարիօք և սաստիկ մեղօք վերաւորեալ լինիմք, հաւատասցուք ի մարդասիրութենէն Քրիստոսի քաւութիւն և թողութիւն առնուլ»: (Խոսրով. ի Մեկն. Ժամակ. երես 348):

«Վասն այսորիկ լաւ զնոսա առաւել անձկէ՝ որպէս զՎամէքն. զի Թէ ի կայինէ եօթն վեցիս, իսկ ի Վամէքայ եօթանասնեկին եօթն, զի առաջնումն ոչ խրատեցաւ»: (Յովհ. Օրոծոր. ի Մեկն. Մատ. Ի. 35. երես. 495):

Ա.—Օ՞րինչ սուտգաբանի անունդ Սկէ:

Պ.—Մխիթարութիւն:

Ա.—Ո՞ւմ նմանի Սկէ:

Պ.—Մխիթարութեան և ակնկալութեան Տեառն մերում Յիսուսի Քրիստոսի՝ որ առաքեալ ի Հօրէ՝ մարմնացեալ ի սրբոյ կուսէն անսերմնաբար ծնեալ ի նմանէ՝ եկեալ մխիթարից զարամալից բնութիւնս մեր վասն կորուսանելոյ դմաուս առաջին՝ զորս ունէաք ի դրախտին, և բևեռամբ խաչին յուսով ակնկալութեան մահից ի դրախտին, վերածեալ դասեաց յանդստառուս և յանտրտուս ի կեանս, ըստ այնմ, «Երբեմն հովիւս մի հովուեսցէ զհաշինս իւր, և բազկաւ իւրով ժողովեսցէ զդառինս, և ի ծոց իւր կրեսցէ զնոսա. և մխիթար լեզի յղեաց»: (Նահաշ. Խ. 11):

«Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»։ (Մատ. Ե. 4)։

«Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեակ յիշեա՛ զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քումմ, և Ղազարոս նոյնպէս զչարչարանսն. արդ՝ սա աստ մխիթարի, և դու այդր պատիժ»։ (Ղուկ. Ժ.Զ. 25)։

«Դու Տէր՝ առաւ ողորմութեամբ քով մխիթարեա ըղծառայս քո, և տուր սոցա տեղի ապաշխարութեան»։ (Ժամակարգ)։

Հ.—Օ՞րինչ օրինակ է փոխելն Աստուծոյ զնոսք ի տեղի ուրեք ի դրախտն եդեմական։

Պ.—Ի օրինակ ամենայն արդարոց սրբոց ընդհանուր ուղղափառ եկեղեցեաց հաւատացելոց ի Քրիստոս, որք ի դատաստան Տեառն ի նմանէ խոստացեալ ձրի և զաստուածատուր պարգևան յուսով յարութեան ժառանգելոց են, ուր կան Նոքա և Նովքիսս ի միւսանգամ գալստեան նորա, ըստ այնմ՝ «Ոչ Աստուած ոչ ի բազմացուցանելն միայն, այլ անդէն և անդ կամէր, զի ի մշանջենականաց անմահութիւնն փոխսցի, որպէս և զնովքն տեսանեմք յետ վարուց յերկրականաց կենաց, յետ ամուսնանալոյ և որդիս ծնանելոյ ուղղութեամբ վարուցն՝ վերացուցեալ զնա կենդանւոյն յանմահութեան վիճակն, որ ոչ վասն առն միայնոյ, այլ զի և իւրք նորա ձանապարհ գործեցին այլոց, և ոչ բռնազբօսութեամբ առեալ ի կեանսն, այլ զպարտ հաճոյական վարուց հատացեալ։ Սոյն օրինակ կամեցեալ Աստուծոյ՝ զամենեսեան յանմահութիւն փոխել, յետ աստ վայելելոյ ամենեցուն»։ (Գրի. լուսա. յԱգաթ. յերես 125. ըստ հին տպ)։

«Որպէս զի միշտ հայելովն ինձ փափաքեսցին վայելչութեան նորա, և զղջացեալք ապաշխարեսցին յառաջին յանցանացն

և արժանաւորք լեցին վերստին դառնալոյ ի նա, ըստ մեկնելոյ սրբոց վարդապետաց, որովհետև ոչ ոք արժանացաւ յորդւոցն Ադամայ, բայց Նովք միայն, որ հաճոյ գտեալ Աստուծոյ՝ փոխեցաւ կենդանւոյն ի դրախտն, որպէս յայտ առնէն հոգևոր կերքն առ յոյս և օրինակ ամենայն արդարոց, թէ որ պահէ զպատուիրանս Աստուծոյ՝ յոլսացի ժառանգել զինա որպէս զնովքն. և որ ստուգապէս պատուիրանացն Աստուծոյ՝ նա բազկիր լեցի ի նմանէ, որպէս յայնժամ Ադամն»։ (Ներ. Հնորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յամայք նահանգի. յերես 163)։

«Որոյ բազումք երևեցան ի սկզբանէ վկայք կենսաբեր գալստեանն. որ նորոգելոցն էր զմեզ յարենէ անտի Աբելի արդարոյ ունելով զանուն արդար անարատ վարուց։ Որպէս Նովա յուսովն, և Նովք հաճոյիւքն Աստուծոյ փոխելովն . . . . . Եւ արքայութեան յուսովն անարատ վարուք ընթանալ ի կեաս վերին կոչմանն, և լինիլ կատարեալ՝ որպէս Հայրն երկնաւոր կատարեալ է»։ (Գրի. լուսա. Յաճախ. ձառ Ջ. յերես 58)։

Հ.—Ո՞վ խնդրեաց զմարմին Յիսուսի ի Պիղատոսէ՝ և զի՞նչ արար։

Պ.—Յովսէփ Արեմաթացին խնդրեաց զմարմին Տեառն Յիսուսի ի Պիղատոսէ. որոյ ի շնորհելն՝ և պատեալ զմարմինն թաղեաց Նիկոդիմոսի պատառակալաւ և խնկօք անուշիւ և զմռսով հանդերձ՝ որպէս օրէնն էր հրէից առնել, և եդ ի նոր դերեզմանի՝ զոր փորեաց (կռանով) ի վիմի, որպէս պատմեն Ավետարանիչք սուրբ, «Ուրիմինն Յիսուսի, և պատեցին կտաւով խնկով հանդերձ՝ որպէս օրէնն էր հրէից պատել»։ (Յովհ. ԺԹ. 40)։

,,Եւ իբրև կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի դերեզմանի,,: (Գործ: Ժ.Գ: 29:—Յովհան. Ծործորեցի ի Մեկին: Մատ: Ի.Ը: 60: Յերես: 606):

,,Պարզեսցուն ամենեցուն այսօր խնդրի պարգեւս ի պղտոսէ. և արիւնն ղեղյս որպէս զոթից հաւանի պահել ի Յովսէփայ,,: (Ի. Շարականի):

,,Ո՞վ ամենայն մեռելոյ աղաչեմ զքեզ՝ ով պիղատոս, վասն մեռելոյ՝ սակայն կամաւ մեռելոյ, զի եթէ ոչ էր կամեցեալ, ոչ էր մեռեալ: Ո՞վ ամենայն մեռելոյ աղաչեմ զքեզ՝ ով պիղատոս, ոչ ունողի զսակի և զպղծաթի, այլ ունողն զմայր աստուածապետ. զոր իւրով ծննդեամբն մեծացոյց: Ո՞վ ամենայն մեռելոյ աղաչեմ զքեզ՝ ով պիղատոս, որ ոչ ունի զյաւուրս դերեզմանն, որպէս և զյաւուրս մահ, ուստի յիւրում վիճակի շէրմի կամիմ զնա հիւրընկալել,,: (Սուրբն Գրիգոր Նիսացին ի ձառ Թաղման Տեառն մերոյ):

,,Հաւատեաւ մեծատուն էր Յովսէփ՝ որ զամենեցունց գաբարիչն՝ զշուքմարանն ամենայն բարեաց ինքեամբ երկրի: Ո՛րչափ մարիա մեծատուն էր, որ զանգին մարգարիտն արժանացաւ ինքեամբ բառնալ, որ լի էր աստուածային անուշահոտութեամբ, որ զաշխարհն ղկեանս ի փրկութիւն շահեցաւ: Օ՜ի աստղ ոչ մեծատուն՝ որ յիրաւի ընկալաւ ղկերակրիչն և ղկեցուցիչն: Գնացիր ով Յովսէփ՝ թէ զի՞նչ քարձեր: Եթէ ի մայար՝ թէ զով ոչնիս, արդէն իսկ ես մեծատուն,,: (Սուրբն Եպիփան ասէ):

—Յիսուս Քրիստոս փրկիչն մեր որո՞ւմ և յո՞րմէ դերեզմանի եղաւ ի թաղմանն իւրոյմ:

Պ.—Ի կոյտ դերեզմանի՝ զոր փորեալ ի վեմին, և սրբեալ Յովսէփ զկնիճք հեղեղաւոյ և եդ զգերեզմանն յորում ցարդ չէք ոք եղեալ, և ոչ ևս դնիցի յաւիտեան. և եղ յայնմ գերեզմանի զմարմինն Յիսուսի, ըստ այնմ, ,,Ամմատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի, և իջուցեալ զնաւ պատեաց պաստաւակալաւ, և եդ ի կռաճոյ դերեզմանի՝ ուր չէր բնաւ ոք եղեալ,,: (Ղուկ Ի.Գ: 52—53):

,,Նա էր ի տեղւոջն՝ յորում խաչեցաւ՝ պարտէզ, և ի պարտիզի անդ դերեզման նոր. յորում ոչ ոք երբէք էր նեղեալ,,: (Յովհ. Ի.Ժ. 41):

,,Կնդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր դերեզմանի, և զանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն,,: (Ի. Շարակ):

,,Կուսածին մարմնով Քրիստոս այսօր դնի ի կոյս գերեզմանի, և լուծիչն երկանց գժոխոց մատանեաւ կնքի քահանայից,,: (Նոյն):

—Մինչև ցե՞րբ ի տրտմութեան վարանեալ կային աշակերտքն Յիսուսի վարդապետին սիրելեաց՝ վասն մահուն նորա:

Պ.—Փոքր ինչ յաւուրս՝ մինչև ցկիրակօրեայ յարութիւնն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. որ յարուցեալ երեւեցաւ աշակերտաց իւրոց և վարաւեալ զսուգ տրտմութեան սրտից նոցա, զոր նախ քան զչարչարանսն իւր՝ նախադուշակեալ ճանուցեալ էր նոցա ասելով, ,,Փոքր մի, և ոչ ևս տեսանիք զիս, և ապա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս, և ես երթամ առ հայր: . . . . . Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լինիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ,,: (Յովհաննու Ի.Ո. 16—22): Եւ կիւ հանդարձմանն մարմնով յերկինս և ի նախկին ընդ յաջմէ Հօր՝ խոստացեալ աշակերտաց իւրոց առաքել զմխիթարիչ սուրբ Հոգին առ նոսա յաւուր պենտեկոստէի ըստ գրեցելոյն, ,,Օ՜ի եթէ ես ոչ երթայց՝ մխիթա-

րիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա թէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ ,, : (Յովհ: ԺԶ. 7): Զոր և առաքեաց յաւուր պենտէկոստէի, և փարատեաց զտարամոլթիւն նոցա մինչ ժողովել կային ի վերնատանն, ըստ այմ, ,, Եւ ի կատարել աւուրցն պենտէկոստէից էին ամենեքեան միաբան ի միասին, և եղև յանկարծակի հնչիւն յերկնից եկեալ իբրև առաստիկ հողմոյ, և լցեաց զամենայն տունն՝ յորում նստէին ,, : (Գործոց Բ. 1):

,, Հոգւոյն սրբոյ առին զօրութիւն առաքեալքն, և զամենայն աղգաց լեզուացն բաժանելոց ընկալան զդիտութիւն, զի ամենայն աշխարհաց որ ընդ ամենայն տիեզերս մարդիկ իցեն՝ բառական լինին ուսուցանել զհրաման աստուածութեանն ,, : (Գրի. լուսա. ՀԱգաթ):

,, Ի գան ամենեքին հոսանօք Հոգւոյն սրբոյ, լինին ընդ տիեզերս՝ զի տայցեն զդիտութիւն զքաղչելեաց աստուածութեանն, բազմազգեան լեզուացն առնուլ ի միս զնշանն, զոր առ յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ ,, : (Նոյն, անդ):

,, Որ փոխանակ ծոցածին Բանին որ եւ յերկինս՝ առաքեացսա աւետիքն Հօր ի բարձանց, Հոգին ճշմարտութեան՝ մըխիթարել զորս յԱգամայ տրամեցելոց, և հրաշնել զընտրեալ զդասս առաքելոցն ,, (ի Հ. արակ. կանոն Հոգւոյ գալստեան):

ԳԻՐՔ ՀԻԳԵՐՐՈՐԴ

Զբհեղեղ և հպճո-ընթ Նոյեան պապանին:

Հ.—Երբեւ բազմացան մարդիկ ի վերայ երկրի՝ զի՞նչ արարին:

Պ.—,, Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց որ ընտրեցին ,, : (Ծննդ. Զ. 2):

Հ.—Զինչ արար Աստուած ի տեսանելն զայնպիսի չարութիւն մարդկան:

Պ.—,, Ասէ Տէր Աստուած. Մի՛ ինասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին . . . . Եւ երբեւ եւս Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, և ամենայն որ խորհէր ի սրտի իւրում լինաւոր ի չարիս զամենայն աւուրս: Եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի. և մտախոհ եղև ի սրտի իւրում. և ասէ տէր Աստուած. Ջնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրի, ի մարդոյ մինչև յանասուն, և ի սողնոց մինչև ի թռչունս երկնից. զի բարկացայ զի արարի զնոսա ,, : (Ծննդ. Զ. 3. 4. 5. 6. 7):

Հ.—Զգտաւ ոք հաճոյ Աստուծոյ և արդար յայնչափ բազմութեան մարդկան:

Պ.—,, Նոյ եգիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ: . . Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում. և հաճոյ եղև Նոյ Աստուծոյ ,, : (Ծննդ. Զ. 8. 9):

Հ.—(Զիարդ ատուդարանի անունդ Նոյ):

Պ.—(Հանգիստ կամ դադարումն):

Հ.—Ունէր զորդիս:

Պ.—(Ընդ) ,, Ծնաւ Նոյ երիս որդիս ,, : (Ծննդոց. Զ. 10):

Հ.—Զինչ էին անուանք նոցա:

Պ.—,, Սէմ, Քամ, Յաբեթ ,, : (Ծննդոց. Զ. 10):

Հ.— . . . (Զինչ պատուիրեաց Աստուած Նոյի) յորժամ եաւս Տէր Աստուած զերկիր, և էր ապահանակ. զի ապա կանեաց ամենայն մարմին զձանապարհս իւր ի վերայ երկրի:

Զինչ պատուիրեաց Նոյին

պ.—(պատուիրեաց) „ և ասէ . . . ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ. զի լցաւ երկիր անիրաւութեամբք ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնոսա և զերկիր։ Ընդ արա դու քեզ տապան ի չորեքկուսի փայտից. խորշս խորշս գործեսցես զտապանն. և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ„։ (Ծննդ. Զ. 13. 14)։

ՀՈՎ.—Ի քանի՞ կանգնոյ հրամայեաց Աստուած նոյի առնել զտապանն, և քանի՞ կարգս առն որշիլ ինքեան։

պ.—(Ասէ). „ Այսպէս արասցես զտապանն։ Երկիք հարիւր կանգնոյ երկայնութիւն տապանին, և ի լիսուն կանգնոյ պարզութիւնն, և երեսուն կանգնոյ պրարձրութիւնն. քաղելով գործեսցես զտապանն. և ի մի կանգուն կատարեսցես զնա ի վերուստ, և զդուռն տապանին ի կողմանէ արասցես։ Ներքնատունս և միջնատունս և վերնատունս գործեսցես ի նմա„։ (Ծննդ. Զ. 15—22)։

ՀՈՎ.—Ի զղջանալ նոցա զի՞նչ արար Աստուած։

պ.—(պատուիրեաց) „ Եւ ասէ ցնոյ. մուտ դու և ամենայն տունդ քո ի տապանդ. զի զքեզ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայսմիկ։ (Ծննդ. Է. 1)։

ՀՈՎ.—Քանի՞ քանի յանասնոց և ի թռչնոց հրամայեաց Աստուած մուծանել ընդ իւր ի տապանն։

պ.—(Ասէ Տէր Աստուած) „ յամենայն անասնոց սրբոց 01. հօթն հօթն արու և էգ, և յամենայն անասնոց որ ոչ են սուրբ, երկուս երկուս արու և էգ։ Եւ ի թռչնոց երկնից զերծոց հօթն հօթն արու և էգ. և ի թռչնոց որ ոչ սուրբ են՝ երկու երկու արու և էգ, բուծանել զաւակ ի վերայ ամենայն երկրի„։ (Ծննդ. Է. 2—5)։

ՀՈՎ.—Քանի՞ ամաց էր նոյ յորժամ եղև ջրհեղեղ։

պ.—„ Եր ամաց վեց հարիւրոց . . . և եմուտ նոյ և որդիք իւր, և կինն նորա, և կանայք որդւոց նորա ընդ նմա ի տապանն վասն ջուրցն հեղեղի։ Եւ ի թռչնոց սրբոց, և ի թռչնոց որ ոչ սուրբ էին. և յամենայն սողնոց որ սողն ի վերայ երկրի, երկու երկու մտին առ նոյ ի տապանն անդր արու և էգ, որպէս պատուիրեաց նմա Տէր Աստուած։ (Ծննդոց Է. 6. 7. 8. 9)։

ՀՈՎ.—Յետ քանի՞ աւուր եղև ջրհեղեղն։

պ.—„Յետ եօթն աւուր„։ (Ծննդոց Է. 10)։

ՀՈՎ.—Յորո՞ւմ ամսեան։

պ.—„Յամին վեց հարիւրերորդի կենացն նոյի, յեօթներորդում ամսեանն ի քսան և եօթն ամսոյն։ Եւ պատահեցան ամենայն աղբիւրք անդնդոց բաղմաց. և սահմանք երկնից բացան„։ (Ծննդոց Է. 11. 12. 13. 14. 15. 16)։

ՀՈՎ.—Ի քանի՞ աւուրս ոչեաց անձրև ի վերայ երկրի։ Եւ զի՞նչ ալեաք

պ.—„ Փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա զառնպանն։ Եւ եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասունն գիշեր ի վերայ երկրի. . . . և սաստկանային ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի, և ծածկեր զամենայն լերինս բարձունս որ էին ի ներքոյ երկնից„։ (Ծննդոց Է. 17. 18. 19)։

ՀՈՎ.—Որչա՞փ բարձրացաւ ջուրն անդր քան զկատար լերանց։

պ.—„ Հզեցաւան կանգուն . . . և ծածկեաց զամենայն լերինս. և մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի. թռչնոց և անասնոց և գազանաց. և ամենայն սողուն զեռուն ի վերայ երկրի, և ամենայն մարդ։ . . . . . Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն„։ (Ծննդոց Է. 20. 21. 22. 23. 24)։

ՀՈՎ.— Զի՞նչ յետ այնորիկ եղև։

պ.—“ Յիշեցաք Աստուած զՆոյ և զամենայն գազանս, և զամենայն անասունս, և զամենայն թռչունս որ էին ընդ նմա ի տապանի անդր. և եաց Հոդմ ի վերայ երկրի, և դադարեաց ջուրն։ Եւ խցան աղբիւրք անդնդոց, և սահմանք երկնից. և արգելաւ անձրեւ երկնից ,,։ (Ծննդոց Ը. 1. 2. 3)։

Ա.—Որ զկնի ջրհեղեղին նստաւ տապանն։ Եւ յորմէ՞մ ամենեան։

պ.—“ Յեօթներորդում ամսեան իջոյն և հօթն ամսոյն (նստաւ) ի լերինս Ուրարտացւոյ ,,։ (Ծննդոց Ը. 4)։

Ա.—Յետ քանի՞ ամսեան նուազեցաւ ջուրն յերկրէ։

պ.—“ Ջուրն երթայր և նուազէր մինչև ի տասներորդ ամիսն։ Իսկ յամսեանն մեռասաներորդին, որ օր առաջին էր ամսոյն՝ երևեցան գլուխք լերանց։ Եւ եղև յետ քառասուն աւուր երից Նոյ զպատուհան տապանին զոր արար ,,։ (Ծննդոց Ը. 5. 6)։

Ա.—Իսկզբանէ զո՞ արձակեաց Նոյ պատգամաւորս յաշխարհէն։

պ.—“ Ագռաւն, որ ել, և անդրէն ոչ դարձաւ ցգտանել Ջրոյն յերկրէ. (Ծննդոց Ը. 7)։

Ա.—Ագռաւն զո՞ արձակեաց պատգամաւոր։

պ.—“ (...) Ագռաւին զհետ նորա՝ տեսանել թե ցածուցեալ իցէ Ջուրն յերկրէ։ Եւ չդտեալ ագռաւն հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր. զի Ջուր դեռ ունէր զամենայն երեսս երկրի։ (Ծննդոց Ը. 8)։

Ա.—Ագռաւն ապա արար Նոյ։

պ.—(...)“ Եւ դադարեաց ևս աւուրս հօթն. և դարձեալ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի։ Եւ դարձաւ առ նա ընդ երեկս, և ունէր տերև ձիթենւոյ շիւղ ի բերան իւրում. և գիտաց Նոյ, թէ ցածուցեալ են Ջուրք յերկրէ։

Եւ դադարեաց աւուրս հօթն ևս, և դարձեալ արձակեաց զաղաւնին։ Եւ ոչ ևս յաւելաւ դառնալ առ նա։ (Ծննդ. Ը. 9. 10. 11. 12)։

Ա.—Յորմէ՞մ ժամանակի, և ընդ դադարեցաւ Ջուրն երեսաց երկրի։

պ.—(...) Ի վեց հարիւրերորդին և իննսուն ամի կենաց Նոյի, յամսեանն առաջնումն՝ որ օր ոմն էր ամսոյն, նուազեցաւ Ջուրն յերեսաց երկրի։ (Ծննդոց Ը. 13)։

Ա.—Ի ցամաքիլ Ջրոյն յերեսաց երկրի զինչ արար։

պ.—(...) “ Ելից Նոյ զձեզոցն տապանին զոր արար։ Իսկ յամսեանն հօթներորդին, որ օր քսան և հօթն էր ամսոյն՝ ցամաքեցաւ երկիր։ Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ Նոյ և ասէ, ել ի տապանէ այսր։ ... և զամենայն սողոն վերս երկրի հան ընդ քեզ, և զբազմացիր ի վերայ երկրի։ Եւ ածիցէք և բազմացարուք ի վերայ երկրի։ Եւ ել Նոյ ... և օրդիք նորա ... ելին ի տապանէ անտի։ Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ։ Եւ առ յամենայն անասնոց սրբոց, և յամենայն թռչնոց սրբոց, և եհան ողջակէզ իվերայ սեղանոյն։ Եւ հոտառեցաւ Տէր Աստուած ի հոտ անուշից։ (Ծննդ. Ը. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21)։

Ա.—Ածեալ Տէր Աստուած ընդ զոհս Նոյի զինչ ասաց նմա։

պ.—(...)“ Ընդէր զմահս, ոչ ևս յաւելից անիծանել զերկիրն ... զի միտք մարդկան հաւատասանք են ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ։ ... Այսուհետև զամենայն աւուրս երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, ձմեռն և զիշերք մի դադարեսցեն։ Եւ օրհնեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա ... ածիցէք և բազմացարուք և լերէք զերկիրն և տիրեցէք դմա։ ... Նայց զմիս արեամբ հնձոյ մի՝ ուտիցէք։

... Որ հեղոս զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա։ Օ՛ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն։ ... Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ։ և ոչ եւս մեռանիցէ ամենայն մարմին ի ջրհեղեղէ,,։ (Ծննդոց Ը. 22։ Թ. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11)։

Հ.—Օ՛ի՞նչ էր նշան ուխտիդ։

Պ.—(...) ,,Եսկ Տէր Աստուած ցՆոյ. այն է նշան ուխտին զոր ես տաց ընդ իս և ընդ ձեզ, ... Օ՛աղեղն իմ կապից յամպս, և եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկրի,,։ (Ծննդ. Թ. 12—19)։

Հ.—Յետ այսոցիկ ամենայնի զի՞նչ արար Նոյ։

Պ.—(...) ,,Սկսաւ Նոյ, այր հողագործ զերկիր գործել և տնկեաց այգի,,։ (Ծննդոց Թ. 20)։

Հ.—Ո՛չ նոյն էր պատահեցաւ նմա մերկանալ դնալ ի տան իւրում ի գիւրևիվ։

Պ.—(...) ,,Եւրէ ի գինւոյն և արբեցաւ, և մերկացաւ ի տան իւրում,,։ (Ծննդոց Թ. 21)։

Հ.—Օ՛ի՞նչ անցք անցին ընդ նա յայնժամ։

Պ.—(...) ,,Եւտես Քամ հայր Քանաանու զմերկութիւն հօր իւրոյ. և երկ պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ,,։ (Ծննդոց Թ. 22)։

Հ.—Օ՛ի՞նչ նոքա արարին։

Պ.—(...) ,,Եառեալ Սեմայ և Յաբեթի հանդերձ, ի վերայ թիկանց երկոցունն, և գնացին յետս յետս, և ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց, և դէմքն իւրեանց ետ դէմ ունէին, և զմերկութիւն հօրն իւրեանց ոչ տեսին,,։ (Ծննդոց Թ. 23)։

Հ.—Ի ո՞րմէ՞ իմացաւ Նոյ ի գինւոյ ածէ՞ իմն, և ի տեղեկացաւ նմանէ անցիցն՝ զի՞նչ արար։

Պ.—(...) ,,Ասէ անիծեալ Քանանդ ծառայ եղբարցն իւրոցն։ Եւ ասէ օրհնեալ Տէր Աստուած, Աստուած Սեմայ, և եղիցի Քանան ծառայ նոցա։ Ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի, և բնակեսցէ ի տունս Սեմայ և եղիցի Քանանդ ծառայ նոցա։ Եւ եղեն ամենայն աւուրքն Նոյի, ամք հինն հարիւր և չիսուն, և մեռաւ։ (Ծննդոց Թ. 24. 25. 26. 27. 29)։

Հ.—Ասա զծնունդս և զներսունդս Նոյի՝ զի լուայց։

Պ.—(...) ,,Եյս են ծնունդք որդւոցն Նոյի, Սեմ, Քամ, Յաբեթ, և ծնան նոցա որդիք յետ ջրհեղեղին։ Որդիք Յաբեթի, Գոմէր, և Մագոգ, և Մադա՛յ, և Յաւան, և Եղիսայ, Թոբէլ, և Մոսոք, և Թիրաս։ և որդիք Գոմայ՝ Ասքենազ, և Մեսարիմ, Փուտ, և Քանան։ և Քուշ ծնաւ զՆեբրովդ. նա սկսաւ լինել հսկայ ի վերայ երկրի։ Եւ նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ, վասն այնորիկ ասեն, իբրև զՆեբրովդ սկայ առաջի Տեառն Աստուծոյ։ Եւ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբիլոն։ ... Որդիք Սեմայ, Եղամ և Ասուր, Արփաքսատ և Լուդ, և Արամ,,։ (Ծննդոց Ժ. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22)։ Եյս են ազգ որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց ըստ տոհմս իւրեանց։ Եւ ի տացանէ սեռեցան կղզիք ազգաց ի վերայ երկրի՝ յետ ջրհեղեղին,,։ (Ծննդոց Ժ. 32)։

Հ.—Յի՞նչ լեզու խօսէին նոքա։

Պ.—(...) ,,Եր ամենայն երկիր լեզու մի, և բարբառ մի ամենեցուն։ Եւ եղև ի խաղալն նոցա յարևելից, գտին դաշտ մի ի երկրին Սենաար, և բնակեցան անդ,,։ (Ծննդ. Ժ.Ա. 1. 2)։

Հ.—Օ՛ի՞նչ խորհուրդ խորհեցան նոքա ի միմեանս։

Պ.—(..) ,, Ասին այր ցընկեր իւր, Հայց աչիցդ ապիւս և Թրծևացուք զայն հրով. և եղև նոցա ի տեղի քարի, և կոպըր ի տեղի շաղախոյ։ Եւ ասէն Հայց շինացուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի դլուխն մինչև յերկինս. և արասցուք մեզ անուն յառաջ քան զսփռիլ ի վերայ երեսաց ամենայն երկրի ,, ։ (Ծննդ. ԺԱ. 3. 4)։

Ը.—Ընդէր ի դլուխ դչար խորհուրդս իւրեանց։

Պ.—(Ոչ երբէք). ,, Եւ Տէր տեսանել դքաղաքն և դաշտաարակն, զոր շինէին որդիք մարդկան։ Եւ ասէ Տէր. ահա ազդ մի և լեզու մի ամենեցուն, և զայդ սկսան գործել։ Եւ արդ ոչ լինի պակասի ինոցանէ, զամենայն զոր ինչ խորհիցին գործել։ Եկայք իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի խրոյ ,, ։ (Ծննդ. ԺԱ. 5. 6. 7)։

Ը.—Յետ խառնակելոյ Տեառն Ընտուածոյ զլեզուս նոցա զինչ արար։

Պ.)—(..) Սփռեաց զնոսա Տէր Ընտուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, և դադարեցին ի շինելոյ զքաղաքն և զաշտաբակ ,, ։ (Ծննդ. ԺԱ. 8)։

Ը.—Ո՞ինչ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ, և վասն ո՞րոյ։

Պ.—,, Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա խառնակութիւն, զի անդ խառնակեաց Տէր Ընտուած զլեզուս ամենայն երկրի։ Եւ անտի ցրուեաց զնոսա Տէր Ընտուած ընդ երեսս ամենայն երկրի։ Ա՛յս են ծնունդք Սեմայ, Սէմ (..) ծնաւ զԸրփաքսատ։ (..) Ըրփաքսատ ծնաւ զՍաղա։ (..) Սաղա ծնաւ զԵբեր։ (..) Եբեր ծնաւ զՓաղէկ։ (..) Փաղէկ ծնաւ զՈռագաւ։ (..) Ոռագաւ զՍերուկ։ (..) Սերուկ ծնաւ զՆաքորը։ (..) Նաքորը ծնաւ զԹարա։ (..) Թարա ծնաւ զԱբրահամ և զՆաքորը և զԱռան ,, ։ (Ծննդոց ԺԱ. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26)։

Մեկնութիւն։

Ը.—Ո՞րինչ նշանակէր խառնակիլն որդւոց Ընտուածոյ ընդ որդիս մարդկան։

Պ.—Որդի Ընտուածոյ կոչի հոգին մարդոյ, որ է պատկեր աներևութին Ընտուածոյ, և խառնակեալ ընդ որդիս մարդկան, այն է՝ ընդ հոգիս դիւական վաւաշոտ մեղաց, որ է հոգևոր պոռնկութիւն. հետացոյց յինքենէ զայցելութիւն Ընտուածոյ, ըստ այնմ, ,, Եւ ոչ ալարիցի այլ դատերաց ձերոց յորժամ պոռնկեսցի, և հարսանց ձերոց յորժամ շնասցին նոքա ընդ պոռնիկս թաթաւելով ,, ։ (Ովսէա Գ. 14)։

,, Եւ ասէ Տէր ցՄովսէս, ահաւասիկ դու ննջեսցիս ընդ հարս քո. և յարուցեալ ժողովուրդդ այդ պոռնկեսցի զհետ աստուածոց օտարաց երկրին յոր մտանիցէ դա ի նոսա, և թողուցուն զիս. և ցրիցեն զուխտն իմ զոր ուխտեցի ընդ դոսա ,, ։ (Ր. Օրինաց Լ. 16)։

,, Օ՛ի զորօրինակ ժողովրդեանն կռապաշտութիւն պոռնկութիւն անուանեցաւ, այսպէս՝ և հերձուածողացն հերձուած՝ պոռնկութիւն ասացաւ, որք ի միոյ ճշմարիտ և ուղղափառ հաւատոյն ի բաց կացեալ՝ ի բազում չարահաւատութիւնս հայեցան, որով պոռնկացն իսկ նմանեցան ,, ։ (Ստրգ. Ե. Նորհ. Ր. Պետրոս, ձառ չորրորդ, Բ. 17)։

Ը.—Օ՛րինէ նշանակէ ասէն մի՝ ճնասցէ ոդի իմ ի մարդկանէ յայդմիկ, և ստրջանայն Ընտուածոյ ի վերայ նոցա։

Պ.—Օ՛այն, զի բարկացեալ սպառնացաւ ի պոռնկական մեղս ընկղմեալ ոգւոյս. և բարձեալ զշնորհս Ը՛ոգւոյն սրբոյ ի մարդկանէ վասն մարմին եղելոյ՝ մատնեաց մեղաց մահու և

դժոխոց, ըստ այնմ, ,, Եւ որ զինքն լծէ ընդ պռնկիկս, հզիցի անօրէն. երկն և որդունք մեխականեօքն զնոսա, վերացուի ի նշաւակ մեծագոյն. և բարձցի ի թուոյ հոգւի նորա ,, : (Սիրաք ԺԹ. 3)։

,, Ամենայն մարդիկ ուխտերդ զարուն հնազանդեալ մահու մեղաց ծառայեալ՝ մոռացան զարարիչն. յուսահատութեամբ ի կենաց անուն Աստուծոյ. և ապականեալ զբազդական ճանապարհս իւրեանց, մանաւանդ զնոսա Աստուած՝ իւրոմն անձանց իւրեանց, առեալ զոգի շնորհաց մարդասիրութեան իւրոյ ի նոցանէ. զորոց և զառնելն սոսկացեալ ասէ, որ և արտնջալ Աստուծոյ՝ ահագին զգուշութեան նշանակ է ,,: (Կրբ. լուսա. ՀԱգաթան. յերես 125)։

Հ.—Որո՞մ նմանի Նոյ։

Պ.—Որդւոց Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, որ պատմեաց աշակերտաց իւրոյ զիւանդամբ գալանէ իւրմէ՝ օրինակ առեալ զՆոյ, ըստ այնմ, ,, Եյր որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ ,, (Մատ. ԻԴ. 37)։

,, Եյր մեզ որ հեռի եմք ի հոգևխառնութենէն Աստուծոյ՝ զայս է ասել, եթէ Նոյ օրինակ էր Քրիստոսի իւրով արդարութեամբ, և ապրեցոյց, և պատուհանն ի կողմանէ բացելոյ կողին, և ազատեն սէաւոտակ մահացու թունոյն, ապաւինին Հոգւոյն սրբոյ, և տերև ձիթենւոյն օծման շնորհաց Հոգւոյն, որ աւազանն աղբիւրացաւ՝ անձրեւն վարդապետութեան կենարարին, և գՀոգեղէնն ակրտութեան աւազանին ,,: (Սարգ. Հ. Նորհ. Ե. Պետր. ճառ ուխտերդ, է. 20)։

Հ.—Քո՞նչ օրինակի հանգիստ անուանին Նոյի։

Պ.—Հանգստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ հանգիստ է և խաղաղութիւն աշխատելոց առաջի երեսաց Հօր, ըստ այնմ, ,, Ունիմք այսուհետև քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւնն ,,: (Եբր. Գ. 14)։

Հ.—Որո՞յ օրինակ էր արդարութիւն Նոյի յաղէմ անդ լեռն։

Պ.—Նոյ օրինակ արդարութեանն Յիսուսի, որ միշտ արդար էր որպէս ընդ Հօր և Հոգւոյ, նոյնպէս և մարդկութեամբն ի մէջ մարդկան դէր քան զամենայն մարդկային բնութիւնս, ըստ այնմ. ,, Եւ պիտեմք, զի նա յայն սակս յայտնեցաւ, զի զմեղս մեր բարձցէ. և ի նմա մեղք ոչ են ,,: (Ա. Յովհ. Գ. 5)։

,, Եւ կամ դայս ասէ, զոր ասացաք. և կամ դարձեալ՝ ինքն Աստուած իւրով արդարութեամբ իբրև միջնորդաւ մաքրէ զաղաւղութիւնս մեր. և կամ դարձեալ՝ արդարութիւն ասէ զորդին. ըստ այնմ, ,, Արդարութիւն յերկինից երևեցաւ. զի որդւով հայր մաքրեաց զարարածս ,,: (Սարգ. Հ. Նորհ. ի Մեկն. Յակ. ճառ հինդերորդ, ա. 21)։

,, Որդեակ իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղեսջիք. և եթէ մեղեցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն՝ և զանարատն ,,: (Ա. Յովհ. Բ. 1)։

Հ.—Որո՞յ օրինակ ունի տապանն Նոյի։

Պ.—Խաչին և սուրբ հկեղեցւոյ. որոյ շինող է Քրիստոս, և միշտ բաղմեալ ի նմա քարոզէ զերկրաբնին հոգւոյ, ըստ այնմ, ,, Եւ նա ի մի նաւուցն, որ էր Սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի առնել ի ներքս ի ցամաքէն, նստաւ և ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդն ,,: (Ղուկ. Ե. 3)։ ,, Նա զի և տապան լինի է մաքրական, կրկին երջանկական, ի հղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան. . . . Ոչ Նոյին ձեռնարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի ,,: (Նոնոկ. Ա. 12)։

,, Որ ի ծով այս աշխարհի շինեաց զտապան զեկեղեցի, և ի սմա զօժանդակեալ հոգիս փրկեաց ի ջուրց մեղաց ,, : (ի Հ. արականի)։

,, Նա միւս ևս, թէ նախ փրկին արդարքն՝ որ է սաղրինս եկեղեցիս, որ մտանէ ի վերին եկեղեցին՝ յորժամ յերկնից իջանէ՝ որոյ մուտ տապանին է ապացոյց ,, : (Յովհ. Օրձոր. ի Մկին. Մաս. Ի. 39, յերես 516)։

—Օվ՞նչ զուշակէ ի չորեքկուսի փայտից լինել տապանին։

Պ.—Պատաճև խաչիւ կառուցանել եկեղեցւոյ, ըստ այնմ, ,, Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով ,, : (ի Հ. աբ)։

,, Նա զի՞նչ իցեն անկիւնքն սեղանոյն՝ եթէ ոչ զխաչն նըշանակէ. որ և անկիւն իսկ ցուցանէ խաչին չորս. ի ընդ յերկիր ցրցիալ՝ զի ցուցանէ դնել զՏէառն գարշապարս յերկրի, զի ի վերայ վիմի հաստատութեան շինեացէ՝ դիցէ զբարձրութիւն հիմանց եկեղեցւոյ ,, : (Գրի. լուսա. ՅԱգաթան, յեր. 208)։

,, Ընդ ոգիէլն անդուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յոգի բերցի ,, : (Նարեկ. ՀՆ. 12)։

—Օվ՞նչ միտս ունի երեք հարիւր կանգուն երկայնութիւն տապանին, և չիւսուն կանգուն լայնութիւնն, և յերեսուն կանգուն բարձրութիւնն, և ի կանգուն կատարիչն վնա ի վերուստ։

Պ.—Օփրկական Տէրունեան միակ զսուրբ խաչին ասէ, որ է չորեքանկիւն. երեք հարիւր կանգունն նշանակէ զկատարն ի վեր ուղղեալ. յորոյ վերայ տարածեցաւ Մխածինն հաճութեամբ Հօր և Հոգւոյ, և նեբքին անկիւնն յերկիր ցցեալ՝ նշանակէ չիւսուն կանգունն, յորում եդեալ գարշապարս Տեա-

ոըն ի վերայ երկրի. և յերեսուն կանգունն նշանակէ աջ և ահեակ՝ որով որոշէ զարդարս և զմեզաւորս ի միմեանց, ոմանց զօրալիթարար զօրթախութիւնս ժառանգել, և ոմանց զյաւիտենական տանջանս անշէջանելի հրոյն, որպէս գրի, ,, Որոյ հնձանոցն ի ձեռին իւրում. և սրբիացէ զնիւղ իւր, և ժողովեսցէ զցորեան ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով ,, : (Գ. 12. Մաս)։ Նա մի կանգուն կատարիչն վնա ի վերուստ՝ նշանակէ զմիութիւն կաթուղիկէ առաքելական սուրբ եկեղեցւոյ, որ խաչիւ սրբով հաստատեալ կառուցաւ. նմանապէս ասէն և սուրբ տաճարք Աստուծոյ խաչաձև խորշս խորշս չորիքանկիւնի հիմնարկեալ կառուցեալ են յառաքելոց և աստուածաղդեաց սրբազան ՛այրապետաց և Վարդապետաց առաջնոց. ըստ այնմ. ,, Նա զի՞նչ իցեն անկիւնքն սեղանոյն՝ եթէ ոչ զխաչն նշանակէ. որ և անկիւն իսկ ցուցանէ խաչին չորս, մի ընդ յերկիր ցցեալ՝ զի ցուցանէ դնել զՏէառն գարշապարս յերկրի. զի ի վերայ վիմի հաստատութեան շինեացէ՝ դիցէ զբարձրութիւն հիմանց եկեղեցւոյ. որպէս և մարգարէն գուշակեաց թէ, ի վերայ վիմի կացցէ՝ զի անշարժ առնիցէ։ Իսկ զբուն անկիւնն զկատարն ի վեր ուղղեալ. զի այն անկիւնն ի վեր կոյս ուղղեալ է իբրև կշռաճ, սահմանի զբնութիւն այնորիկ որ ի վերայ նորա բազմեցաւ ի վեր կոյս հաստատիցէ. և անդր հայեցուցեալ տեսցէ զայն ի գլուխն Քրիստոսի՝ և բնութիւն ցուցանիցէ։ Իսկ աջ անկիւնն ցուցանիցէ զզօրութիւն աջ բազկին. աջումն զգուրխութիւն զաւարթութեան արդարոց պարգևատուն, պատրաստութեան պսակացն ցուցանիցէ։ Իսկ ահեակ անկիւնն՝ զանձկանն նշմարեցուցանէ զմեղաւորացն ,, : (Գրիգոր լուսա. ՅԱգաթանգեղոս յերես 208. ըստ հին տպ)։

«Եւ ոչ անդ զհիմունս եկեղեցւոյ. և ուղղեաց անդան միաւորացն Երիսաոսի, զի նախ անդ սկիզբն արար շինելոյ եկեղեցեացս, և ուղղել յանուն Աստուծոյ. և կազմեալ աւազան մկրտութեան, նախ զայնոսիկ լուսաւորեաց մկրտութեամբ՝ որ ընդ նմա երթեալ էին ի քաղաքն Կեսարացւոց՝ զմեծաձեծ նախարարան, և ապա զդաւառական բնակիչս երկրին, աւուրս քանս երեսիօթս առնէր, և մկրտէր անդ բազում քանս առանս բիւր մարդկան։ Եւ կանդնեալ անդան ի վկայարան սրբոցն հանգստի՝ զոր շինեաց. մատուցանէր զպատարագն միշտ կոչեցեալն. և բաշխէր անդ զկնդանաւարար մարմին և զարիւնն Երիսաոսի։ Օ՛ի նախ անառ սկիզբն արար շինելոյ զեկեղեցիս. կայուցանէր քահանայս ի տեղիս տեղիս, և երէց զվայրն եկեղեցւոջ, և քահանայս կացուցանելով,,։ (Ագաթան. ի տիզ. Կոստանդնուպօլսոյ. երես 301)։

«Վանդէ եկեղեցին Այերպայեցւոցն ի մերս Ժողովուրդ Թարգմանի, ըստ նմին անուան կոչի և Ժողովարան, զի և շինեալ սուրբ առաքեալս առն Աստուծոյ, յաղագս միանգամ պատարագելոյն ի նմա որդւոյն Աստուծոյ,,։ Եւ է մարդս առաքեալ Աստուծոյ՝ ըստ Պօղոսի՝ յաղագս սրբութեան աւազանին և մաքրութեան վարուց. զի զոր զգալն եկեղեցիս առնէ ինքեամբ զհայն և զդիմելն ի ձեռն քահանայիցն մարմին և արիւն Երիսաոսի, զնոյն և մարդս եղեալ եկեղեցի՝ ընդունի յինքեան ճաշակմամբ,,։ (Ներ. Հ՛նորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յովհ՛ք Նահանգի, յերես 164. ի տիպ Կոստանդնուպօլսոյ)։

«Յամենայն աղգաց և լեզուաց՝ որք աշակերտեցան Եւհաոաննէսի, և ի վեմն Երիսաոս հաւատովք մերձեցան, յաւիտենից մի առաքեալ հոգեւոր և մի եկեղեցի շինեցաւ,,։ (Սարգ. Հ՛նորհ. ի Մեկն. Ս. Պետրոսի, ճառ չորրորդ)։

«Մի եկեղեցի Երիսաոսի անուանիմք ամենայն քրիստոնեայքս։ (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատարագի)։

Ը.—Օրոյ օրինակ ունի վերնատունն, և գարձեալ՝ ի՞նչք հարիւր կանդուն երկայնութեամբն տապանին։

Պ.—Ունի զօրինակ սրբոյ սեղանոյն եկեղեցւոյ, ի նմա բազմեալ յաթոռոյ սրբոյն Երիսաոսի, որ է յարկ սրբութեան. հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան, ըստ այնմ, «ի յարկի սրբութեան, և ի տեղւոջն փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս, ... խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք»։ (Ի Լեորհրդատետր Պատարագի)։

«Ունա զի և տապան լինի է մաքրական, կրկին երջանիկան, ի հիզմանէ կինցաղոյս ալնաց տրահատան։ Ոչ բազմօք անբանիւք գազանաց գասուք՝ և տակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ, ոչ յարկս խաւարութեան բերի, այլ ի բարձրութիւնն երկնի համբառնայ»։ (Նարեկ. ճն. 12)։

«Ձորդարդ՝ եկեղեցին բաժանի ի նախնեաց, որոյ տաճարաքան օրինակ էին տապանն Նոյի, խորանն Առաքեաց և տաճարն Սողոմոնեան. ի սմա փայլի և պարգևի տատուածային զրաւորն շնորհ. վասն որոյ անուանի յարկ սրբութեան։ Ի սմա փառաբանի տօնըր Երրորդութեանն։ Ի սմա պարին լուսաւորեալ զուարթունք երկնից՝ զաբ հրեշտակաց։ Վասն որոյ կոչի բնակարան հրեշտակաց։ Ի սմա միշտ անճախապէս պատարագի անձամբ գառն Աստուծոյ որդին Աիածին Յիսուս Երիսաոս՝ ի քաւութիւն և ի թողութիւն մերոց ուղղափառ հաւատացելոց և ճշմարտապէս զոջացելոց ի մեզոց. ուստի առնուանի տա իրաւամբ քաւարան»։ (Ստեփէոս Սեթուրիկոս Ասղեցւոյ, յերես 91. ի տպ. Մոսկուայ)։

Ա.—Օ՞ր խորհուրդ ունի միջնատունն, զոր չինեաց Նոյ վասն ինքեան բնակութեան, և դարձեալ յիսուն կանգնոյ լայնութիւնն տապանին։

Պ.—Ունի զնորհուրդ եպիսկոպոսական, քահանայական, սարկաւագական, կիսասարկաւագական, և գրակարդացական դասուց կայանից. որք կացեալ ընդ մէջ սրբոյ սեղանոյն՝ որ սրբութիւն է սրբութեանց, և ընդ մէջ ժողովրդականացն տեղւոյ, խօսող և միջնորդ են ընդ Աստուծոյ և ընդ մարդկան, և մատուցողք Աստուծոյ զաղօթս և զպատարագս վասն ժողովրդեան, ըստ այնմ, ,,Եւ քաւեսցէ Ահարօն ի վերայ եղջիւրացն նորա. միանգամ ի տարւոջ յարենէ առ ի վասն մեղացն սրբութեան և քաւութեան. միանգամ ի տարւոջ սրբեսցէ զնա. զի սրբութիւն սրբութեանց Տեառն է,,։ (Ելից, Լ. 11)։

,,Օ՛ի զզոհան Տեառն պատարագ Աստուծոյ իւրեանց նոքա մատուսցեն,,։ (Դ. Լեւտա. ԻԱ. 6)։

Եւս և զի քահանայք են վողջահար, այս ինքն՝ զպատգամս Աստուծոյ ի բերանոյ Աստուծոյ առ ժողովուրդն ձայնողք, ըստ այնմ, ,,Եւ որդիքն Ահարոնի քահանայք հարցեն զիմ, և եղիցի ձեզ օրէն յաւիտենական յազգս ձեր,,։ (Ծնոսոց ԻԲ. 8)։

,,Եւ զի միջնորդ կայ առաջնորդն Աստուծոյ և մարդկան, հանէ զաղօթսն ժողովրդեանն առ Աստուած՝ և իջուցանէ զնորա խաղաղութիւնն յերկիր առ մարդիկ։ . . . . . Ա յսպէս առնեն և առաջնորդք եկեղեցւոյ, ի մէջ կալով Աստուծոյ և ժողովրդեանն. քանս տանին և բերեն, և կոչին հրեշտակք Տեառն ամենակալի ի մարգարէէն,,։ (Ծոսրով. ի Մեկն. Դասմակարգ. յերես 25. 26)։

,,Մեծ է փառք քահանայութեանն յարժանապէս ունողն, ընդ Աստուած և ընդ մարդկան միջնորդ լինել, և յԱստուծոյ առնուլ զնորհս, և ի սուտ բաշխել. վասն այսորիկ յետ մաք-

րութեանն և զայս երկրորդ շնորհս ի նմանէ խնդրէ՝ առ ի կարօղ լինել մտանել մաքուր մտօք ի սրբութիւնն երկնից, և մարմնով ի պաշտօն սրբոյ և սբերունի սեղանոյն. . ։ Իսկ կուսանք՝ ընդ որս փափագէ մտանել, են համադասակից նորա՝ ժառանգաւորք եկեղեցւոյ, առակեալք ի կուսանք վասն անապական շնորհի պատուոյն՝ որով կինքեցան. և հինգ հինգ չարքն՝ յիմարք, և բարիքն՝ խմաստունք։ Այլ հինգ թիւ՝ եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէս սարկաւագ, գրակարդաց,,։ (Տես. Լ. ամբ. ի Մեկն. Պատարագի, յերես 7—8)։

Ա.—Օ՞ինչ նշանակէր ներքնատուն տապանին, և դարձեալ յերկուսն կանգնոյ բարձրութիւնն նորա և ի մի կանգուն կատարելն զնա ի վերուստ։

Պ.—Նշանակէր զայն տեղւ եկեղեցւոյ, յորում ժողովեալ ամենայն ցեղ մարդկան՝ արդարոց և մեղաւորաց, որք յերեսնաւոր թուով գուշակեալ ըստ աւետարանական առակի սերմնացանին, (Մատ. ԺԳ. 23), և ի մի կանգուն կատարելն զնա ի վերուստ՝ տիեզերական ընդհանուր և ուղղափառ հաւատացելոց ի Քրիստոս եկեղեցեաց՝ տանն Աստուծոյ և տաճարաց, մի է, սեղան, և մի Քրիստոս ամենեցուն ի նմա պատարագեալ. և ի միոջէ հովուէ ի մի արօտ և ի մի ճարակ ճարակեն, զի ամենեքին մի են ի Քրիստոս Յիսուս. ըստ այնմ, ,,Եւ ճարակեսցէ գայլ ընդ գառին, և ինձ առ ուղղու մակաղեսցի. և ուրթ, և ցուլ, և առիւծ՝ ի միասին ճարակեսցին, և մանուկ մատաղ ածցէ զնոսա,,։ (Եսայի, ԺԱ. 6)։

,,Յայնմ ժամանակի գայլք և գառինք ի միասին ճարակեսցին, և առիւծ՝ իբրև զեզն յարդ կերիցէ, և օձ՝ զհող իբրև զհաց կերիցէ. և մի՛ մեղիցեն և մի՛ ջնասեսցեն ի լերինն սրբութեան իմոյ ասէ տէր,,։ (Եսայի, ԿԱ. 25)։

«Լսակ եկեղեցի վասն զի ձշմարտութեան է առեալ զգազանամիտ որդիս մարդկան՝ զլք անաւնոց անբանից նմանեցին և գազանաց վայրենեաց պէսպէս խայտաբղետութեամբ մեղացն, և նենգութեամբ և թիւնաւորութեամբ, ի ձեռն մկրտութեան աւազանին արձակէ յինքենէ զգօնս և հանդարտս զգազանական և զառնական զբարսն և զվայրենին յընտանութիւն փոխարկելով. որպէս զի ըստ մարդարէութեան դայլք և գառինք ի միասին ձարակեսցին, և առիւծ իբրև զեզն յարդ կերիցէ»։ (Սարգ. Ը. Նոր. Ս. պատ. ձառ ուխտերորդ, գ. 2)։

Ա.—Ի քանի՞ ամս ձգեցաւ շինութիւն տապանին։

Պ.—Ի հարիւր, ըստ այնմ, «Օ, ի ոչ եթէ ոչ դիտէին զղալ ջրոյն, որ զհարիւր ամ վողէր Նոյ տապանին կազմութեամբ, սակայն ոչ հաւատացին. այլ ոտէին և ըմպէին՝ մինչև եկն ջուրն և կորոյս զամենեսեան, և Նոյ միայն փրկեցաւ»։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մատթ. Մատ. ԻԴ. 39. յերես 515)։

«Ձրան առեալ Նոյ ի յԱստուծոյ՝ առնել տապան արկղագործ փայտից՝ բազում ամաց գործելոյ, առ ի հարկանելոյ ազգին թշուառացելոյ. որոյ խոստացեալ այնուհետև առնուլ զՆոյ հանդերձ ընտանեօքն, և ամենայն ընչականօք ի տապանն, և ամենապահ ձեռամբն՝ փակեալ զտապանն»։ (Գրիգոր Լուս. Ճգամբանդեղոս յերես 126)։

Ա.—Ո՞ւստի էր այդչափ ընդ երկար։

Պ.—Ո՞ւստի այն, զի տեսեալ մարդկան զհրաշակերտն զայն շինութիւն, և խնացեալ ի Նոյէ զպատճառն, զարձին առ Աստուած և զղջացան, և ապաւեսցին ի կորստենէն, որ լինելոցն էր հեղեղաւ համատարած ջրովք։ Ո՞ւստի որոյ Աստուած զթած երկայնամիտ ողորմած է, որ ոչ կամի զկորուստ ստեղծուածոց ձեռաց իւրոց՝ և զմահ, այլ զդառնալն ի զգիր և կորստական խաւարային ձանապարհէ, ըստ գրեցելոյն ի մարգարէից և ա-

մենայն սրբոց արանց արդարոց, «Ո՛վ տէր՝ ոչ այս այն բանքն են իմ մինչ էի անդէն յերկրին խմբում, վասն այնորիկ աճապարեցի փախչել ի Թարշիշ, զի գիտեի թէ ողորմած ես դու՝ և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց»։ (Յովնան. Գ. 2)։

«Տէր Աստուած փրկութեան մերոյ՝ որ ողորմածդ ես և գթած, երկայնամիտ բազումողորմ և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն և ողջանալ»։ (Ի Յոամագիրք)։

Ա.—Այլ ևս ալի՞նչ էին քարոզք ի տապանի անդ, որք ազդէին առ յանցուցեալսն, թէ ջրհեղեղ գայ։

Պ.—Հաւանական թուիմ ասել ըստ ումանց Աստուածաբան վարդապետաց ի միտս, թէ գործիք շինութեան տապանին, որպէս՝ փայտն, տապարն, ուրագ, և այլն։

Ա.—Օ՞ւ ինչ գուշակէին ձայնք կահից և գործեաց շինութեան տապանին։

Պ.—Գուշակէին զբանս սուրբ գրոց առաքելականացն և մարգարէականաց բովանդակելոց ի Հին և ի Նոր կտակարանս, որք միշտ յեկեղեցիս յայտնաբարբառ քարոզեն և կոչեն զմեզ ի դարձ և ի զղջումն, ըստ այնմ, «Գոչեա զօրութեամբ և մի խնայեր, բարձրացո՛ իբրև փողոյ զբարբառ քո. պատմեա ժողովրդեան իմոյ զմեղս նոցա, և տան Յակոբայ զանօրէնութիւնս նոցա»։ (Եսայի. ԾԸ. 1)։

«Ընդէպս և զդալոստան ասէ՝ ոչ եթէ ոչ դիտէին՝ զոր միշտ քարոզեն գիրք աստուածայինք ի կազմութիւն եկեղեցւոյ տապանի, բայց ոչ հաւատան և ոչ ակն ունին գալստեան Նորա, որ ստոյգ լինելոց է, որպէս և ջուրն»։ (Յովհ. Ծոսրծոր. ի Մատթ. Մատ. ԻԴ. 39. յերես 515)։

Ա.—Օ՞ւ ինչ նշանակէր ջրհեղեղ ջուրցն։

պ.—Ոչ հոգեկուլ հեղեղս մեղաց, զի թէ հոգի մարդոյս ոչ լուիցէ և չհնազանդեսցի պատուիրանացն Աստուծոյ, և չդիմեսցէ յաստուածային լուսափայլ բանիւք զարդարեալ անձին և ի խաղաղ վայրս ձարակաց՝ յհկեղեցիս, կորնչի մահուամբ ի մեղս, ըստ այնմ, ,,Իջին անձրևք՝ յարեան գետք, շնչեցին հողիք՝ հարին զտունն, և անկաւ և էր կործանումն նորա մեծ յոյժ,,: (Մատ. Ը. 27:—Ղուկ. Ո. 49):

,,Եւ ի բազմանալ ցաւոցն՝ զոր գէտ ասաց, ծանրացեալ մեղօք հոչակելի մահուամբ կործանին, որ Սոդոմացիքն և Գոյեան գարուն մարդիկն և նոքա որ զաւազահիմն ամբարտակն կանգնեցին և այլք բազումք, ըստ այնմ՝ թէ կորիցէ յիշատակ նոցա աղաղակաւ, և թէ որ սկզմանէ ի մարմին՝ անսի հնձէ զապականութիւն,,: (Յովհ. Ծորձոր. ի Մեկն. Մատ. Ը. 27:—Ի Պ. 33. յերես 183. 513):

Հ.—Որոյ օրինակ ունի առնուլն Նոյի ընդ իւր զամենայն անասունս և զթռչունս ի տապան անդր:

պ.—Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի որպէս նա ժողովեաց ընդ իւր ի տապանն զամենայն անասունս և զթռչունս, այսպէս և Տէրն մեր Յիսուս Քրիստոս հրաւիրէ և ժողովէ զբանական արարածս իւր յհկեղեցիս, որ ժողովարան կոչի արդարոց և մեղաւորաց, հրեշտակաց և մարդկան, և տուն Աստուծոյ և դուռն երկնից, ըստ այնմ, ,,Ահի հարաւ և ասէ, ահեղ իմն է տեսիլս այս. և ոչ է սա, եթէ ոչ տուն Աստուծոյ, և այս է դուռն երկնից,,: (Ծննդ. ԻՀ. 17):

,,Ընդ արասջիք զյիշատակ սրբոյն Մարգսի զօրավարին, որ է դուռն երկնից, և ճանապարհ արքայութեան,,: (Ի Շարակ.):

,,Օի սա է դուռն երկնից, և հովիտ տրտմութեան զոր ուսոտևաց Աստուած Յակոբայ, արդարոց հանգիստ, մեղաւորաց քաւարան, Քրիստոսի արքայարան, հրեշտակաց բնակարան,

սրբոց ժողովարան, տեղի ապաւինի և տուն Աստուծոյ,,: (Տօնացոյց, յերես 80):

Հ.—Ասան կր ի սրբոց կենդանեաց հօթն հօթն հրամայեաց առնուլ ի տապան անդր:

պ.—Վճռեն վասն բուծանելոյ յերկրի, և զեօթներորդն յաղագս մատուցանելոյ զնմ տեառն Աստուծոյ:

Հ.—Ինչ է յամենից զոյզ զոյգ մուծանել ի տապանն:

պ.—Ի խորհուրդ սուրբ պսակի, որ աղօթիւք և օրհնութեամբ քահանային անքակտելի միաւորութեամբ միաւորէ ընդ միմեանս զկարան և զկնոջն, և հրամանաւն Աստուծոյ պատուիրէ կեալ սարկեշտութեամբ ընդ ամուսնակցին, և մի՝ շնալ ի կորուստ հոգւոյ իւրոյ՝ ըստ գրեցելոյն, ,,Որ եգիտ զկին բարի, եգիտ շնորհս և ընկալաւ յԱստուծոյ զուրախութիւն. որ հանէ զկին բարի, հանէ զբարիս. և որ ունի զկին շուն՝ անմիտ է և ամբարիշտ: Ուր թէ՝ ի տեառնէ պատշաճի կին առն,,: (Առակ. ԻԸ. 22 ԻԹ. 14): Կամ թէ՝ ,,Ուր առն և կնոջ բարեբանութիւն է առ իրեարս համակրութիւն,,: (Սիրաք Ի Ե. 2): ,,Ընպա ոչ են երկու՝ այլ մի մարմին, արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ,,: (Մատ. ԻԹ. 6):

,,Ընդ սկրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա,,: (Ագիս. Ե. 25):

,,Ոչ խոտեցեր զամուսնութիւն, այլ սրբեցեր զնա, և քահանայապետաբար օրհնեցեր և հաստատեցեր անաստ բանիւդ թէ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ,,: (Մայր Մաշտոց):

,,Ձեք ինչ շնորհ՝ զոր առանց առաջնորդաց իմա եպիսկոպոսաց և քահանայից տայ Աստուած, այլ վերստին ծննդեանն որ ի հոգւոյն, և կենարար մարմնոյ և արեան տեառն բաշխումն,

թողութեան մեզաց զարձկեցոյն ի խոստովանութիւն ապաշխարութեան, և ամենանութեամբ զուգութեան. . . և կամ այլ ինչ աստուածատուր պարգեւի միջնորդող՝ առաջնորդք եկեղեցւոյ լինին,,: (Խոսրով. ի Մեկն. ժամակ):

Հ.—Օ՞ր ինչ նշանակէ յիօթեանց արուեաց զմին միայն զոհելն:

Պ.—Նշանակէ, թէ վարդապետք եկեղեցւոյ պարտին լինել անկին և անամուսին, և նուիրեալք զանձինս իւրեանց՝ Աստուծոյ, զորպիսիս գովաբանէ Երանելին Յովհաննէս ասելով. ,,Աղբա են որք ընդ կանայս ոչ խառնեցան, և են կուսանք. սոքա գհետ երթան գառնին՝ ուր և երթայցէ. սոքա ընտրեցան ի մարդկանէ առաջի Աստուծոյ և գառնին,,: (Յայտ. ԺԴ. 4):

,,Բանզի կամիմ երթէ ամենայն մարդ լիներ իբրև զիս, այլ իւրաքանչիւր ոք զեւր շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս և ոմն այնպէս: Բայց ամուրեացն և այրեացն ասեմ, լաւ է նոցա թէ կայցեն իբրև զիս,,: (Առաջին Կորնթ. Է. 7—8):

,,Ընդ այժմ պարտ է գիտել՝ թէ անմարթ է կարծել զոմ զսուտ յօրդւոց հնոյն իսրայէլի աւուրս, սակաւ ուրեք գտաներ կուսութիւն, այլ եղեւն ի նորս եկեղեցի, յորում և այս առաքինութիւն պայծառացաւ. արդ կամ են ըստ մարմնոյս կուսանք չարչարեալք ի նմանէ, կամ թէ կոյսք են, ոչ պղծեցին զոգիս իւրեանց իգական ցանկութեամբ և մարմնոյ հեշտութեամբ և զրոշմի գազանին ոչ հաւանեցան,,: (Սրբոյն Ներսիսի ի Մեկն. Յայտ. ԺԴ. 4):

,,Ընդ թէ այդպէս իցէ՝ գահանալ պարտիս զԱստուծոյ, զի և այժմ թէ և ձգնիցիս ինչ, սակայն պարգեւք և պսակք պահին քեզ: . . . . . Իսկ որ զերկրաւոր անգամս սպանանեն՝ և զտկարսն մտացն խափանեն յօժարութեամբ՝ յիրաւի զարքայութիւնն ժառանգեն, զի ոչ վասն այլ իրի՝ այլ վասն վերին

փառացն յայն կոչման: . . Իսկ կամաւորն ոչ միայն յարամնահան է, այլ և վերին զփառսն նօթձէ, որով զ արժանի լինիմք տեսանել զՏայրն երկնաւոր,,: (Յովհ. Օրծոր. ի Մեկն. Մատ. ԺԹ. 12. երես. 403—404):

Հ.—Օ՞ր ինչ նշանակէ վեց հարիւր ամաց լինելն Նոյի իմբառանել իւր ի տապանն:

Պ.—Նշանակէ զմարդանալ բանին Աստուծոյ ի վեցերորդ դարու իմերոյ կոսմոսին, ըստ այնմ, ,,Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց և վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ,,: (Հռովմ. Ը. 3):

,,Իսկ նոր Ադամ ի վեց դարուն այդ արարեր կորուսելոյն,,: (Ի Շարական կանոն վեցերորդ Սիրակէն Ղազարացւոյ):

,,Յորհուրդ անօրէնութեանն Վրիտասոի յառաջ քան զյաւիտեանս ծածկեալ էր առ Երրորդութիւնն. . . բայց կատարեցաւ գործով ի վախճան ժամանակաց ի դարուն վեցերորդի, որոյ օրինակք յառաջագոյն տպաւորեցան ի սկզբանէ լինելութեան մարդոյն մինչև ցգալուստն Վրիտասոի,,: (Ներ. Շնորհ. գրեալ Թուղթ առ քահանայս Յաղբ նահանգի, յերես 170):

,,Ջնջել կամեցաւ Հայրն փառաց՝ զգիր պարտեաց մեր յանցանաց, որով զգերեցաւ ոգին գԹագ՝ ի վեց դարուն զմարմին մեղաց, Հօր հաճութեամբ ի մահ խաչին՝ ևկն կամաւ ի յՈւրբաթին՝ Կառն զնեալ ի հին զաւակին՝ փոխան պատանցն օրինաւին,,: (Ի Ժամակարգ):

,,Ի սոյն աւուր Ուրբաթու երկրորդն Ադամ ի խաչին բնեռեալ, և զմեզս հինն Ադամայ սպանեալ, և ի վեցերորդ ժամու արեգակն խաւարեալ, ըստ որում աւեր մեր ի վեցերորդ դարուն զմարմին մեղաց զգեցեալ, և յիններորդ ժամու զխաւար մեղաց լուծեալ, և զԱդամ վերստին ի դրախտն մուծեալ, բարձր և աստուածատեսակագոյն քան զառաջինն պարգեւեալ,

զի անդ պատկերիւ միայն պատուեալ՝ և ասա յոլորովին առաւաճառուցեալ,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մ Կին. Մատ. Ի. 45. յերես 599)։

Հ.—Ո՞րչափ նշանակէ գինի եօթն աւուրց լինել ջրհեղեղին։

Պ.—Ընդ սուտ իմանի գալուստ դերաքրիստոսին յեօթներորդում դարու աշխարհիս, որոյ եկեալ մոլորեցուսցէ զմարդիկ դիւական հոգւով, և հեղեղաւ մեղաց անդնդասոյզ կորուսցէ զբազումս՝ որպէս և ջուրն առ Նոյիւ, զորմէ գրէ և մարգարէն, ,,Յետ վաթսուն և երկուց եօթներորդաց, բարձրի օծութիւնն, և իրաւունք ոչ իցեն ի նմա, և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ որ գայցէ, և ջնջեսցին հեղեղաւ։ Եւ մինչև ի վախճան պատերազմին համառօտելոյ կարգեսցէ զապականութիւն։ Եւ զօրացուսցէ զուխտ բազմաց, եօթներորդ մի և կէս եօթներորդի, դադարեցուսցէ զսեղանս և զպատարագս, և մինչև ի ծայրս անկեանն ապականութիւն, և մինչև ցվախճան և ցառնապ կարգեսցէ ի վերայ ապականութեանն։ Եւ զօրացուսցէ զուխտ բազմաց։ Եւ եօթներորդ մի և կէս եօթներորդի բարձին զոհք և նուէրք, և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ, և մինչև ի վախճան ժամանակին կատարած տացի ի վերայ աւերածին,,։ (Դանիէլ, Թ. 26—27)։

,,Սակայն ի բազմանալ փորձութեանց ծովու աշխարհիս՝ և յառնել գետոցն արկածից յաւուրս նեռին,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մ Կին. Մատ. Ի. 27. յերես 184)։

,,Եւ արդ տեսցուք՝ եթէ ուսոյ արդեօք լուան, և կամ սա զումմէ՞ ասիցէ զայս, և կամ զո՞ և կամ ո՞ յառաջ քան զսա յայս անուն անուանեաց զմարդն անօրէնութեան զորդին կորստեան,,։ (Սարգ. Ը. Նորհ. առաջին Յովհ. ճառ չորրորդ. Է. 16)։

Հ.—Ո՞րչափ գոշակէին պատառիլ աղբերց անդնդոց, և հոսանացն երկնից բանիլ։

Պ.—Ո՞անդնդային չարաբուեստ վարդապետութիւն այսոց պղծոց օդայնոց, որք յաւուրս նեռին յորդեսցեն ի միոս մարդկան զբազմազան ցանկութիւնս մեղաց, և խաւխանելոց են զաղտմամբ որդւոյ մարդոյ, զորմէ գրէ երանելին Յովհաննէս, ,,Եւ յետ հաղար ամին լուծցէ զսատանայ, և հանցէ ի բանտէ անտի, ելցէ և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ չորս կողմունս երկրի, և զգոգ և զմադոգ առցէ ի ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն զօրս ի պատերազմ, որոյ թիւ նոցա իբրև զաւազ ծովու,,։ (Յայտն. Ի. 7)։

,,Ընդ հոգին սուրբ յայտնապէս ասէ, թէ ի ժամանակս յետինս՝ քակեսցին ոմանք ի հաւատոցն, և հայեսցին յայսս մոլորութիւն, և ի վարդապետութիւնս դիւաց, կեղծաւորութեամբ ստախօսիք, խարեալք խրճանց խղճիւն մահու,,։ (Տիմոթէոս Ա. 1)։

,,Տես զերեքկին պատերազմն՝ որ ի մոլորեցուցչաց մարգարէից լինի, և որ ի պատերազմողաց, և որ ի սուտ եղբարց, որպէս պօղոս գրէր թէ՝ վիշաս ի սուտ եղբարց, որք են հերձուածողքն. քանզի զանուն քրիստոնէի ունէին՝ և զուսումն սատանայի, որպէս արիանոսքն և նեստորեանքն և ապօղինարիոքն և նաւատիանոսքն, և այլք բազումք,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մ Կին. Մատթ. ԻԱ. 11. յերես 501)։

Հ.—Ո՞րչէ զքառասունն տիւ և զքառասուն գիշեր անձրևէն։

Պ.—Ի ժամանակ իշխանութեան նեռին զովքայ և մագովգայ, որ զամս երիս և կէս մոլորութեամբ անձրևասոյզ առնելոց է զսիևզերս. քանզի սուրբ գիրք զքառասուն և զերկու ամիս ա-

սին՝ ըստ պրիցկըմին, թէ՝ ,,Եւ գքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և երիս,,: (Յայտն. ԺԱ. 2):

,,Իսկ ալպարոյն նեղութիւն է և սրամտութիւն, քանզի ի ժամանակս նեղութեանն անպատեհ ցանկութիւնք յորդին յանօրէնս, և վտանգք հալածանաց սիրէ արդարոյն,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ.Կին. Մատ. ԻԳ. 39. հերես 516):

Հ.—Օ՞րինչ նշանակէ ծածկելն ջուրց զերիվինս բարձունս:

Պ.—Լերինք բարձունք կոչին աստուածուրաց Հրեայք, հիմանոյք և սուտահաստատ հերձուածող թերահաւատ քրիստոնէայք, որք ի վերջնումն աւուր ծածկելոց են ի խորս դժոխոյ՝ որպէս առ Նոյիս ջրահեղձքն, ըստ այնմ, ,,Եւ հանիցէ զքիզ ի ծագաց հիւսիսոյ, և ածիցէ զքիզ ի վերայ լերանց Իսրայէլի: Ի վերայ լերանցն Իսրայէլի անկանիցիս դու և ամենքին՝ որք զքիւ իցեն,,: (Եզեկիէլ Լ.Թ. 2):

,,Օ,այս դիտասջիք՝ եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք ծանր, զի եղեցին մարդիկ անձնասէրք՝ արծաթասէրք՝ հպարտք՝ ամբարտաւանք՝ հայհոյիչք՝ անհնազանդք ծնողաց, անշնորհք, անսուրբք,,: (Ա. Տիմոթէոս Գ. 1. 2.—Երկրորդ պետ. Գ. 3):

,,Օ,ի առէին ձեզ, եթէ ի յետին ժամանակս եղեցին մարդք արհամարհողք, երթեալք ըստ իւրեանց ամբարշտութեանցն ցանկութեանց: Սոքա են նշաւակեալք հնչաւորք, որ զդրին ոչ ունիցին,,: (Յուդայ, Ե. 18—19):

Հ.—Օ՞րինչ նշանակէ հնգետասան կանգնաւ ի վեր բարձրանալն ջրոց:

Պ.—Օ,կեամոլ և կռապաշտական մեղաց յորդութիւնն, որք բարձրացեալ ամբարձան ի վերայ մարդկայինս բնութեան, ըստ այնմ, ,,Երբար պատակեր ոսկի, բարձրութիւն նորա վեթասուն կանգուն, և լայնութիւն նորա վից կանգուն,,: (Դան. Գ. 1):

,,Ընօրէնութիւնք իմ բարձրացան քան զղլուխս իմ, որպէս զբեռն ծանր ծանրացան ի վերայ իմ,,: (Սաղմ. Լ.Ե. 5):

,,Օ,ի ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ յորս էր աստուածպիտանութիւն: Եւ յերեւելի բարութեանցն ոչ կարացին գիտել զայն որ էրն, և ոչ ի գործս հայեցեալ ծանեան զձարտարապետ,,: (Իմաստ. ԺԳ. 1):

,,Օ,ի ծանեան զԱստուած, և ոչ իբրև զաստուած փառաւորեցին՝ կամ գոհացան. այլ ծանրացան ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա: Ջանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան, և փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ՝ ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ, և թռչնոց, և չորքոտանեաց, և սողնոց,,: (Հռոմ. Ա. 21—23):

,,Զանգի տարածելոց ազգացն աստուածամոռաց գիտութեամբ իւրաքանչիւր պաշտամունս ի տարրական արարածոց որոշեալ՝ խորհեցան յանդունդս մոլորութեան,,: (Գրի. Լուս. ՅԱգաթանգելոս, հերես 127. ըստ հին տիպ):

Հ.—Օ՞րինչ է յիշելն Աստուծոյ զՆոյ, և զորս ընդ նմա էին:

Պ.—Ի յիշելն Աստուծոյ զմոլորեալ ազգ մարդկան, և այց եւ լանելն նմին անճառելի անօրէնութեամբք հրաշալի մարդեղութեան իւրոյ, ըստ այնմ, ,,Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ, ճշմարտութեամբ իւրով զառնն Իսրայէլի,,: Սաղմ. Ղ.Լ. 3):

,,Ասացի դու մի՛ երկնչիր ծառայ իմ Յակոբ՝ ասէ Տէր, և մի՛ զարհուրեսցես Իսրայէլ. զի ահա ասիկ ես փրկեցից զքեզ ի հեռաստանէ, և զզաւակ քո յերկրէ գերութեան նոցա. և դարձցի Յակովբ՝ և դադարեսցէ, և բարկեցիկ լինի, և ոչ ոք իցէ որ զարհուրեցուսցէ,,: (Երեմ. Լ. 10):

,,Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց եւ մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ, և յարոյց եղջիւր փրկու-

կութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ,,։ (Ղուկ. Ը. 68—69)։

,,Ղթաճարաբար զմեզս զգենցաւ մարմին կամաւ հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն,,։ (Խոսրով ի Մեկն. Ժամակարգ)։

,,Կամաւ Հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն եղև մարմնաւոր անօրէնութիւն Որդւոյ,,։ (Նոյն, անդ)։

Հ.—Այլ ևս զի՞նչ նշանակէր ջրհեղեղ ջուրցն։

Պ.—Զսրբանուէր մկրտութիւնն սուրբ աւազանին վերատին ծննդեանն՝ յորում մկրտեալ մաքրիմք ի հնութենէ յաղտոյ մեղաց հնոյն Ադամայ, զի որպէս յառաջնումն ի ժամանակին յայնմիկ ջրհեղեղն լուաց զամբարշտութիւն ամբարշտեալ որդւոց մարդկան, նոյնպէս շնաք արեան և ջրոյ աղբերց բղխեցեալ ի կողէն Քրիստոսի ջրհեղեղ եղեալ լուաց զսիրկերս, ըստ որում ինքն մկրտեալ ի Յովհաննէ ի Յորդանան՝ աւանդեաց զսրբալար խորհուրդն մկրտութեան սրբիչ յանցանաց կողածննին, ըստ այնմ, ,,Մկրտեցաւ ի Յովհաննէ, զի զՋուրան սրբեսցէ և զհնութիւն մեզացն ընկղմեսցէ ի նմա և զհոգևորա-կանն տացէ մեզ մկրտութիւնս, ըստ վկայելոյն Յովհաննու, թէ՝ նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ և ի հուր,,։ (Նկր. Հ.Ը-նորհ. գրեալ Թուղթ առ Ընէքսէ, յերես 58)։

,,Մկրտեցաւ ի Յովհաննէ՝ որպէս զմարդ, այլ զմեզս Ադամայ լուացից մկրտութեամբն, և ի Հօրէ և ի Հոգւոյն վկայեցաւ՝ որպէս զՈսաւուած,,։ (Նկր. Հ.նորհ. գրեալ Թուղթ առ Մանուել կայսր, յերես 79)։

,,Եւ Ջուր ի կողէն, այլ շնչոյդ զերծ յանցանաց կոպածննին և լուաց զաշխարհս ի մեղաց. բղխեաց և արիւն, այլ գնեաց զծառայեալս մահու և զովացոյց զծարաւիս արեամբ,,։ (Նկր. Հ.նորհ. գրեալ Թուղթ առ Յակոբ վարդապետ Ասորոց՝ ի մայրաքաղաքին Մելիտինոյ Հայոց, յերես 144)։

,,Պարծանք պօղոսեան, դաւանեալ զքեզ առաւածային բանին անեղի և զննարան, քանզի քեզ ապրեցաք ի խաճանող և յանմարմնին գազանէն, և ի վերայ քո հեղեալ շնիք անապական արեանն զկողաճննին ջնջեաց զմեզս,,։ (Ի Հ.պրակ. կաննան Խաչի հօթնեերորդ աւուրն)։

Հ.—Օ,ի՞նչ նշանակէ ածելն Ասուածոյ զՀողմն իվերայ երկրի։

Պ.—Օ,առաքումն ի հօրէ Հոգւոյն սրբոյ յաշխարհ յաղագս շնչելով յամաքեցուցանելոյ զեռնասութիւնս մեր ի ձեռն արդարութեան փառակցին իւրոյ, ըստ այնմ, ,,Հանէ զամպս ի ծագաց երկրէ, զփայլատակունս իւր յանձրեւս արար. և հանէ զՀողմն ի շտեմարանաց իւրոց,,։ (Սաղմոս ՃԼ. Գ. 7)։ Եւ թէ՝ ,,Հողմն ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես. այլ ոչ գիտես ուստի գայ՝ կամ յո՛ երթայ,,։ (Յովհ. Գ. 8.—Իմաստ. Ի. 23)։

,,Տէրէ՝ որ արար զերկիր զօրութեամբ իւրով, և կանգնեցեր զսիեզերս իմաստութեամբ իւրով, և խորհրդով իւրով ձգեցեր զերկինս, և ի տալոյ զձայն իւր՝ ընդ ջրամբութիւն ջուրցն յերկինս, հանէ զամպս ի ծագաց երկրէ. և զփայլատակունս իւր յանձրեւս արար. հանէ զՀողմն ի շտեմարանաց իւրոց,,։ (Երեմ. Ի. 12—13)։

,,Աշտաշարժ՝ ինքնաշարժ, ինքնիշխան՝ ամենազօր՝ ինքնազօր. վասն զի շնչէ ուր կամի, յորքան ախորժէ, յորժամ և որքան,,։ (Իշարակ. կանոն հօթնեերորդ աւուր Պենտեկոստէի)։

Հ.—Օ,ի՞նչ նշանակէ դադարիլ ջուրցն, և խցիլ աղբերաց անդնդոց և արգելուիլ հոսանաց երկնից։

Պ.—Օ,դադարուիմ մեղաց մահու և դժոխոց, և անլուծանելի կապանօք կապիլն սատանայի, ըստ այնմ՝ ,,Եւ տեսի այլ հրեշտակ, զի իջանէր յերկնից, և ունէր զփականս դժոխոց և զշղթայս մեծ ի ձեռին իւրում, և բռնեաց զվիշապն՝ զօձն

զառաջին, որ է բանասիրուն և առատանայ, և կապեաց զնա հա-
զար ամ. և արկ զնա յանդունդն դժոխոց. և փակեաց և կնի-
քեաց զնա՝ զի այլ ևս մոլորեցուսցէ զազգս, մինչև կատա-
րեսցի հազար ամն,,: (Յայտն. Ի. 1):

,,Ընդ բանաւոր կապեացի հազար ամ, և դարձեալ արձա-
կեսցի, նոյնս առնուածայինն Յովհաննէս ի Յայտնութեանն,,:
(Սարգ. Շնորհ. ի Մեկն. Ի. Յովհան. ճառ առաջին, ա.
13. յորդորակ):

,,Յորժամ ի խաչին նշաւակեցաւ և մարդկի իշխանութիւն
առին ի նմանէ ի վերայ նորուն օձին զնայոց որպէս ի վերայ
կապելոյ, որոց ոչ կարէր մեզանչել. իսկ կապերն նշանակ ըզ-
կռապաշտութեանն բառնալն, և զտաճարաց կռոց քակտումն
և ի բաղինան, զկնդմանց արևուն զպակասութիւն և զամենա-
պայծառ աստուածային կամացն զգիտութիւն,,: (Սրբոյն Կիրա.
ի Մեկնութիւն Յայտնութեան, Ի. 1):

Հ.—Օ՞րինչ նշանակէ արգելուին անձրևաց երկնից:

Պ.—Օբարձումն պատժոց մեղաց տեղացելոց յԱստուծոյ ի
վերայ անառակ բնութեանս, որք բարձան զերահրաշ մարգե-
ղութեամբ բանին Աստուծոյ՝ որ պատժեցաւ վասն մեր, ըստ
այնմ, ,,Նա վերաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ
վասն մեղոց անօրէնութեանց,,: (Եսայի, ՆԳ. 5):

,,Զանգի աստուածական պատաստանաւն իբրև զատակնքաւ
մեր մարմինս ունէր զպատապարտութիւն, որպին Աստուծոյ
խաչին և բևեռացաւ՝ զպատմայինն զոր ունէր տուեալ մարմին, ի
նա բևեռեաց՝ զմերն զպատապարտութիւն ի բաց բարձեալ ի մէնջ,
զի որ ոչն արար զմեզս մարմինն պատապարտեալ՝ ամենայն մարմնոյ
պատուհասն շնորհեսցէ,,: (Խոսր. ի Մեկն. Ժամակարգ):

,,Օ՛ի զարմացեալ ես՝ թէ աշխարհս ամենայն վրկեցաւ, զի
ոչ միթէ գուշնաքեայդ էր, այլ Որդի Աստուծոյ Միածնին, որ
եկն և մեռաւ վասն մեզոց մերոց,,: (Կիւրիղ. Երուսաղէմ.
ի կոչ. ընծայ. ԺԴ):

Հ.—Յորում երկրի կամ յորմէ նահանգի շինեաց Նոյ
պատապանն, և որը գինի ջրհեղեղին հանդուցեալ նոտաւ:

Պ.—Սահն աստուածաբան սուրբ վարդապետք ակնդետ թէ՝
եկեալ ի պաղեստինէ և շրջեալ ընդ ամենայն աշխարհ գնաց ի
Հայաստան: (Ծննդ. Ը. 4): Որպէս սրբոյն Գրիգորի Լու-
սաւորչին մերոյ է ասացեալ, ըստ այսմ, ,,Որք էք յԱփթի-
կեցւոց աշխարհէն, և յԸբաթացւոց, ի Միջագետաց աշխար-
հէն, և Ակիլիկեցւոց և Փռիգեցւոց աշխարհէն, որ մեծն Նոյ
կազմեաց զպատապանն,,: (Գրիգ. Լուս. յԱգաթանգեղոս, էր.
404. ըստ հին տիպ):

Հ.—Օ՞րինչ գուշակեր զբոլոր աշխարհաւ շրջելն և ի Հայս
գնալ պատապանին:

Պ.—Գուշակեր զմարդ եղանիկ բանին Աստուծոյ, և զաւե-
տարանական քարոզութիւն առաքելոցն տարածել ի ծագաց
մինչև ի ծագս երկրի, ըստ այնմ, ,,Թէ՝ ընդ ամենայն երկիր
ել բարբառ նոցա,,: (Սաղմոս, ԺԸ. 5): Եւ զբնաւորիլ
Հայաստանեայց նովին հաւատով յառաջնումն՝ ի ձեռն սըր-
բազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և երկրորդ
անգամ ի ձեռն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և սըր-
բոյն Տրդատայ, որպէս յայտ է յանուանէ պատմութեանց ազգիս
և ի գրուածոց սրբազան հարցն մերոց, ,,Ընդ թագաւորութեան առաքելոցն
ընդ ամենայն մինչև ի ծագս երկրի լի առնել զքարո-
զութիւն բանին կենաց,,: (Գրիգոր Լուսաւորիչ յԱգաթան-
գեղոս էրես 307. ըստ հին տիպ):

,,Հաճեցար տէր մարմնանալ վասն մեր, և ուսուցեր մեզ
սրբով քովք առաքելովք հաւատս ամրիծս, որ ի սուրբ Եր-
րորդութիւնն,,: (Ի մեծ Պաշտոց):

Հ.—Ո՞րինչ նշանակէ յամենայն մեռանելոցդի յառաջնումն առնուն ամօթն երևիլ զլեռոց լերանց։

Պ.—Լերինք են ասացանօք գաղք արդարոց և ամենայն սրբոց այն է առաքելոց, մարգարէից, մարտիրոսաց, և վկայանաց սրբոց, որք զինի համբառնալոյ Տեառն յերկինս առ Հայր՝ իջմամբ Հոգւոյն սրբոյ լցան բաղմազան շնորհօք, և լինելով ծաղկեցան հաւատով և արդարութեամբ՝ ըստ մարդարէական բանին, «Լերինք ցնծասցեն առաջի Տեառն՝ զի գայ. զի հասեալ է Տէր ի դատել զերկիր»։ (Սաղմոս Լ. 9)։ Եւ դարձեալ «Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց Տեառն՝ զի գայ, և գայ նա ի դատել զերկիր»։ (Նոյն, անդ, Ղ. 13)։

«Երդասքն որպէս զարմանալիս ծաղկեսցին, որպէս զմայրս Լիբանանու բազում եղեցին։ Տնկեալք եղեցին ի տան Տեառն, և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին»։ (Նոյն, անդ. Ղ. 13—14)։

Զայր առն՝ ի Լիբանանէ ի կատարելութենէն, յերկնից հաւատացելոց, ամենայն հեթանոսք անկեցան, և անկին Պետրոսի մահուամբն յայս գաւիթ, և ծաղկեսցին նոքա այնուհետև, ոմանք մարտիրոսական արեամբ, այլք խոստովանական դաւանութեամբ, այլք ճգնաւորական ժուժկալութեամբ, կէսք բանիւ և վարդապետութեամբ, բազումք ողնդրութեամբ և առաքինութեամբ, զորոց ծաղիկն նա միայն գիտէ Թուել՝ որ հոտոտեցաւ, և հոտոտի յիւրաքանչիւրսն, և ըստ նոցին պտուղսն հատուցանէն կշռէ»։ (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յեր. 40)։

«Ընթացարուք այսուհետև ի սուրբ լերինն, ի մարգարէին ասեմ և յառաքեալն»։ (Գողիաթ Լուսաւորչի)։

Հ.—Ո՞րինչ նշանակէ յիսուս անգրէն չգառնալ ապաւէնն։

Պ.—Նշանակէ զմեղսալից անդարձ մեղաւորս, որք միշտ ատորինս այս խորհին, ըստ այնմ, «Ո՞ի այնպիսիքն տեառն մեռցուն զի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնին, և քաղցրաբանութեամբ օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց»։ (Հռոմ. ԺԶ. 18)։

«Որոց կատարածն կորուստ է, որոց աստուած որովայնն իւրեանց է, և փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին»։ (Փիլիպ. Գ. 19։ Ա. Տիմոթ. Ա. 20)։

«Այլ ի պղծոյ և ի մեռոյ խօսից մերժեսջի՛ր. զի առաւել յառաջ գայցեն յամբարշտութիւնս, և բանք նոցա իբրև ըզքաղցկեղ ճարակ գտանիցեն. յորոց սակի են Հիմենոս և Փիլետոս. որք վրիպեցան ի ճշմարտութենէ, և ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. և կործանեն զհաւատս ոմանց։ (Ա. Տիմոթէոս Ա. 16—18։—Ա. Յովհ. Ա. 18։—Ա. Յովհ. Ե. 7։—Ա. Պետր. Ա. 1. Գ. 2)։

Հ.—Ո՞ւմ օրինակ է աղաւնին։

Պ.—Ի օրինակ Հոգւոյն սրբոյ, ըստ այնմ, «Թևք աղաւնոյ արծաթապատ, և թիկնամէջ նորա ի դոյն ոսկւոյ»։ (Սաղմոս, ԿԸ. 13)։

«Հոգին իջեալ ի նմանութիւն աղաւնւոյ՝ զի յայտնի լինի միաբուն խորհուրդ զօրութեան գալստեան որդւոյն»։ (Գրիգ. Լուս. յԱգաթ. յեր. 177. ըստ հին տպ)։

«Շնորհատուն արարածոյ՝ որ ի Հօրէ Հոգին ձշմարիտ, աղաւնակերպ տեսլեամբ քեզ երևեցաւ՝ զաստուածութիւնն իւր ևակերն յայտնեալ աշխարհի»։ (Ի Շարակ. կանոն ծնն. Յովհաննու Մկրտչի)։

«Ընդաւնին յայնժամ յայն սակս յայտնեցաւ, զի իբրև մատամբ ցուցանիցէ այնոցիկ որ անդ դիպեցան և Յովհաննու, զորդին Աստուծոյ»։ (Յովհ. Ոսկե. ի Մեկ. Մատ. ձառ Գ.)։

«Առաքելոյ աղաւնւոյ՝ իջանելով մեծաձայն հնչմամբ իբրև ձանց՝ ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշինեաց անկիրելի

զաշակերտան՝ մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն,,։ (Ի Հ՚ա-
բակ. կանոն պէնտէկոստէի՝ առաջին աւուրք)։

,,Նա վասն կը ինամանութիւն աղաւնւոյ, զի զգօն է թռչու-
նըն և հանդարտ. ըստ որում ՟ոգին՝ հոգի ասի հեզութեան,
և դարձեալ՝ զի զհին օրինակն յիշեցուսցէ,,։ (Ներ. Հ՚նորհ.
ի Մեկն. Մատ. գ.· 16· յերես 66)։

՟.—Օ՚ի՞նչ է յառաջնումն ի տեսութիւն գալ աղաւնւոյն՝
երեսաց երկրի։

Պ.—Ի առաքիլ ՟ոգւոյն սրբոյ ի ՟օրէ և յԱրդւոյ միածնէ առ
մարդկայինս բնութիւն յառաջ քան զգալուստ փառակցին՝
ըստ աստուածայինն խոստման ի ձեռն մարգարէից, որպէս գը-
րեալ է, ,,Եղիցի զոգի իմ ի վերայ զաւակի քո, և օրհնութիւ-
նըս իմ ի վերայ որդւոց քոց,,։ (Եսայի ԽԴ. 3)։

,,Ընաւեղ լիմն պատկառելի ցուցանէ զմարգարէութիւնն,
որ թէպէտ և մարդիկ էին միջնորդքն՝ սակայն ի ՟ոգւոյն գը-
րեալք խօսէին, և զայս Պաւլիթ յայտ արարեալ ասէ, լեզու իմ
որպէս գրիչ երագագիր դպրի, և այլ մարգարէ . . . ես ասէ,
ոչ մարգարէ էի, և ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի, և
թուղ կթէի, և լցայ հոգւով զօրութեամբն Աստուծոյ.
տեսեր թէ վերադ ի ՟ոգւոյն կրեալք խօսէին պատգամս,,։
(Մարգ. Հ՚նորհ. ի Մեկն. Ր. Պետր. Ա՚առ երրորդ)։

,,Յօրէնս, հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց, և փչուա
էր նա կենդանական և շնորհաց ի մարդն առաջին, և առ փչո-
ղըն սակս պատուիրանազանցութեանն դառնայ. մի՛ ճնասցէ
ասէ հոգի իմ ի մարդկանդ՝ վասն լինելոյ դոցա մարմին,,։
(Ծննդ. Օ. 3.—Նկր, Լամբ. ի Մեկն. Պատ. յերես 58)։

,,Օ՚ի զբզ արդարք հոգւով աստուածայնով ազդանա-
ցեալք աստուածայայտնութեանց և խօսակցութեան ընդ Աս-
տուծոյ, կենդանի օրէնք՝ կենօք ՟ոգւոյն լինէին, և օրէնսու-

սոյց, կեցուցիչ օրինացն Աստուծոյ,,։ (Նոյն, անդ. յերես
58)։

Սապէս և մարգարէքն ամենեքեան ՟ոգւովն սրբով զամե-
նայն ինչ խօսեցան, որպէս Արդւոյ, նմանապէս և վասն իւրոյ
իսկ ՟ոգւոյն աստուածութեան և շնորհաբաշխութեան. զի որ
իմաստնացաւն, նոքաւ ասաց թէ՝ հոգի Տեառն եղեց զսիեզերս։
(Նոյն անդ. յերես 59)։

՟.—Օ՚ի՞նչ գուշակէր յառաջնումն նուագի չգտանիլ
հանդիսա ոտից աղաւնւոյն։

Պ.—Օ՚այն՝ զի սուրբ ՟ոգին տակաւին չէր լրապէս հան-
գուցեալ ի մարդկային բնութիւնն. այլ նշոյլ շնորհացն կայր
ճնացեալ ի հին օրէնս և ի մարգարէս, վասն որոյ զի դեռ ևս
անհաշտ էր ընդ ՟օր Աստուծոյ, և ապաստամբ նենգաւոր բնա-
կան օրինաց նորա. զի Արդւովն հաշտեցաք. քանզի մարդասէր
հոգին փախչէ ի նենգութենէն, և ի նենգաւորս բնաւ ոչ հանգ-
չի, ըստ այնմ, ,,Օ՚ի սուրբ ՟ոգին խրատութեան փախիցէ ի
նենգութենէ, և հեռասցի ի խորհրդոց անմտաց. և յանդիմա-
նեսցէ ի հասանիլ ի վերայ՝ անիրաւութեանց,,։ (Իմաստ.
Ա. 5)։

,,Երկիւղ Տեառն առեալ զանիրաւութիւն, զերշնամանս և
զհպարտութիւն, և զձանապարհս չարաց,,։ (Առակ. Ը. 13)։

,,Ո՛չ մանաւանդ բարի իրիւ զմարգարէիցն, այլ կատարելա-
գոյն և ապաւորադոյն. և այնպէս բնակեցաւ ի նոսա, որպէս
թէ ընդ նոսա կացեալ, և ընդ նոսին հանդիսացեալ,,։ (Մարգ.
Հ՚նորհ. ի Մեկն. Ա. Յովհ. Ճառ վեցերորդ. գ. 24)։

,,Ընաւսպէս ասէ, զի ոչ որպէս ի մարգարէսն, այլ առաւել-
լապէս ևս և բնականաբար և առանց մեկնելոյ։ Լ՚սա աերու-
նական անսուտ խոստմանն, թէ ընդ ձեզ բնակեսցէ յաւի-
տեան,,։ (Խոսրով. ի Մեկն. Ժամակարգ. յերես 258)։

,,Իսկ նա զայլ ոմն բանական զիջեալ ի փառաց՝ ունելով առաջնորդ կորստեան կամակորութեան իւրոյ, որ բիւր ձանապարհ մոլորութեան բանայր առաջի նորա, մինչև զնա՝ թշնամի փրկութեան անձին իւրոյ՝ և հակառակ առաջին բարւոյն գտեալ՝ բազմապատկելով զչարն, զոր ոչ դիւրին է թուելն, և ոչ անգէտ ոք է յիմաստնոցն լսողաց: Այլ սակայն յիշատակն բարի՝ սերմանեալ ի բուն բարւոյն, ոչ ամենևին ցամաքեցաւ յարմատոյն, և ոչ շիջաւ կայծակն շնորհացն Աստուծոյ ի բնութենէս, ըստ դարուց դարուց յաղնուական որևարան յորդիսն Ադամայ, մինչև բացաւ անդունդք գթութեանց Տեառնն,,: (Ներսէս Շնորհ. ի Մեկ. Մատ. սակս ատան խորատնացն, յերես 5):

Ա.—Օ՞ր ինչ նշանակէ երկրորդ անգամ արձակիլն զագաւնին:

Պ.—Յետ Ամբարձման Տեառն յերկինս զառաքիլն զնաս տացեալ Հօր զաւետիսն յառաքեալս, ըստ այմ՝, ,,Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի ձեզ, և դուք նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց,,: (Ղուկ. ԻԴ. 49:—Գործոց Ա. 7:—Գործոց Ա. 7): Եւ կամ զարձեալ աւետիս ասէ Հօրն առաքեալն ընդ նմա մեզ. ,,Ահա ես ասէ զաւետիս Հօր իմոյ առաքեցից առ ձեզ,,: (Մարգ. Շնորհ. Ա. Յովհ. ձառ չորորդ, է. 25):

,,Եւ զարձեալ՝ զի զհին օրինակն յիշեցուսցէ, զի յորժամ եհաս համօրէն աշխարհի ալեկոծութիւնն, յայնժամ նոյն Թուչուն երեր զաւետիս հանդարտելոյ ջրհեղեղին,,: (Ներս. Շնորհ. ի Մեկ. Մատ. Գ. 16. յերես 66):

,,Փայլեաց ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, օծ արքայութիւնս,,: (Նարեկ. Լ. Գ. 6):

,,Որ ի լման քառասնեկին,
Յետ յարութեան տէրն պատկերին,
Ի Զիթենեաց հաներ լերին,
Օրընթրեալ զդասս վերատանին,
Եւ զաւետիս Հօր գոդին,,
Խոստանալիր շնորհել նոցին,
(Ներս. Շնորհ. Ողբեր. գլուխ Գ):

Ա.—Օ՞ր ինչ յայտ առնէ զառնալ աղաւնոյն առ Նոյ ընդ երեկս:

Պ.—Օ՞այն, թէ տէրն աւետիս եւս առաքելոց իւրոց յերկեան ժամուն փոխանակ Ադամայ, որպէս թէ ասելով աւետիս քեզ՝ Ադամ, զի երեկոյն՝ յորում դու գտար, այգացաւ ցածուցան հղիղք ջուրց մեղացդ, և երևեցան գլուխք լերանց, այն է՝ արդարութիւնք Աստուծոյ, ծաղկեցան պտղաբերեցան դաշտք հաւատոյ. ըստ այմ՝, ,,Եւ լուան ղձայն ղգնալոյ առեառն Աստուծոյ ի դրախտի ընդ երեկս,,: (Ծննդ. գ. 8):

,,Դու ես աղաչեցի զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան,,: (Յովհ. ԺԴ. 16):

,,Որ փոխանակ ծոցածին Որդին որ ել յերկինս՝ առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց՝ Հոգին ճշմարտութեան, մխիթարել զօրս Ադամայ արտաքսելոց, և հրաշխնել զընտրեալ ըզդասս առաքելոցն,,: (Ի Շարակ. կանոն չորորդ աւուրն պէնտ.):

,,Այսօր արտաքսեալ և զիշերային լուծեալ երկունք ծննդեան նախաժամն. քանզի զծնեալսն մարմնով ի մահ և յապականութիւն, վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի,,: (Ի Շարակ. կանոն չորորդ աւուրն պէնտ. . . .:

,,Եւ արդ՝ այսքիւկ մնացուս առաւօտ եղև, խոսկեալ հաւատաբանութիւն սրբոյ սինհոդոսին, յօրինս և ի մարգարէս

և յաւետարանս, վասն աստուածաբանութեան Հոգւոյն սրբոյ: Յայսմհետէ և զանհատականն ի նմանէ ցուցանէ տուչութիւնս, զի քարոզեցաւ նա առաքելովքն յոլորտս աշխարհի, և բնակեաց ի սուրբս, և սրբարար եղև, և լինի ի սրբեալսն սուրբ շնորհօք նորա, և արմատանայ նովաւ հաւատն կաթուղիկէ եկեղեցւոյ, ի սրբոյ Երրորդութեանն հաւատալ տալովն,,: (Ներս. Լ. ամբ. ի Մ. Պատ. յերես 60):

Հ.—Ովքինչ օրինակէ առնես, շնորհ ձիթենւոյն ի բերան աղաւնւոյն:

Պ.—Օճուճն սրբալոյս իւղոյն մեռոնի, որ է ինքն սուրբ Հոգի, որով և լցեալ պարարտացաք, ըստ այնմ՝ ,,Իւղ պղտոյ ցուրբնոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա,,: (Սաղմ. Ղ. 8):

,,Սրբազանին աստուածաճճնելութեան դրոշմի կատարողականն պարգև և շնորհք իւղոյն աստուածայնով կատարմամբ կատարի,,: (Դիոնէսիոս ի գիրս եկեղեցւոյ քահանայապետութեան, մասն Ղ. գլուխ չորրորդ):

,,Ունելով առհասարակ կենաց զտերևն ձիթենւոյն ի բերան, որ ունէր զնմանութիւն աստուածայնոյս այսմ աղաւնւոյ, որ փոխանակ ձիթենւոյն տերևոյ՝ զազատութիւն եբեր աշխարհի մարդկան, և զորդեգրութիւն առ ի Հօրէ օծմամբ իւղոյն սրբոբութեան,,: (Ներս. Շ. Նորհ. ի Մ. Մատ. Ղ. 16. յերես 66):

,,Ո՞ման զի առաջին իւղ և մեծ ասեմք զիւղն աւազանին զօրինակ շնորհաց Հոգւոյն, զոր մեռոնն սուրբ անուանեմք՝ այս ինքն մեռուցիչ բոլոր ախտից. որով և մարդիկ մեռեալք ի մեղաց ի մեծ պատիւն ի վեր երանեն՝ և որդիք Աստուծոյ անուանին,,: (Մարգ. Շ. Նորհ. ի Մ. Յակոբ. Ճառ մեռսանեղբորդ Ե. 15):

,,Դակ ձիթենեաւն զղորմութեանն իւղ. այլև զօճուճն մերկրտութեան շնորհին, ըստ տերևոյ ձիթենւոյն՝ որ յաւուրըն ,,նոյի երեր աղաւնին, որ պարգևաց եկեղեցւոյ նշանակ էին,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ. Մատ. ԻԱ. 8. յերես 444):

Հ.—Ովքինչ նշանակէ դարձեալ արձակիլ աղաւնւոյն, և ոչ ևս յաւելուլն դառնալ առ նա:

Պ.—Նշանակէ զամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ զանբաժանելի բնակիչն ընդ մարմնոյն փառակից իւրոյ ընդ եկեղեցւոյ յաւիտեանս յաւիտենից մինչև ցկատարած աշխարհի ըստ անսուտ խոստման գլխոյն Քրիստոսի. ըստ այնմ, թէ՝ ,,Ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա, բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ՝ և ընդ ձեզ եղիցի,,: (Յով. Ի-Ղ. 16–17):

,,Ես նոյն հոգի մինչև յաւիտեան՝ ի ջրոցն զամենեսեան յորդեգրութիւն մատուցանէ,,: (Գրիգ. Լուս. ՀԱգաթան. յերես 175 Ըստ հին տպ):

Հ.—Ովքինչ նշանակէ ի վեց հարիւրերորդի ի միում ամի կենաց Նոյի, յամենեսեան յառաջնում՝ որ օր մի եր ամսոյն, նուազել ջրոյն յերեսաց երկրի:

Պ.—Առաջին ամիսն է Նիսան Երբայեցւոց ըստ Աստուածաշնչին, որ է Մայերն Յունաց. յորում չարչարանօք խաչի մահու և յարութեամբն Քրիստոսի փրկեցաք ի ջուրց հեղեղաց մեղաց, վերստին նորածնեալ աւազանաւ ի սուրբ Հոգւոյն, զառաջին անպատում զիմառն ժառանգեցաք. ըստ այնմ, ,,Որ մասնեցաւ վասն յանցանաց մերոց, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ,,: (Հռոմ. Դ. 25):

—,,Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, յանեղծ և յանապրատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ի ձեզ,,: (Ա. Պետր. Ա. 3):

,,Եղև պատուղ և անդրանիկ ամենայն ննջելոց, խորտակեաց զդրունս դժոխոց. և եղոյծ զբռնութիւն մահու և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան առենային մարդկան,,: (Ի Կորնթոս.)—Եւ ի վեց հարիւր ամի կենաց Նոյի լինելն՝ . . . մեկնեցաք ի վերն յերես 105, տես անդ:

Հ.—Ո՞ր շինեաց Նոյ սեղան Աստուծոյ:

Պ.—Երբարատեան աշխարհի, ի դաշտին Նախիջևանայ, և ի լերինն Արդուաց, ըստ ասից աստուածաբան վարդապետաց, ըստ այնմ, ,,Նոյ դարձեալ, եթէ ժամանակ առաջին, զի պատարագ կամայն Հարկն մինչև ի Նոյ միմիթարեաց զմեզ ասէ պատարագօք իւրովք. և միւս ասէ Նոյի սեղանովն՝ զոր շինեաց ի լերինն Արդուաց,,: (Եկեղ. Հնոր. ի Մեկն. Մատ. Եկեղեցական պատմութեան յեր. 14):

Հ.—Որո՞յ յօրինակ է շինեալ է ի Նոյէ սեղանն:

Պ.—Արբոյ խնձին և ի վերայ նորա պատարագեալ անարատ գառինն. վասն զի ինքն էր մատուցող պատարագին՝ և ինքն մատուցեալն՝ և ինքն ընծայատուն՝ և ինքն ընծայն ընդունեղն, ըստ այնմ, ,,Ա՝ ասն զի ունի սեղանն չորս անկիւնս՝ որ է խաչն. և յիրաւի սեղան, զի եղև վերընկալ սերունդական մարմնոյ՝ ձմարիտ պատարագին որ մատեաւ Հօր,,: (Գրիգ. Նուս. Հաղաթ. յեր. 208. քան հին տպ):

,,Այս է սեղան արբութեան, և ի սմա է պատարագեալ Քրիստոս գառն Աստուծոյ,,: (Ի Հայր. կան. խաչի Ե. աւուր):

,,Պատարագ Քրիստոս մատչի գառն Աստուծոյ,,: (Խորհրդատետր):

,,Աստուր մեզ զորդիդ քո միածին՝ պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ. վասն զի ինքդ է բաշխող և նոյն ինքդ բաշխի ի միջի մերում միշտ անճախապէս,,: (Նոյն անդ):

,,Որդին Աստուծոյ՝ Հօրն իւր ի պէտս հաշտելոյ ընդ ձեզ՝ նուէր պատարագի մատչի գառն Աստուծոյ՝ մեծ և անզուգական ջրոցիւ զմեղս ձեր ի լինքն բառնայ. և փոխանակ ամենեցուն մեր՝ որ պարտական եմք, մահու մեռանի,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յեր. 86):

Հ.—Ո՞րպէս նշանակէ օրհնելն Աստուծոյ զարդարն զՆոյ:

Պ.—Զօրհնութիւնն Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յամենայն ազգաց և աղանց. զի նուաւ օրհնեցան ամենայն ազգք երկրի. և զի նա մատոյց զմարդկային բնութիւնս ախորժահամ խորտիկ Հօրն յաւիտենականի, և օրհնեցաւ ի նմանէ. ըստ այնմ, ,,Նա մատեաւ համբուրեաց, և էառ զհոտ հանդերձից նորա, և օրհնեաց զնա և ասէ, ահա հոտ որդւոյ իմոյ՝ իբրև զհոտ յանդոյ լեռն, զոր օրհնեաց Տէր,,: (Ծննդոց. ԻԷ. 27): ,,Գառն՝ ըստ մարմնոյ ամբծութեան, և հաց երկնային՝ ըստ անձառ միացելոյն ընդ նմին աստուածութեան. քանզի այսպէս երևեցաւ ի մէջ մեր մարմնոյն չարչարանօք. որպէս գառն՝ զմեղս մեր եբարձ. և զաստուածութեանն սէր՝ որպէս զհաց ետ մեզ կերակուր, և մխիթարութիւն. ըստ այնմ, Որ ուտէ ի հացէս, որ էջն յերկնից, մի՛ մեռցի. (Յովհ. Ջ. 40) այսինքն ի դիտութենէ սիրոյս՝ զոր ես ձեզ բերի,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յեր. 34):

Հ.—Ո՞ւմ նմանի աղեղն եղեալ յամպս:

Պ.—Աղէղանն Յիսուսի Քրիստոսի միածնի Որդւոյ Հօր Ծննդեան առաջնոյ ըստ աստուածութեանն, և Ծննդեան երկրորդի ի կուսէ ըստ մարդկութեանն. որ եղև նոր ուխտ Աստուծոյ Իսրայելեան տանս, ըստ այնմ. ,,Ահա աւուրք գան ասէ տէր, և ուխտեցից տանդ Իսրայէլի և տանդ Յուդայ ուխտ նոր,,: (Երեմիա Լ. 31): Եւ թէ՝ ,,Ընդ շատ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր Յիսուս. բայց արդ՝ առատապոյն և պաշտաման հասաւ Յիսուս, որպէս լաւագոյն և ուխտի է միջնորդ, որ ի յառաջ աւետեան օրինադրեցաւ,,: (Ընդդէմ Հրէից Լ. 22. Ը. 6):

,,Ոսկ յերկրորդում՝ մի յանդորդութենէն Բանն Հօր Որդին միածին կամաւ Հօր և Հոգւոյն՝ աւետաւոք հրեշտակապետին Գաբրիէլի էջ յորովայն կուսին Մարիամու,,: (Ներ. Հ. Նորհ. գրեալ Թուղթ. առ Ըէքս. յերես 56):

Հ.—Ո՞րպիսի օրինակ ունի լինելն ազգէդ յառնս:

Պ.—Սրբոյ կուսին Մարիամու. յարգանդի որոյ միաւորեցաւ աղէղն Աստուածութեան ընդ մարդկային բնութեան՝ և բարձեալ եղև ի գիրկս նորին, և շրջեցաւ յերկրի. ըստ այնմ, ,,Ընտասիկ Տէր նստեալ ի վերայ թևթև ամպոյ, եկեսցէ յԱզիպտոս, և շարժեսցին ձեռագործքն Եգիպտացւոց յերեսաց նորա, և սիրտք նոցա լքցին ի նոսա,,: (Եսայի ԺԹ. 1):

,,Ընդաքեցաւ Աստուած յԱստուծոյ սուրբ Որդին միածին էառ զմարմին ի կուսէն, մարդ կատարեալ՝ կատարեալ աստուածութեամբն,,: (Գրիգ. Լուսա. յԱգաթ):

Նառնեալ միացեալ յորովայնի կուսին զգեստական բնութիւնս մեր ընդ անեղ իւրում բնութեանն,,: (Ներս. Հ. նորհալի գրեալ Թուղթ. առ քահանայս, Ամայք նահանգի յեր. 150):

,,Միաւորեաց զմարմինն՝ զոր էառ ի կուսէն ընդ աստուածութեանն իւրում,,: (Եփրեմ. ի ճառ. Ծննդ. Քրիստոսի):

Հ.—Ո՞ման էր թևթև ամպ ասի ի գիրս սուրբ կոյսն:

Պ.—Ո՞ման գի՝ թևթև ամպն չէ լցեալ ծանր խոնաւութեամբ. այլ՝ գնայ թևթև յերեսս երկնից ի թեւս հողմոյ. այսպէս և սուրբ կոյսն Մարիամ անսիրմն յղութեամբ թեւացեալ յերկրային կրից, և ի թեւս Հոգւոյն սրբոյ գերազանցեալ զամենայն մարդ՝ անձրևեաց զգօղն հայրաբուխ. ըստ այնմ՝ ,,Թևթև ամպոյ՝ որ է առանց խոնաւական ջուրց՝ նմանեցուցանէ զերկիրս կուսին որ էր մաքուր ի դիջական ցանկութենացդ,,: (Ներս. Հ. նորհ. գրեալ Թուղթ. ի Մահին. Մատ. Ժ. 15. յերես 46):

,,Ամպ թևթև յերկրային ցանկութենանց սուրբ կոյս, և վառական աստուածային բոցոյն, որ զգօղն հայրաբուխ անձրևեցեր ի բանական երկիր, որով բնութենս բուսան արդարութեան սուրբ բոյսք,,: (ի Հ. արաքեան):

,,Ամպ լուսաւոր և անընդունակ խոնաւութեան՝ որ զգօղն կենաց ի ցամաքեալ բնութեանս ցօղեցեր,,: (ի Հ. արաքեան):

,,Միւն լուսոյ և ամպ հովանի սուրբ կոյս, որ ցօղեցեր ի մեղ զգօղն երկնային. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս,,: (ի Հ. արաքեան):

Այլ՝ մեզ որ ի ճշմարտութենանն՝ այսպէս պարտ է հաւատալ թէ յորմէ հետէ եղև կոյսն բնակարան Հոգւոյն և Բանին՝ բառնալ ի նմանէ բոլոր կրից մարդկայնոց: Օ՛ի եթէ Յովհաննէս ի փորս մօր մերձաւորութենէն այնքան մաքրեցաւ, զի՞նչ է սեղ զնմանէ՝ որ բովանդակ զբնութիւնն Աստուծոյ իւրմանեայ ժամանակաւ կրեաց յորովայնի մարմնով. ոչ միայն թէ յախտաբիծ ցանկութենանց, այլև ի բովանդակ հոգւոյ կարեաց հաւատարիմ է՝ արտաքոյ լինել նմա յայնմհետէ. այլ այսպիսի կարծիք նոցա է՝ որք ոչ Աստուած խոստովանին զծնեալն, և Աստուածածնին զծնողն. զոյս թողցուք արտաքոյ հրովա-

ռեալս հոգւով,,։ (Ներս. Հնորհ. ի Մեկն. Մատ. Ե. 25. յերես 37)։

Ս.—Ովքինչ նշանակէ հոգագործութիւն նոյի և անկիւն գայգի։

Պ.—Ագոյացուցանելն Աստուծոյ զմարդն ի հողոյ. և աստուածային հօթնարփեան շնորհօք զալդարելն զմեզ. զի այգի եմք մեք և տուն Իսրայելի. ըստ այնմ՝ ,,Այգի եղև սիրելոյն յանկեան ի տեղւոջ պարարտութեան, ցանկով պատեցի, ձորաքարձ զարդարեցի, և տնկեցի որթ, աշտարակ շինեցի ի մէջն նորա. և գուբ հնձան փորկեցի ի նմա, և ճնայի զի բերցէ ինձ խաղող, և եբեր փուշ,,։ (Եսայի. Ե. 1—2։ Սաղ. Ղ. 9)։

,,Եւ ես տնկեցի զքեզ որթ պտղաբեր ամենևին ճշմարիտ, զիա՞րդ զարձար ինձ ի դառնութիւն որթդ օտարացեալ։ Եթէ լուասցիս բարեաւ, և յաձախեսցես քեզ օձառս, սակայն ծրդեալ կաս յանիրաւութիւնս քո առաջի իմ ասէ տէր,,։ (Երեմ. Ե. 21—22։

,,Ելէ առակ լուարուք, այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, և ցանդով պատեաց զնա, և փորեաց ի նմա հնձան, և շինեաց աշտարակ, և եւ զնա ցմշակս, և գնաց ի տար աշխարհ,,։ (Մատ. ԻԵ. 33)։

Մշակք այսր այգւոյ են դպիրք և փարիսեցիք՝ որք նստան յաթոռն Մովսիսի. ի սոսա յանձնեաց Աստուած Հայր զայգին, մինչև Մովսիսիւ կացոյց զՅ. ետացիսն՝ քահանայս Սինագոգային՝ զոր ցանկով օրինացն պատեաց և փորեաց ի նմա հընձան,,։ (Ընդհանր բացեալ. տպ. սուրբ Էջմիածնի յերես 80)։

Ս.—Ովքինչ միաս ուրն արբեցութիւն և մերկութիւնն նոյի։

Պ.—Արբեցութիւն և մերկութիւնն նոյի է նմանութիւն մահուան Փրկչին մերոյ ի վերայ խաչին վասն փրկութեան ազգի մարդկան, և ոչ իսկութիւն. զի անձինք և գործք նահապետաց և նախահարց, և մարդարէութիւն սրբոց մարգարէից օրինակաւ և պէսպէս նմանութեամբ զանօրէնութիւն Որդւոյն Աստուծոյ ճանկապէս խորհրդաբար նշանակեն, որոց միսն է այս զոր աստուածաբան վարդապետաց բացայայտեալ. թէ՝ զի Աստուածն արարածոց յորժամ ստեղծ զմարդկային բնութիւնս, և ի փորձ առեալ զնա մարդանալովն՝ յետ բազում ժամանակաց, գլինելհարեցաւ ի սէր մարդկութեանս ի սարսափելի ուրբաթու վեցերորդ ժամուն և ի հնձան խաչին կոխելովն զեաղող՝ մերկացաւ զհանդերձն թաթաւեցաւ հանդերձ մարմնոյն բոսորային արեամբ, և ինքն թմբրեալ ննջեաց ի քուն մահու մահկանացու մարմնով՝ կենդանի և անմահ աստուածութեամբն. զորմէ խորհրդոյ հարսնացեալս եկեղեցի ասէ ցխնայացեալն Քրիստոս, ,,Առեալ ածից զքեզ ի տուն մօր իմոյ՝ և ի սենեակ յղացելոյն զիս։ Արբուցից զքեզ ի գինւոյ հիւղագործաց, յօշարակէ նռնենեաց իմոց,,։ (Երգոց. Ը. 2)։—Եւ փեսայն ասէ, ,,Ընձան հարի միայն, և ի հեթանոսաց ոչ ոք էր ընդիս, և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի,,։ (Եսայի. ԿԳ. 3)։

,,Եւ ի նշանակել թէ արարչական լոյսն խաւարեցոյց զհրեական լոյսն. զի մի աստուած կարծիցի յարեգնապաշտից, այլև զստուերն մերկութեան քող արկեալ. զի մի՝ ակն անարժան Ադէից տեսցէ զարարիչն մերկացեալ. որպէս երբեմն օրինակն ապաւորեցաւ ի սկիզբն երկրորդ մարդկութեանս ի հայրապետն Նոյ՝ որ արբեալ ի գինւոյն մերկացաւ ի տան իւրում. զոր տեսեալ Քամ Հայր Քանանու՝ պատմեաց արտաքոյ երկուց եղբարցն Սեմայ և Յաբեթի. որք եդին հանդերձ ի վերայ ուսոց իւրեանց և յետս յետս գնալով ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց։ Այսպէս և զլսեան երկրորդ արարչութեանս

աէրն մեր Յիսուս Քրիստոս ի սկզբ մարդկան արքեալ՝ որ և բաժակ զնաչն կոչեաց, և մերկացաւ իվերայ նորին ի տան աշխարհի, և կամ մերձ տաճարին ի մէջ Երկնից՝ զորս տուն հոգեբա անուանեն զկնք,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մեկ. Մատ. Ի՛Ը. 45. յերես 598):

,,Որ անկեցար յերկրի որթ ձշմարիտ, և ճմլեցար ի խաչին ողկոյզդ անսպառ յուբախութիւն ամենայն տրամեկնող,,: (ի Հարակ. Կանոն յարութեան աւագ օրհնութեանց):

Ե.—Ովքի՞նչ նշանակէ ծաղը առնելն Քրամայ զԵսայրն:

Պ.—Ովծաղրաբանութիւն և զկատականս Երկից առանմեղ գառն Աստուծոյ Յիսուս առ խաչին, ըստ այնմ. ,,Մի՛ զբ ամենևին անմասն լեցի ի մեծամեծար ուրախութենէս մերմէ, յամենայն տեղիս թողցուք զնշանակ ուրախութեան, զի այն է բաժին մեր, և սոյն վիճակ,,: (Իմաստ. Ե. 9):

,,Ես ցրուեսցի յաւուր յայնմիկ. և ծանիցեն Քանանացիքն զխաչինս պահեստի իմոյ. զի բան Տեառն է,,: (Ովաքարիա. ԺԱ. 11):

,,Ես զարձեալ՝ զմարգարէութիւնն լցին, զոր ի վիմայ Տեառն ասաց Ովաքարիաս՝ Քանանացի կոչելով զԵրեմիա, այսինքն՝ առ գնող մահու նորա,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մեկ. Մատ. Ի.Ովան. 15. յերես 551):

Ովր տեսեալ զաւակքն Քանանու ըստ մարգարէին՝ ճիճաղէին քամահելով,,: (Նոյն, անդ. Իե. յերես 598):

,,Նոյնպէս և քահանայապետքն ձագերին հանգերձ զզրօք և ձերովք,,: (Մատ. Իե. 41):

Ե.—Որոց ունին նմանութիւն Սեմ և Յաբեթ:

Պ.—Երկից և հեթանոսաց հաւատացելոց. և կամ արևգական և լուսնի, որոց տեսեալ զամենախնամ արարչին իւրեանց յայնպիսի ողորմելի կերպարանս, չհանդուրժեալ այնմ՝ ատուե-

րական քողով ծածկեցին զնքեանս յերդ ժամս աւուրն, ըստ այնմ, ,,Եւ կացին արեգակն և լուսին ի կայի իւրեանց, մինչև էառ Աստուած զվրէժ ի թշնամեաց նոցա: . . . Եւ եկաց արեգակն ի մէջ երկնից, և ոչ խաղաց ընդ արևմուտս մինչև ցկատարումն աւուր միոյ. և ոչ եղև այսպիսի օր ոչ յառաջ և ոչ յետոյ, լսել Աստուծոյ ձայնի մարդոյ, զի տէր պատերազմեցաւ Իսրայէլի,,: (Յեսու. ժ. 13—14):

,,Ո՛չ ապաքէն ի սրտմտութեան նորա արգելաւ արեգակն. և մի օրն եղև իբրև երկու,,: (Աիրաք. Խ.Ովան. 5):

,,Ովլուսաւորն խաւարեցուցանելով՝ յայտ արար թէ աբարձս արարիչ է, և կամաւ և ոչ ակամայ կրէ զոր ինչ կրեցաւն. զի որ զվէմս հերձեալ՝ ոչ ակարանայր զնաչահանն պայթել, և որ ի գերեզմանացն զեռևալսն վերացեալ՝ ոչ անկարանայր զբևեռսն թօթափել և լքանել ի խաչէն,,: (Ոսոսրով. ի Մեկն. Ժամակարգ):

,,Քևեռեցաւ ի վայրի ընդ աւազական որպէս զմարդ. այլ զաստուածութեան խաւարեցուցանէր և զաւազակն ի դրախտն մուծանէր՝ որպէս զԱստուածն,,: (Նար. Ե՛նորհ. գրեալ Թուղթ առ Մանուէլ կայսր յերես 80):

,,Քապէիցն արեգական՝ զմեն արար գիշերանման. զաստուերն քողդ արկ մերկութեան՝ զի մի տեսցէ աչն անարժան. ի միջօրեայն նահատացաւ յորժամ Եգամ մեղօք մեռաւ,,: (ի Հար):

,,Խաւարեցաւ լոյսն արևուն ի վեցերորդ ժամ ուրբաթուն. ծանոյց թէ լոյսն արարչական նահատացոյց զլոյսն եղական. կախեալ զքեզ մերկ ի խաչին՝ քողով ատուերաւն ծածկէին. հերքեաւ մինչ զծանրութիւն շրջող դիւրին միջօրէի,,: (Նոյն, անդ):

Իսկ արեգակն և լուսին ծածկեցին զմերկութիւն արարչին իւրեանց. և ամենայն ոք որ պատրիշատուցանէ և հագիլ առ-

նէ զնորհուրդ Խաչին և ոչ յամօթ համարի զզօրութիւնն Աստուծոյ, ի ծածկոցաց մասին է և նա. որք են՝ ըրեայք և հեթանոսք հաւատացեալք՝ ըստ նմանութեան արեգական և լուսնի պայծառացեալք հոգւով, օրհնէին և ընդարձակէին ընդ Սեմայ և ընդ Յաբեթայ,,: (Յովհ. Ծործոր. ի Ա Կին. Ա առ. Իւ. 45):

՟.— Որո՞յ է օրինակ Նբրովթ կառուցանող աշտարակին:

Պ.—Սկզբնահօրն չարեաց սատանայի. յորմէ կառուցաւ հին հպարտութեան՝ ի հակառակել նորա ամենաբարի արարչին իւրոյ, ըստ այնմ, ,,Օ՛ի որ առնէ զմեզ՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ մեղանչէ,,: (Ա. Յովհ. Գ. 8):

,,Օ՛ի սիրտ նորա սալացեալ է իբրև զվէմ, և հաստատեալ կայ իբրև զսալ դարբնաց անշարժ,,: (Յովբայ. ԽԱ. 15):

,,Օ՛ամենայն բարձունս տեսանէ. և ինքն է թագաւոր ամենայնի որք ի ջուրան են,,: (Նոյն, անդ. ԽԱ. 25):

,,Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ այժմ ընդ մերեալ է յորդիսն ապստամբութեան,,: (Եփես. Բ. 2):

,,Մնացի իբրև զսալ դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է բնչեարայ, և ոչ ապաշխարեցին,,: (Նարեկ. ԿԳ. 2):

՟.— Որո՞մ գտանի օրինակ դաշտ երկրին Սհնաարայ:

Պ.— Դաշտն էր Բաբիլոն յօրինակ դժոխոց. քանզի մարդիկ հեռացեալ յարևելից, այսինքն ի լուսոյ Աստուածութեան, զդժոխս անպհականեալ էին ընդ դիւաց և սատանայի, ըստ այնմ, ,,Օ՛ի յորժամ ելցես ի քաղաքէ, և բնակեցուցից զքեզ ի դաշտի, և հասցես մինչև ի Բաբիլոն, և անտի փրկեսցէ զքեզ, և անտի ապրեցուսցէ զքեզ Տէր Աստուած քո ի ձեռաց թշնամեաց քոց,,: (Միքիա. Գ. 10):

,,Ա՛ման այսորիկ ասա. այսպէս ասէ Ագծնայի տէր, թէ մերժեցից զնոսա յաղգս, և ցրուեցից զնոսա ընդ ամենայն երկիր, և եղէց նոցա փոքր մի ի սրբութիւն ի գաւառսն յորս մտանիցեն ի նոսա,,: (Ազեկիել. ԺԱ. 16):

,,Որ խոնարհութեամբ իջեալ յաշխարհ շինուցեր զերոց մեզայ՝ որպէս երբեմն ի Բաբիլոնի ի մէջ հնոցին,,: (Ի Շար):

,,Որ ապրեցուցեր զերիս մանկունսն ի հնոցին և զիս ապրեցո յահագին հրոյն,,: (Նոյն, անդ):

՟.— Օ՞րոյ օրինակ ունի հրացեալ աղեսն:

Պ.— Բարոլբոք մեղաց, որք իբրև զաղիս ի սերմունս չարեաց թրծեալ կարծրանան իր թիկունս մարդկան, և այրեցեալ խարշին զհոգիս նոցա. ըստ այնմ, ,,Կամ գնայցէ ոք ի վերայ կայծականց հրոյ, զոտս իւր ոչ խարշեցէ,,: (Առակ. Օ. 28):

,,Նա ոչ ի փարաւոնէ ազատեաց և ի դառն գործավարացն՝ այլ ի սատանայէ ի սատմբականէն և ի դիւացն. ի խստագոյն նեղչացն՝ և ի գոռոզ մարդասպանացն՝ և ի ծառայեցուցանողացն զձեզ ի գործս խիստ կատղ և աղիսաարկի մեղացն և յարդատեսակն,,: (Ստեփ. Ը նորհ. ի Ա Կին. Յուդայ Ճառ առաջին Ա. 1):

,,Նէ ի կողէն Ադամայ հուր մեղաց հրդեհել զամենայն հրդեհն անօրէնութեան,,: (Ստեփ. Ը նորհ. ի Ա Կին. առաջին. Յովհան. Ե. 9):

,,Ա՛ան զի մեղքն ախտացուցանեն և մեռուցանեն զհոգիս, և եթէ ոչ մեղանչեմք՝ անախտ և անմահ պահեմք զսա ըստ սրբոցն Աստուծոյ՝ որք պահեցին և ուսուցին զմեզ,,: (Ներ. Ը նորհ. գրեալ. Թուղթ. Ամայք նահանգի յերես 175):

՟.— Օ՞րոյ նմանութիւն ունի աշտարակն:

Պ.—Դատապարտելի հպարտութեան, որ է մայր և սկիզբն ամենայն մեղաց և հակառակ Աստուծոյ, զի ինամանէ ծնան հա-

մօրէն մանկանէք անվնաս. ըստ այնմ, ‘‘Սկիզբն ամբարտաւանութեան՝ չհաս դարձուածն Աստուծոյ. քանզի չայնմանէ որ արար զնա, չհաս դարձաւ սիրտ նորա, զի նախկին ամենեցուն մեզաց է հպարտութիւն. որ բուռն հալաւ զնմանէ, լցցի անիծիւք, և կործանեսցէ զնա ի վախճանի,,: (Առակաց. ԺԶ. 14):

‘‘Ոչ եղէք ձեր որոշեալ ի մէջ ձեր և ի մէջ Աստուծոյ, և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր ի ձէնջ՝ զի մի ողորմեսցի,,: (Եսայի. ԾԹ. 2):

‘‘Ընդհասարակ ասելիք են Աստուծոյ, ամբարշտական և ամբարշտութիւն նորա,,: (Յմասա. ԺԴ. 2):

‘‘Ովի չայսմ ժամու ապաստամբութեան մերոյ եղև սկիզբն. և զպտուղ փայտին ճաշակել՝ նախամեծար քան զաստուածականն համարեցաք, մոլար խրատուն խաբեալք: Վասնորոյ մերկացաք ի փառացն և մահու դատապարտեցաք, և զանիծիցն ընկալեալ կեալ կեանս, և ընդ մեզաց թագաւորութեամբ անկեալ եղաք, և փոխանակ զրախտին զերկիր աշխատութեամբ գործել և ի սա դառնալ պարտաւորեցաք: Թողում ասել որք չայսցանէ ազգի մարդկան ախտք զանազանք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և օտարութեան Աստուծոյ, և պատուհասք բազմաբնակք: Եւ որք ի չայսցանէ թշնամութիւնք և ախտալից կեանք և մահ դժնդակ, և որ ի հանդերձեալսն համբարեալ կան անհնարին և անհանդուրժելի և անսպառ տանջանքն,,: (Խոսրով. ի Մեկն. Ժամակարգ. չերես 292):

Ա.—Օ՛ր՞նչ չմանի յոգնական ձայնիւ ասելն Աստուծոյ, եկայք չիշցուք և խառնակեսցուք զկեղտս նորա:

Պ.—Չմանի բազմութիւն աստուածային անձանց, զի Աստուածաշունչ գիրս ի սեղիս տեղիս այս օրինակ նշանակէ ըզսրբոյ Երրորդութենէ, որպես այն՝ որ ասի, ‘‘Ամբարձիալ զաչքս իւր եսիա, և ահա արք երեք կային ի վերոյ քան զնա, և երկիրեպագ ի վերայ երկրի՝ և ասէ. տէր, եթէ գտի շնորհս առաջի քո՝ մի զանց առնիր ի ծառայէ քումմէ,,: (Ծննդոց. ԺԸ. 2):

‘‘Եւ ասաց Աստուած եկայք չիշցուք և պղտորեսցուք զլեզուս նոցա. և ոչ ասաց՝ թէ գնացէք չիշէք և պղտորիցէք զլեզուս նոցա, որպէս և կարգ հրամանին պատշաճէր աստուածութեանն. այլ՝ եկայք ասէ, չիշցուք և պղտորեսցուք. իբրև առհասարակութիւնն գործոյն ի պղտորեացուքն ասել. չիւրաքանչիւր մարգոյն արարչութեամբն լեզուացն բաժանմամբ՝ օրինակաց զայս. քանզի զմարդկութիւնն վասն մերոյ վերկութեան չանձն առնլոց էր աստուածութիւնն. զթիւ Երրորդութեան երևեացն ուսուցանել առաքելոցն,,: (Գրիգոր Լուս. Ընդհանգեղոս):

‘‘Եկայք չիշցուք և խառնակեսցուք զլեզուս նոցա, ընդ Որդի և ընդ Հոգի է բանն, որովք արար զմարդն ազգ մի և լեզու մի,,: (Վարդան. ի Մեկն. Ծննդոց. ԺԱ. 7):

Ա.—Օ՛ր՞նչ էր բաժանումն լեզուաց:

Պ.—Նր պատիժ մոլորութեան ամբարտաւանութեան. զի չէք մեզք առանց պատժոյ. և փոխանակն մխիթարեցաւ աշխարհս, յորժամ էջ Հոգին սուրբ Աստուած չառաքեալն չաւուրն Պենտեկոստէի ի վերնատունն՝ ի ձև հրեղէն լեզուաց՝ ժողովելով ի մի զցրուեալսն. ըստ այնմ, ‘‘Եկեալ ի Հօրէ բնակեցաւ ի նոսա, և զորամութիւն նոցա փարատեաց, և հրեղէն լեզուօք ի լեզուս նոցա հանդուցեալ, եբաց զբերանս նոցա խօսել չամենայն լեզուս. և զամենայն մարդիկ, որ չաշտարակին ցրուեալք էին և մոլորեալ ի բազմաստուածմոլորութիւնս, միաւորեաց ի մի աստուածգիտութիւն. և զօրութեամբ եռանձնեայ աստուածութեանն զամենայն լեզու զմի Աստուած փառաբանել ուսոյց,,: (Ղևոնդ Յովհան. Ոսկեբե):

«Օ՛ձոյն սրբոյ առին զօրութիւն առաքելոցն, և զաւետեցին ազգացն լեզուաց բաժանելոց ընկալան զիմաստութիւն. զի ամենայն աշխարհաց որ ընդ ամենայն տիեզերս մարդիկ իցեն՝ բաւական լինին ուսուցանել զհրամանս աստուածութեանն»։ (Գրիգոր Լ. ուս. ՅԸգաթանգեղոս)։

«Առաքեաց և զ՛ոգին իւր սուրբ մերկ աստուածութեամբն առանց մարմնոյ՝ զցրուեալսն ժողովել ի մի, և զբաժանեալ լեզուան յաշտարակէն միաւորել. իսկ նա հկեալ յայտնի աստուածութեամբն ի դասս առաքելոցն ի սուրբ վերնատանն՝ ըստ Դաւթայ երգոյն, Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, և Աստուած մեր մի դադարեսցէ, այլ հուր առաջի նորա գնասցէ. նմին իրի նստաւ ի վերայ նոցա ի հրեղէն լեզուս. և տայր բարբառել նոցա՝ զորս ինքն կամէր»։ (Մարգ. Ը. Նորհ. ի Մեկ. Յակոբ. Ճառ չորրորդ Ա. 17)։

«Որ զմիաբանեալսն աշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց, այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ վերնատունն. ամենայն հոգիք օրհնեցէք զ՛ոգին Աստուծոյ»։ (Ի Ը. արակ)։

՛.—Ո՞ինչ յայտ առնէ կործանումն աշտարակին։

պ.—Ո՛կործանումն դժոխոց. յորում իջեալ Բանն Աստուած կամաւ և գործակցութեամբ՛ոգւոյն սրբոյ՝ աւերեալ քանդեաց զինս. ըստ այնմ, «Ես յոպէս ասէ տէր, ահաւասիկ ես յարուցից ի վերայ Բաբիլոնի և ի վերայ բնակչաց նորա զսիրտ յարուցչոյ, և հողմ խորշակի սատակիչ»։ (Երեմիա. Ծ.Ա. 1)։

«Նա աղաղակեաց ի ձայն մեծ ասելով. անկաւ Բաբելոն մեծ, որ եղեալ էր բնակութիւն դիւաց և արգել ամենայն այսոց պղծոց, և բանտ պահպանութեան ամենայն ոգւոց անսրբից և ատելոց»։ (Յայտնութիւն. ԺԸ. 2)։

«Նա իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր ի մեզ ընկալաւ յաղքատութենէ, և զնիդս դժոխոց աղարտեալ հղօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած՝ զԱստուածդ կենդանեաց և մեռելոց»։ (Խոր.հրդ.տեառ)։

«Նա իշխանական պետութեամբն իջեալ ի ստորին սանդարամետս դժոխոց՝ աղարտելով զզօրութիւն բռնութեան կարճեալ իշխանին աշխարհի, որ բարձրացեալ և լեռնացեալ մարդկութեանս՝ բարտաւանութեամբ ոտներ դրաւեալ ընդ ինքեամբ զբնութիւն մարդկութեանս. որով ժամանեալ եհաս թագաւորն ի բարձանց՝ հղօրն ի պատերազմի, և եղ ի բարձունս հպարտացելոցն, և կապեաց զհնկայն աւերելով զամուրս նորա, և յափշտակեաց զգանձս նորա և դարձեալ եմոյծ զպարբունական պատկերն ի զրախան, ուստի եհան, զեօթնեկի շնորհսն տալով՝ զոր կորոյն եօթնեակ յանցանօք»։ (Ընդօթք սրբոյն Բարսղի)։

«Ուստի և առեալ Քրիստոս զիշխանութիւնն յեհ ամենեցուցանելոյն զսատանայ, էջ ի ստորին վայրս մահու՝ առ կապեալ հզօրիս արդարոց, և քարոզեալ ծանոյց ամենեցուն զաստուածութիւնն և զշնորհսն Հօր, և ազատեալ զամենեսեան յիշխանութենէ սատանայի, աղարտեաց զնիդս դժոխոցն հզօրեղապէս»։ (Ներ. Լ. ամբ. ի Մեկ. Պատ. յերես 100)։

՛.—Ընդէ՞օր ոչ թուի լեալ շնորհ նախատեղծիցն։

պ.—Ծուխի՛ ասել ըստ աստուածարան վարդապետաց թէ լեալ էր մերն Նեսայի ի յայսն Ալեքսէմ, և Ադամայն ի լեառն յերուսաղեմ ի Գողգոթայ ի կատար երրինն տեղի կալեառն յերուսաղեմ ի Գողգոթայ ի կատար երրինն տեղի կալեառն Ձիթենեաց. բայց ստուգապէս լեառն Ձիթենեաց այն լեառն անուանէր, յորմէ Յիսուս Փրկիչն մեր յաւանակաւ երկն Ալերուսաղէմ և անտի համբարձաւ յերկինս. և լեառն Ծնբուս որ ի վաղուց ժամանակին անբնակ գոլով ի մարդկանէ յամենայն տեղիս ձիթենիք էին, ըստ

մոաց նոյն սրբալանից՝ լեառն Զիմինեայ անուանիւը. յորում բնակեր Մելքիսեդեկ քահանայն եպիսկոպոսական թագիւն և պաշտպան լեալ շէրմի սկզբնահօրն Աբրամայ. զորմէ գրէ հրեշտակապետն սուրբն Գրիգոր աստուածաբան վարդապետն մեր նարեկացին ասելով, ,,Օ,իմբրգ զնախնին վհհից մռռացայ՝ զգեաց մեծիւ՝ և զկերպարանն անպարագրելոյդ. ո՛չ ահա Մելքիսեդեկ՝ յօրինակ շնմարտիդ ահաւորութեան՝ ի ձիթատանեայց լերինն, ուր յեաղ ոաք մարմնացելոյդ Աստուծոյ զևտեւել կացին, ի վերնոց անտի հրեշտակաց՝ ի պտղոց տեղւոյն իւղեցաւ. ուստի շէրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ՝ ի քէն հանկերձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լըմամբ՝ համայն խակութեան ազատային կենագործութեանդ,,: (Նարեկ. Գ. Ո. 5):

Ա.—Ո՞ան էր ծնաւ փրկիչն մեր Քրիստոս յայրն ի Բեթղեհեմ ի սուրբ կուսէն Մարիամայ:

Պ.—Ընդ ի ուսուցանել անձին կալ զնուաստութիւն և ըզխոքրկութիւն աղքատութեան նուաստութեամբ բարձրացուցեալ յառաջին գերապանծ իշխանութիւն քաջ հովուին Նաբալէլ իշխանաց իշխանաւ, ըստ բանի Միքեայ. թէ՝ ,,Դու Բեթղեհեմ տուն Եփրաթայ՝ սակաւաւորս իցես լինել ի հազարաւորս Յուդայ: Ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի. և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի,,: (Միքեաս. Ե. 2): Եւ կամ վասն լուծանելոյ և մերժելոյ ղցաւ երկանց անլիծիցն Եւայի ի յայրի անդ առ մսրովն անբանից, անցաւակիր անախտաբար և անապական ծննդեամբ սրբոյ կուսին Մարիամու աստուածածնին, ըստ պատմելոյ աւետարանչին, ,,Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց ի խանձարուրս՝ և եդ զնա ի մսուր, զի ոչ դոյր նոցա տեղի ինչ անի,,: (Ղուկ. Բ. 7): Օրում պատմեն աստուածգործութեան վարդապետք ըստ վերոյ գրեցելոյ թէ՝ անդ էր շէրմի նախատօնն Եւայի: Որպէս գրի գարձեալ միւս ևս մերձաւորագոյն խորհուրդ. զի գերեզմանն ասի լինել Եւայի ի Բեթղեհէմ. ըստ որում Ադամայն ի գողգոթայ, և որպէս զնորայն երարձ մահուամբ զյանցանս՝ նոյնպէս և զնախատօնն ծննդեամբն եղոյծ զերկունս անիծիցն,,: (Ներ. Շնորհ. ի Մեկն. Մատ. Բ. 1. յերես 38):

,,Օ,ի որպէս ծննդեամբն զանէծս Եւայի երարձ ի Բեթղեհէմ քաղաքի, նոյնպէս և զպատմայինն ի գողգոթայ տեղին,,: (Յովհ. Օտրճոր. ի Մեկն. Մատ. ԻԵ. 33 յերես 593):

,,Որ զնախատօնն անիծից երկանց լուծեր զդատաւկնիք, որ զորտմական սահմանեաց գծննդեանդ անախտաբար ծնանելով ի քէն,,: (Ն. Շար):

,,Նոր սքանչելիք եղեն այսօր ի Բեթղեհէմ ի յայրին, կուսի ծնանիլ աստուած և մարդ, անապական միալով կուսական ոյովայնին,,: (Նոյն, անդ):

Ծնաւ մարմնով ըստ մարդկային,
Որ ի հօրէ նախ անմարմին.
Լուծեր զերկունս նախաստեղծին,
Օ,տերևապատ ի խանձարրին,
Բանդ ի մսուրն անբանից,
Գոլ կերակուրն բանականին:
(Յիսուս Որդի, յերես 330):

Ա.—Նոյ փրկիչն մեր Քրիստոս վասն էր խաչեցաւ ի գողգոթայ:

Պ—Ի տեսիլ ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց, Ա՛րկից և հեթանոսաց, ձգել զամենեսեան առ ինքն բարձրացուցանելով զնոսա, ի սաորայնոցս յերկրէ առ երկինս ըստ անսուտ խոստման իւրոյ՝ թէ՝ ,,Եւս յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս,,: (Յովհ. ԺԲ. 32): Կամ ըստ վերոյ

զրեցելոյն թէ՝ առ ի բառնալոյ զանէծս մահարեր պղծոյն Ճաշակ-
ման ի վերայ գազաթանն ի կատար լերինն, յորում եդեալ էր
մարդն առաջին. ըստ այնմ, ''Եւ ածին զնա ի Գողգոթայ տեղի
մի՝ որ թարգմանի տեղի կառափնելոյ,,: (Մարկ. ԺԵ:22):

''Սոսկալին սերովբէից՝ բառնայր ինքեամբ զփայտ խաչին,
մինչ ի տեղի Գողգոթային, յորում եդեալ մարդն առաջին,,:
(Ն Ճ ար):

''Եւ ինօրինութեամբ անդ յաջողեցաւ՝ ուր էր չերիմ
առաջին մարդոյն առաջնոյն ասացեալ, որպես զի զնդամ
կառափնեցաւ առողջացուսցէ,,: (Յովհան. Ոսկեբեր. ի Մեկն.
Մատ. ՒԼ. 33. յեր. 595):

''Խուճեալ յերրորդ ժամու օձին՝ զիտաս նախնւոյ մերն Ադա-
յի, ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նո-
ցին. ի սոյն ժամու տէրն ի խաչին՝ զի քաւեսցէ զմեղս նոցին, և
յորժամ եւ Ադամն հին՝ եղ զաւազակն ի մէջ դրախտին,,: (Ն
Ճ արականի):

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Ընբրահամ հայր հաւատոյ, և վէնոօն Իսահակայ:

Ած.—Յո՞ր կրօնս էին մարդիկ յետ բաժանման լեզուաց:

Պ.—Ի կռապաշտութեան:

Ած.—Չէր ոք ի նոսա ճշմարիտ աստուածապաշտ:

Պ.—Այո՛ն՝ բայց սակաւք ոմանք. որպիսի ոք էր Ընբրահամ որդի Թարայի, որդւոյ Նաքովրայ, որդւոյ Սերուքայ: (Ծննդ. ԺԱ. 27):

Ած.—Ո՞րչափ ատենգաբանի անունս Ընբրահամ:

Պ.—Հայր ազգաց բազմաց:

Ած.—Ո՞ր բնակէին նոքա:

Պ.—Յաշխարհին Քաղդէացւոց: (Ծննդ. ԺԱ. 31):

Ած.—Ո՞ր գինի չուեցին:

Պ.—Ի Խառան: (Ծննդ. ԺԱ. 31):

Ած.—Ո՞րչափ պատահեցաւ Ընբրահամու ի Խառան:

Պ.—Երեւեցաւ նմա Աստուած և ասէ. Ել դու յերկրէ քումմէ, և ի տանէ հօր քոյ. և եկ յերկիրն, զոր ցուցից քեզ. և օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի: (Ծննդ. ԺԲ 1—3):

Ած.—Ո՞ր ի Խառանայ ելեալ գնացին:

Պ.—Յերկիրն Քանանացւոց: (Ծննդ. ԺԲ. 5):

Ած.—Մինչև ո՞ր շրջագայեալ հասին:

Պ.—Մինչև ի Սիւքեմ ի կաղնին բարձր: (Ծննդ. ԺԲ. 6):

Ած.—Ո՞րչափ աւ Ընբրահամ ասաց Աստուած զաւրութիւն զայնմանէ:

Պ.—Ասաց զաւակի քումմ տաց զերկիրս զայս: (Ծննդ. ԺԲ. 7):

Ած.—Ո՞ր հաձեցաւ նա բնակիլ:

Պ.—Մեկնեալ անտի ի լեառն ընդ արևելս ի Բեթէլ, եհար անդ վրանսն իւր յանդիման Ծովուն՝ և Ընդէն ընդ արևելս. և շինեաց անդ սեղան Տեառն, և կոչեաց զանուն Տեառն: (Ծննդ. ԺԲ. 8):

Ս.—Ընտի ոչ բնակեցաւ:

Պ.—Ո՞ւստի երեսաց սովու երկրին, էջ Աբրահամ յԵգիպտոս բնակիլ անդ պանդխտութեամբ. վի զօրացաւ սովն երկրին. և եղ Աբրահամ յԵգիպտոսէ ինքն և կինն իւր և ամենայն որ ինչ էր նորա. և Ղովտ ընդ նմա յանապատն. և մեկնեալ ի Ղովտայ՝ զի էր մեծատուն յոյժ. չու արարեալ եկն և բնակեցաւ առ կաղնուջն Մամբրէի. որ է ի Քեբրոնէ. և շինեաց անդ տեառն Աստուծոյ սեղան. և Ղովտ նստաւ ի քաղաքի միում կողմանցն. և բնակեցաւ ի Սոդոմ:

Ս.—Եւ զի՞նչ լուր ապա առ Աբրահամ եհաս:

Պ.—Իբրև լուաւ Աբրահամ թէ՝ գերի վարեցաւ եղբայր իւր Ղովտ. համարեցաւ զընդոծինս իւր երեք հարիւր և ութին և տասն, և պնդեցաւ զկնի նոցա զիշերի ինքն և ծառայք իւր. և եհար զնոսա մինչև ցՀոբազ. որ է ի ձախմէ Դամասկոսի. և դարձոյց զամենայն աւարն Սոդոմացւոց, և զՂովտ զեղբայր իւր. և զամենայն սեպհականս նորա դարձոյց և զկանայս և զժողովուրդն: (Ծննդ. ԺԴ. 14):

Ս.—Յորժամ գայր Աբրահամ ի կոտորածէ չորեցունց թագաւորացն ո՞ եւ ընդ առաջ նորա:

Պ.—Աբքայն Սոդոմացւոց. և Մելքիսեդեկ աբքայ Շաղեմայ եհան հաց և գինի. քանզի քահանայ էր Աստուծոյ բարձրելոյն, օրհնեաց զԱբրահամ և ասէ. օրհնեալ է Աբրահամ յԱստուծոյ բարձրելոյ՝ որ արար զերկինս և զերկիր. օրհնեալ Աստուած բարձրեալ որ մատնեաց ի ձեռս քո զթշնամիս քո: Եւ ետ նմա տասանորդս յամենայնէ:

Ս.—Դո՞ր որդի Աբրահամու:

Պ.—Ո՛չ. ուստի և ցաւագին սրտիւ գոչեայ, Տէր Տէր. զինչ արասցես ինձ, զի ես կորնչիմ անորդի. վասն զի ոչ ետուր ինձ զաւակ. և արդ՝ ընտօճինն իմ ժառանգեսցէ զիս: (Ծննդ. ԺԵ. 2. 3):

Ս.—Օ՞րինչ ասաց նմա Աստուած:

Պ.—Ո՛չ դա ժառանգեսցէ զքեզ, այլ որ ելանէ ի քէն՝ նա ժառանգեսցէ զքեզ: (Ծննդ. ԺԵ. 4):

Ս.—Ո՞րով հաւատարմացոյց Աստուած զԱբրահամ:

Պ.—Ւհան արասքս և ասէ. հայեաց ընդ երկինս և թուեա զաստեղս, և տես թէ կարասցե՞ս թուել զոսոսա. և ասէ ցնա. այսպէս եղիցի զաւակ քո. և հաւատաց Աբրահամ յԱստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն:

Ս.—Յորժամ նստէր Աբրահամ առ կաղնեաւն Մամբրէի, ի դուրս խորանին իւրոյ, ո՞ երևեցաւ նմա Աստուած:

Պ.—Այո, ամբարձեալ զաչս իւր և տես, ահա արք երեք կային ի վերոյ քան զնա. և իբրև տես, ընթացաւ առաջի նոցա ի դրանէ խորանին իւրոյ. և երկիր եպագ ի վերայ երկրի և ասէ. Տէր եթէ գտի շնորհս առաջի քո. մի զանց առներ ի ծառայէ քումմէ: (Ծննդ. ԺԸ. 2):

Ս.—Իբրև հաճեցան արքն լուանալ զոտսն, զովանալ ընդ ծառսին, ուտել զհաց և գնալ զճանապարհս իւրեանց, ապա զի՞նչ արար Աբրահամ:

Պ.—Գնեցաւ Աբրահամ ի խորանն առ Սարրա, և ասէ ցնա. փուռթա և թրեա զրիւս երիս ալեր նաշհոյ, և արա նկատ. և յանդիման ընթացաւ Աբրահամ, և եառ որթ մի մատաղ և բարի և եհա ցպատանին. և փութացոյց վաղվազակի հատուցանել. և եառ կովի և կաթն և զորթն զոր հատոյց. և

եղ առաջի նոցա և կերբին. և նա կայր առաջի նոցա ընդ ծառո-
վքն: (Ծննդ. ԺԸ. 6—9):

Ա.—Յորժամ ուխտիւք առնուցաք խոստացան տալ նմա
զառակ, ոչ գնացին արքն այնոքիկ:

Պ.—Դարձեալ ալանցն անտի, եկին ի Սոդոմն՝ և Աբրա-
համ կայր առաջի տեառն աղաչել զտէր, չկորուսանել զար-
դարն ընդ ամբարշտին: (Ծննդ. ԺԸ. 22—23):

Ա.—Իբրև ոչ գտաւ ի յիննից պակասակ մինչև տասան
արդար, զի՞նչ եղև:

Պ.—Եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ կործանել զքաղաքն
ամենայն վասն անբնական գաղջի մեղացն, զորս գործէին. և
բռնադատեալ Ղովտ տարաւ զնոսա ի տուն իւր. և արար նո-
ցա ընթրիս և բաղարջ եփեաց նոցա և կերին:

Ա.—Մինչ չև ի քուն մտեալ էր նոցա զի՞նչ առնէին ալքն
Սոդոմացիք:

Պ.—Պատեցին զտունն յերիտասարդաց մինչև ցծերս՝ զի-
տել զնոսա՝ որ մտին առ Ղովտ ի գիշերի. և ի փակիլ դրանցն
ոչ կարէին մատանել ի տունն. հարան կուրութեամբ ի փոքուէ
մինչև ցծերն. և լքան խնդրել զդուրսն. և առաւօտու հանեալ
հրեշտակաց զնոսա (պղծեցան) ի Սոդոմայ, և ասեն. տղերս
ցո զանձն քո. մի գառնայցես յետս. զերծիր ի լեռանն, գուցէ
ընդ նոսա ըմբռնիցիս. և տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր
ծծումբ և հուր ի տեառնէ յերկնից. և կործանեաց զքաղաքսն
զայնոսիկ, և զամենայն կողմանսն և զամենայն բնակիչս քա-
ղաքացն, և զամենայն բոյս երկրին. և դարձաւ կինն Ղովտայ
յետս. և եղև արձան աղի: (Ծննդ. ԺԹ. 4. 26):

Ա.—Պատարեցաւ խոստումն Աստուծոյ առ Աբրահամ:

Պ.—Ասէ. ի լրանալ ժամանակի ահաւասիկ յղացաւ Սա-
ռա և ծնաւ Աբրահամու որդի ծերութեան. և կոչեցաւ անուն
նորա Իսահակ: (Ծննդ. ԻԱ. 2—3):

Ա. Ո՞րիմբդ թարգմանի անուանս Իսահակ:

Պ.—Ծաղր, խնդութիւն և ծաղիկ:

Ա.—Ո՞րչափ ատեր Աբրահամ ընդ որդի իւր Իսահակ:

Պ.—Թվիւառեաց վեցհարիւր ութերորդի. որպէս պատուի-
րեաց նմա տէր Աստուած: (Ծննդ. ԻԱ. 4):

Ա.—Եթէ այսոցիկ ամենայնի զի՞նչ ասաց Աստուած առ
Աբրահամ:

Պ.—Ա՛ռ զորդի քո սիրելի, և գնա՛ յերկիր
բարձր, և հանցես զդա անդ յողջակէզ ի վերայ միոյ ի լերանց.
յորոց ասացից քեզ: (Ծննդ. ԻԲ. 2):

Ա.—Հնազանդեցաւ Աստուծոյ Աբրահամ:

Պ.—Ասէ. առաւիկիա յուսով առնուցուն՝ յարիաւ ընդ ա-
ռաւօտն, և առ ընդ իւր երկուս ծառայս և զԻսահակ որդի իւր,
և պատառեաց փայտ յողջակէզ. յարիաւ և գնաց. և ինն ի
տեղին, զոր ասաց նմա Աստուած: (Ծննդ. ԻԲ. 3):

Ա.—Ի ժամանելն անդր զի՞նչ արար Աբրահամ:

Պ.—Յաւուրն երրորդի ամբարձ զաչս իւր. և նայեաց զանդին
ի հեռաստանէ. և ի բաց առեալ զնայ ողջակիզին ի զրաս-
աէն՝ եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ:

Ա.—Ո՞րչափ էին գործիք սպանման ողջակիզին:

Պ.—Փայտ, հուր և սուր:

Ա.—Իբրև եաս Իսահակ զդործիսն. զի՞նչ առ հայրն ասաց:

Պ.—Հայր, ահա՛ հուր, և ահա՛ փայտ. ո՞ւր է ոչխար յող-
ջակէզ:

Ա.—Ո՞րչափ հայրն պատասխաներ ընդ աղխորով հար-
ցումնն որդւոյն:

Պ.—Ասուած անցեալ իւր ոչխար յողջակէզ, որպիսի՝ Օձայս ասայ. և գնացին հասին ի միասին ի տեղին, զոր ասայ Ասուած: (Ծննդ. ԻԲ. 8—9):

Ս.—Զկասէի՞ն քայլք Ռահակայ յելանելն նորա ի լանուրն:

Պ.—Այո, կասէին ընդ ծանր բեռամբ վայելին:

Ս.—Ասեալ ի տեղին. զի՞նչ ալար Աբրահամ:

Պ.—Շինեաց սեղան, և եդ ի վերայ զփայտն. և կապեալ զՌահակ զորդի իւր՝ եդ զնա ի սեղանն ի վերայ փայտին. և ձգեալ զձեռն՝ իբրև կամէր հանել զսուրն և զնուալ զորդի իւր, արգել զնա հրեշտակ տեառն յերկնից, և ասէ. Աբրահա՛մ, Աբրահա՛մ. մի՛ մխոր զձեռն քո ի պատանեակդ. զի այժմ գիտացի՝ թէ երկիւղած ես դու Աստուծոյ. և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ: (Ծննդ. ԻԲ. 9—12):

Ս.—Զի՞նչ ապա արար Աբրահամ:

Պ.—Ամբարձ զաչս իւր՝ և ետես, և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սարեկայ զեղջերացն, զոր առեալ եհան յողջակէզ փոխանակ Ռահակայ որդւոց իւրոյ:

Ս.—Զի՞նչ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Աբրահամ:

Պ.—Տէր եսես. զի ասիցեն ցայսօր, ի լերինս յայսմիկ տէր երևեցաւ: (Ծննդ. ԻԲ. 24):

Ս.—Վանրիցս անգամ ձայնեաց հրեշտակ Տեառն յերկնից առ Աբրահամ:

Պ.—Ներկից անգամ՝ և ասէ. յանձն իմ երդուայ ասէ Տէր. փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ, այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ՝ և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ, և իբրև զաւազ առ ափն ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց: Եւ

օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի, փոխանակ զի՝ լուար ձայնի իմոյ: (Ծննդ. ԻԲ. 16—18):

Ս.—Ռահակ եմո՞ւթ ի ներքոյ լծոյ օրինաւոր ամուսնութեան:

Պ.—Այո. յորժամ Աբրահամ երդմնեցոյց զծառայն իւր զերեց տան իւրոյ. զիշեան ամենայն ընչից նորա ի վերայ երանեաց իւրոյ ի Տէր Աստուած երկնից և ի Տէր Աստուած երկրի:

Ս.—Ծառայն այն, զի՞նչ արար վասն երդմանն:

Պ.—Առեալ յամենայն բարութեանց տան իւրոյ, յարուցեալ գնաց ի Միջագետս ի քաղաք Նաքովրայ, և տուեալ օժիտս Ռեբեկայ դստեր ոսկիս՝ մի մի ըստ դահեկանի ձուլոյ. և երկուս ապարանջանս ի ձեռս նորա. անօթս ոսկւոյ և անօթս արծաթոյ և զհանդերձս. և ընծայս եղբարցն նորա և մօրն. և առեալ զՌեբեկայ էած առ տէր իւր Ռահակ: (Ծննդ. ԻԴ. 10. 22):

Ս.—Ի տեսանելն Ռեբեկայ զՌահակ ի զբօսնուլն ի դաշտի անդ ընդ երեկս՝ զի՞նչ արար:

Պ.—Ետարց ծառայն և ասէ. ով է այրն՝ որ գայ ի դաշտին ընդ առաջ մեր. և տեղեկացեալ թէ նա է տէր իւր, արկաւ զիւրև զձորձս: (Ծննդ. ԻԴ. 65):

Ս.—Ծառայն, յորժամ առեալ զձեռանէ Ռեբեկայ, ետ ի ձեռն Ռահակայ. զի՞նչ արար Ռահակ:

Պ.—Ներմուտ ի տուն Սառայի մօր իւրոյ. և էած զՌեբեկայ, և եղև նորա կին. և սիրեաց զնա. և մխիթարեցաւ Ռահակ վասն Սառայի մօր իւրոյ: (Ծննդ. ԻԴ. 67):

Հ.—Ովի՞նչ նշանակէ կռապաշտութիւն որդւոց մարդկան։

Պ.—Ողախաս մեղաց, զորոց խօսի հրեշտակակրօն վարդապետն մեր սուրբն Եպարեկացի. ‘‘Նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի և մեղաց ախոյի,,։ (Եպար. ԻԸ. 2)։

‘‘Ո՞ման ղէ ամենայն ոք իւրում ուսկանի զոհէ, և զիւրն ախոյս աստուածացուցանէ. ամբոխելով իւրաքանչիւր ոք ի կամ մտաց իւրոց,,։ (Խոսրով. ի Մեկն. ժամս. յերես 341)։

‘‘Եւ զայսոսիկ ասելով իրրև գլուխ և աւարտ ի վերայ դնէ այսոցիկ զանօրէն կռապաշտութիւն. որով մարդիկ խաբեալ զարտուղի գնացին ի ճշմարիտ գիտութենէ, և ըստ իւրաքանչիւր ախոյից զոր սիրեցին, աստուածս հաստատեցին և պաշտեցին,,։ (Սարգ. Շնորհ. Ընդ. Պետր. ճառ իններորդ ե. 3)։

Հ.—Ո՞ւմ օրինակ գտանի Աբրահամ։

Պ.—Հօր Աստուծոյ երկնաւորի. ըստ այնմ՝ ‘‘Ոչ սա է հայր քո. որ ստացաւ զքեզ, արար զքեզ և ստեղծ զքեզ,,։ (Ա. Օրին. ԼԲ. 6)։

Եւ երանելին Պօղոս ասէ, ‘‘Ընդ մեզ մի է Աստուած հայր, որ է յամենայն, և մեք ի նա,,։ (Ա.ռաջին Կորն. Ը. 6)։

‘‘Տէր հայր մեր, տէր դաստուօր մեր, տէր իշխան մեր, տէր թագաւոր մեր, տէր փրկիչ մեր՝ և նա փրկեսցէ զմեզ,,։ (Եսայի Ը. 22)։

‘‘Ամենիմաստ ամենից հայր,,։ (Ի Շարականի)։

‘‘Տէր Աստուած հայր անակնկիզեն, անեզ անմահ բնութիւն,,։ (Ի Մեծ. Մաշտոց. կանոն օրհնութեան խաղողոյ)։

Հ.—Ովի՞նչ նշանակէ մի միայն արդար գոլն Աբրահամու։

Պ.—Արդարութիւնն Աստուծոյ, զի նա միայն է արդար և բարի, և բաց ի նմանէ չէք այլ ոք՝ ըստ գրեցելոցն. ‘‘Դու միայն ես, որ մատակարարես ամենայնի զամենայն, դու միայն ես արդար՝ և ձշմարիտ ամենակալ յաւիտենից,,։ (Ա. Մակ. Ե. 25)։

‘‘Ով ոչ գոյ սուրբ իրրև զԱստուած մեր, և ոչ գոյ սուրբ բաց ի քէն,,։ (Ա. Թագ. Ա. 2)։

‘‘Սուրբ, սուրբ, սուրբ ես ձշմարտապէս և ամենասուրբ,,։ (Խորհրդատետր)։

‘‘Աստուած ի վեր է քան զսրբութիւն. . . սուրբ է Աստուած՝ ոչ որպէս մեզ է հասանելի, այլ որպէս ինքեան միայնում է պիտի,,։ (Խոսրով ի Մեկն ժամս. Գ. ուկ. ԺԲ. 19)։

‘‘Ոչ ի միոյ կողմանէն սուրբ է, և ի միւսմէն ոչ այնպիսի. այլ ամենևին յատակ, բոլորովին ազատ, բնութեամբ և էութեամբ ունի զսրբութիւնն, ոչ ևկամուտ և ոչ ստացական. և ամենեցուն սրբութիւն ի նմանէ է՝ մարդկան և հրեշտակաց,,։ (Սարգ. Շնորհ. Ընդ. Պետր. ճառ երորդ)։

Հ.—Ովի՞նչ է խորհուրդ բնակելոյն Աբրահամու յերկրին Քաղդէացւոց ի Խառան և գնալոյն յերկիր, զոր եցոյց նմա տէր։

Պ.—Ի խորհուրդ անկանելոյն Ադամայ ի դրախտէ յաղցաւոր կենցաղս և ի դժոխս, և անտի ի ձեռն Խանին յերկիր Ասեաց յԵրուսաղէմ վերին. նոյնպէս և յամենայն տեղիս գոլոյն Աստուծոյ. վասն զի՝ չէք բնաւ տեղւոջ առանց նորա. ըստ այնմ՝ ‘‘Եթէ ելանեմ յերկինս, դու անդ ես. և եթէ իջանեմ ի դժոխս, և անդ մօտ ես,,։ (Սաղմ. ՃԼԸ. 8)։

‘‘Ով եթէ ծածկեսցին ի դժոխս, անտի ձեռն իմ կորզեսցէ զնոսա. և եթէ ելանիցեն յերկինս՝ և անտի իջուցից զնոսա. և եթէ թաղիցեն ի բարձունս Կարմելայ, և անտի յուղեցից, և առից զնոսա,,։ (Ամովս. Թ. 2)։

‘‘Ով ամենայն ուրեք է Աստուած՝ գիտեմ, և եթէ որպէս ոչ գիտեմ,,։ (Յովհան Ոսկեբերան ի գիրսն յաղագս անհաս.)։

«Յամենայն տեղիս է տէր, և ոչ յամենայն տեղիս է. յամենայն տեղիս մերձ իմաստութեամբ որով ասացեր. և ոչ յամենայն տեղիս. զի ոչ լիցիցես է»: (Նւագր. ի Ա՛պրիլ բակոսն. Ը):

«Ընտահման և անոլորտ է բնութիւն աստուածութեանն՝ յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ. և չիք ինչ այն տեղի որ թափուր է ի նմանէն.. զի յամենայնի լի է և պատարուն»: (Սարգ Շնորհ ի Մեկ. Ը. պետ. ձառ ութերորդ. գ. 19):

«Ընդ է նովաւ լցեալ երկին
Երկիր և խորք անդնդային
Նա և ներքոյ յամենայնի
Նա արտաքոյ արարածի»:

(Ներսէս Շնորհ. ի բան հաւատոյ):

Ա՛.—Ո՞րչափ նշանակէ շրջելն Աբրահամու զերկրաւ Քանանացւոց, և գալ հասանիլ ի Ռեթել, և հարկանելն անդ զհօրբան իւր:

պ.—Նշանակէ զապագայ գալուստ միածնին ի Ա՛օրէ, և շրջելն ընդ ամենայն կողմն Երուսաղեմի, և զվերանալն ի գողգոթայ՝ որ է ի Ռեթել. ըստ այնմ՝ «Նա եհաս ի տեղն ի, և ննջեաց անդ. զի արեւն ի մուտս էր, և էառ ի քարանց տեղւոյն, և եդ ի սնարս իւր և ննջեաց անդ»: (Ծննդ. ԻԸ. 11: Լ. Ե. 1):

«Առնելոյ Յակոբ մահաքերին՝ այն որ բուսաւ ի մէջ դրբոխոին. փոխան բարձեր զիայս խաչին, ի գողգոթայ Հաներ տեղին. զիմ առ ի մեղս անկեալ զոգի՝ և Յանրագոյն բարձող բեռին. բարձ ի յուսոյդ ըստ ոչնարին՝ հան ի յերկինս յուխտեալ տեղին»: (Նրբ մեծի ուրբաթու):

Ա՛.—Ո՞րչափ ցուցանէ պանդխտութեամբ բնակիլն Աբրահամու յՆգիպտոս յաղագս սովուն,

պ.—Ո՞րպանակիլն բնութեանս Ադամայ սովալլուկ ի նեղութեան աշխարհիս, որ է յՆգիպտոս, և կրկին զչարչարանս զաղտան դիպուածոց նորա. մինչև հարկ եղև Աստուծոյ գալ մարմնով և շրջիլ ի վերայ աշխարհի ընդ մեզ և ընդ հարսն մեր. ըստ դրեցելումն Սաղմոսերգոյն Դաւթայ. «Պանդուխտ եմ ես առաջի քո նշդեհ և անցաւոր. որպէս ամենայն հարք եմ ես առաջի քո նշդեհ և անցաւոր. որպէս ամենայն հարք իմ»: (Սաղմոս. Լ. 14:—Խօսրով ի Մեկ. ժամակար. գլուխ 23):

«Պանդխտութիւն կոչէ զաստի կեանս ըստ մարգարէին, որ զինքն և զամենայն հարսն պանդուխտս կոչեաց առ որ հարքն էին»: (Խոսրով ի Մեկն ժամա. գլուխ 23):

«Լցջ այժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առնոսա և մխիթարեա զորս ի պանդխտութեան վայրս նժդեհ և անցաւոր կենօք տառապին»: (Ներ. Լամբ. ի փառս գալստեան սուրբ Ա՛ոգւոյն Աստուծոյ):

«Կամ զօտարութիւն սրբոյ ասէ, ի կենցաղոյս իրաց. քանզի դիպուած վարկան զինքեանց գալն յաշխարհս, և ոչ տեպհական տեղւոյ»: (Յովհան. Ծործոր. ի Մեկն. Մատ. ԻԸ. 3):

«Ընտասուաց խոց մի լռեր տէր. զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի»: (Ի Շարականի):

Ա՛.—Ո՞րչափ նշանակէ վերադառնալն Աբրահամու յառաջին տեղի իւր:

պ.—Դարձումն բնութեանս Ադամայ յառաջին հայրենի յարկան իւր, յորմէ եկ և հեռացաւ, ըստ անառակին՝ յաւետարանական պատմութեան, «Դու եկեալ ի միտս իւր՝ ասէ. քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացակից ք. և ես սատ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ. ասացից ցնա. հայր, մեղայ յերկինս և առաջի քո. և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրև զմի ի վարձականաց

քոց. և յարուցեալ եկն առ հայր իւր,,: (Ղուկ. ԺԵ. 17—20):

,,Ընկնիցէ ոչ գարշէ ի մեղաւորաց, և ոչ զերեսս իւր ի բաց դարձուցանէ,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յակոբ. Ա. 5):

Հ.—Ովքի՞նչ է խորհուրդ զերի վարելոյն Պօղոսայ. և սլենելոյն Աբրահամու զկնի նոցա, կոտորելոյն պատերազմաւ զչորեսին թագաւորս, և դարձուցանելոյն զամենայն սաացուածս նորա. և զկանայս և զժողովուրդն:

Պ.—Ի խորհուրդ ազատութեան ի գազան սանդարամետից և ի դիւաց, յայսոց և ի դերաքրիստոսէ, զերեալ մարդկային բնութիւնս, զոր ազատեալ ի ձեռաց նոցին Հայրն երկնաւոր առաքմամբ Որդւոյն իւրոյ միածնի՝ դարձոյց ի մեղաց և ի դժոխոց. և ի միւս անգամ գալստեանն սպանցէ զչորրորդ գազանն՝ և զհետեւողսն նորին. արկեալ ի լիճ հրոյ, ըստ տեսլեան Դանիէլի մարգարէին. ,,Նոքա զկնի նորա հայեի. և ահա գազանն չորրորդ՝ ահեղ և զարմանալի՝ և հզօր առաւել. և ժանիք նորա երկաթիք. ուտէր՝ և մանրէր և զմնացորդսն առ ոտն կոտորէր. ինքն առաւել այլակերպ քան զամենայն գազանսն՝ որք յառաջ քան զնա. և եղջիւրք տասն ի նմա,,: (Դան. Է. 7):

,,Որ յայտնեաց Հոգին տեսլեամբ՝ Դանիէլի մարգարէին զմիւս անգամ գալստեանն Քրիստոսի զհորհուրդ,,: (Ի Շար):

,,Որ զչորրորդ գազանն անեղ՝ զապստամբեալն յԱստուծոյ. ծանոյց բարձրեալ զօրութեամբ Աստուածորդւոյն,,: (Նոյն, անդ):

,,Որ զհին աւուրցն Աստուած եռակ՝ նառեալ յաթոռ քրովբէական և զՈրդի ընդ ամպս երկնից եկեալ,,: (Նոյն, անդ):

Հ.—Ո՞ւմ գաանի օրինակ Մելքիսեդեկ քահանայ որ եւ ընդ առաջ Աբրահամու:

Պ.—Յիսուսէ Քրիստոսի աւետեան մերոյ Որդւոյ Աստուծոյ, քահանայապետին յաւիտենից. որոյ ոչ է սկիզբն աւուրց և վախճան կենաց. նորա անմայր յառաջին ծննդեանն, և անհայր յերկրորդին, համբարձեալ յերկինս, և նստեալ ընդ աջմէ Հօր, կայ և ծնայ քահանայապետ յաւիտենից և է բարեխօս վասն մեր. ըստ այնմ, ,,Ներդուաբ տէր և ոչ եւս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և տէր ընդ աջմէ քումմէ,,: (Սաղմոս ՃԺԹ. 4. Եբր. Ե. 1):

,,Եղէ Որդին Աստուծոյ ի ծառայութիւն. զի իւրով մարմնովն լցցէ և կատարեսցէ զամենայն չափս կարգացն հանդիսի արդարութեանցն. զի միանգամայն բարձցէ զկարիս տկարութեան մարմնոյ մերոյն. և միանգամայն ինքն ինքեան քահանայասցի Հօր իւրում. և միանգամայն ինքեամբ հաճեսցէ մատուսցէ զինքն պատարագ հաշտութեան Հօր իւրում. և նովին պատարագաւն մատուսցէ ընդ նմին զհաւատան խոստովանութեան մերոյ,,: (Գրիգ. Լուս. ՅԱգաթ):

,,Յիշեսցուք զաւետեան մերոյ մարգամարդութիւնն՝ որ Աստուծոյ գոլով Որդի սուրբ, անեղ, անարատ, գտեալ ի մեղաւորաց և վասն մեր մեղաւորացն իւրով մարմնովն կրեաց զչարչարանս խաչին, ինքն քահանայապետ և ինքն պատարագ ինքեան գոլով,,: (Խոսրով. ի Մեկն. Յաղագ):

,,Եւ զի՞ արդ զնախանձն վհտից մոռացայ. զծառայն մեծիմ՝ և զկերպարան անպարագրելոյդ, ոչ ահա Մելքիսեդեկ յօրինակ ձշմարտիդ ահաւորութեան՝ ի Զիմաստանայեացն երինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյդ Աստուծոյ զեահզեալ կացին, ի վերնոց անտի հրեշտակաց՝ ի պտղոց տեղւոյն իւղեցաւ. ուստի շրմի սկզբնահօրն պաշտպան՝ եպիսկոպոսական աքրայատուիւ ճոխութեամբ ի քէն հանդերձեալ նստաւ, մինչև յայտ-

նեցար երեւեալ լսմամբ համայն իսկութիւն ապամային կնաւորդութեանդ,,։ (Նարեկ. Գ. Ո. 5)։

,,Ընդ օրինակին Քրիստոսի Մելքիսեդեկի քահանայապետին, դասք քահանայից բարձր արարէք զ՚ոգին ձշմարիտ,,։ (Ի Հարականի)։

՚.—Ո՞ինչ նշանակէ հայ և գինի հանելն Մելքիսեդեկի առաջի Աբրահամու։

պ.—Ո՞տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զվերկագործ խորհրդոյ մարմնոյ և արեան իւրոյ կատարելն ի սուրբ վերնատունն՝ բաղարջ հացիւ և անապակ գինեաւ. զոր առեալ զնշանակն մարմնոյ և արեան մատոյց պատարագ ՚օրն երրիներորդի. և պատուիրեաց աշակերտացն զայն առնել ի յիշատակ մահուան իւրոյ. ըստ այնմ. ,,Ո՛ւր իրրև երեկոյ եղեւ՝ կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտան . . . . . Ո՛ւր ինչդեռ ուտէին նոքա, էառ Յիսուս հաց. օրհնեաց և եբեկ. և տո աշակերտացն՝ և ասէ. առէք, կերայք, այս է մարմին իմ. և առեալ բաժակ գոհացաւ՝ և ետ նոցա՝ և ասէ. արբէք ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց։ (Մատ. ԻՕ. 20։—28։ —Մարկ. ԺԴ. 22։ Ղուկ. ԻԲ. 20։ Ա. Կորնթ. ԺԱ. 23 —24)։

,,Երժան է և վհատն անխմոր և գինին անապակ հանել ի սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Դրիդորի. զի սուրբ Լուսաւորիչն յօրինականէն բերեալ զայս՝ առաքելաբար հրաման ետ կատարել իւրոյ վճռակերպին. և մեզ ի նմին պարտ է յարանալ, և չառնել նորաձեւս ինչ։ (Յովհ. Իմաստ. ի կան. Ղ. տես. ի Պատմ. հայ. հատոր, Բ. յերես 649։—Մնձ. Վարդ. ի Մեկն. Աղմսաց. ՃԽԹ. 4)։

՚.—Ո՞ինչ նշանակէ ասելն Ստուծոյ. զաւակի քումմոց զերկիրս զայս։

պ.—Զաւակն է որդին Ստուծոյ Յիսուս Քրիստոս. և երկիրն բնակիչք աշխարհի, որոց հասանելոց էր օր, յորում լուսաւորեալ նոցա լուսով փառաց Աստուածութեան, դառնալոց էին առ ձշմարիտն Ստուած, և լինելոց էին ժառանգք Ստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի, ըստ այնմ. ,,Դա՛ս ելիցէ ձեզ ի հայր, և դուք եղիջիք ինձ յուսատիս և ի դատիս, ասէ տէր ամենակալ,, (Ա. Պօրնթ. Ը. 17)։

,,Ո՛վ եղեցի յաւուրն յիսնից յայնմ լեառն տեառն, և տուն Ստուծոյ ի վերայ գլխոց լերանց, և բարձրասցի ի վերայ բլրոց, և եկեսցեն ի նա ամենայն հեթանոսք,, (Եսայ. Ի. 2)։

,,Դա՛ եղեցին ինձ ի ժողովուրդ, և ես եղէց նոցա Ստուած,, (Երեմիայ. ԼՐ. 38)։

՚.—Ո՞ւմ օրինակ են ընդոծինն և հագարածինն Աբրահամու։

պ.—Նոյ կաթողիկոսին, քանզի հին կաթողիկոսն ծառայ տուեալ էր Մովսիսի, որ և ստուեր կոչի նորոյ կաթողիկոսին. ըստ այնմ, ,,որ է առակ օրինակի. զի այսինքն են երկու կտակարանք. մին ի լեռնէ Սինայ ի ծառայութիւն ծնեալ, որ է Հագար։ (Գաղատացւոց,, Դ. 24)։

,,Ո՛վ գրեալ է թէ Աբրահամու երկու որդիք էին. մի յաղախնոյ անտի, և մի յազատէն. Այլ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր. և որ յազատէն՝ ըստ աւետեաց,, (Նոյն. Դ, 22. 24)։

,,Ո՛րանզի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ո՛չ պնոյն կերպարանս իրացն։ (Եբրայ. Ժ. 1)։

,,Ընտիր օրէնս, թուի ինձ եթէ զՄովսիսին ասէ. զոր Աստուած ետ և Մովսէս առ ժողովուրդն. սակայն ո՛չ էին ազատութեան օրէնք, այլ դատապարտութեան և յանդիմանու-

թեան. զի ոչ կարացին գրաւոր օրէնք՝ զմարդիկ արդարացուցանել. այլ առաւել իմն վերաւորեցին անիծիւք և կրճատութեամբ մարմնոյ. զի ակն ընդ ական ասաց Նոցա, և ատամն ընդ ատամանն, և արիւն ընդ արեան, և այլս այսպիսիս դատապարտութեան բաղումն օրինացն,,: (Սարգ. Հ. Նորհ. ի Մ. Կոն. Յակոբ. ճառ. հինգերորդ. Ե. 25):

Հ.—Իսկ հարազատ ժառանգն Յաճախակ ոչ մերձ է օրինակ:

Պ.—Նորոյն կտակարանի և վերինն Երուսաղեմի մօր մերոյ ամենեցուն. յորմէ ծնեալ եմք ազատ ժառանգորդք Հօրն երկնաւորի. ըստ այնմ. ,,Ոչ մեզ ձեզ ոչ սիրեսցին, քանզի ոչ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք,,: (Հռոմ. Զ. 14):

,,Եղբարք, չեմք որդի աղախնոյն, այլ՝ ազատին. ազատութեամբն՝ որով Քրիստոս զմեզ ազատեաց,,: (Գաղ. Դ. 3).

,,Յայնժամ՝ այսինքն մինչև ցՔրիստոս նշմարանք էին առաքելական օրէնք՝ և ոչ մարմինք. և խորհուրդք էին, և ոչ լրումն ձշմարիտ,,: (Եբրեմ. ի Մ. Կոն. Գ. Եսա. գլ. 4):

,,Եակ կատարեալս ասէ զօրէնսն Հեսայեանին, որ Քրիստոսիւ տուաւ և ոչ Մովսիսիւ. այն որ ազատութեան օրէնքն են և արդարութեան և որդեգրութեան. զի երկնաւորք են՝ և յերկինսն զմեզ հայեցուցանեն,,: (Սարգ. Հ. Նորհ. ի Մ. Կոն. Յակոբ. ճառ. հինգերորդ. Ե. 25):

,,Օրէնքս մովսիսական զմեզ հայեցուցանէին առ աւետարանն, նմին իրի իբրև առ երևեցաւ, նա որ զմարդիկ ոչ կարաց ազատել, տերի նա և ի բաց գնաց,,: (Սարգ. Հ. Նորհ. ի Մ. Կոն. Յակոբ. ճառ. վեցերորդ):

Հ.— Ո՞վ է նշանակէ ասելն Աստուծոյ. ոչ ժառանգեսցէ դա:

Պ.—Ո՛այն. թէ ոչ ոք կարէ ժառանգ Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի լինել առանց ձշմարիտ հաւատոյ և աստուածային պատուիրանապահութեանց, որպիսիք ոմանք էին Թշնամիքն Քրիստոսի Հրեայք և քահանայք նոցին. ըստ այնմ, ,,Ո՛չ ոչ նմին օրինօքն են աւետիքն Աբրահամու՝ և զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի, այլ՝ ի հաւատոցն արդարութեան: (Հռոմ. Դ. 13):

,,Առնչի կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոյ: (Նոյն, անդ Ժ. 4):

,,Այլ առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած. և որ խնդրեն զնա լինի պարգեւատու: (Եբրայ. Ժ.Ա. 6):

,,Որ թերահաւատէ յԱրդեոյ՝ ոչ տեսանէ զկեանս յաւիտենից . . . այլ բարկութիւն Աստուծոյ ի վերայ նորա քնակեալ է,,: (Գրիգոր Լուս. յԱգաթանգեղոս):

Հ.—Ո՞վ իրլև զաստեղս երկնից լինել որդւոցն Աբրահամու:

Պ.—Երկնային աստեղք կոչին հրեշտակք, որոց ի դասակարգութիւնս դասելոց էր յետ ժամանակաց մարդկայինս բնութիւն՝ առ ի լցուցանել քաջ հովուապետիս զթիւ պակասեալ հարիւրոցն. ըստ այնմ, ,,Որ ասէ արեգական՝ և ոչ ծագէ. և ընդդէմ աստեղաց կնքէ: (Յովբայ Թ. 6):

,,Ընդ յաւօր աստեղք և լուսին ընդ արևու հրճուելով գովեն զլոյսն ի Հօրէ յաւուր ծննդեան լուսոյ մերն,,: (Ի Շարակ):

,,Եւ քանի մեծ է այս խորհուրդ ի փրկութիւն բանաւորաց՝ հրեշտակաց և մարդկան առ հասարակ կատարեալ. յերկուց սեռից ի միասին յարմարութիւն: (Նոյն, անդ. յերկրորդ ծաղկազարդ):

,,Հրեշտակք երկնից փափագին հանդիսի կատարման սոցա. որք ի մահուն իւրեանց կենդանացան, ելին ի կամարն երկնից,

խառնեցան ի գունդս զուարթնոց»։ (Նոյն, անգ կանոն Մարտիրոսաց)։

Ա.— Ամէն գառնին օրինակ երեք արքն որոց ընդ առաջ կալ Աբրահամ. և երկիրպագեալ մի աեր դաւանելոց։

Պ.— Երկրպագելի ամենասուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն, մի տէրութիւն, մի իշխանութիւն, մի զօրութիւն և երկրպագութիւն յամենայն արարածոց երկնաւորաց և երկրաւորաց։ ըստ այնմ, «Նա ասէ գարձեալ Աստուած զՄովսէս. այսպէս ասասցես ցորդիսն Իսրայելի. Աստուած հարցն ձերոց, Աստուած Աբրահամու և Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ առաքեաց զիս առ ձեզ. այս է անուն իմ յաւիտենական և յիշատակ ազգաց յազգս»։ (Ելից. Գ. 15—16։ —Եսայի Ը. 3)։

«Երիք անձինք . . . մի իսկութիւն, մի էութիւն, մի աստուածութիւն»։ (Գրիգ. Լուս. յԱգաթան)։

«Խոստովանիմք համագոյ և անեղ զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ յերիս անձնաւորութիւնս բաժանեալ և ի մի բնութիւն և ի մի աստուածութիւն միաւորեալ»։ (Սերմ. Ը քննորհ. ի Թուղթն առ Մանուէլ կայսր յեր. 91)։

«Մի է Տէր. և մի Աստուած . . . և ոչ ասաս և ոչ Աստուածս դաւանիմք զսուրբ զԵրրորդութիւնն . . . քանզի մի է տէրութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . . . . Երիս՝ և մի. մի՝ և երիս. քանզի մի էութիւն սուրբ Երրորդութեանն դաւանիմք՝ յերիս կայս կատարեալ անձանց»։ (Ներսիսի Շնոր. ա. վասն հաւատոյ)։

«Պարտ է զմի աստուածութիւնն պահել. և զերիս դէմս խոստովանել»։ (Գրիգ. Աստուածաբան ի ձառն Բ. յայտից հաւատոյ)։

Հ.— Ումեմն օրինակ գառնի խորանն Աբրահամու, յորում օթեւանեցան արքն այնոքիկ։

Պ.— Աստուածածնի սրբոյ կուսին Մարիամու, որ հովանացեալ ի Հօրէ յԱստուծոյ, տաղաւարեալ Հոգւոյն սրբոյ. եղև նոր խառնարան աստուածութեանն Որդւոյն միածնի յիւրոյն սեռնակի. ըստ այնմ, «Յարեւու եհար զխորան իւր. և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ. և ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր»։ (Սաղմ. ԺԸ. 6)։

«Օմարմնաբարն անտեսին, զհոմարարն մեծին, զառաքաբարն սիրական, զխորանն աստուածական, զխառնարանն ճաշակման անապական խրախճանութեան»։ (Գրիգ. Նար. ի Գոմարդ խրմբիցն. Ը)։

«Տաղաւար Հոգւոյն առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա»։ (Ն Ճարտականի)։

«Տապանակ ապրեցուցիչ և տաղաւար արբահամեան աստուածընկալ. այսօր Մարիամ լուսապայծառ միածնին ծընանդ յայտնեալ ծնողաց ի ծնողութիւն քո կոչեցեալ միածին Որդին Աստուծոյ»։ (Նոյն, անդ)։

«Ընտանեկացն տաղաւար՝ բարձող էիցս բարձողին. որ ծնար զԱստուած մարմնով՝ զանմարմնաբար ծնունդն Հօր, բարեխօսեա վասն մեր աստուածածնին Մարիամ»։ (Նոյն)։

Հ.— Օ՛ինչ նշանակէ արանցն այնոցիկ ի միջօրէի ընդ ծառով զովանալն և ի սեղան Աբրահամու ուտելն զորթն, զբաղարջ հացն՝ գկաթն և գկոգին։

Պ.— Օրանին Աստուծոյ ի վախճան ժամանակի բազմիլն ի վերնատան խորհրդ սեղան՝ հանդերձեալոյ Հօր և Հոգւոյն. անխմոր հայիւ և անապակ գինեաւ. որ դեպ է կուսական մարմնոյն աւանդեալ զԼորհուրդ փրկական. Քաղբ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն։ Եւ յորբաթու ի

վեց ժամու աւուրն՝ եղեն պարարակ միածին Որդին զենեալ ի վերայ խաչին. Հայր և Հոգին սուրբ հոտոտեալ ի հատ անուշ շնչ զենուածն անմահին, զովացեալ կերակրեցան. որպէս պատմի ի սուրբ Աւետարանն. ,,Եւ ածէք զնշն պարարակ՝ զնեցէք կերիցուք և ուրախ լեցուք,,: (Ղուկ. ԻԵ. 23):

Եւ որպէս գրէ սրբազան հայրապետն մեր սուրբն Ներսէս. ,,Եւ նախ առ սեղանաւն Աբրահամու՝ որ օրինակ էր վերնատանն սեղանոյ. ոչ խմորուն՝ այլ բաղարջ հացիւ կերակրեցաւ Աստուած, ըստ ասելոյն առ Մառայ. փուքթա թրեա գրիւս երիս ալեր նաշհոյ և արա նկանակս, որ և զնոյն նմանութիւն հացի՝ որպէս անմարմնաբար յայնժամ, այժմ ի մարդեղութեան իւրում մարմին իւր անուանեալ՝ բաշխեաց ըստ հաւատոց որդւոցն Աբրահամու՝ փոխանակ ոլթուն և բաղարջին՝ զոր եկեր ի Մամբրէ ընդ հովանեաւ կաղնւոյն: Եւ զի բաղարջ էր հացն՝ զոր եփեաց Մառայ. յայտ է ի Գովսեան՝ զոր ետ հրեշտակացն. զի գրեալ է թէ՝ բաղարջ եփեաց և ետ նոցա,,: (Տես. Ճնոր. ի Թուղթն առ Մանուէլ կայսր յերես 81):

,,Ըմբռնակիցն Հօր ետ վասն մեր զարիւն իւր, և վասն այնորիկ անապական գինւով՝ զի մի ապականութեան կարծիս յանապական արիւնն Աստուծոյ լեցի,,: (Կիւրեղ. Ընդ. քս. ի գիրս պաշտ):

,,Երժան է և զհացն անխմոր և զգինին անապակ հանել ի սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Դիդորի, զի սուրբ Հոգին աւետարանչն յօրինականէն բերեալ զայս՝ —Առաքելաբար հրամանն ետ կատարել իւրոց վճռակիցն. և մեզ ի նմին պարտ է յարաճուիլ և չառնել նորաձեւս ինչ,,: (Գովս. խմաստ. ի կատնոն Ի. տես ի պատմ. հատոր. Ի. յերես 649):

Հ.—Աթեն զի՞նչ գուշակէ:

Պ.—Օրհնեն Աստուծոյ, որ վարդապետեալ ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և ի սրբոց առաքելոց նորին. զամենեցաւ մեզ իբրև զկաթն անխարդախ կերակուր՝ մկրտութեամբ նորա ծնեալ և տղայացեալ հոգւոց մերոց. ըստ այնմ, ,,Եւ ասէ ցիս որդի մարդոյ՝ բերան քո կերիցէ, և որովայն քո լցցի ի մատենէ այսի՝ որ տուաւ քեզ. կերի զայն, և եղև ի բերանի իմում իբրև զքաղցրութիւն մեղու,,: (Եզեկիէլ. Գ. 3):

,,Իբրև զարդի ծնեալ մանկունս խօսունս, և անխարդախ կաթին փափագեցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն,,: Ա առաջին Պետրոս Ա. 2):

,,Եւ զաստուածային գիտութեան իմաստն ի ձեռն բանից վարդապետութեան որ քաղցր է ի կակղդս քննողաց,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Ա կին. Ա աս. ԻԲ. 4):

,,Որ վասն անդադարձ զօրութեանն և կատարելագործ իմաստութեանն կաթն և մեղր անուանեաց, և ասա ճաշ կոչէ. որում ըղձացաւ տարփող հոգին՝ թէ երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ,,: (Նոյն անդ. ԻԲ. 4: —Խոսրով. ի Ա կին. ժամակարգ. յերես 109: —Սարգ. Ճնորհ. Առաջին Պետրոս ճառ չորրորդ է. 2):

Հ.—Որդին զի՞նչ նշանակէ:

Պ.—Սրբալոյս օծումն իւզոյ դրոշմի մեռանին, զոր պարտ է առնել յանուշահոտ և պատուականագոյն ծաղկանց՝ որպէս առնէ Հայաստանեայցս եկեղեցի՝ ուսեալ Առաքելոցն՝ և ինոցին հետևողաց յառաքելաշնորհ վարդապետաց. ըստ գրեցուածն հրեշտակակրօն սրբոյն Դիդիմոսի Նարեկացւոյն և Ներսիսի շնորհալի Հայրապետին մերոյ, ,,Որ թէպէտ անճառն են հաղորդութիւնք քումդ անուշահոտութեան, և ընդ օրինակաց իրիք ոչ հաւասարի, այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց և

նարդոս ընտիր՝ և եղեգնախունկ խառնեալ հալուէիւ յար-
մարութեամբ հոտոյ քրքմոյ փերթեալ ոսկեզօծ և ալինիւ զի-
նեալ, ոչ սոսկ՝ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս ը-
րինակեցար, փառաւորեալ անուանդ անքնին, որ զամենայն լը-
նուս, և յիրի իմեքէ ամենևին ոչ կարօտանաս»։ (Գ,ոքեկ
Գ.Գ. 11)։

«Գարձեալ՝ գրեալ էր ի գիրս՝ ի բուսեացըեր ձիթոյ՝ զոր շուշ-
մայ անուանեն՝ լինել մեռոնի մերոյ և ոչ ի ծառոց ձիթենեացց։
Եւ այս յիրաւի, և պատճառն ոչ այլ ինչ, այլ զի ի Հայաս-
տանեայց աշխարհն ոչ կան ձիթենիք վասն ցրտութեան օդոյն,
հարկ եղև զայն ինչ ձէթ՝ որ գիւտ է յաշխարհն, ի նմին թա-
նալ մեռոնի, և ոչ ինչ վնաս հոգևոր տեսին այսուիկ»։ (Գ,եր.
Ե.նորհ. ի Թուղթն առ Ս.ստուեկ կայսր. յերես. 62)։

Հ.—Ո՞րինչ ցուցանեն երկու հրեշտակայ գնալն ի Սոդոմ
և կործանելն զքաղաքն ամենայնի։

Պ.—Ոչիջանելն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բանա-
կան հոգւովն անքաժանելի աստուածութեամբն ի դժոխս՝ զօ-
րութեամբ և գործակցութեամբ Հոգւոյն սրբոյ ասելով և
քանզելն զնա. ըստ այնմ, «Ո՛վ ի բարբառոյ տեառն ընձեռե-
ցին Եսորեստանեայք. հարուածովքն զոր հարկանիցէ զնո-
սա»։ (Եսայ. Լ. 31)։

«Ընտրեալ հոյր կենդանի զօրութեամբ առ ի Հոգւոյն՝
այրեաց զքրունս դժոխոց. և զարգելեալսն ի նմա կորղեաց ի կեան-
նըս՝ և պարգևեաց մեզ կենդանութիւն»։ (Ի Հ.արականի)։

«Ընդ յիշեցի այլն այն ի բարի երթև գիմն յուզադրու-
թեան՝ ի տերունի ոտան դիմելոյ, յորժամ հոգւովն էջ յայ-
ցելութիւն ասուածութեամբն անքաժանելիս՝ կինադործել
զանդ խոստովանեալսն, զոր մեռեալքն՝ ահա կենդանեացս ան-
ապակոյս բերին աւետիս»։ (Ղնարեկ. ԽԴ. 5)։

«Նա եկեալ մարմնական հոգւովն անճառ միութեամբ աս-
տուածութեանն՝ ըստ հրամանին առ հայրն ընթանայր . . . .
էջ ի ստորին վայրս մահու՝ առ կապեալ հոգիսն արդարոց. և
քարոզեալ ծանոյց ամենեցուն զաստուածութիւնն ի գշնորհ-
սըն Հօր, և ազատեալ զամենեսեան յիշխանութենէ սատանայի
աղաբեաց զնիդս դժոխոցն հզօրն զապես»։ (Ներ. Լ.ամբ. ի
Մեկն. պատ. յերես 100)։

Իսկ էութիւնն աստուածական,
Ամեալ բնութիւնըս նիւթական,
Ընդակառնէ և միական,
Յորովայնէն միշտ յաւիտեան.
Աստղ հոգի իւր մարդկային,
Որ աւանդեաց առ Հայր յերկինս,
Հանդերձ բնութեամբ աստուածային
Էջ ի հոգիսն որ ի բանտին.
Ծաւալն առեալ զդերոզին
Գարձոյց անդրեն առ հայրենին։
(Ներսես Ե.նորհ. ի բան հաւատոյ)։

Հ.—Ո՞րինչ ցուցանէ պատել արանցն զղուռն արդարոյն
Ղոտայ և հարկանել կուրութեամբ մինչև ցառաւօտ ի բռնա-
դատել զհրեշտեին և զարդարս։

Պ.—Ցուցանէ զմահու և դժոխոց հիացմամբ կալ և ապշե-
լըն. թէ զիա՞րդ ոչ ըմբռնի վիշտն կալանաւորն այն Յիսուս
Քրիստոս եկեալ ի կապանս իմ, յորում ամենայն նահապետք
և մարգարէք արդիւնալ կան ի յաւիտենից. ըստ այնմ՝ «Ո՞ալ-
մացեալ էր մահ. և կայր հիացեալ, նոր իմն տեսիլ տեսանէր
զայն՝ որ էջ ի դժոխս, և ի կապանս նորին ոչ արգելաւ խա-
փանեալ . . . պրծանէին արդարքն ամենայն, զորս կլեալն էր
մահու, զի պատ և պատշաճ էր այնմիկ՝ որ քարոզեցաւ ի գե-

զեցիկ քարոզչաց անտի այս ինքն ի մարդարէից. լինել նոցունց փրկիչ,,: (Կիւրեղ Երուսաղ. կոչ. ընծայ. գլուխ ԺԴ:— Մհծ. վ. արդան ի Մհկն. Սաղմոսաց յերես 13):

—Հ.—Օ.ի՞նչ նշանակէ յառաւօտու հանելն զՊ.ովսա ի Սոդովմայ՝ և պատուիրել. ապրեցուցանել զանձն ի լեառն և չըդառնալ յետս, և Սոդովմայ և Գոմորայ այրելն հրով և ծծմբով ի տեառնէ:

պ.—Օ.արդար հոգւոյն փրկութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի դժոխոց, որք ընկալեալ հաւատացին փրկեցան. և որք ոչ հաւատացին՝ կային և մնացին անհաւատութեամբ ի նոյն. և յաւուրն դատաստանի ևս դառնալոց են ի դժոխս. և զի անվախճան հրով տոչորիլ ընդ սատանայի և ընդ դիւաց այրեցին յաւիտեանս յաւիտենից. որ զառհաւատչեայն աստէն ընկալան. ըստ այնմ. ,,Որ կէն ի բարձունս գնրեալ զգերութիւն մահու, այսօր բաշխի անապականութեան պարգեւք մարդկան,,: (Ի Հ.արակ):

,,Քանզի թերահաւատից ևս բնակեալ եղեցին ի նմա,,: (Սաղմոս. կԽ. 19. թ. 18):

,,Յանմահական ի յայգւոյն ճաշակեցին սուրբ առաքեալքն և զհրաբաժակ դառնութեան այրմանն ընկալեալ Սոդովմ ի յաւուրն տոչորման,,: (Ի Հ.արակ):

,,Ամենաթագաւորն յաղթեալ բռնաւորին զբռամբ ածեալ և զնոյն ինքն զմահն, և որպէս յերկրի՝ ամենեցուն որ էին ի դժոխս, զյաւիտենական փրկութեանն ճանապարհն ծանոյց՝ հաւատալ Աստուած Հայր, և Որդին՝ որ էջն առ նոսա և յարեաւ ի մեռելոց և ի Հոգին սուրբ համագոյ իւր և համապատիւ. և զայնոսիկ՝ որք այսմ հաւատացին՝ ընդ իւր վերացեալ. իսկ զանհաւատսն ի տարւե եթող ի բնակութիւն իւրեանց առաջին. ուր են ոչ ամենեցուն կալանաւորացն. այլ

միայն որոց ծանեան զնա և հաւատացին՝ քաւութիւն շնորհեաց,,: (Ասէ՛ռիանոս ի հաւաք. ի Մհկն. պատմու:—Մհծ. վ. արդ. ի Մհկն. Սաղմոսաց. կԽ. 7. թ. 17):

Հ.—Օ.ի՞նչ նշանակէ արձան աղի լինելն կնոջն Պ.ովսայ, ի յետս դառնալն իւրում:

պ.—Օ.աշխարհասէր և զմեղկ կրօնաւորսն՝ որք կրնան ոչ կարեալ հարկէ գնացեալ ի սուրբ անապատս կրօնաւորել և փրկել զոգիս իւրեանց, ոչ միան այնպէս. այլ դարձեալ սրտիւ ի ցանկութիւնս աշխարհի և յինչս նորա մածեալ քարանձի իբրև զհանուցն Մովաբու. ըստ այնմ, ,,Մի լեցի ուժեք ի ձէնջ յարձան աղի մածնուլ՝ որպէս զկինն Պ.ովսայ՝ յաղագս յետս դառնալոյ յաշխարհական իրս՝ ի հեշտութիւնս ախտից, կամ ի ցանկութիւնս հիւթանիւթից: Քանզի՝ զոր օրինակն յետ պատուհասին ոչ եղև համեմիչ կերակրոց իբրև զաղ, քանզի քաղր էր. և ոչ ի շինուած ինչ պիտանացու եղաւ որպէս ըզքաղր, վասն զի աղ էր. ըստ այնմ նմանութեան՝ և ամենայն ոք որ ելանէ յաշխարհէ որպէս Պ.ովս ի Սոդովմայ, և բարձրանայ ի կարգ կրօնաւորութեան՝ որ է հրեշտակական, որպէս նոքա ճանապարհորդեալք ընդ հրեշտակացն ի լերինն, և դառնայ անդրէն ի սէր աշխարհիս, և յախտս թաւալի մեղաց, որպէս և կինն այն. զի դառնայր դիմօք ի Սոդովմ, ոչ Աստուծոյ է պիտանացու այնպիսին՝ իբրև զկրօնաւոր, և ոչ աշխարհի օրհնաց՝ որպէս զաշխարհական. այլ է անարդ և անպիտան. կոխան եղեալ ի մարդկանէ. որպէս զաղ անհամեալ. բայց ձեր՝ որ անփոփոխ էք յաստուածայինսդ. ամենայն ինչ ըստ առաքելոյն խրատու՝ բարեձևութեամբ և ըստ կարգի եղեցի,,: (Տես. Հ.նորհ. ի թուղթն առ կրօնաւորսն յերես 15):

,,Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ ի Աստուծոյ և ի Հօրէ՝ ասէ. այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան

խրեանց. անարատ պահել զանձն յաշխարհէ,,։ (Յակոբ ա-
ռաք. Ա. 26. 27)։

Ա.—Ո՞ր ինչ ցուցանէ այցելութիւն Աստուծոյ առ Սիրեայ։

Պ.—Ա՛յցելութիւն սիրոյ կուսին Մարիամու՝ առ որ այց եւ
Որդին Աստուծոյ փոխանակ Ե՛ւայի. և եգիտ զնա իւր արժանի
տալ նմա ձերանութիւն, և ծագել զաստղն Յակոբայ Յիսուս
Քրիստոս ի նմանէ. ըստ այնմ, ,,Յուդից նմա և ո՛չ այժմ.
երանեցից, և ո՛չ ի մօտոյ։ Ծագեսցէ աստղն Յակոբայ, և յա-
րիցէ այր յԻսրայէլէ. և հարցէ զիշխանս Մովաբայ. և առցէ
աւար զամենայն որդիս Սեթայ,,։ (Թուոց ԻԴ. 17)։

,,Ընդ ծագելոյ ձեզ Լո՛ւսիթ. պատրաստ արարիցէ
ձմրագ օծելոյ իմոյ,,։ (Սաղմոս ՃՀԱ. 17)։

,,Գոհանամք ձեզ Ա՛ստ տեառն մերոյ Յիսուսի Քրի-
ստոսի, և որ այց եկեր արդարութեամբ քով. և փրկեցեր ըզ-
մեզ ի մեքենայից սատանայի,,։ (Ի Մենծ Մաշտոց)։

,,Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, զի այց եկ, և ա-
րար փրկութիւն ժողովրդեան իւրում,,։ (Գ՛ուկ. Ա. 68)։

,,Ընդ՝ անդ ի մէջ նորոյն Սիոնի՝ ուր բնակել հաճեցայ,
օրհնեցի և փրկեցի. տաց նոցա և ի նոսա հղջիւր և զօրութիւն
զմիածինս իմ որդի՝ որով կարողանայք խոցոտել զքշնամի-
սն,,։ (Ընդ. Ա՛մբ. ի Մ՛ովսէն. Պատ. յեր. 5)։

Ա.—Ո՞ր ինչ նշանակէ ի ծերութեան հասակին յղանալ և
ծնանիլն Սիրեայի։

Պ. Ա՛կարէր պանծերին յղութիւն և ծնունդ սիրոյ կուսին
Մարիամու. օրինակաւ և նմանութեամբ ասի՝ և ո՛չ իսկու-
թեամբ զնշանակէն. քանզի Սիրեայի յամրութեան յղանալ և
ծնանիլն զնահակ էր ըստ օրինի մարդկութեան. իսկ յղանալ
և ծնանիլն սիրոյ կուսին Մարիամու զՄանն Աստուծոյ զօծեալն
զՔրիստոս յաստուածային ներգործութենէ էր. ըստ այնմ,

,,Ա՛յրեի մինչև հասանէ վէմ առանց ձեռին, և հարի զպատկերն
ի վերայ երկաթիզէնն և խեցեղէն ոտիցն, և մանրեաց զնոսա
իսպառ,,։ (Դանիէլ Բ. 24)։

,,Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. (ցՄարիամ՝) Ա՛ս-
պին սուրբ եկեսցէ ի քեզ,,։ Լ՛ուկ. Ա. 35։—Մատթ. Ա. 20)։

,,Եւ յետ Դաւթայ՝ ապա վերանայ յաղբիւրն օրհնու-
թեան յԱբրահամ. զի երիզրին սոքա՝ զարմանալիք էին ի հը-
նութեան, մին իրրև զմարգարէ և զթագաւոր, և միւսն իրրև ըղ-
հայր նահապետաց, և զի աւետեաց ծնունդ նորա որ ի Մարիա-
յէ ամէն, նկարեցաւ ծնունդ Բանին որ ի կուսէն սրբոյ վասն ո-
րոյ ասէ։ Աբրահամ ծնաւ զԻսահակ յօրինակ Քրիստոսի, Ի-
սահակ ծնաւ զՅակոբ,,։ (Ընկր. Հ՛նորհ. ի Մ՛ովսէն. Մատ. Ա.
1—2. յերես 25)։

,,Յղացեալ կուսին յանարատնց այս ինքն՝ առանց առն ան-
փորձ յառնէ յանապական արգանդին զՈրդին Աստուծոյ,,։
(Գրիգ. Լ՛ուս. յաղաթանգեղոս)։

,,Յղացեալ այնուհետև ի Ա՛ստղոյն սրբոյ շնորհագիւտ կու-
սին յանապական արգանդին զՈրդին Աստուծոյ անհասական
պայմանաւ, և ըստ օրինին ծննդականաց ծնաւ զանդրանիկն ի
քաղաքի Դաւթի ի Բեթղեհեմ,,։ (Նոյն, անդ)։

,,Ա՛ման զի խառնակըմէ և միանալըմէ զնոյն կարծրութիւն
ընկալաւ և նա. զի ո՛չ ի ինչ ի հակառակացն կարաց կակղել
զվէմն որ առանց ձեռին հատեալ ի սուրբ լեռնէն ըստ նմա-
նութեան նախնւոյն Դանիէլ, և ո՛չ որոմանցն սերմանող կարաց
սերմանել ինչ ի բնութիւնս նորա,,։ (Արգ. Հ՛նորհ. առա-
ջին պետ. ճառ. Ա. ա. 1)։

,,Ամօք Ա՛ստ և հաճութեամբ Ա՛ստղոյն զմարմինն ըզգե-
ցաւ Որդին յարչարեցաւն,,։ (Նոյն, անդ Ա. Պետր. ճառ երկ-
րորդ)։

,,Ի լեռնէն վէմն առանց ձեռին հատեալ Դանիէլ գուշակեաց զանսերմն զծնունդ քո, հարսն երկնաւոր, մայր և յետ ծննդեան միալով կոյս,,: (Ի Հարականի):

Հ.—Ո՞վ օրինակ էր Սահակ:

Պ.—Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ որ ծաղկեալ ի մարմնի՝ բուսաւ ի դաշտս և ի հովիտս յարդանդի սիրամայր կուսին, ըստ այնմ, ,,Ես ծաղիկ դաշտաց, և շուշան հովտաց,,: (Երգ. Ս. 2):

,,Ո՞ զարմանալի իրս, որպէս մարմինն անօրինեալ սեառն, այնու զանտեսանելին մեզ ի տեսութիւն աճ, նոյնպէս ջանայ յուսանել զբարեզարդութիւնն՝ զոր զգեցաւ երկիր՝ զՔրիստոս ընդունելով,,: (Գրի. Նար. ի Մեկն. Երգոց. Ս. 1):

,,Ծառ կենաց անկեալ յԱդին սուրբ կոյս, որ զհայրաճինն բղխեցեր զծաղիկ, և ետուր ի ժամու զորդին պտուղ մարդկան, զորոյ զմարմինն ձաշակեալ անմահացաք յուսով. վասն որոյ օրհնաբանեմք զքեզ յաւուր քո ծննդեան,,: (Ի Հար):

,,Նմանապէս և ի հոգևորսն է տեսանել, վասն զի մի ճառ է մարդկային բնութիւնս. և ամենևին իսիտ և անկերակրողական. իսկ ծաղիկ է ճառոյս գաւազան որ Յեսեայ. որ եղ ծաղիկ յարմատոյ անտի՝ ըստ մարգարէին, և հանդեաւ ի վերայ նորա Հոգին Աստուծոյ. և զեղեցիկ է տեսանելով քան զամենայն որդիս մարդկան, և անուշահոտ իւրով աստուածութեամբն, և անկերակրողական այլոց առաքինութեանց. զի երբէք ի բնութիւնն աստուածութեան Քրիստոսի մերձենալ ոչ կարին՝ և միանալ բնութեամբ ինդին և աստուածանալ. որպէս մարմինն այն զոր իւրացոյց ի մերմէ բնութենէս, և խառնեալ միացոյց. ընդ իւրում՝ աստուածութեան, և աստուածացոյց բնութեամբ և անձնաւորութեամբ,,: (Սարգ. Հնորհ. ի Մեկն. Յակոբ. ճառ. չորրրդ. ա. 18):

Հ.—Օ՞րինչ յուցանէ ուղղափառ Թլփատութիւնն Քահանայ:

Պ.—Օրհնութիւն Քրիստոսի, որով բարձեալ զատուկն, հաստատեաց իւրովք մարմնով զշնչմարտութիւն սրտի զհոգևորն Թլփատութիւն, այն է՝ զմկրտութիւնն սուրբ. ըստ այնմ, ,,Թլփատեցարուք Աստուծոյ ձերում. և Թլփատեցէք զանթլփատութիւն սրտից ձերոց, արք Յուդայ և բնակիչք Երուսաղեմի,,: (Երեմիա. Գ. 4):

Եւ Թէ՝ ,,Օրի Թլփատութիւն մեք եմք, որ հոգւով Աստուծոյ պաշտեմք, և պարծիմք ի Քրիստոս Յիսուս, և ոչ ի մարմին պանծացեալ եմք,,: (Փիլիպ. Գ. 3):

,,Թլփատեցաւ ուղղափառ որպէս զմարդ, և զԹլփատութիւն երարձ մարմնոյ, և ուսոյց զԹլփատութիւն սրտի՝ որպէս զօրէնսդիր Թլփատութեանն,,: (Ներ. Հնորհ. ի Թուղթըն առ Անուէլ կայսր. յերես 79):

Հ. Օ՞րինչ է ասելն Աստուծոյ. առ դու զորդիդ քո սիրելի:

Պ.—Որդի սիրելի է Յիսուս Քրիստոս, որ եղ ի լեառն Թաբորական և երևեցոյց աշակերտաց իւրոց զփառս սուրբ Երրորդութեանն, ածեալ զՄովսէս և զԷղիաս ի մեռելոց և ի կենդանեացս, որք խօսէին զնաչէն և զմահուանէ սիրեցելոյ Որդւոյն, և Հայր ամպով Հոգւոյն ծանուցանէր զաստուածութենէ Որդւոյն իւրոյ սիրելւոյ՝ ասելով. ,,Դա է որդի իմ սիրելի,,: (Մատ. Ժէ. 8):

,,Եւ ահա ձայն յերկնից որ ասէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ,,: (Նոյն, անդ Գ. 16:—Ծնորհ. ի Մեկն. Մատ. Ժէ. 5. յեր. 365):

,,Հանգի առեալ յԱստուծոյ ի Հօրէ զփառս և զպատիւ. յեկեալ յայնպիսի բարբառոյ՝ ի մեծ վայելչութեան փառացն ասի, Թէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ: Եւ այս

բարբառ մեք ինչ լուաք ակնալ յերկինից՝ որ ընդ նմա ինչ էաք ի սուրբ լերինն,,։ (Ռ. Պետ. Ը. 17—18)։

,,Որ յայտնեցեր զառաւածաբեմիւնդ
Եշակերտաց քոց ի լերինն,
Եւ զանձառ փառագ Հայրենից,
Փայլեալ ցուցեր աչաց նոցին,,։
(Ի Յիսուս որդին)։

Հ. — Ո՞րինչ ցուցանէ սահմն. հանցես զքա յողջակէզ ի վերայ միոյ լերանց։

Պ.—Լերինք կոչին արդարութիւնք Աստուծոյ. զի Յիսուս ի վերայ արդարութեան մեռանելոց էր վասն յանցաւորացն մարդոյն, ոչ էր սպրելոց ըստ արդարութեան և ճշմարտութեան. այլ՝ կենդց էր ըստ ողորմութեան. քանզի Աստուած ողորմած է, և յաղագս առաքելոցն Որդւոյն իւրոյ եթող ամենեցուն զմեղս և ապրեցոյց. ըստ այնմ, ,,Արդարութիւնք քո որպէս լերինք Աստուած, իրաւունք քո որպէս խորք բազումք, զմարդիկ և զանասուն կեցուցանես տու տէր,,։ (Սաղմ. Լ.Ե. 7)։

,,Ողի զթած և ողորմած է Տէր, և թողու յաւուր տառապանաց զմեղս, և հովանի է ամենեցուն յանդրոզաց իւրոց ճշմարտութեամբ,,։ (Միքաք. Ե. 13։—Յովել. Ե. 13։—Յովնան. Գ. 2)։

Հ.—Ո՞րինչ է ասէն յարեաւ ընդ առաւօտն. և հաս զնասահակ և զիւայա ողջակիզին։

Պ.—Ոչ այն, զի Յիսուս յառաւօտու չարչարանացն իւրոց ի յուս բարձեալ զգործի մահուն զխոյան միայց՝ եկ ի լեառն Գողգոթայ. ըստ այնմ, ,,Ես բարձեալ էր ինքնին դնօթափայլն,,։ (Յովհաննու Ժ.Ը. 17)։

,,Ոչ հառն հանգիստ կինդանաբարիզ. եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրև զհիզ, բարձեր որպէս համբերող, առանձնեալ իբր զպատրաստական զիւայն միայց,,։ (Ղևար. Ա.Ե. 3)։

,,Երկոքին եղեն, զի առաջին Սիմոն երթար, և ապա ինքն, քանզի և օրինակ այնպէս եղեւ, զի զշնորհ փայտիդ ողջակիզին նախ ի վերայ իշոյն՝ և ապա յետս իւր երթալ Նահակ. այլ և իշխանք զղէնս իւրեանց՝ սպասաւորաց տան բառնալ մինչ ի տեղի պատարագին. և ապա ինքեանք կրեալ մարմնով՝ մարգարէնչին, նոյնպէս և տէր մեր արար,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մեկ. —Մատ. Ե.Ե. 32. յկր. 593)։

,,Որ փոխանակ մահարերին,
Ոսկոյն բուսեալ ի մէջ դրախտին.
Կարձեր ի յուսդ զիւայա խաչին,
Ի Գողգոթայ հաներ տեղին,,։
(Ի Յիսուս որդի)։

Հ.—Ո՞րինչ նշանակին հուրն և սուրն Ջրրահամու։

Պ.—Հուրն օրինակ է բորբոքեալ սիրոյ Հօրն երկնաւորի առ Որդին. իսկ սուրն բարկութեանն զոր տրեալ էր ի կոտորել և յօշատել զմարդիկ անխնայ, որոց վրհատակ յանձն առնուս սիրելի Որդին ինքն կրել զայն գատաւճիռ բարկութեան Հօր՝ ասելով. ,,Երկունի ձեռն քո յիս և ի տուն հօր իմոյ,,։ (Ռ. Թագ. Ժ.Գ. 17)։

,,Եւ հայրն փոխանակ յառնելոյ ի վերայ մեր, յարեաւ ի վերայ Որդւոյ իւրոյ՝ ըստ գրեցեալսն. ,,Ողարթիր սուր ի վերայ հովուի իմոյ, և ի վերայ առն ընկերի նորա, ասէ տէր ամենակալ,,։ (Զաք. Ժ.Գ. 7)։

Հ.—Ո՞րինչէ յետս յետս կասել առին Նահակայ՝ յերկանկն ի լեառն։

Պ.—Ոչ այն, զի յորժամ բարձեալ Յիսուսի ինքնին զխաչափայտն երանէր ի լեառն. ոտք նորա յետս յետս գթէին ի

ծանրութենէ բեռին. ‘‘Ընդ տեսիլ նորա անարդ և նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան. այր մի ի հարուածս և գիտէ համբերել ցաւոց. մեք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրև յԱստուծոյ,,: (Եսայի ԾԳ. 3–4):

Ա.—Ո՞վ ինչ նշանակէ կապիլն Յսահակայ և դնիլն ի սեղանն ի վերայ փայտին:

Պ.—Նշանակէ զկապիլն և զբևեռիլ Փրկչին ի սեղան խաչին. ըստ այնմ, ‘‘Բևեռեալ ի փայտի սպանիք, զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու,,: (Գործ. Բ. 23):

‘‘Սա է սեղան սրբութեան, և ի սմա է պատարագեալ Քրիստոս գառն Աստուծոյ,,: (Ի Շարականի):

Ա.—Ո՞վ ինչ նշանակէ ձայնել հրեշտակին յերկնից, մի՛ մըխեր զձեռն քո ի պատանեակդ:

Պ.—Յուցանէ զնորոգութեանն զկորուրդ. ի ձեռն միածնի Որդւոյն պատարագելոյն ի սեղան խաչին յօրինակ Յսահակայ, զՆբրահամ յօրինակ Հօրն երկնաւորի. և զհրեշտակն՝ Հոգւոյն սրբոյ մատակարարողն. արդ հայեաց ի պատկերս և տես, թէ որպէս միաւորեալ են երեքեան անձինք միով տէրութեամբ և աստուածութեամբ. ըստ այնմ, ‘‘Եւ քանզի մինդ հներորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալեալս զմեր պաղատանս՝ և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս ամենայն պատրաստութեամբ,,: (Նարեկ. ԼԳ. 5):

‘‘Ոչ այս ասելով. ոչ եթէ համարեսն հներորդութեանն կամաց տամք ինչ զանազանութիւն. զոր մի՛ լեցի զմտաւ ածել. այլ այսպէս իմանամք զնա ի պէտս մերոյ փրկութեան տնօրինել զներդործութիւն խորհրդոյս,,: (Նար. Լամբ. ի Ա Եկն. պատ. յեր. 78):

‘‘Այս ինքն Հայր օրհնեալ, որ զպատարագս հաշտութեամբ ընկալաւ. և Որդին օրհնեալ, որ փոխանակ եղբարցս մեռեալ պատարագեցաւ. իսկ Հոգին օրհնեալ, որ խոնարհեալ հատուցումն մեզ փոխանակ պատարագիս շնորհեցաւ. և ժողովուրդն՝ որ տեսութեան արժանացան այժմ. զոր նախ ոչ դիտէին, ընդ նմին և քահանայիս գոհացողական օրհնութեան կցորդին՝ ուրում նախ ոչ հաղորդէին ըստ իւրաքանչիւրոցն զամէնն վիայելով, յայտ արարեալ՝ թէ է՛ ձշմարիտ հաւանութեամբ մեռացս մերոց առ ի քէն ասացեալսդ,, (Նոյն, յեր. 154):

Ա.—Ո՞ւմ օրինակ է խոյն կախեալ գծառոյն սարեկայ զեղջերացն:

Պ.—Որդւոյն Աստուծոյ. վասն զի՝ Յսահակ պարտականն մահու էր օրինակ ադամայինս բնութեան, և խոյն նշանակէր զՈրդին Աստուծոյ. իսկ ծառն սարեկայ՝ զսուրբ խաչն. զորմէ կախեցաւ անմեղ գառն Աստուծոյ. ըստ այնմ, ‘‘Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս, զոր դուք սպանիք՝ կախեալ զխաչէ,,: (Գործ. Ե. 30):

Եւ թէ ‘‘կախեցին իբր զխոյն սարեկայ ձգեալ զեղջերացն. սարածեցին ի սեղան խաչին իբր զպատարագն,,: (Նարեկ. Ամ. 3):

‘‘Սարեկայ ծառոյն վերաբերեալ խոյ յողջակէզ փոխանակ Յսահակայ. այլ ի վերայ քո զենաւ գառն անարատ ի հաշտութիւն Հօր, և ի բառնալ զմեղ մեր,,: (Ի Շար):

Ա.—Ո՞վ ինչ է առնուլն Աբրահամու զխոյն և հանելն զնա յողջակէզ:

Պ.—Ի օրինակ Հօրն երկնաւորի, որ ոչ խնայեալ յանդրանիկ Որդին իւր միածին՝ մատնեաց զնա ի չարչարանս մահու վասն մեր. ըստ այնմ, ‘‘Եւ տէր մատնեաց զնա առ մեզս մեր,,: (Եսայի ԾԳ. 6):

«Ն՝ թէ՝ «Որ չիւր որդին ոչ խնայեաց. այլ վասն մեր ա-ժնեցուն մատնեաց զնա»: (Հռովմ. Ը. 32):

«Ընդաքեցեր զմիածին Որդիդ ի մահ վասն մեր մեղաց. զի առցէ զմեզս մեր ի յանձն իւր . . . և ընդ նմին տարցի զպատուհասն յանցանացն մերոց յանձն իւր չարչարանօք խաչին»: (Գրիգ. Լուս. ՀԱգաթ):

«Եթէ Հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յեւթևնէն՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ անքնին ծոցոյն՝ ոչ անխնայեալ յՈրդիդ ի համապատիւդ և ի սիրելիդ. այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն զենու, ըստ մարգարէութեանն Օ.աքարիայ»: (Նարեկ. ԽԴ. 2):

Հ.—Ո՞վ ցուցանէ փոխանակ Խաչակայ ողջակիզումն խոյին:

Պ.—Յուցանէ զԲրիստոս, որ վասն մեր մեղաւորացս չարչարեցաւ և մեռաւ, և ետոյց զաղատութիւնն մեր օրինակաւ Բարաբբային. որ գոլով արժանի գատապարտութեան՝ փրկեցաւ, և փոխանակ նորա ի մահ վարեցաւ այնմեղն և անարատն՝ ըստ գրեցեալսն, «նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի»: (Եսայի. ՆԴ. 4)

«Որ զմեր մեղսն իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն. զի լեցուք զերծեալք ի մեղաց անտի, և իցեմք արդարութեանն կենակիցք. որոյ վերօքն բժշկեցաք»: (Ա. Պետրոս. Բ. 24):

Հ.—Ո՞վ նշանակէ «Տէր հաւս» անուանին տեղոյն:

Պ.—Ոչն, զի զարարիչն արարածոց զաչեր մեր Յիսուս Բրիստոս ուղղաւ ի խաչին դէմ յանդիման ի լեառն Գողգոթայ, որ կոչեցաւ տեսիլ Աստուծոյ. «զի տեսի զԱստուած դէմ յանդիման, և ապրեցաւ անձն իմ»: (Ծննդոց. ԼԲ. 30):

«Ով սքանչելի և տեսիլ ահաւոր. արարիչն երկնի և երկրի այսօր տեսաւք ի խաչին»: (Ի Շարականի):

Հ.—Ո՞վ էր ասելն Աստուծոյ, ի գաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի:

Պ.—Գաւակն է Որդին Աստուծոյ Յիսուս Բրիստոս, որով օրհնեցաք ի հաւատալ մեր ի նա. և ի մկրտիլս ի մահ նորա՝ եղաք որդիք Աստուծոյ և ժառանգակիցք Բրիստոսի. ըստ այնմ, «Ապա եթէ դուք Բրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակք էք, ըստ աւետեացն ժառանգք»: (Գաղ. Գ. 29):

«Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի՝ և ժառանգ Աստուծոյ»: (Նոյն անդ. Դ. 7):

«Որպէս հաւատացաք, եթէ այն որ բնութեամբ որդի էր Աստուծոյ, եկն եղև շնորհօք որդի մարդոյ՝ ծնանելով ի կուսէն. նմանապէս հաւատամք նովին չափով բնութեամբ, եթէ և մեք որ բնութեամբ որդիք եմք Ադամայ, ծնանելով ի կոյս աւազանէն՝ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ»: (Մարգ. Շնոր. ի Պահն. Յակ. Ճառ երորդ):

Հ.—Ո՞վ ցուցանէ ամուսնութիւնն Խաչակայ:

Պ.—Օհոգևորական միաւորութիւն տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի ընդ հարսին սրբոյ եկեղեցւոյ՝ դշխոյի դասեր վերին Սիովնի. ըստ այնմ, «Բանզի Բրիստոսի է հարսնացեալ սուրբ եկեղեցի, երկնաւոր փեսային պսակեալ զնա խաչիւն, և յաջ և յահեակ թեւուցեալ զկենդանասս ժառանգելով»: (Ի Շարականի):

«Ուրախ լեր բերկրեալ հարսնացեալ սուրբ եկեղեցի, պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն ծագողին զշող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի»: (Նոյն, անդ):

«Խնկապէս խոստովանիմք մայր եկեղեցի, որոյ ի Բրիստոս հաւատացեալք»: (Պահակ. դաթ. ի կանոնադիրս):

Հ.—Ո՞ւմ օրինակ է ծառայն Աբրահամու:

Պ.—Յովհաննու մկրտչի որդւոյ Զաքարիայ. որոյ ի վերայ եղև բան Աստուծոյ, գալ ի յանապատն մկրտել զժողովուրդ տեառն մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց. ըստ այնմ, ,,Ձե ի քահանայապետութեան Աննայի և Կայիափայ. եղև բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ. և եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց. որպէս և գրեալ է ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէին: Ձայն բարբառոյ յանապատի պատրաստ արարէք զճանապարհս տեառն, ևուղիղ արարէք զշաւիղս նորա,,: (Ղուկ. Գ. 3—4: —Մարկ. Ա. 4: —Յովհ. Ա. 24: —Եսայ. Խ. 3):

Ս.—Զի՞նչ նշանակէ ծառային Երդուելն ի վերայ երանացն Աբրահամու:

Պ.—Զերդումն ի վերայ մարդկութեանն մարմնացեալ Բանին Աստուծոյ, յապագայ ժամանակին. որ եթէ ըստ մարմնոյ յերանացն Աբրահամու՝ ելն յաշխարհ, որպէս ի Մատթէոսեան աւետարանին պատմի, ,,Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու,,: (Մատ. Ա. 1):

Զորմէ երդմամբ Յովհաննէս վկայեաց. ըստ այնմ, ,,Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր առ նա. և ասէ՝ ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. սա է, վասն որոյ ես ասէի, զկնի իմ գայ այր. որ յառաջ իսկ էր քան զիս,,: (Յովհաննու. Ա. 29—30):

Ս.—Զի՞նչ ցուցանէ ծառային Աբրահամու զոսկեզինեան՝ զապարանջանս զանօթս ոսկւոյ և արծաթոյ տալն Ռեբեկայ օժիտս, և ածելն զնա առ տէր իւր Իսահակ:

Պ.—Զգուշանն ի Ս. Հոգւոյն և ի հնութեանցն՝ եկեղեցւոյ հաղորդեալ Քրիստոսի քարոզութեամբ՝ ի մկրտութիւն ապաշխարութեան փեսաւէր և բարեկամին Յովհաննու. զոր ածեալ առ

փեսայն Քրիստոս միացոյց ընդ նմա. ըստ այնմ, ,,Միրոյ անմահ և երկնաւոր սուրբ փեսային եկեղեցւոյ. փեսաւէր և հրաշէրակ առաքեցեալ հարսին որդւոյ թագաւորին,,: (Ի Շար):

,,Որ յարգանդին լցեալ հոգւով երկրպագեաց քեզ յորովայն սրբոյ կուսին. զոր Եսայիաս վերադիչեաց ձայն բարբառոյ յանապատէ, որ պատրաստեաց զեկեղեցի հարսն մաքուր սուրբ փեսային,,: (Ընդ, անդ):

,,Երկնաւոր փեսայ անստուեր լոյս իմանալի, որ ի յերկինից իջեր՝ ի սէր հարսին քո եկեղեցւոյ. զոր խօսեցաւ քեզ, բաբեկամն և փեսաւէրն քո Յովհաննէս,,: (Ընդ, անդ):

Ս.—Զի՞նչ նշանակէ Իսահակայ տանիլն զհարսն իւր Ռեբեկայ ի տուն իւր. և մխիթարիլն վասն Սարրայի մօր իւրոյ:

Պ.—Զերկոսին աշակերտան ի սկիզբն հնոյ և նորոյ հարսին եկեղեցւոյ. որք լուան ի Յովհաննէ Յիսուս Քրիստոս, Աստուած և մարդ՝ գառն Աստուծոյ՝ բարձող արտմութիւնս և մեղաց մօրն Եւայի, գնացին զկնի Յիսուսի, յօթևանն նորա և առնմա ագան այն օր. ըստ այնմ, ,,Ի վաղիւ՝ անդր կայր Յովհաննէս, և յաշակերտաց անտի նորա երկու: Ել նայեցեալ ընդ Յիսուսի զի զգնայր, ասէ. ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ: Լուան ի նմանէ երկու աշակերտքն զի խօսէր. և գնացին զկնի Յիսուսի. իբրև դարձաւ Յիսուս՝ և հետս ըզնոսա զի երթային զկնի նորա. ասէ ցնոսա, զի՞նչ խնդրէք. և նոքա ասեն ցնա. ռաբբի, որ թարգմանեալ կոչի վարդապետ, ո՞ւր են օթևանք քո. ասէ ցնոսա՝ եկայք, և տեսէք. եկին և տեսին, ուր էին օթևանք նորա. և առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրև տասներորդ: Էր Անդրէաս եղբայր Սիմոնի վիմի մի յերկուց անտի, որք լուան ի Յովհաննէ, և գնացին զկնի նորա,,: (Յովհ. Ա. 35—40):

''Հինգսաւ եկեղեցի ի վերայ Պետրոսի հաւատոյն՝ ոչ միայն ի Հռոմ, այլ և ընդ ամենայն քաղաքս և գեօղս մեծամեծս մինչև ցվերջս ունս, նոյն հաւատք, և նոյն հիմն, և նոյն հաստատութիւն, քանզի մի է տէր, և մի մկրտութիւն, . . . և որպէս Պետրոս ի Հռոմ հաստատեաց զեկեղեցին, նոյնպէս և այլ առաքեալքն ըստ իւրաքանչիւր վիճակեցելոցն աշխատեցան,,: (Ընդհէն. ի ճառ Թադման տեառն:—Տես. Հ. Նորհ. ի Մեկն. Մատ. Ա. 2. յերես 25):

''Հայցեմք ողորմութիւն ամենայն եկեղեցեաց՝ որ յամենայն սիեղերս ըստ քարոզութեան առաքելոցն շինեալ են, վասնորոյ և առաքելական կոչեմք, իսկ որք թիւրեալք են յառաքելոցն դաւանութենէ, նոքա ոչ ևս առաքելական կոչին. իսկ առաքելական եկեղեցիք թէպէտ և ընդ բազում տեղիս են, սակայն մի ասին վասն միասնական հաւատոյն,,: (Ղոսրով. ի Մեկն. պատարագի):

''Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո Քրիստոս, ի վերայ առաքելական վէմի,,: (Ի Հարակ. կանոն Հոգակաթի):

''Ի վերայ վէմի հաւատոյ հիման առաքելոց և մարգարէից շինեցեր զքո տուրբ զեկեղեցի,,: (Ի Հար. կանոն Ղազի):

Ծնունդ Յակոբայ և Լսուայ:

Ա.—Ծնանն Ղսակայ որդիք:

Պ.—Ա. Յն. Ծնան երկու որդիք ի Ռեբեկայ դստերէն Բաթուէլի, և անուանեցան Յակոբ և Լսաւ: (Ծննդ. ԻԵ. 21):

Ա.—Օ, խնդրե եղև Ծնունդ նոցա:

Պ.—Երբև լցան աւուրք Ծնանելոյ. նախ Ծնաւ անդրանիկն նորին Լսաւ, և էր թաւամազ և շառագոյն, յետ որոյ Ծնաւ և Յակոբ երկուորեակ եղբայր Լսաւայ. և նա ձեռն ղգուշապարօք ունէր Լսաւայ: (Ծննդ. ԻԵ. 24—25):

Ա.—Օ, քո՜նչ ստուգաբանի անուն Յակոբ:

Պ.—Խարդ:

Ա.—Վ՞ասն էր այսպէս:

Պ. Վ՞ասն այն. զի խաբեաց զեղբայր իւր Լսաւ:

Ա.—Որպէ՞ս խաբեաց զնա:

Պ.—Յաւուր միում մինչ եփէր Յակոբ զոսպնաթան, եկն առ ի դաշտէ Լսաւ նքթեալ. խնդրեաց ի նմանէ և ասէ. տուր ինձ ուտել յոսպնաթանէդ յայդմանէ՝ զի եմ նքթեալ. այլ Յակոբ ոչ ևս նմա անտի մինչև զնահատեալ էառ ի նմանէ զանդրանկութիւնն: (Ծննդ. ԻԵ. 29—34):

Ա.—Այլ ևս խաբեացաւ Լսաւ ի Յակոբայ:

Պ.—Երկրորդ անգամ խաբեցաւ, յորժամ Յակոբ փոխանակ Լսաւայ ինքն մատոյց զնօրհիկս առ հայր իւր, և էառ զօրհնութիւնն անդրանկութեան: (Ծննդ. ԻԶ. 1):

Ա.—Որպէ՞ս եղև այդ:

Պ.—Ծերունին Ղսահակ չգիտելով. թէ Լսաւ վաճառեալ է եղեօր իւրում զանդրանկութիւն իւր, կամեցաւ տալ նմա զօրհնութիւն անդրանկութեան. ուստի յաւուր միում կոչեաց

զնա և ասէ. ‘‘Որդեակ իմ. . . ահաւասիկ ես ծերացեալ եմ, և ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ: Ելո՛ւ՝ առ զդործս քո. . . և ել ի դաշտ, և արա ինձ որս. . . զե կերից, և օրհնեսցէ զքեզ անձն իմ, մինչչև մեռանիլ իցեմ,,: (Ծննդ. ԻԷ. 1):

Ս.—Ո՞ւմն տեսանել Յակորայ զի՞նչ արար:

Պ.—Խրատեալ ի մօրէն՝ գնաց ի դաշտն. և էառ անտի զերկուս ուլս փափուկս և ընտիրս, և արար խորտիկս հօր իւրոմ, որպէս և սիրէրն, եկեր անտի Իսահակ, և օրհնեաց ըզՅակոբ՝ մինչչև էր վախճանեալ: (Ծննդ. ԻԷ. 9—14):

Ս.—Որպիսի՞ եղանակաւ արար զայդ՝ մայրն Յակոբայ:

Պ.—Ենկեաց զուլն, և առեալ զպատմուճանն որդւոյ իւրոյ երիցու՝ զգեցոյց կրտսերոյն, և զուլենին արկ ի բազուկ նորա և ընդ պարանոցն, և ետ տանել զխորտիկն և զհաց առ հայրն իւր Իսահակ. որ ասաւաւ և ասէ. հայր իմ, արի՛ նիստ և կեր յորսոյ իմմէ, և օրհնեսցէ զես անձն քո: (Ծննդ. ԻԷ. 15. 18):

Ս.—Ո՞ւմ արար յայնժամ Իսահակ:

Պ.—Ոչ մանկեալ՝ թէ որպէս շուտ երեր և պատրաստեաց զորսն, հկարճ և ասէ. ո՞վ ես դու որդեակ. և նա պատասխանեաց, ես եմ անդրանիկն քո Ենաւ. արարի՝ որպէս և խօսեցար ընդիս. կրկնեաց հայրն և ասէ. մօտ եկ և շօշափեցից զքեզ՝ որդեակ, եթէ դու իցես որդին իմ Ենաւ. և իբրև շօշափեաց՝ ասէ. ձայն քո ձայն Յակոբայ, և ձեռքդ՝ ձեռք Ենաւայ. քանզի ոչ ծանեաւ զնա. զի ձեռք նորա էին իբրև զԵնաւայ. և օրհնեաց զնա և ասէ. եկ առիս որդեակ, և համբուրեա զես: (Ծննդ. ԻԷ. 20—26:

Ս.—Ենդ զի՞նչ յայնժամ:

Պ.—Ելաւ զհոտ հանդերձից նորա. օրհնեաց զնա և ասէ. ահա հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ. զոր օրհնեաց տէր:

Ս.—Որպէս օրհնեաց զնա:

Պ.—Օրհնեաց և ասէ. տացէ քեզ Աստուած ի ցօղոյ երկնից և ի պարարտութենէ երկրի, և բազմութիւն ցորենոյ և գինւոյ. և ծառայեսցեն քեզ ազգք, և երկիրպադցեն քեզ իշխանք, և եղիցիս տէր եղբօր քումմ. և երկիրպադցեն քեզ որդիք հօր քո. որ անիծանիցէ զքեզ, անիծեալ եղիցի. և որ օրհնեսցէ զքեզ, օրհնեալ: (Ծննդ. ԻԷ. 28. 29):

Ս.—Յետ ժառանգելոյ զօրհնութիւն հօրն զի՞նչ արար Յակոբ:

Պ.—Երկեաւ յերեսաց իւրմէ. որ զչարեալ էր և ի մտի եդեալ ապանանել զնա: ուստի հրաման առեալ ի հօրէն իւրմէ՝ գնաց ի Միջագետս Ասորւոց առ Լաբան մօրեղբայր իւր առնոել ինքեան զկին: (Ծննդ. ԻԷ. 41: ԻԸ. 1—5):

Ս.—Ո՞ւմ պատահեցաւ նմա ի ճանապարհին:

Պ.—Ի մտանել արեգականն քար ընդ սնարան եդեալ՝ իբրև ի քուն եմուտ, եւտես ի տեսլեան և ահա սանդուղք հաստատեալ յերկիրէ յերկինս. և հրեշտակք ել և էջս առնէին և տէր հաստատեալ կայր ի նմա. և խոստանայր զայն սերդ տնջման տալ նմա:

Ս.—Յարուցեալ ի քնոյ անտի, զի՞նչ ասաց Յակոբ:

Պ.—Տէր է ի տեղւոջս յայսմիկ, և ես ոչ գիտէի, զահի հարեալ և ասէ. ահեղ իմն է տեղիս այս, և ոչ է ա՝ եթէ ոչ տունն Աստուծոյ, և այս է դուռն երկնից: (Ծննդ. ԻԸ. 16. 17):

Ս.—Ո՞ւմ արար զվէմն, զոր եդեալ էր ընդ սնարս իւր:

Պ.—Կանդնեաց արձան, էարկ իւղ ի գլուխ նորա, և կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ տուն Աստուծոյ: (Ծնն. ԻԸ. 18. 19):

Ս.—Ի՞մչեալ յԱստուածան զի՞նչ արար:

Պ.—Եաւ ի կնութիւն ինքեան զերկուսին դստերս Լաբանայ մօրեղբօր իւրոյ զԼիա և զՊաքել, յորս աչք Լիայ էին գիձա-

յեալ ի յաւոյ. իսկ Ռաքէլ էր պսպղիկ և բարեշուք: (Ծննն. ԼՈ. 16):

Ա.—Յորքան ժամանակս ծառայեաց Յակոբ Լաբանայ վան դստերացն:

Պ.—Լ՚ասն իւրաքանչիւրոցն հօթն հօթն ամ, բոլորն ամք չորեքտասան: (Ծննն. ԼՈ. 18—29):

Ա.—Որպէս էին ծնունդք երկուց կանանցն:

Պ.—Լ՚իա բազմածին էր. իսկ Ռաքէլ՝ ամուլ, զորոյ տա-ռապանս տեսեալ տէր երից զարգանդն, որ և յղացաւ և ծը-նաւ զՅովսէփ: (Ծննդ. ԼՈ. 31. Լ. 22—24):

Ա.—Որպէս զատանէր Յակոբ զհաշենս իւր ի խաշանց Լա-բանայ աներոյ իւրոյ:

Պ.—Գներ զհայտախարիւս՝ գաւազանն ընկուզի և սօսի յա-ւազանս ջրոցն, և ի զիծիլ խաշանց ի գաւազանացն՝ ծնանէին գորշախայտս և ապիտակս և խայտախարիւս. աննշանն լինէր Լաբանայ. իսկ նշանաւորն՝ Յակոբայ: (Ծննն. Լ. 37—42):

Ա.—Ընտալ Յակոբայ զհանայս իւր և զամենայն ինչս ի տա-նէ Լաբանայ, ոտր գնաց:

Պ.—Յերկիր ծննդեան իւրոյ: (Ծննդ. ԼԸ. 18):

Ա.—Ո՞ւմ հանդիպեցաւ ի ճանապարհին:

Պ.—Հանակի Աստուծոյ ուր ընդ առաջ ելին նմա հրեշ-տակք, ուստի և կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ բանակ Աս-տուծոյ:

Ա.—Երբե առաքեաց Յակոբ զհրեշտակս յառաջ քան ըզ-գնալն իւր առ Եսաւ. քանի՞ հարիւրովք գայր Եսաւ ի վերայ եղբօրն:

Պ.—Չորիւք հարիւրովք. որպէս պատմեցին հրեշտակքն ա-ռաքելովք:

Ա.—Երբե լուաւ Յակոբ, զի՞նչ արար:

Պ.—Զահի հարաւ. և զաւուցեալ զժողովուրդն և զամե-նայն ինչս իւր յերկուս բանակս, աղաչեաց զԱստուած ապրե-ցուցանել զինքն ի ձեռաց Եսաւայ, զի մի եկեալ հարկանիցէ զինքն. ապա մտախոհ եղև և առաքեաց ի ձեռն ծառայից իւ-րոց առ Եսաւ զերիս հօտս խաշանց առ ի ցածուցանել զնա ի գայրացմանէն:

Ա.—Ուսկ ապա զի՞նչ արար Յակոբ:

Պ.—Յարուցեալ ի գիշերին յայնմիկ. էառ զկանայս իւր և զորդիս. և նոքօք հանդերձ անցեալ ընդ հունն Յակոբայ. անցոյց զնոսա ընդ ձորն. և ինքն ճնայ անդէն միայն. ուր և մարտեաւ ընդ առն միւսմ ցառաւօտ. իրրև ետես այրն՝ թէ չը-կարաց պարտել զնա. բուռն եհար զամոլաջլէն, և ընդարմացոյց զնա՝ ասելով ոչ արձակեցից զքեզ, եթէ ոչ օրհնեսցես զիս: (Ծննդ. Լ՚Բ. 22—26:

Ա.—Տեղեկացեալ առն զանուանէն Յակոբայ, զի՞նչ ասաց նմա:

Պ.—Փոխեաց զանունն՝ և ասէ. Իսրայէլ կոչեսցի անուն քո. զի ժուժկալեցեր ընդ Աստուծոյ, և ընդ մարդկան զօրա-ւոր լինիցիս:

Ա.—Որպէս հանդիպեցան միմեանց երկոքին եղբարքն:

Պ.—Լանց Յակոբ յառաջ քան զնա, և չև մերձեցեալ առ եղբայրն՝ երկիր եպագ ի վերայ երկրի հօթնից անգամ. և ի մերձենալն առ իրեարս, ընթացաւ Եսաւ ընդ առաջ, զիրկս էարկ եղբօրն և համբուրեաց զնա. և լային երկոքեանն, և ապա գնացին զձանապարհայն: (Ծննդ. Լ՚Գ. 3—17):

Ա.—Քանի՞ էին որդիքն Յակոբայ:

Պ.—Ներկոտասան, որք և անուանին. Ռուբէն, Շ՚մաւօն, Ղ՚եւի, Յուդայ, Օ՚ասուղոն, Իսաքար, Դան, Գադ, Ասեր, Նեփթաղեմ, Յովսէփ, և Բենիամին: (Ծննն. Լ՚Բ. 22—26):

Հ.—Ո՞րոյ է օրինակ Յակոբ որդի Իսահակայ։

Պ.—Որգւոյ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. ըստ այնմ, ,,Յակոբ ծառայ իմ, օգնական եղէց նմա. և Իսրայէլ ընտրեալ իմ՝ զոր ընկալաւ անձն իմ, ետու զոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց հանցէ,,։ (Եսայի. ԽԲ. 1)։

,,Օ՜ի թէպէտ ընդ օձմանն օրհնութեան՝ հոգին էր քեզ խակաբար լսմամբ և աստուածութեանն խառնութիւն բանականապէս. այլ անուանն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ ի սուրբսն, զի զաւրութիւն ազատեան մարմնոյն մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես,,։ (Նար. Գ. Ո. 7)։

Հ.—Որո՞յ օրինակ է Ռեբեկայ դուստր Բաթուէլի։

Պ.—Ի օրինակ մարդկայինս բնութեան. զի Բաթուէլ ասի սիրեցեալ յԱստուծոյ. զի նախ քան զանցանել մարդոյն ըզպատուիրանսն Աստուծոյ՝ սիրելի էր, և յանցանելն եղեւ ատելի. իսկ դուստրն Ռեբեկայ՝ է օրինակ դասուն վերին Սիոնի սրբոյ կուսին Մարիամու և եկեղեցւոյ հեթանոսաց. որ էր դուստր ծնեալ ի բնութենէս, և ծնաւ ի նմանէ իշխանութիւն Քաղաւորութեան. ըստ այնմ, ,,Նա սրարից զբնկնալն ի զաւակ. և զմանրեալն յազգ հզօր. և Քաղաւորեսցէ ակր ի վերայ նոցա ի լերինն Սիոնի յայսմհետէ մինչև յաւիտեանս։ Նա դուստր աշտարակ հօտի մերին դուստր Սիոնի, ի վերայ քո եկեսցէ և մտցէ առաջին իշխանութիւն Քաղաւորութեան ի Երուսաղէմ,,։ (Միքիա. Դ. 7—8։—Նկր. Հ՚նոր. ի Մեկ. Մատ. Ե. 2. յեր. 25)։

,,Ընհատսիկ ես առնեմ վասն քո ի ժամանակին յայնմիկ. և փրկեցից զծնիցան և զներժեանն ընկալայց. և արարից զնո-

սա ի պարծանս. և անուանիս ընդ ամենայն երկիր,,։ (Առաքեայ. Գ. 19)։

,,Նա ահա յղասջիր և ծնցիս որդի. և կոչեսցես զանուն նորա Յիսուս. նա եղիցի մեծ. և որդի բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա. և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան, և թագաւորութեան նորա վախճան մի լինիցի,,։ (Ղուկ. Ա. 31)։

Հ.—Որո՞յ օրինակ է երէց որդին Եսաւ։

Պ.—Ազգին Հրէից. որք ի սկզբան անդ անդրանիկ էին Աստուծոյ. ըստ ընտրութեան հաւատոցն Աբրահամու նախ քան զՔրիստոս, որպէս վկայէ և սուրբ գիրն. ,,Նա դու ասասցես ցփարաւոն. այսպէս ասէ Տէր. որդի անդրանիկ իմ Իսրայէլ,,։ (Ելից. Դ. 22)։

,,Ի սկիզբն բանիս ածագիր առնէ զԻսրայէլ ի սիրոյն նոցա. և յարդէ զՀեթանոս՝ զի նախ և առաջին սիրէր զնոսա Աստուած. և ոչ միայն սիրէր. այլ և որդիս անուանէր՝ և անդրանիկ որդի,,։ (Սարգ. Հ՚նոր. ի Մեկն. Յուդ. Ճառ Ը. ա. 1)։

Հ.—Օ՞ի՞նչ նշանակէ թաւամորթութիւնն Եսաւայ։

Պ.—Օ՜ևաւգեալ մեղս. զոր զգեցաւ բնութիւնս մեր. և զոր խոստացաւ Աստուած պսիտակացուցանել իրրև զձիւն. ըստ այնմ, ,,Եթէ իցեն մեղք ձեր իրրև զձանձախաւրիթ. իրրև զձիւն սպիտակ արարից. և թէ իցեն իրրև զորդան կարմիր, որպէս զաւր սուրբ արարից,,։ (Եսայ. Ա. 18)։

,,Այն է կեանք. ոչ մարմնոյ՝ այլ հոգւոյ. սակ է յոյս. ոչ ապականացու փառաց՝ այլ անապականին. սակ է քաւութիւն ազատզացելոցն ի ժանեաց վիշապին. սակ է լուացարան թխաւիպ դուռնոյ հնոյն Եդեմայ,,։ (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատ. յիրս 156)։

Հ.—Ո՞վ էր պուշակեր ունել ձեռին Յակոբայ զզարշապա-
րէն նսաւայ։

Պ.—Պուշակեր զառնուէն Յակոբայ զանդրանկութիւն եղ-
բօր իւրոյ Նսաւայ. զոր ծանոյց մինչդեռ յարգանդի մօրն էր՝
ունելովն զզարշապարէ նորին. ոյր աղագաւ և կոչեցաւ Յակոբ։
Նմին նման և Աբրիամոս Որդին Աստուծոյ յարգանդի տիրա-
ծին սուրբ կուսին ծանոյց զանդրանկաբար ժառանգելն զար-
քայութիւնս երկնից բոսորային արեամբ իւրով և վերջն՝ զոր
ընկալաւ ի Հրէից. և զտալն զայն յակոբեան տանս թագաւո-
րելով միշտ ի վերայ նորա ըստ ասից հրեշտակապետին. թէ
«Թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան»։
(Ղուկ. Ա. 31։—Ներ. Ճ՝նորհ. ի Մ՝ևին. Մ՝ատ. Ա. յեր. 25)։

«Օրհնութիւն ամենեցուն հեթանոսաց եւ նմա տէր, և
վկայութիւն հաստատեաց ի վերայ գլխոյն Յակոբայ»։ (Սիրաք.
Խդ. 25)։

Եւ թէ՝ «Յարդանդի խաբեաց զեղբայր իւր. և յաշեա-
ւութիւնս իւր զօրացաւ առ Աստուած»։ (Ովսեայ ԺԲ. 3)։

Հ.—Ո՞վ էր յայտ առնէ խաբէին Յակոբայ զեղբայր իւր։

Պ.—Ողբորութիւն հրէական ազգին, որք մոլորեցան և զը-
թեցին առ մարդեղութեամբ Բանին Աստուծոյ, զորոց և մար-
գարէն ասէ. «Բայց տուն Յակոբայ յորոգայթ և ի ծուծուս
դարանակալաց երուսաղեմի»։ (Եսայի. Ը. 14)։

Ո՛վ որպէս Նսաւ յաղագս միոյ ոսպնաթանի խաբեալ կո-
րոյս զանդրանկութիւնն, այսպէս և ազգն հրէական յիմար-
եալք զհետ աշխարհասիրութեան և չար նախանձու՝ որ առ
Յիսուս, կորուսին զանդրանկութիւն իւրեանց առաջի Աս-
տուծոյ, և եղեն ատելիք. ըստ այնմ, «Ընդ սա կայ ի գլորուին
և ի կանգնուին բազմաց ի մէջ Իսրայէլի, և ի նշան հակառա-
կութեան»։ (Ղուկ. Ը. 34)։

«Յորժամ տեսանիցէք զԱբրահամ և զԻսահակ և զՅա-
կոբ՝ և զամենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, և ըզ-
ձեզ հանեալ արտաքս. Եւ եկեսցեն յարեւելից և յարեւմտից
և ի հիւսիսոյ և ի հարաւոյ. և բազմեսցին յարքայութեան Աս-
տուծոյ. և ահա իցեն յետինք՝ որ եղեցին առաջինք, և իցեն
առաջինք՝ որ լինիցին յետինք»։ (Ղուկ. ԺԳ. 28—30)։

«Ընդէր, զի ոչ ի հաւատոց՝ այլ իբրև ի գործոց օրինաց.
քանզի զթեցին նոքա առ վիմին գայթակղութեան, որպէս և
գրեալ է. ահաւասիկ դնեմ ի Սիովն քար գայթակղութեան և
վէմ գլորման. և ամենայն որ հաւատայցէ ի նա մի ամաչեսցէ»։
(Հռոմ. Թ. 32—33)։

«Զեզ այսուհետև հաւատացելոց է վէմ պատուական. իսկ
անհաւատից՝ վէմ զոր անարգեցին շինողքն՝ նա եղև գլուխ
անկեան, և վէմ գլորման և վէմ գայթակղութեան. որ գայ-
թակղին ապստամբելոք ի բանէն՝ յոր և եդանն»։ (Ա. Պետր.
Բ. 7—8։—Ներ. Ճ՝նորհ. ի Մ՝ևին. Մ՝ատ. Ա. 2. եր. 25)։

Հ.—Ո՞վ էր նշանակէ նզթեալ գալն Նսաւայ ի դաշտէ։

Պ.—Նսաւ օրինակ էր մարդկայինս անատակ բնութեան, և
դաշտն՝ անպտղաբերութեան մարդկան ի հաւատս յաշխարհի
աստ, յորում նզթեալ գոլով և սովամահ ի շնորհաց Բանին
Աստուծոյ՝ պապակեալ շրջէաք՝ փոխելով կրօնից ի կրօնս և
կռապաշտութենէ ի կռապաշտութիւն՝ մինչև ևկն այցելուն
մեզ աւուրց, որպէս և գրեալ է՝ «Ահա աւուրք գան ասէ Տէր
Տէր. և առաքեցից սով յերկիր, ոչ սով հացի, այլ՝ սով լսե-
լոյ զԲանն աստուն»։ (Ամովս. Ը. 11)։

«Ամպարիսցուք պաշար այնր ճանապարհին զպարտն և զար-
ժանն, մի ասասն թողցուք, այլ ընդ մեզ բարձցուք. զի երկայն
է ճանապարհն և առանց դործոց. զի մի ի ժամանակի պիտոյ-
ցըն խնդրեսցուք և ոչ գտցուք, և յայնժամ սովալուկ, և ոչ

կորիցուք. . . ոչ միշտ այս երկրիս. այլ ի յայն որ զԹիւնաւոր որդւոնն ծնանի, ոչ առ քրտամբք երեսաց հրամայեցաւ ուտել զհաց, այլ յայն՝ ուր սով հացին է և ծարաւ ջրոյն, այսինքն Յանին Աստուծոյ, և մարդասիրութեան,,: (Սարգ. Ճ՚նորհ. ի Մ՚եկն. Յակոբ. ճառ. Ր. է. 9. յորդորակ):

,,Նա ընդէր ասէ՝ մեր, քանզի էր երբեմն և մեր հրեշտակական իմաստիցն կերակուր, յայնժամ մինչ ի դրախտին միաբանութեան զնոյն կթէաք, խառնացաւ չարն և զրկեաց ի տերութենէ կամացն Աստուծոյ. և ի հացէն զբանջար վայրենի մեզ պատրաստեալ կերակուր, այս է մարմնոյս զդայարանացս ի յօտար աշխարհս հեշտութիւն,,: (՚Ներ. Յամբ. ի Մ՚եկն. պատ. յերես 143: Մ՚ծծ. Վ՚արդան. ի Մ՚եկն. Սաղմ. Ա՚Օ. 5):

Հ.—Օ՚ի՞նչ նշանակէ խնդրելն Նաամայ զոսպնաթան ի Յակոբայ:

Պ.—Նշանակէ զվերացեալ հպարտութեան զփառասիրութիւնն. զի որպէս թանն վերացուցեալ ուռուցանէ զորովայնն միայն՝ տալով ուտողին և ոչ ինչ շահ. այսպէս և Հրեայք և քահանայապետք նոցին և գիտիրք անձնասիրութեամբ, հպարտութեամբ և փառասիրութեամբ շահեցան և ոչ ինչ. և կորուսին զարքայութիւն երկնից, որպէս կորոյս Նաաման զանդրանկութիւնն վասն միոյ ոսպնաթանի.| որպէս և ասէ սրբազան աբեւտարանիչն. ,,Միրեցի զփառս մարդկան, առաւել զփառս Աստուծոյ,,: (Յովհ. Ի՚Բ. 43):

Հ.—Օ՚ի՞նչ ցուցանէ վաճառմամբ կորուսանելն Նաաման զանդրանկութիւն իւր:

Պ.—Ցուցանէ զՀրեայսն, որք յառաջնումն անդրանիկ և սիրելի ժողովուրդ Աստուծոյ ասէին. այլ ի չհաւատալն ի մարգեղութեան Որդւոյ Աստուծոյ կորուսին զանդրանկութիւն և զսիրելի գառն Աստուծոյ, և փառք նոցա փոխեցան յայլս, ըստ այնմ, ,,Նա եղեցի յաւուր յայնմիկ կոչեցից զծառայ իմ զՆեաիմ Որդիկայ, և զդիցուհից նմա զպատմուճանսդ քո, և սաց նմա զպահակդ քո ձոխութեամբ. և սաց ի ձեռս նորա զհարապետութիւնդ քո,,: (Նսայ. Ի՚Ր. 20):

,,Որպէս և Ովսէէ ասէ կոչեցից զոր ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ լինիմ, և զչսիրեցեալն՝ սիրեցեալ, և զչողորմեալն՝ ողորմեալ,,: (Հռոմ. Թ. 25:—Ովսէ. Ր. 25:—Ներ. Հ՚նորհ. ի Մ՚եկն. Մատթ. Ա. 2. յեր. 25):

Հ.—Օ՚ի՞նչ ցուցանէ որսն Յակոբայ:

Պ.—Օ՚մարդկայինս բնութիւն. զոր որսաց Քրիստոս ի դաշտէ աշխարհի ուռկանաւ աւետարանի ձկնարիւտ աստուածգիտութեան. և ընծայեաց Հօրն յաւիտենականի ի սեղանն արքայական. ըստ այնմ, ,,Ընկեր ի տաճարն եկիր յընծայուածն Քրիստոս, որ ընծայես զարարածս բարձրելոյ քումմ Հօր,,: (Ի՚Հ՚աբ):

,,Հայր, զորս ետուրն ինձ՝ կամիմ, զի ուր եմն եմ, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառան իմ, զոր ետուրն ցիս,,: (Յովհ. Ժ՚Է. 24):

Հ.—Օ՚ի՞նչ են երկոքին ուղքն փարիսեցւոց և ընտիրք:

Պ.—Ընն օրինակ Հոգւոյ և մարմնոյ և կամաց. զի եկեալ Քրիստոս զկամս մարմնոյն հնազանդեցոյց Հոգւոյն կամաց. զի մինչ ի Քրիստոս զփուշս արածէին, այն է զմեզս. այլ ի գալն Քրիստոսի՝ զշուշանս, այս ինքն՝ զհոգևոր կերակուրս. ըստ այնմ, ,,Երկու սունկք քո իբրև զերկուս ուլս այծեմանն երկուսորիս, որ արածէին զշուշան,,: (Երգ. Գ. 5):

,,Երկու սունիս ասէ. վասն զի երկու բնութիւնք են ի մարդումն, մարմին և Հոգի. և երկուս ունելով աչս մարմնին, և զՀոգին և զիմաս, և ընտրողականութեամբ արածին. զի ըզփուշան թողուլ՝ շուշանօք բուծանեն, այս ինքն հոգևոր կերակրովք,,: (Գրիգ. Նար. ի Մ՚եկն. Երգոց. Գ. 5):

,,Ա՛ր մահուամբ մարմնոյ քո մեռուցիր զմեզ, և յարու-
թեամբ քո յարուցեր զմեզ ի մեզ զարդարութիւն. տուր զօրու-
թիւն հոգւոյս կամաց հնազանդել զկամս մարմնոյ,,։ (Ի Շար-
կանոն մեծի պահոց)։

Ը.—Օ՛րինէ նշանակէ զգենուլն Յակոբայ զպատմուճան ե-
րից որդւոց նզբօրն, և ազանիկն զուգինիս ի բազուկս իւր։

Պ—Պատմուճանն և ուլունիք նշանակին զմարդկայինս բը-
նութիւն, զոր առեալ միացոյց քնդ աստուածութեան իւրոյ
յարգանդի անարատ կուսին Աստուածածնէ մերոյ Յիսուս Քր-
իստոս, և զգեաց Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ հո-
գւով և մարմնով. զսա այնմ, ,,Անկացե ի Սիոնէ
վերինէ, և զարձուցե զամբարշտութիւնս Յակոբայ՝ ասէ Տէր,,։
(Եսայ. ԽԹ. 20)։

Նա՛ և թէ՝ ,,Բանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամե-
նայն մարդկան,,։ (Տիտոս, Ե. 11)։

Նա՛ և Եւեսաբանիչն սուրբ ասէ, ,,Ա՛ւ այս նշանակ ձեզ զը-
տանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս, և եղեալ ի մը-
սուր,,։ (Ղուկասու, Ե. 12)

,,Թէպէտ և զգեցաւ մարմին և էջ ի մեր նմանութիւն, այլ
կայ ի հայրենի բնութեանն աստուածութեան իւրոյ, որպէս և
կայ իսկ. և կայ յաւիտեան ընդ հօր իւրում ի բարձունս յիւ-
րում բնութեանն՝ հանդերձ մարմնովն զոր ի մէնջն զգեցաւ,,։
(Գրիգ. Լուսա. ՀՀգամթանգեղոս)։

,,Գթածաբար զմերս զգեցաւ մարմին, կամաւ Հօր և
հաճութեամբ սուրբ Հոգւոյն,,։ (Ասոր. ի Պահն. Հոամա-
կարգ)։

,,Ընժամանակին առ ի Հօրէ և անմարմին ծոցածին Ծնունդն
այսօր աւետաւօրն Գաբրիէլի մարմին զգենու ի սրբոյ կուսէն,,։
(Ի Շարականի կանոն Ընտեաց)։

Հօրէ նշանակէ մասնէն Յակոբայ առ Հայր իւր՝ և
ասէ. արի կեր յորսոյ իմմէ։

Պ.—Օ՛ձայն. զի յորժամ աստուածութիւնն միաւորեցաւ
ընդ մարդկայինս բնութեան, և կատարեաց զերկրպագօ-
րէնութիւնսն, օրհնեալ և արքայացեալ գնեղ՝ կացոյց ա-
ռաջի Հօրն երկնաւորի. ըստ այնմ, ,,Ընդ ամենայն
աւուրսդ անդամով մարմնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յան-
դիման կացուցանել զձեզ առաքել և անարատս և ան-
ա՛ռաջի նորա,,։ (Կողասացւոց. Ա. 22)։

,,Նոյեպէս և Քրիստոս միանգամ մատուցեալ պատարագ
առ ի բառնալոյ զմեզս բազմաց. քանի յերկրորդումն առանց մե-
ղաց յայտնեսցի անձնիկ, որ ակն ունիցին նմա հաւատովք ի
փրկութիւն,,։ (Եբրայեցւոց. Թ. 28)։

,,Ո՛չ ասաց առիւ, այլ թէ բարձեր, այս ինքն թէ վերացու-
ցեր, սրբեցեր, ջնջեցեր, մաղրեցեր, կորուսեր, անյայտ արարեր։
Օ՛ր ո՛չ չիմանայցաւ ի նմա տեսակ ինչ ապականի զի մաքրիչ
է ամենայնի, և անմեղ մարմնով՝ զամենեցունց մաքրեաց
զմեղս և ջնջեաց զանօրէնութիւնս,,։ (Նոսրով Իմաստ-
մակ)։

,,Ընդ ի վերոյ քո զհնաւ գառն անարատ ի հաշտութիւն
Հօր,,։ (Ի Շարականի կանոն Ընտեաց)։

Ը.—Օ՛րինէ ի հարցանելն Յոահաքայ առ Յակոբ՝ թէ դու
ե՞մ ես որդեակ։

Պ.—Այն, զի յորժամ հանդրանայր Յիսուս լուսավայել
ամպովք յերկինս առ Հայր, հիացեալ վերին պետութեանց՝
հարցանէին զուսաի գալն և զգնալն և զկարմրութենէ ձորձոյն՝
ասելով. ,,Ո՞ւսկ այս ով է. որ դիմեալ գայ Եդովմայ, կարմր-
ութիւն ձորձոյ իւրոց ի բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ
և բուռն զօրութեամբ,,։ (Եսայ. ԿԳ. 1)։

«Հայցան վերինքն ընդ մարդկայինս զո կերպ՝ հարցաբանեալք զեսայեան, ով է սա դիմեալ յերկիր արիւնազգեստեալ,»: (ի Հ. ար. Կանոն Համբարձման):

«Հայցան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ, սարսեալ ասէին, ով է սա՝ որ դիմեալ գայ յԵդովմայ. և եկեալ մտանէ փառօք ի փառս տէր, փառք քեզ,»: (ի Ժամագիրքն):

Հ.—Ո՞վ է պատասխանողն Յակոբայ, Թէ ես եմ անդրանիկն քո Եսաւ:

Պ.—Անդրանիկ էր Հօր ամենակալի Որդին միածին սահմանաձուխեամբն, և եղև անդրանիկ սրբոյ կուսին Մարիամու մարդկութեամբն, և զանձն իւր մատոյց Հօր. ըստ այնմ, «Ես անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամենայն թագաւորս երկրի,»: (Սաղմ. ՁԸ. 26):

«Ես Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայեն՝ որ է անդրանիկ ի մեռելոց, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և լոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով,»: (Յայտնութիւն. Ա. 5):

«Մի որդի Հօրն միայնոյ. և միածին անդրանիկ աստուածամայր տիրածին կուսին, արարիչն՝ յերկայնութիւն մարդ եղեվ ձշմարիտ սկզբնածին, ահա ոչ զինի եղելոց երկրապագիցս նմանութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ, որ ոչ ցուցաւ ի դարս, և ոչ գոյացաւ ի ժամանակս, անդրանիկ ըստ աստուածողին, քան զամենայն թագաւորս երկրի,»: (Ներս. Լ. Գ. 5):

Հ.—Ո՞վ է ասէն Նահապետ ցՅակոբ՝ Թէ մերձեցիր առ ես և շօշափեցից զքեզ:

Պ.—Ի ծածկեալ խորհուրդ անօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ նահապետօք և մարգարէիւք դուշա-

կեր զյապագայ ժամանակին: Ո՞ստն որոյ ոչ Թէ զնահապետն Յակոբ յառաջ քան զշօշափելն Նահապետ հօր իւրոյ՝ կարծեցեալ համարիմք անմարմին, անիրեղէն և անշօշափելի, այլ մարմին երևելի և շօշափելի: Իսկ Տէրն մեր յառաջ քան զմարդեղութիւնն ոչ էր մարմին, ոչ շօշափելի, ոչ ըմբռնելի, և ոչ զննելի. այլ խոստովանիմք զնա նախ քան զյաւիտեանս քան Հօր՝ անմարմին, անշօշափելի, անըմբռնելի, և անզննելի, և ի ժամանակի մարմնացաւ անհայր յանարատ և ի սուրբ կուսէն Մարիամայ Աստուածածնէ և եղև տեսանելի, շօշափեցաւ մարմնով ի մինչ, զննեցաւ և ըմբռնեցաւ, ըստ այնմ, «Ոչ անն մարմին եղև և բնակեաց ի մեզ,». որպէս գրի, «Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ, շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի. որպէս զիս տեսանէք զի ունիմ,»: (Ղուկ. ԻԴ. 39):

«Որ էին ի սկզբանէ զորմէ լուաքն, որոյ մատանեսան իսկ եղաք, ընդ որ հայեցաքն. և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց,»: (Ա. Յովհ. Ա. 1):

«Ո՞ստն որոյ և մեք խոստովանիմք զմարմինն համագոյակից ի մեզ. զի ի զանգուածոյն է Ադամայ, և թանձր և ոչ առ աչս երևեալ՝ ձև միայն մարմնոյ, որպէս Աբրահամու երևեցաւ. և այս ոչ միայն յառաջ քան զյարութիւնն, այլ և յետ յարութեանն, որպէս և ինքն ասաց. շօշափեցէք զիս և տեսէք, զի ես նոյն եմ. զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ,»: (Ներս. Հ. Նորհ. գրեալ Թուղթ, առ Մանուել կայսր, յեր. 65):

Հ.—Ո՞վ է յայտ առնէ ասէն, «Ձայնդ ձայն Յակոբայ է, և ձեռքդ ձեռք Եսաւայ»:

Պ.—Ո՞այն, զի Հայրն յերկինս վկայեաց զՈրդւոյ աստուածութիւնէն միաւորելոյ ընդ մարդկութեանս. իբր այն Թէ՝ ձայ-

ղէմ յերկրաւորաց և յերկնաւորաց ընդ Հօր և սուրբ Հոգւոյն,,։ (Ի Շարականի)։

,,Ընկանէին քահն և ջրեք երիցունքն առաջի նստելոյն յաթոռ և երկիր պագանէին կինդանւոյն յաւիտեանս յաւիտենից,,։ (Յայտնութիւն Գ. 10)։

Հ.—Ո՞րչափ նշանակէ ոճաչն Դասապետ առ աղբայր իւր։

Պ.—Նշանակէ զսխակալութիւն նահապետութ ի երից առ միակ բարերարն աշխարհի Յիսուս, ըստ այնմ, ,,Ի ձայնէ թշնամւոյն և ի նեղել մեղաւորին խոստովանութեամբ, և բարեխօսութեամբ ոխտ պահելոյն ինձ,,։ (Սաղմ. ՃԽԲ. 3)։

,,Վասն սպանման և ամբարշտութեան կղեօր քո Յակոբ այ՝ ծածկեսցէ զքեզ ամօթ՝ և ջնջեսցիս յաւիտեան,,։ (Աբդի. Ը. 10)։

Հ.—Ո՞րչափ ցուցանէ առաքելն Յակոբայ ի Հօրէն ի Տիրոջագետս Ասորւոց։

Պ.—Վարձեալ ցուցանէ զառաքեալսն Որդւոյ ի Հօր յաշխարհս, որ ակնառ պատմեաց մեզ զկամս Հօրն, և միաւորիցս զմեզ ընդ իւր. ըստ այնմ, ,,Ո՛վ յանձնէ իմոյ ոչ խօսեցայ՝ այլ՝ որ առաքեացն զիս Հայր, նա եւ ինձ պատուէր զի՞նչ ասացից և զի՞նչ խօսեցայց,,։ (Յովհ. ԺԲ. 49)։

,,Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ սուրբ Որդին, էառ զմարմին ի կուսէ մարդ կատարեալ, կատարեալ աստուածութեամբն,,։ (Գրիգ. Նարեկ. ՀԱգաթան)։

,,Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ և մարմնացար ի սրբոյ կուսէն, որ վասն մեր ի յերկինից իջեր և լուսաւորեցեր զտիեզերսս,,։ (Ի Ժամագիրս)։

Հ.—Ո՞րչափ ցուցանէ կին առնուլն Յակոբայ։

Պ.—Կինն յայտ առնէ զհարսնացեալ սուրբ եկեղեցի և ըզհոգիս մեր, յաղագս որոյ եկն միածինն, դի զանջատեալսն և ըզ-

նդէ աստուածային մարդ եղեալ՝ զայ ձայն Աստուծոյ, և մարդկին Աստուած եղեալ՝ երևի ընդ աստուածութեանն. քանզի ձայնն աստուածային հզօր է քան զՀնչուրց բազմաց. ըստ երանելոյն Յովհաննու թէ՝ և ի մէջ հօտին ոչխարանացն նման որդւոյ մարդոյ. . . . . և ձայն նորա իրրև զձայն ջուրց բազմաց,,։ (Յայտն. Ը. 13—15)։

,,Ձայն տեառն զօրութեանց, և ձայն տեառն ուժ վայելչութեանց,,։ (Սաղմ. ԻԲ. 4)։

,,Բանզի ձայն տեառն, ձայն զօրութեան է, ըստ մարգարէին,,։ (Յովհ. Ոսկեբեր. ի Մեկն. Մատ. Դլ. 7. էջ. 527)։

Հ.—Ո՞րչափ է ասելն Ծառայեացն քեզ ազգք, և երկիրպագցեն քեզ իշխանք, և եղիցես տէր եղբօր քումմ։

Պ.—Ի այն, զի Յիսուս Քրիստոս առեցեալ մարմնովքն հանբարձեալ յերկինս, և նստեալ ընդ աջմէ Հօր ի սեպհական աթոռ փառաց իւրոց, զերկրպագութիւն առնու յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ՝ ըստ պրնցէլեայնն, ,,Թագաւորք տեսցեն զնա և յոտն կացցեն, և իշխանք՝ երկիր պագցեն նմա վասն տեառն, զի հաւատարիմ է սուրբն Իսրայէլի, որ ընտրեաց զքեզ,,։ (Նոյ, նոմ. 7)։

,,Ո՛վ յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և անդրապարտեսեալոցն,,։ (Փիլիպ. Բ. 10)։

,,Ակայք լուսապսակք յօրհնութիւն նոր օրհնեսցուք զհեր. քանզի մարմինն որ ի մէնջն էառ ի հրեշտակաց երկրպագութիւն առնու, ի սերովբէից և ի քերովբէից,,։ (Ի Շ. ար)։

,,Երեգային արդարութեան Քրիստոս ծագեալ յաշխարհ հալածեաց զխաւարն անպիտութեան. և յիւր մահու և յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց, որ երկրպա-

յրուեալըն ժողովեսցէ յինքն. ըստ այնմ, ,,Միթէ պղծ սիրեաց անձն իմ՝ տեսէ՞ք,, և իրրև եգիտ, բախելով պղուն կոչեաց առ ինքն, և ասէ. ,,Բաց ինձ քոյր իմ, մերձաւոր իմ, կատարեալ իմ,,: (Երգոց, Գ. 3.—Ե. 2):

Եւ երանելին Պօղոս ասէ. ,,Ընդ, սիրեցէք զկանայս ձեր. որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա,,: (Եփրայեցւոց, Ե. 25):

,,Յամենայն ազգաց և լեզուաց՝ որք աշակերտեցան աւետարանին, ի վէմն Քրիստոս հաւատովք մերձեցան, յամենայնցունց մի տաճար հոգեւոր և մի եկեղեցի շինեցաւ,,: (Մարգիս, Ճ. նորհ. ի Մեկն. Ը. Պետրոս, ձառ չորրորդ):

Ա.—Ո՞ւմ դուշակեր սանդուղն հաստատեալ յերկրէ յերկինս, և տէր հաստատեալ ի նմա:

Պ.—Սանդուղն էր օրինակ սրբոյ խաչին, որ անդ ծառոյց զփառան Յիսուսի և զբարձրանալն յետ ժամանակաց ի վերայ նորին, և զքն հրեշտակաց ի սպասաւորութիւն, զմարդիան նովաւ յերկինս եղանելն. ըստ այնմ, ,,Որ զկենարար խաչ քո դուշակեր սանդուղքն Յակոբայ, որով հրեշտակք ի յերկիր իջեալ և մարդիկ յերկինս ելին,,: (Ի Ճարկ):

,,Յուցեր նմա զաստղային,
Կանգնեալ սանդուղք յերկրէ յերկին.
Յոյր տէրըդ ի բարձրը դիտին,
Եւ ել և էջ հրեշտակայքն.
Խաղով օծեր զքլոխ վիմին
Տուն անուանեալ տիրականին,
Ի նմանութիւն մեծ խորհրդին,
Զոր հոգեկիրքըն ծանուցին,,:
(Յիսուս Որդի. Ա՛Ծ):

Ա.—Ո՞ւմ դուշակեր երեսիլ սանդղոցն յարեւուն մտանել,

Պ.—Զխառնարսեան արեգական ի վառելութեան Տեառն ի միջօրէի. ըստ այնմ, ,,Ձէ ապրաքին խարամուելիկն նորա արեգակաւ արեգական, և մի օրն եղև իբրև երկու,,: (Աբրաք. Ժ.Զ. 5):

,,Տեսաք զաէրն ի խաչին խառնարեցեալ արեգական, և վախճեալ ժամարին ցկէզ վերուստ մինչ ի վայր,,: (Ի Ճ. ապաք):

Ա.—Ո՞ւմ ցուցանէ վերստին ննջելն Յակոբայ:

Պ.—Ոմանք Քրիստոսի ի վերայ խաչին, որ մահացեալ մարմնովն ննջեաց իբրև ի քուն արթնութեան. ըստ այնմ, ,,Ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ,,: (Երգոց Ե. 2):

,,Ես ննջեցի ըստ մարմնոյ, և սիրտ իմ արթուն եկաց ըստ աստուածութեանն,,: (Գրի. Ճառ. ի Մեկն. Երգոց. Ե. 2):

,,Ձէ ոմն մեռեալ՝ և ոմն լուծիչ մահու, այլ ինքն մեռեալ և ինքն կենդանի և կենդանարար մեռելոց. քանզի մի և նոյն Քրիստոս, մարդ զոլով ընութեամբ՝ մահկանացու, և Աստուած զոլով ընութեամբ՝ անմահ,,: (Տես. Ճ. նորհ. Թուղթ գրեալ առ Մանուել կայսր, էջ. 80):

Ա.—Ո՞ւմ դուշակեր յառնելն Յակոբայ ընդ առաւօտն և վանգնել զվէմ. արկանել զնովս ի գլուխ նորին՝ և կոչել զտեղին զայն տուն Աստուծոյ:

Պ.—Գուշակեր զաստուածահրաշ յարութիւնն Քրիստոսի, որ եղև յառաւօտս միաշաբաթուն. և վէմն իսկական՝ զոր կանգնեցաք, է օրինակ հիման սուրբ եկեղեցւոյ և տանն Աստուծոյ. որ հիմնեալ հաստատեցաւ ի Քրիստոսէ և յառաքելոց նորա. ըստ այնմ, ,,Ճ. հիմնեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. որոյ պղծ անկեանն Յիսուս Քրիստոս, յորում ամենայն շինուածն յօդեալ և պատչաճեալ ածէ ի տաճար սուրբ առ Տէր,,: (Եփես. Բ. 20—21):

Եւ սուրբ վարդապետն մեր Գրիգոր ասէ. ‘‘Յակոբ զքարն պատակեր վիմին ի խորհուրդ երկար խոտանին ընդարձակութեան օծմամբ տպաւորեալ կերպացոյց. առ որ զնջումն անձառ բարձրիլոյդ աւետութեամբ սանդղոցն յարմարութեան, և զես ի վեր տանելոյն անդուլկիցութեամբ, զարձանն իւղեալ կառոյցնպատակ ի ցոյցս ապառնիացն յիշատակի,, : (Նարեկ. Գ. 9. 5):

‘‘Որք կանխեցին յիւրաքանչիւր ժամանակս մարեան ընդ եկեղեցւոյ, և ոչ կարացին շարժել զվէմն որ անկաւ ի հիմանէն նորա. և ոչ զերկնաւոր շինուածն փլուզանել,, : (Մարգար. Հնորհ. Ա. Պետր. ձառ Ը. ա. 1):

‘‘Որ բարձրացաւ քան զամենայն իրկրպագութիւնս կոչ տուն Ըստուծոյ Յակոբայ լինելով ըստ մարգարէին. յորում էարկ Իսրայէլ զիւղս ի վերայ վիմին ի տնկել նանդղոյն, ուստի բղխեցին լերինք զքաղցրութիւն. և բլուրք կաթամբք ստուգեցին, այս ինքն՝ մարգարէք և առաքեալք զաստուածարուխս վարդապետութիւնս խաչին՝ կաթն և մեղր ի ներքոյ լիզուի իւրեանց ունելով. և հաստատուն կերակուր և կաթն աշակերտացն ջամբելով,, : (Յովհ. Ոսկեբեր. ի Մեհն. Մատթ. Ի. 33. էր. 593):

—Ո՞նչ նշանակին երկոքին գաւերքն Լեառնու Լիա և Ռաքէլ, զորս էառ Յակոբ ի կնութիւն:

Պ.—Լեառն օրինակ է բնութեանն, և երկոքին գաւերքն՝ Ըրէից և հեթանոսաց. որք հարանացան Քրիստոսի. յորմէ նաւաբեկ նա ի վերայ իշոյ և յաւանակի, ըստ այնմ, ‘‘Ուրախ լեր յոյժ՝ դուստր Սիոնի. քարոզեա դուստր Երուսաղէմ ահա թագաւոր քո գայ առ քեզ արդար և փրկիչ. նոյն հեզ և հեծեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ,, : (Զաք. Թ. 9):

‘‘Ընացէք դուստր Սիոնի, ահա ասիկ փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ իւր. և գործ իւր առաջի երեսաց իւրոց,, : (Եսայի. ԿԲ. 11. ՒԱ. 7. Մատ. ԻԱ. 5):

‘‘Նստիլ ի վերայ իշոյ և յաւանակի, օրինակ եկեղեցւոյ՝ Ըրէից և հեթանոսաց,, : Տես. (Հնորհ. ի Թուղթն որ առ Եղեքս. էջ. 58):

—Ո՞ւմ գառնի օրինակ երէց դուստրն Լիա:

Պ.—Եկեղեցւոյն Ըրէից. զի որպէս աչք Լիայ գիձացեալ էին և նուազեալ ի տեսութենէ, նոյնպէս կուրացան և Ըրեայք տեսանել զզարդսն Քրիստոսի և հաւատալ ի նա, ըստ այնմ. ‘‘Լրթի և ասա ցժողովուրդն ցայն. լսելով լսիջէք և մի իմանայջիք. և տեսանելով տեսջէք և մի՛ առնջիք,, : (Եսայ. Ձ. 9: Մատ. ԺԳ. 14: Մար. Դ. 12: Գործ. Ը. 10: Յովհ. ԺՒ. 40: Գործ. ԻԸ. 26):

‘‘Լսակ արդ՝ զոր խնդրէին Իսրայէլ, այնմ ոչ հասան. բայց ընտրութեանն հասան. և այլքն կուրացան: Որպէս և գրեալ է. Ետ նոցա Ըստուած հոգի չիմարութեան, աչս՝ որով ոչ տեսանիցեն, և ականջս՝ որով ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի,, : (Հռոմ. ԺԱ. 7. 8: Սաղմ. ԿԸ. 23. 24: Մեծն. Վարդ. ի Մեհն. Սաղմ. Ե. 3):

‘‘Եւ դարձեալ զն Լիա օրինակ էր բազմարդութեամբն առաջին ժողովրդեանն,, : (Տես. Հնորհ. ի Մեհն. Մատ. ԻԲ. 18. էջ. 49):

—Ինչ բարեշուքն Ռաքէլ ունի օրինակ:

Պ.—Եկեղեցւոյն հեթանոսաց, որ գալստեամբն Քրիստոսի օսկեհուռն զարդու, այն է՝ հօթնարփիւռն շնորհօք Ըոգւոյն սրբոյ զարդարեալ գեղեցկացաւ. ոսկի և փիստան Քրիստոս դովաբանէ զգեղեցկութիւն նորին՝ ասելով. ‘‘Գեղեցիկ ես մերձաւոր իմ իբրև զանուշահոտութիւն, գեղեցիկ ես իբրև

զներուսաղէմ, և որպէս հնացումն կարդալ ,,։ (Նրդ. Օ. 3)։

,, Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա։ Օ. ինձ սրբեսցէ սրբութեամբ ապաշխարին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ պարտս կամ զաղտեղութիւն կամ զայլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ ,։ (Ինփես. Ե. 25—27։ Ունձն. Վ. արդ ի Մեկն. Մատմ. Ե. 3)։ — .

,, Կայ դշնոյ ընդ աչմէ սուրբ եկեղեցի, ոսկեհուռն պսակեալ նշանաւ խաչին քո ,։ (Ի Շարականի)։

,, Օ՛ որ կոչէ ի ցնծութիւն, եթէ ոչ զքեզ՝ եկեղեցի հնթանոյց, դու ես սեպհական փրկչին քո ժողովուրդ՝ գնեալ արեամբ անբիծ և անարատ գառնին ,։ (Ներս. Լ. ամբ ի Մեկն. պատ. յերես 42։ Ներս. Շ. Նորհ. ի Մեկն. Մատ. Ե. 18)։ .

. — Օ. ի՞նչ ցուցանէ բազմածնութիւնն Լիայ։

պ. — Օ. եկեղեցին երկիր, որ բազմածին էր սիեպէս օրինօք և սրբութեամբ. զորմէ ասէ երանելին Պօղոս ,, Յորժամ պատարագքն և զոհքն մատչէին, որք ոչ կարէին բաց միտս կատարել զպաշտաման նան, բայց միայն կերակրովք և ըմպելեօք և տարբեր մկրտութեամբք, մարմնոյ արդարութեամբք ,։ (Եբր. Թ. 9)։

,, Յայնժամ (այսինքն՝ մինչև ցՔրիստոս) նշմարանք էին (արարողական օրէնք՝) և ոչ մարմինք, խորհուրդք էին՝ և ոչ լրումն ճշմարիտ ,։ (Ինփես. ի Մեկն. Գաղատ. գլ. Գ.)։

,, Օրէնքն (մովսիսական) զմեզ առ աւետարանն —հայեցուցանէին. նմին իրի իրև սա երևեցաւ, նա՝ որ զմարդիկ ոչ կարաց ազատել, տկար եւս և ի բաց գնաց ,։ (Մարկ. Շ. Նորհ. ի Մեկն. Յակոբ Ճառ. վիճերորդ)։

. — Օ. ի՞նչ ցուցանէ ամուսնութիւնն Նաքելի։

պ. — Օ. եկեղեցին Հնթանոյց, որ ամուլ էր և անճին ի հոգևոր բարիս և օտարացեալ Յնաոուծոյ. այլ իրրև ևկն Որդին միածին յաշխարհ, կալաւ զնա հաստատութեամբ՝ որպէս ասէ մովսիսական Յնաոուծոյ Պողոմոն, ,, Կալայ զնա և ոչ թողից զնա, մինչև տարայց զնա ի տուն մօր իմոյ, և ի սենեակ յղացիչին զիս ,, կամ թէ ,, Ո՞վ է սա՝ որ ելանէ ոսպիտակացեալ՝ յենլեալ յեղբօրորդին իւր ,։ (Նրդոց. Գ. 4. Ը. 5)։ .

Օ. ի ի՞նուէ ոտրտատաւ, և հոմենակ կորհրդով բարեդատաճեալ ուրախացաւ, քան այնմ, ,, Ուրախ լիր ամուլ, որ ոչ ծնանէիր. պոչիր և աղաղակեա՝ որ ոչդ ևկնէիր. զի բազում են որդիք ակնդկիզ առաւել քան զպատմուճան ,։ (Նսայի. Ծ. Գ. 1)։

,, Որ շինեցեր զտուն քո զեկեղեցի խնամատուիւն Օրս Յիսուս, և կանչնեցեր ի սմա սիրոնս զհօմնարարեան Հոգոյն պտուղ խնդութիւն, և առաքեցեր զծառայս քո առաքեալսն, կոչել Զհնթանոյն Յարքունին ուրախութեան խառնեցեալ բաժանիլն ,։ (Ի Շարականի)։

,, Օ՛ուարճացիր Հարսն անարատ աքօգարիտակ վայելչացեալ զարդարեալ Հանդերձ փառաց. և ել ընդ առաջ երկնաւոր փեսային. ուրախ լեր ամուլ բազմածին՝ ահա փեսայն գայ առ քեզ ,։ (Նոյն անդ)։

,, Ե՛ Լարուք ամբարիշտ ասէ զնոսա. և շունս անուանէին և չար մշակս. զի նախ նոքա որդիք էին՝ և հնթանոյք շունք, իսկ այժմ հնթանոյք որդիք կոչին, և Ընտրեալք շունք ,։ (Մարկ. Շ. Նորհ. ի Մեկն. Յակ. Ճառ. Ը. ա. Կ. Ը. Թադ. Ր. 8)։

Որպա ամուլ եկեղեցին.

Ի բազմածնուհոդ փոխարկեցին,

Ը. զվիճակաւոր յարուցին,

Ի յարութեան հաւատս վկայեն։ (Յիսուս Որդի Ած.)։

— Ո՞րչափ ցուցանէ գնելն Յակոբայ զդաշտացանն ի ջուր, և զի՞նչ խաշինքն գորշախայտք, սպիտակք և խայտախարիսք։

Պ.—Գաւազանն է յօրինակ սրբոյ Խաչին. աւազանն ջրոյն՝ սրբոյ աւազանին մկրտութեան։ և խաշինքն՝ ի նմին մկրտեալ հօտեւոց. զի ի մկրտել քահանային նախ արկանէ գՋուր յաւազանն, ապա զխաչն և ապա զմկրտելն երեխայն. որ։ մկրտութեամն և դրոշմամբ յամենասուրբ Երրորդութիւնն յանուն՝ լինի քրիստոնեայ և խառնի ի հօտս Քրիստոսի, ըստ այնմ։ ,,Ո՛վ ես տայ գՋուր ի ճարատեաս՝ որոց գնան յանջրզուջ. եկեայ զգալի իմ ի վերայ գնաւակի քո, և զբերնոտութիւնս իմ ի վերայ որդւոց քոց,,։ (Եսայի. Խ.Գ. 3)։

— Եւ թէ՝ ,,Յանկոյիկ ի վերայ ձեր ջուր սուրբ. և սրբեսջիք յամենայն պղծութենանց ձերոց, և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ,,։ (Եզեկ. Լ.Ո. 25։ Ովաբար. Ժ.Գ. 1)։

,,Յջուցանէ (քահանայն) զերկեայն ի ջուրն, և ասէ. (այս անուն) ծառայ Ըստուծոյ եկեալ յերեսփոխութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ... միանգամ ասելով՝ երից թաղէ (կամ ընկղմեցուցանէ) ի ջուրն յօրինակ երեքօրեայ թաղմանն Քրիստոսի,,։ (ի Մհծ. Մաշտոց)։

,,Դրոշմիւն՝ Քրիստոսի հղայք. սուրբ մեռոնիւս՝ արժանացեալք քրիստոնեայ կոչելոյ, զձշմարտութիւն անուանն՝ վերսին ծննդեամն առացեալք. զի մինչ չև էր պարգևեալ ձեզ այս շնորհ, այնմ անուան տիրապէս չէիք արժանի,,։ (Ակնարկ. Երուսաղէմի. ի Խորհրդած. մեռոնի. Ժ.Օ.)։

,,Ծնունդ է ի Հօրէ անեսեալ՝ ծնեալ և զեղ յաւազանէն. և զոր օրինակ ինքն ի կուսէն ծնաւ, և գկուսութիւն մօրն ոչ խնխոտեաց, այնպէս և զեղ ծնեալ ի կոյս աւազանէն, որպիս Ըստուծոյ։ Եւ գկուսութիւն մօրն իւրոյ ոչ պատկանէ. վասն զի այն այնմ օրինակ էր։ . . և որպէս հաւատացաք, եթէ այն որ բնութեամբ որդի էր Ըստուծոյ եկն և եղև ընտրհօք որդի մարդոյ ծնանելով ի կուսէն, նմանապէս հաւատամք նովին չափով զօրութեամբ, եթէ մեք որ բնութեամբ որդիք եմք Ըստուծոյ, ծնանելով ի կոյս աւազանէն՝ լինիմք ընտրհօք որդիք Ըստուծոյ,,։ (Սարգ. Ընորհ. ի Մեկն. Յակոբ Ճառ. Չորրորդ. ա. 18)։

Պ.—Ո՞րչափ դուշակէր վերադառնալն Յակոբայ ի հայրենիս իւր։

Պ.—Դուշակէր զվերադառնալն Յիսուսի Քրիստոսի համբարձմամբ յերկինս առ Հայր. ըստ այնմ. ,,Եղիր ի հօրէ և ակն յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ. և երթամ առ Հայր,,։ (Յովհ. Ժ.Օ. 28)։

,,Եւ աւարտեալ զտնօրինականացն զվերկանատարն ըզանառասութիւն, անառուածծանէս վերակինգպղեալ. և կառաջ վարեալ ի թիս հողմոյ՝ ելեալ ի քրովբէս՝ ամպով անքննութեան ծածկեցաւ. համբարձեալ գեր ի վերոյ ամենայն երկնից, նստաւ ձախակողմեայ Հօրն իւրական սկզբնաժառանգ Հօրն հաւասարութեան. յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ. անկորուստ առեցիլովն և աննուազ սեպհականօքն,,։ (Նարեկ. Լ.Գ. 5)։

— ,,Սակայն ըստ մարդկութեանն յետ կատարման անօրինական խորհրդոյն վերացաւ, նստաւ ընդ աջմէ մեծութեան ի բարձունս,,։ (Ներ. Ընհր. գրեալ Թուղթ. առ քահանայս Յաղագ նահանգի)։

Հ.—Ո՞ւր է հանդիպեալն Յակոբայ՝ բանակացն Ըստուծոյ։

Պ.—Ո՞ այն, զի մինչ սուրբքն անկանէին ի վարձատրութիւնս և ընդունէին, հրեշտակք Աստուծոյ յօդնութիւն հասանէին նոցա և պահէին. ասասի ասէ Դաւիթ, «Բանակք հրեշտակաց տեառն շուրջ են զկրկնազածելսն իւրովք և պահեն զնոսա»։ (Սաղմ. ԼԴ. 8)։

Ր. Սա սմին օրինակի պատահեցաւ և Տիառն, յորժամ զընայր կառաւ ի չարչարանսն խաչին, ըստ այնմ. «Երևեցաւ նմա հրեշտակ յերկնից և զօրացուցանէր զնա»։ (Ղ. ու. ԻԲ. 43)։

«Այսօր որ ի հրեղէն զօրաց երկնից միշտ փառաբանեալ երկրապահս Բանդ, զղօրեղիդ մարմնով առ ի՛ն՝ ընկալեալ ընդ ի՛ս զքո վասն իմ զպաղատանս. ուստի կամաւ կրելով զերկիւղ ի հրեշտակաց զօրանայիդ զօրացուցիչդ երկնաւորաց և երկրաւորաց»։ (Ի Շ. արականի)։

Ի՛.—Ո՞ւմ ցուցանէ չորս հարիւր արամբք գալն Նաւայի ի վերայ Յակոբայ ղեռօր իւրոյ։

Պ.—Նշանակէ զամբոխն ի՛ւրէից, որք առաջնորդութեամբ Յուդայի եկին ըմբռնել զՅիսուս ի մասնուհետեան գիշերին. ըստ այնմ. «Եհա Յուդա մի յիւրոցասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրովք ի քահանայապետացն և ի ծերոց ժողովրդեանն»։ (Մատ. ԻՕ. 47)։

«Եւ յօր ընդ երկնային լուսատուացն ահիւ պատառեալ Բանդ Աստուած. նանմացեալ զաք Եբրայեցւոցն զեմնանալ լոյսդ ի գիշերին ջահիւք և սուսերօք եկեալ ըմբռնել զանբծական բռնելով. վասն որոյ երկրապահք անճառելի քո խոնարհութեանդ»։ (Ի Շ. արականի. կանոն ՁԵԾի ուրբաթու)։

Ի՛.—Ո՞վ ինչ ցուցանէ զահի հարկանելն և յերիւառս զանակս պատահցանելն Յակոբայ զժողովրդին։

Պ.—Ո՞այն, զի յորժամ առեալ Յիսուս զմեռանան աշակերտան՝ եկն ի գիւղն Գեթսեմանի. զուրթն ի նոցանէ եթող անդ, իսկ զերկուն՝ այն է՝ զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս էառ ընդ իւր, և նոքօք հանդերձ գնացեալ ի ներքսագոյն պարտէզն, սկսաւ զարհուրիլ, դողալ, երկնչիլ և հոգալ զմահուանէ, ըստ այնմ. «Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցաշակերտան. նստարո՛ւք աստ մինչև ես յաղօթս կացից։ Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և սկսաւ տրտմիլ և հոգալ»։ (Մատ. ԺԶ. 32)։

«Հոգայր զկրնից տրտմաբար՝ երիւքն եղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս հոգիս յօժար, բայց ե բնութիւն մարմնոյս տկար»։ (Ի Շ. արականի)։

«Հոգալն և երկնչելն և տրտմիլն՝ զի մարդ էր, իսկ զաշակերտան քաջալերելն յաղթելոցին աշխարհի, և ասելն մի՛ երկնչիլ ի մարմնոյ սպանողացն. և մի՛ հոգալ, և մի՛ խռովիլն սրտիւք՝ զի Աստուած էր»։ (Շնոր. Ճնորհ. Ընդհանր. յիսուս 145)։

«Ըմբռնեցաւ յորժամ կամեցաւ, զի մարդ էր. իսկ անըմբռնելի միայ յորժամ նոքա կամէին և ոչ ինքն, զի Աստուած էր»։ (Նոյն անդ)։

Ի՛.—Ո՞վ ինչ է ասելն Յակոբայ՝ թէ գուցե եկեալ հարկանիցէ զմայր առ մանկանն։

Պ.—Ի՛ այն, զի գիտէր Յիսուս զմօրն իւր ընդ ինքեան ի խաչին հարկանիլն, և ի վերայ սիրոյ սեղանոյ Որդւոյն անհուր ողջակիզելն, զի վճարեսցի բան Սիմէոնի, թէ, «Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր»։ (Ղ. ուկ. Ե. 35)։

«Յօղէր արտօսր ցաւագին՝ մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լսեր զծարաւին՝ բարբառելոյ իւր միածնին»։ (Ի Շ. արականի)։

,, Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ ի կանայս, որ դժուարընդել դասիւարական խաչի վարժեալ կրթեցար որդւոյ քո կցորդակցութեամբ միաւեւակն ժուժկալութեամբ՝ կրելով զերաշխեպ վշտաց ծնեցելոյդ ի քէն Տեառն՝ մշտաչարչարն մեռելութեամբ անձնատուչոր սօթով խարուկեալ, իբրև զորոջ անարատ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար ,, : (Գրի. Նար. ի Ներբողեան սուրբ Ստեփաննոսի. 9):

Հ.—Որո՞ն են օրինակ երեք հատ պատարագքն, զորս առաքեաց Յակոբ առ եղբայր իւր ի ցածուցանել զբարկութիւն նորա:

Պ.—Ն՚ն օրինակ երիցս առ հայր աղօթելոյ Որդւոյն միածնի ի Գեթսեմանեան պարտիզին. զի թերևս անցուսցէ զբարկութիւն երեսաց նորա՝ ըստ գրելոյ սրբազան աւետարանչին. ,, Նկաց յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց ,, : (Մատ. Ի.Զ. 44): Նա պօղոս ասէ, ,, Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս և պաղատանս առ այն, որ կարող էր ապրեցուցանել զնա (ի մահուանէ) ուժգնին գոչմամբ և արտասուօք մատուցանէր, և լսելի լինէր առ լաւութեանն ,, : (Եբր. Ե. 7):

,, Աղօթէ յիմով բնութեամբս առ հայր վասն իմ, զի յառաջինն դարձուսցէ ի փառս, և զի տացէ օրինակ աղօթել և մեզ ի փորձութեան մերում ,, : (Ներ. Հնոհ. ի Թուղթն առ Ալէքս. յիր. 58):

Հ.—Զի՞նչ նշանակէ անցուցանելն զորդիս ընդ ձորն, և ինքեան միայնակ մնալն:

Պ.—Որպէս ի վեր անդր ասացաւ, նշանակէ անցուցանելն Յիսուսի զաշակերտսն իւր ընդ ձորն Գեթսեմանի, և մնինիլն ինքեան ի նոցանէ քարընկէց մի առ ի աղօթել ըստ այնմ, ,, Եւ աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտք իւր ,, : (Յովհ. ԺՀ. 1):

,, Կեդրոնեան յայնկոյս ձորոյ՝ ի վերնատունն եւ խորհրդոյ, եմուտ պարտէզ ընդ պարսիզի՝ եմոյծ զնդամ յադին դրախտին ,, : (Ի Շարականի):

Հ.—Զի՞նչ նշանակէ մարտնչելն առն միոջ ընդ Յակոբայ ցառաւօտս:

Պ.—Ըստ հրեշտակակրօն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ տիեզերալոյս վարդապետի ուսումն ասէ. Նկարէր զմիաւորութիւն Բանին Աստուծոյ ընդ մարդկութեանս անշփոթ և անբաժանելի խառնմամբ երկուց անձառելի միութեանց ի մի անձնաւորութիւն, որպէս զգօտեմարտ պնդապէս ըմբռնեալ առ ի կրել առանց յանցման զամենայն կամաւոր և անդոմնելի կիրս բնութեան մերոյ, զաշխատանս աղօթից, հոսումն կայլականց արիւնաներկ քրտանց, զարտմիլ, զհոգալ, զարտասուել, զերկնչել, և այլն, ըստ այնմ, ,, Զոր խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ ի քէն Աստուած ձշմարիտ ընդ նախեղակ դոյակն միացեալ ի տեսութենէ իմաստից քննութեան մերոյ փակեալ. յորոյ տիպն ապացուցի խաբողն Յակոբ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխուսափ խորհրդով զաստուածատեսն անուն ընկալաւ. այսպէս և որ ի քէն ծնեալդ մարմին ի յարգանդ սրբոյդ սենեկի ընդ Աստուած խառնեցաւ. և խաբեալ զնոսին մարդկան զքշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսող Աստուծոյ՝ այլ ձշմարիտ Աստուած անուանեալ, զամենեսեան յԻսրայէլ անուն փոխադրեաց. սակս որոյ լի բերանով զպաշտպանդ փրկութեան այսմ մեծս խորհրդոյ՝ երանելոք զարիւրհիւր սուրբ Աստուածածնին ,, : (Գրի. Նար. ի Ներբողն սուրբ Աստուածածնի համար. 14. յերես 385. ի տպ. Պօլսոյ):

«Ա՛ջ ոմն ուժով և զօրաւոր, և ոմն անզօր վասնզաւորապէս մի և նոյն գոլ միաւորդ, կրէր զկիրսն կամաւորդ»։ (Ի Շաբաթի)։

«Միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեցաւ (իմա անշփոթ միաւորեաց) զմարմինն ընդ իւր աստուածութեանն»։ (Գրի. լուսա. յԱգաթանգեղոս)։

Հ.— Յիո՞նչ միտս Յակոբդ անուն յԻսրայէլ փոխեցաւ։

Պ.—Իսրայէլդ անուն աստուածատես իմանի. վասն զի՝ բնութիւնս մեր միաւորեալ ընդ Աստուծոյ՝ եաես զնա. յայնմանէ և կոչեցաւ Իսրայէլ, ըստ այնմ, «Նոր Իսրայէլ կոչեցաք ի Քրիստոս, եղաք բաժին Տեառն և ժառանգակից Քրիստոսի»։ (ի Շաբ)։

«Յորոյ տիպն ապացուցի խաբողն Յակոբ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխուլ խորհրդով զաստուածատեսն անուն ընկալաւ. այսպէս և որ ի քէն ճնեալդ մարմին ի յարդանդ սրբոյդ սնեալ ընդ Աստուած խառնեցաւ, և խարեալ զնոցանէ մարդկան զմշնամին՝ մարմնով գերագանցն նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսող Աստուծոյ՝ այլ ճշմարիտ Աստուած անուանեալ, զամենեսեան յԻսրայէլ անուն փոխադրեաց»։ (Գրի. Նար. ի Ներբոյն սուրբ Աստուածածնի, 14)։

«Ծնարդկութիւն նորա՝ արար աստուածութիւն սորա տէր և օծեալ»։ (Ընծան. ճառ. ա)։

Հ.—Ո՞նչ նշանակէ եօթնից երկիրպագանելն Յակոբայ ի վերայ երկրի։

Պ.—Եօթն վէրն Յիսուսի և վեցն բանն, զոր ասաց ի խաչին. զի ի վերուստ խոնարհեալ յերկիր մասայց իւր երկրպագութիւն Հօրն երկնաւորի, զորմէ վկայէ երանելին Յովհաննէս ի տեսլեանն, «Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աս-

տեղս եօթն, և ի բերանոյ նորա ելանէր սուր երկերանեան, և երեսք նորա իբրև զարեգական ճառագայթեալ երևէին»։ (Յայտ. Ե. 16)։

Հ.—Ո՞րչէ ընթանալն Եսաւայ ընդ առաջ եղբօրն, և անկեալ զպարանոցաւն համբուրելն զնա։

Պ.—Ոչ այն, զի զբազմաժամանակեայ օտարացեալ ի Հօրէ բնութիւնս՝ Որդին միաճին էած ի համբոյր նորին. որում և ամենակալն ընդ առաջ, և գրկախառն համբուրիւ ընկալաւ և սիրեաց զնա ի սէր յաւիտենական. որպէս գուշակեաց զայսմանէ խոստանացեալն յԱստուծոյ Սողոմոն ի դիմաց հարսնացեալն եկեղեցւոյ՝ ասելով. «Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ»։ (Երգոց. Ա. 1)։

Ա՛ռ քեզ օրինակ այսմ և զառակ անառակ որդւոյ, որ յաւետարանագիրս պատմի»։ (Ղուկ. ԺԵ. 11)։

«Նա և անառակ որդին գոլով մեք. համբուրիմք յերկնաւոր Հօրէն, ըստ ասելոյ առաքին յաւետարանն»։ (Գրի. Նարեկ. ի Մեծն. Երգոց. Ա. 1)։

Հ.—Ո՞ւմ օրինակ են երկոտասան որդիքն Յակոբայ։

Պ.—Երկոտասանից առաքելոցն Քրիստոսի ի սկզբանէ ընտրեցելոց յանուն ամենասուրբ Երրորդութեան. զի յերրորդութենէն երկոտասան գիր բովանդակի, և երրորդութենդ անուն երկոտասան տառիւք բաղկանայ. զայսմանէ բազում են նշանակութիւնք յԱստուածաշունչ գիրս, որպէս՝ երկոտասան աղբիւրքն Յազմայ, երկոտասան քարինքն՝ զորս կանգնեաց Մովսէս ի սեզան, նոյնպէս և երկոտասան վէմքն Եղիայի, որպէս և գրեալ է, «Եւ էառ Եղիայ զերկոտասան քար ըստ թուոյ ցղեցն Իսրայէլի, որպէս խօսեցաւ ընդ նմա Տէր»։ (Գ. Թագ. ԺԸ. 31)։

"Ձայր առաքող վիճակիդ՝ որում կուսր յաշխարհի ընտրեալս քո ի սկզբանէ"։ (ի Հ. առականին)։

"Առաքեալք Աստուծոյ ընտրեալք ի սկզբանէ նախ քան զաշխարհս, որք արժանի եղեք տեսանել զանառն հրեշտակաց"։ (նոյն, անդ)։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ.

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻՒ։

Ս.—Յերկոտասան որդւոցն Յակոբայ որո՞ն էր առաւել սիրելին։

Պ.—Յովսէփ։ (Ծննդ. Լ. 3)։

Ս.—Ո՞րպէս կրնաքեր զնա Հայր իւր։

Պ.—Զի զնա ծնաւ ի ծերութեան իւրոյ։ (Ծննդ. Լ. 3)։

Ս.—Տեսակ եղբարցն զպատմուճանն ծաղկեայ և զդգուանս հօրն՝ զի՞նչ արարին։

Պ.—Նախանձեցան յոյժ և ատեցին զնա. և ոչ կամէին խօսիլ ընդ նմա խաղաղութեամբ։ (Ծննդ. Լ. 4)։

Ս.—Ո՞րչափ այլ ևս պատճառք գոյին ատելութեան նոցին և նախանձու։

Պ.—Երկոքին երազքն, զորս ետես և պատմեաց նոցա Յովսէփ։

Ս.—Ո՞րչափ երազքն էին։

Պ.—Յառաջնումն տեսանէր, զի ի դաշտի ուրեք զորայ կապէին որպէս թէ երկոտասան եղբարքն. ուր որոյք մեռեալ եղբարցն զարձան և երկրպագին որոյից իւրոց. և յերկրորդումն տեսանէր, զի արեգակն և լուսին և մեռեալն աստղք երկրպագէին ինքեան։ (Ծննդ. Լ. 7.—9)։

Ս.—Ո՞րչափ գործեցին ապա մեռեալն եղբարքն։

Պ.—Վաճառեցին զՅովսէփ Իսմայելացւոցն քսան դահեկանի, որք առեալ իջուցին զնա յԵգիպտոս։ (Ծննդ. Լ. 28. 29)։

Ս.—Ո՞րչափ եղև Յովսէփ յԵգիպտոս։

Պ.—Վերակացու անտես տանն Պետափրեայ ներքինւոյ փարաւոնի դահճապետի. յետ այսորիկ՝ արդարն և անմեղն, անպարտ դատապարտեալ և արկեալ ի բանտի տեղին՝ ուր կալանաւորքն արքունի կապեալ կային ի բանտին. և բանտարգելոցն՝ ումեմն մահ, և ումեմն կեանք նախադուշակեաց. և եղեալ ի բանտէ ամենից կենաց փրկութեան եղև պատճառ յերեսաց ապագայ տովուն, կացուցեալ իշխան, տէր և թագաւոր եղև նա անդ. որում և եկեալ երկիր պագին հայրն և եղբարք ըստ ցուցման նախադուշակ երազոցն։ (Ծննդ. Լ. 1. 4. 20: Խ. 20 22)։

Ս.—Որպէ՞ս երկիր եպագ նմա Իսրայէլ։

Պ.—Ի վերայ գլխոյ գաւազանի իւրոյ։ (Ծննդ. Խլ. 31)։

Ս.—Ո՞ր տեղիս էջ Յակոբ ամենայն տամբն յԵգիպտոս։

Ս.—Ո՞ւստի սովուն եղելոյ յերկրին Քանանացւոց։ (Ծննդ. Խ.Ջ. 6)։

Ս.—Ո՞ւմ օրինակ գտանի Յովսէփ։

Պ.—Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ։

Ս.—Ո՞րչափ ցուցանէ ծաղկեայ պատմուճանն Յովսէփայ։

Պ.—Յուցանէ զմարմնառիկ անօրինութիւնն Քրիստոսի, որ միացեալ ընդ մարդկութեանն անշփոթապէս ծագրեալ երևեցաւ յարմատոյն Յեսսեայ, ըստ այնմ. ,,Եւ բղխեսցի գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի,,: (Նախ. ԺԱ. 1):

,,Միացաւ ի մարմնի անշփոթաբար, զի ոչ փոխարկումն կամ ի բաց բարձումն արար աստուածային կամ մարդկային բնութեանցն, այլ միացոյց զբնութիւնսն, զնոյն զոլ Աստուած՝ և զնոյն զոլ մարդ. որպէս զի Բանն Աստուած մարմին եղև, և որ ի կուսէն մարմնացաւ՝ Աստուած. և նոյն ինքն՝ Աստուած և մարդ. և Մարիամն որ ծնաւ զԱստուած Բանն՝ Աստուածածնին և կոչ,,: (Ներս. Լամբ. ի Միհին. պատասխ.):

,,Միաւորեալ զմարմինն՝ զոր էառ ի կուսէն՝ ընդ աստուածութեան իւրում,,: (Եփրեմ. ճառ. ի Ծնն. Քրիստոսի):

Ը.—Ո՞րպէս յայտ առնէ առեալն մեռանելոյ եղբարցն ըստ Յովսէփ, և չիօսին ընդ նմա խազադութեամբ:

Պ.—Ողորմութիւն և զթշնամանս տիրանինդ Ը.ից առ Յիսուս, ըստ այնմ. ,,Տե՛ս զթշնամին իմ զի բազում եղեն, ատելութեամբ որք ի նանիր ատեցին զիս,,: (Սաղմ. ԻԶ. 19):

,,Որ զիս ատիցէ՝ և զՀայրն իմ ատիցէ. եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղք ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին՝ և ատեցին՝ և զիս և զՀայրն իմ,,: (Յովհ. ԺԵ. 23. 24):

Ը.—Ո՞րպէս գուշակէ օրհնին, արհգական և լուսնին, և մեռանան ատելոցդ երկիրպագանելն Յովսեփայ:

Պ.—Երկիրպագութիւն առնուլն Որդւոյն Աստուծոյ յաճմենայն աղանց ի հրեշտակաց և ի մարդկանէ, ըստ այնմ.

,,Երկիրպագցեն նմա ամենայն տոհմք ազանց. զի Տեառն է արքայութիւն, և նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց,,: (Սաղմ. ԻԲ. 29):

,,Ո՛չ յանուն Յիսուսի Քրիստոսի Ծուխը կրկնեսցի՝ երկնաւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ՝ աէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր,,: (Փիլիպպեցւոց Բ. 10—11):

,,Յորում և ի հրեշտակաց երկրպագութիւն ընկալաւ մերս բնութիւն, այն որ ի դիւաց կոխան եղեալ էր յառաջագոյն,,: (Ներս. Շնորհ. ի թուղթն առ քահանայս Յամայք նահանգի յեր. 172):

Ը.—Ո՞րչափ է վաճառել եղբարցն զՅովսէփ Իսմայելացւոց:

Պ.—Ի օրինակ վաճառմանն Յիսուսի, որ վաճառեալ ընդ երեսուն արծաթոյ. մատնեցաւ Ը.էից ի ձեռն անօրէնն աշակերտին, զորմէ երգեաց գուշակն սուրբ. ,,Եւ ասացի ցնոսա. Թէ բարւոք թուի յաչս ձեր, տո՛ւք զվարձս իմ. ապա թէ ո՛չ՝ զդոյց արարէք, և կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի,,: (Ովսէ. ԺԱ. 12:—Մատ. ԻԶ. 9):

,,Վաճառեցաւ դիւրագին որպէս զմարդ, և գնեաց զաշխարհ մեծագնի իւրով արեամբն որպէս զԱստուած,,: (Ներս. Շնորհ. ի թուղթն առ Մանուէլ կայսր յեր. 80):

,,Ողեբայրն իւրեանց վաճառեցին,
Ընդ երեսուն դահեկանի,
Ի նմանութիւն զաշակերտին,
Գաղտ նենգաւոր գող Յուդայիս,,:
(Յիսուս Որդի յեր. Գ):

Ը.—Ո՞րպէս ցուցանէ վերակացու անտեսութիւն ի վերայ տանն Պետափրեայ, և անպատ բանտարգել, ելանել ամենից կենաց փրկութեան պատճառ լինել, և թագաւորին Յովսեփայ:

Պ.—Յեկիպտոս նեղոսթիւն ասի որ է աշխարհս այս, որ եկեալ փրկիչն՝ փրկեաց զմեզ յանիծից՝ մահու և նեղոսթեանց. և աւարտեալ զամենայն անօրինական խորհուրդս, եկեալ կամաւ ի չարչարանս, մատնեցաւ, ըմբռնեցաւ, անմեղ դատապարտեալ խաչեցաւ անպարտական մահու մեռաւ, թաղեցաւ անապական մարմնով ի դերեզմանի, բանական հոգւովն անբաժանելի աստուածութեամբն էջ ի դժոխս առ բանտարկեալ հոգիսն քարոզեալ նոցա ղիրկութիւն, ազատեալ ի ծանրայութենէ սատանայի, աւերեալ զդժոխս և հան զնոսա անտի. և յերրորդ աւուր յարուցեալ երևեցաւ քառասնօրեայ աւուրբք աշակերտաց իւրոց. և համբարձեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր. և ղհոգիս սրբոց վերացոյց ընդ իւր յերկինս, և դմեզ ազատեալ եթող ի նեղքոյ խնամոյն Սատանայ, մինչև յաւուրն արդար դատողութեան իւրոյ, և առեալ մարմնովն թագաւորեաց ի վերոյ երկնից և երկրի, որպէս և էին թագաւորք թագաւորաց և տէր տերանց. ըստ այնմ, ‘‘Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ՝ ապրեցուցանել զքեզ վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ,,: (Եսայի. ԼԷ. 15):

‘‘Պայ իշխան աշխարհիս այսորիկ և չիս ինչ ինձ դատանէ,,: (Յովհ. Ժ. 30):

‘‘Ի և Աբրիամոս մի անգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց. դի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած. թէպէտ և մեռաւ մարմնով՝ այլ կենդանի է Հոգւով,,: (Ա առ. Պետրոս. Գ. 18.—Տօնքն Սեպտեմբ. ի Մեկն. արարածոց Գլ. Թ):

‘‘Եղանց իրիք յանցանաց կրեաց զչարչարանս և զմահ, որպէս զի զյանցանս Եդեմայ և զմահն իւրով անպարտական մահուամբն և վերջնոյ զջայտոսցէ և կենդանացուսցէ,,: (Աղոթ. Հնոր. ի Մեկն. Ա. պատ. ձառ, վեցերորդ):

‘‘Հոգի սիրով իւրով ընդ մարմինն ի գերեզման, և վասն այսորիկ և ոչ ապականութիւն տիրեաց նմա,,: (Տփրեմ. ի Մեկն. Գ. Կորնթ. յեր. 122):

‘‘Օ, ի մարդկայինն ոգի ի ձեռս Հօր աւանդեալ՝ բաժանեցաւ ի մարմնոյն, բայց աստուածութիւնն անբաժանելի մնաց յերկոցունցն. քանզի էր միացեալ ընդ բանականի հոգւոյն՝ յորժամ էջն առ հոգիսն որ ի դժոխս, և էր անմեկնելի ի մեռեալ մարմնոյն որ ի գերեզմանի անդ, ոչ մասնաւորաբար՝ այլ բոլորն առ երկրքեանն,,: (Տնբ. Շնորհ. ի Թուղթն առ Մանուէլ կայսր, յեր. 50):

‘‘Ուստի և առեալ Աբրիամոս պիշխանութիւնն յետ ամենչնորհացանելոյն զսատանայ, էջ հոգւոքին վայրս մահու՝ առ կապեալ հոգիս արդարոցն, և քարոզեալ ծանոյց ամենեցուն զաստուածութիւն և պշնորհան Հօր, և ազատեալ զամենսեան յիշխանութենէ սատանայի, ազարտեաց զնիգս դժոխոցն հզօրեղապէս. և եթող մնալ ի նեղքոյ խնամոյն Սատանայ մինչև յայտարն դատաստան. իսկ զարդարոն որք ըստ պարտեացն Աստուծոյ, ոչ ըստ ինքեանց էին ըմբռնեալ, ընդ իւր վերացեաց ասելով. օն արիք գնասցուք ասար, այս ինքն առ Հայր, վասն որոյ և ասէ,,: (Տնբ. Լամբ. ի Մեկն. Պատ. յեր. 100):

‘‘Եւ աւարտեալ զանօրինականացն զփրկանաւորն զանտառութիւն, աստուածապէս վերակենդանացաւ. և կառավարեալ ի թևս հոգւոյ՝ եղեալ ի քրովբէս՝ առիւծ անքննութեան ծածկեցաւ. համբարձեալ գեր ի վերոյ ամենայն երկրի, նստաւ ձախս Հօրն թագաւորն իւրական սկզբնաժառանգ հօրն հաւատարմութեան, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ, անկորուստ առեցելովն, և աննուազ սեպհականօքն,,: (Տնբ. Լ. Գ. 5):

‘‘Նա կացի թագաւոր ի նմանէ ի վերայ լերինն Սիոնի սրբոյ նորա ի պատմել զհրամանս Տեառն,,: (Աղմ. Բ. 6):

,,Թագաւոր խաղաղութեան . . . զմարգարէին առնալ ըզբան. զոր կանխագուշակ տեսութեամբ պատմաբանեալ ասէր դէմս Քրիստոսի՝ Եւ կացի Թագաւոր ի նմանէ ի վերայ Սիովնի սրբոյ նորա։ Եւ զարձեալ ասէ. Թագաւորեաց Ես-տուաձ ի վերայ հեթանոսաց . . . Եւ այլն։ Օ՛ի թէպէտ և աստուածութեամբ էր Թագաւոր յառաջ քան զյաւիտեանն ի վերայ ամենայնի, այլ զմարմնով Թագաւորելն ասէ. և զի արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, վասն որոյ և Թագաւոր խաղաղութեան կոչէ,,։ (Խոսրով ի Մեկն. Յաւանակ. յերես, 354—355)։

,,Տէրն զխաչելն էառ զիշխանութիւն ի վերայ երկրի ըստ մարմնոյ . . . . զի աստուածութեամբն յառաջ քան զյաւիտեան էր իշխան ի վերայ ամենայնի. իսկ մարմնով՝ յետ խաչին ի վերայ հաւատացելոց էառ զիշխանութիւն,,։ (Նոյն, անդ)։

Ա.—Օ՛րինչ գուշակէ իջանելն Յակոբայ յԵգիպտոս։

Պ—Դարձեալ ևս՝ Եգիպտոսդ անուն խաւար թարգմանի, և իջուցին Յակոբայ անդր, ցուցանել զգիշերել մարդկայինս րնութեան ի մեղս և ի խաւարայինս բանսի, ուր խոստացաւ իջանել յետ ժամանակաց Որդին Աստուած և փրկել զգերեալն ի նմա. ըստ այնմ, ,,Ես իջից ընդ քեզ յԵգիպտոս, և ես հանից զքեզ խոպան. և Յովսէփ դիցէ զձեռս իւր ի վերայ աչաց քոց,,։ (Ծննդ. Ի.Օ. 4)։

,,Ի սանդարամետս ընդ կապանօք մահու դնէին նախ քան զգալուստն Քրիստոսի, և ճայիւն նորա փրկագործ գալստեանն, արդեալք ի ձանապարհէ դրախտին վասն յանցանացն Եդեմայ,,։ (Ակաթիանոս. ի հաւաքմունս ի Մեկն. պատասխ.)։

,,Որպէս եղէ ես մանուկ և ի մսուր եղայ, և ուրբաթ արարի գծնեալսն. սոյնպէս պարտ է ինձ իջանել ի դժոխս, և մխիթա-

րել զմեռեալս, առ արդարսն այնոսիկ՝ որ յաւիտենից սպասէին, և անդ ունէին տեսանել զիս,,։ (Նփրեմ. ի Մեկն. աւետ. ՚ամաբարբ. գլուխ ԻԴ։—Խոսր. ի Մեկն. յեր. 159)։

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ։

Նախամարգարէն Մովսէս ելեալ պարսպել է քաղաքինն Եգիպտոսի։

Ա.—Ո՞փրկեաց զորդիս Յակոբայ յԵգիպտոսէ։

Պ.—Մովսէս։

Ա.—Օ՛րինչ իմանի Մովսէսդ անուն։

Պ.—Ջանեալ ի ջրոյ, կամ շօշափող զսահմանս տեառն։

Ա.—Ե՞րբ ընկալաւ Մովսէս զայդ անուն։

Պ.—Յորժամ հրամայեաց փարաւոն սպանանել զմանկունս Եբրայեցւոց կամ ի ծով ընկենուլ, յայնժամ ծնաւ և Մովսէս, և էր կայտառ. և թագուցին զնա. բայց չկարացեալ սակս երկար, ընկեցին ի ծով Նեղոսեան. ուստի հանեալ դուստր փարաւոնի, անոյշ զնա յիւր որդեգիրս, և անուանեաց զանուն նորա Մովսէս։ (Ելից Ա. 2—10)։

Ա.—Յումմէ՞ և ո՞ր թագաւ Մովսէս։

Պ.—Յերեսաց փարաւոնի՝ յերկրէ Մադիամու, ուր էառ կին զՍեպփովայ դուստր քրմին Մադիամացւոց։ (Ելից Ա. 21)։

Ա.—Օ՛րինչ գործէր Մովսէս ի տան աներոյ իւրոյ։

Պ.—Ուրածէր զխաշինս նորա. և յաւուր միում մինչ եհան զխաշինան յանապատ՝ և եհաս ի լեառն Աստուծոյ ի Քորէբ, երևեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենւոյն. և տեսանէր Մովսիսի. զի մորենին վառեալ և ոչ այրէր՝ ասէ.

անցեալ տեսիլ պատկերի մեծ՝ զի՞նչ ըլլայ այրի մորենին. և իբրև մերձեցաւ ի տեսանել. եղև յականջս նորա ձայն Տեառն, որ կոչեաց ի միջոյ մորենւոյն և ասէ. Մովսէս, Մովսէս, մի՛ մերձենար այսր, այլ՝ լո՛ծ զկօշկիս յոտից քոց. զի տեղի՝ յորում կաս դու. երկիր սուրբ է: (Ելից Գ. 1. 5):

Ս.—Ո՞վ նշ այլ ևս խօսեցաւ Տէր:

Պ.—Խօսեցաւ և ասէ. անանձնիւք անսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս, և իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոց. և տանել յերկիր բարի և ընդարձակ՝ որ բղխէ զկաթն և զմեղր, յերկիրն Քանանացւոց, և Քետացւոց, և Ամովրացւոց, և Փերեզացւոց, և Խևացւոց, և Վերգեսացւոց, և Եբուսացւոց: Եւ արդ՝ եկ առաքեցից զքեզ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց հանել զժողովուրդ իմ:

Ս.—Ո՞վ նշ պատասխանեաց Մատուծոյ Մովսէս:

Պ.—Եթէ ոչ լուիցեն, ասէ, ձայնի իմում, և ոչ հաւատասցեն ինձ, զի՞նչ ասացից նոցա: (Ելից Գ. 7—14: Գ. 1):

Ս.—Ո՞վ նշ ասաց Մատուած:

Պ.—Ո՞վ նշ է, ասէ, այդ՝ որ ի ձեռին քում. պատասխանեաց Մովսէս, գաւազան. ասէ Մատուած. ընկեա զայն ի գետին, և իբրև ընկեց. եղև օձ գաւազանն այն, և փախեաւ Մովսէս ի նմանէ: (Ելից Գ. 2. 3):

Ս.—Ի փախչելն Մովսիսի զի՞նչ ասաց ցնա Տէր:

Պ.—Զգեա՛, ասէ, զձեռն քո և բուռն հար զոտանէն. և իբրև ձգեաց, եղև վերստին գաւազան ի ձեռին իւրում:

Ս.—Ո՞վ նշ ևս ասաց նմա Մատուած:

Պ.—Երկ ասէ զձեռն քո ի ծոց քո, և էարկ. և ի հանելն ի ծոցոյ իւրմէ եղև ձեռն նորա բորոտ իբրև զձիւն: Դարձեալ ասէ, արկ զձեռն քո կրկին ի ծոց քո՝ և էարկ. և իբրև եհան

ի ծոցոյ իւրմէ՝ դարձեալ հաստատեցաւ ի նոյն ի գոյն մարմնոյ իւրոյ: (Ելից Գ. 6. 7):

Ս.—Ո՞վ նշ յիսո այսոցիկ եղև:

Պ.—Եկո՛ ուշ բաղում աւուրց վախճանեցաւ արքայն Եգիպտացւոց. յայնժամ ասէ Տէր ցՄովսէս. արի՛ և գնա՛ յԵգիպտոս. զի մեռան, որք խնդրէին զանձն քո: (Ելից Գ. 19):

Ս.—Ընդ ո՞ւմ նմուտ Մովսէս առ փարաւոն:

Պ.—Ընդ եղբօր իւրում Ահարոնի, որ և ընդ առաջ Մովսիսի, և եղև նմա բերան, և նա եղև նմա յաստուածակեաց կողմանէ: (Ելից Գ. 14—16: 27—31):

Ս.—Ո՞րպէս հարուածովք պատժեաց Աստուած զփարաւոն յաղագս չարձակելոյ նորա զժողովուրդն:

Պ.—Տասնեքումբք հարուածովք և պէսպէս հրաշիւք:

Ս.—Որովք:

Պ.—Գաւազանաւն՝ որ եղև վիշապ և եկուլ զգաւազանսն դիւթականն՝ դարձուցանելով զջուրն յարիւն. գորտիւ, մորով, շանաճանճիւ, մահուամբ անասնոց, կեղիւ, խաղտ տրտօքր, կարկտիւ ընդ հրոյ, շօշափելի խաւարաւն և անդրանկաճախ սատակմամբ յանդրանկէն փարաւոնի ցանդրանիկն յետնոյն: (Ելից Ե. 12. 20: Է. 6. 17. 24: Ը. 6. 10. 23: Թ. 22. ԺԲ. 29):

Ս.—Որպէս փրկեցան որդիքն Իսրայէլ յանդրանկաճախ սատակմանէն:

Պ.—Ըրեամբ զատկական անբիծ և անարատ գառինն, զորմէ պատուիրեաց Տէր Մովսիսի և ասէ. խօսեցայ ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի. զի առցեն իւրեանց կուրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգացն ոչխար ըստ երդ... ոչխար կատարեալ՝ արու՝ տարեւոր՝ անարատ լիցի ձեզ: (Ելից ԺԲ. 3—5):

Հ.—Որպէս պատուիրեաց զհնուլ։

Պ.—Պատուիրեաց և ասէ. ,,Ոչ ինչ զինչ զինա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի ընդ երեկս, և առցեն յարենէ անտի, և դիցեն ի վերայ երկուց սեմոցն, և բարձցեն տանց՝ յորս ուտիցեն զմիան,,։ (Ելից ԺԲ. 6. 7)։

Հ.—Որպէս հրամայեաց ուտել։

Պ.—Պատուիրեաց և ասէ. կերիցեն զմիան ի գիշերիս յայսմիկ խորովեալ հրով, բաղարջ ընդ ելեզդի կերիցեն։ (Ելից ԺԲ. 8)։

Հ.—Որպէս հրամայեցաւ նոցա ուտել։

Պ.—Պատուիրեաց Տէր և ասէ. Ո՛չ ուտիցէք ի նոցանէ հում, և ոչ պախ եփեալ ջրով. այլ խորովեալ հրով զգլուխն ոտիւքն հանդերձ և զորովայնն նորա. և ոսկր նորա մի՛ բեկանիցէք ի նմանէ. և այսպէս ուտիցէք. գօտիք ձեր ընդ մէջս, և կօշկիք ձեր յոտս, և ցուպ ձեր ի ձեռին. փութանակի ուտիցէք, զի զատիկ Տեառն է. և արարիմն՝ որպէս պատուիրեաց Տէր Մովսիսէս։ (Ելից ԺԲ. 9—11)։

Հ.—Ի քանի՞ աւուրս բաղարջ ուտել հրամայեաց նոցա Տէր։

Պ.—Յաւուրս եօթն՝ ասելով. զեօթն օր բաղարջ ուտիցէք. յառաջնմէ իսկ օրէ անտի անհետ առնիջիք զխմոր ի տանց ձերոց. ամենայն՝ որ ուտիցէ խմորեալ. սատակեսցի անձն այն յԻսրայէլէ։ (Ելից. ԺԲ. 15)։

Հ.—Որպէս ելին Յեդիպտոսէ ի տանէ ծառայութեան։

Պ.—Եւ տէր ընծրհս ժողովրդեան իւրում առաջի Եդիպտացւոց. և կողոպտեալ զԵդիպտացիսն՝ չուեցին ի Հռամեսսայ ի Սոքքոթ վեց հարիւր հազար արամբք հեռևակօք. թող զայլ խառնիճաղանջ ազինս, որք ելին ընդ նոսա։ (Ելից 36)։

Հ.—Որո՞ց հրամայեցաւ ուտել զզատիկանն։

Պ.—Թլփատելոց միայն, և ոչ այլազգեաց և անթլփատից՝ ասելով։ ,,Ամենայն այլազգի մի՛ կերիցէ ի նմանէ. և զծառայն անթլփատ և արծաթագին թլփատեսցես և ապա կերիցէ ի նմանէ. պանդուխտն և վարձկանն մի՛ կերիցէ,,։ (Ելից. ԺԲ. 43)։

Հ.—Ո՞ւր հրամայեցաւ ուտել։

Պ.—,,Ի տունս, և մի՛ ասէ. հանիցէք ի մսոյ անտի արտաքս քան զտունն,,։ (Ելից ԺԲ. 7. 13)։

ՄԵՆՈՒՆ.

Հ.—Ո՞ւմ օրինակ է Մովսէս։

Պ.—Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. ըստ այնմ. ,,Վարձեալ ասէն Ո՞վսաննա ասեն՝ որ ի Քորէբ հրով փայլատակեցաւ, և զՄովսէս յօրինակ իւր փրկիչ՝ Յեգիպտոս առաքեաց, և զփարաւոն տանջեաց, և զծովն պատառեաց, և զժողովուրդն յանապատին մանանայիւ կերակրեաց, և ի վիմէն վտակս բղխեցոյց՝ ի խորհուրդ կողին վտակի,,։ (Յովհ. Ծորբծոր. ի Մեկն. Մատ. ԻՆ. 9. յերես 446)։

Հ.—Ո՛րինչ ցուցանէ սպանանելն փարաւոնի զմանկունս Եբրայեցւոց, կամ ի ծովն ընկենուլն։

Պ.—Իմանալի փարաւոն է սատանայ, և մանկունքն Եբրայեցւոց՝ են բանական հոգիք մարդկան, և սպանութիւնն կամ հեղձուցումն՝ են մեղք և սպանութիւնք դժոխոց. վասն զի մեղքն է որ ալեկոծէ զհոգիս մարդկան ի ծովու աշխարհիս. ըստ այնմ. ,,Ծով կինցաղոյս հանապազ զհս ալեկոծէ,,։ (Հ. Պար. Խոսրով. ի Մեկն. Ժամակարգ. յեր. 66)։

,,Եւ որ գոնեակ ի կենդանութեան հնազանդեցոյց զմարդն իւրոյ բնաւորութեան, նմանապէս և ի մահուն զամենեցունց հոգիան յափշտակէր և ունէր ընդ իւրով իշխանութեամբն իւր-

րև ի բանտի . . . նմանապէս և հոդիք մարդկան ոչ արտաքոյ բնութեան կամաց առնել ընդ բնութեամբ բանտարկուն սատանային, և արդելեալք իբրև ի բանտի . . . յորում տեղւոջ իբրև ի բանտի արդելեալ պահէր զհոգիս ամենայն մարդկան. և ընկալեալ ամենայն իշխանութիւն ի վերայ նոցա պահակն կորստեան անհնարին դատապարտութեամբ, առաւել քան ըզփարաւոն՝ զնսրայել,,: (Արդ. Հ՝նորհ. Ն. պետ. ճառ, ուխերորդ է. 19):

,,Մեղօք ապականեալ (Ադամ) զապականութեան սերմն ազգէ յազգ ծննդոց իւրոց սերմանեաց,,: (Ճոսեփ. ի Մելին. Թամակ.):

Ա.—Օ՞ր՞նչ է տապանակաւ ապրիլն Մովսիսի ի ծովէն:

Պ.—Ի՝ այն, զի յորժամ ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս յաշխարհի աստ, ոչ սպանաւ մեղօք և ոչ հեղձաւ, զի չէք ի նմա մեղք. և տապանակաւ աստուածացեալ մարմնոյն եղ ի ցամաք. ի կողմն արդարութեան. զորոյ օրինակն եցոյց գնալովն ի վերայ ծովուն՝ ըստ աւետարանական պատմութեան: ,,Եւ ի չորրորդումն պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն,,: (Մատ. Ժդ. 25):

Եւ ինքն Տէրն ասաց. ,,Ո՞ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց,,: (Յովհ. Ը. 46):

Եւ սուրբն Պօղոս ասէ. ,,Օ՛ի այնպիսի վայելէ մեզ քահանայապետ սուրբ՝ անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց, բարձրացեալ քան զերկինս,,: (Եբրայ. Ի. 26):

,,Պրեաց զամենայն կիրս հոգւոյ և մարմնոյ բաց ի մեղաց,,: (Գրիգ. Լուսա. ՀԱգաթան):

,,Ձանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց,,: (Ի Խորհրդատետր):

,,Այլ և այն իսկ զի արդար էր և անարատ, և ոչ վասն մեղաց ինչ իրիք եկաց ի հարուածսն և ի տանջանսն, այլ սակս փորձութեան և ամօթ առնելոյ զբանսարկուն՝ որ զամենայն տեսակս տանջանացն շարժեաց ի վերայ նորա և յամենայնի տակաւին բացաւ, և վասն օրինակի մեծի խորհրդոյն՝ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ կատարելոց էր ձշմարտութեամբ,,: (Արդիս Հ՝նորհ. ի Մելին. Յակոբ. ճառ վեհասանելորդ է. 11):

,,Օ՛ի թէ սուրբ է ասէ. որպէս և էն իսկ ձշմարիտ, և դուխորշ ինչ մեզաց ունիցիս, և անփոյթ առնիցես զանձին սրբութենէ. գիա՞րդ ունիցիս յոյս շաղախեալ անձամբ գնա տանել,,: (Արդ. Հ՝նորհ. ի Մելին. Ն. Յովհ. ճառ հինգերորդ է. 3):

Ա.—Օ՞ր՞նչ ցուցանէ փախչելն Մովսիսի յերեսաց Փարաւոնի:

Պ.—Օ՛փախուստ Աստուածորդւոյ յերեսաց Հերովդէ Յերդիպատոս՝ ի կոտորել նորա զմանկունս Բեթղեհէմի՝ զորմէ պատմէ սրբազան Աւետարանիչն՝ ասելով, ,,Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր իւր գիշերի, և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճանելն Հերովդի,,: (Մատթ. Բ. 14:— Տես. Հ՝նորհ. ի Մելին. Մատ. Բ. 16. յեր. 47):

,,Փախեաւ Յեգիպտոս, զի զմայրաքաղաքն ի կռապաշտութենէ դարձուսցէ յաստուածպաշտութիւն, և զմեզ խրատեսցէ յօժարութեամբ փախչել ընդ նմա հալածանաց,,: (Տես. Հ՝նորհ. ի Թուղթն առ Եբեր. յեր. 58):

Ա.—Օ՞ր՞նչ է կին առնուլն Մովսիսի ի Մադիամայ:

Պ.—Ի՝ օրինակ հարսնացուցանելոյ ինքեան եկեղեցին Հեթանոսաց՝ հաստատելով զնոսա ի հաւատս ամենասուրբ Երրորդութեան. ըստ այնմ. ,,Եւ եղիցի յաւուրս յայնմիկ արմատն Յեսսեայ. և որ կանգնելոց է իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսասցին,,: (Եսայի ԺԱ. 10):

Նա թէ՝ ,,Ու քեզ հեթանոսք եկեսցեն ի ծագաց երկրի՝ և ասասցեն, որպէս սուտ գործէին հարքն մեր զկուռս, և ոչ գոյր օգուտ ի նոցանէն,,: (Երեմիայ Ա. Ջ. 19):

,,Բանդի Քրիստոսի է հարանացեալ սուրբ եկեղեցի, երկնաւոր փեսային պսակեալ զսա խաչէն, և յաջ և յահեակ թռուցեալ զհեթանոսս ժառանգելով,,: (Ի Շարականի):

,,Խնդա և ղուարճացիր եկեղեցի, կոյս սուրբ՝ և հարսն երկնաւոր փեսային. ահա տեսանեմք զօծեալն զՔրիստոս դոլով առ քեզ լոյսն հեթանոսաց,,: (Նոյն անդ):

Ը.—Ո՞րչափ ցուցանէ հովուութիւնն Մովսիսի, և ածելն զհաշինս ի Քորէբ:

Պ.—Ո՛հովուութիւն Յանին Ըստուծոյ, որ արածեալ հանգոյց զբանաւոր հօտն յաստուածային արօտս և առ ջուրս հանգստեան. ըստ այնմ. ,,Եւ կացցէ, և տեսցէ, և հովուեսցէ հօտի իւրոյ զօրութեամբ Տեառն, և ի փառս անուան Տեառն Ըստուծոյ իւրեանց հաստատեսցին,,: (Միքիայ Ե. 4):

Իսկ ածելն ի լեառն Քորէբ, նշանակէ ածելն Յիսուսի զմեզ ի մահուանէ կռապաշտութեան ի ճշմարիտն աստուածածանաւթիւն. ըստ այնմ. ,,Եւ ի ձորս և յամենայն բնակութիւն երկրին յարօտս փափկութեան՝ արածեցից զնոսա ի լերինն բարձու Իսրայելի. և անդ հղիցի մակաղատեղ նոցա, անդ դադարեսցին, և անդ հանգիցին ի գրգռութեանց, և յարօտս պարարտութեան՝ արածեսցին ի վերայ լերանց Իսրայելի,,: (Եզեկ. Լ. Ի. 14):

,,Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց,,: (Յովհ. Ժ. 11:—Ճառ. ի Մեկն. ժամակար. յերես 116):

,,Ըստուածածին սիւն լուսոյ ամպ հովանաւոր, և բնակարան Յանին որ բանիւ հովուեր զԻսրայէլ,,: (Ի Շարականի):

,,Նմին իրի հովիւ անուանեցին զնա և քահանայ, և ոչխար, և գառն, և ղուարակ, և պատարագ, և վէմ, և օծեալ, և Յիսուս, և Յմմանուէլ, և հրեշտակ, և միջնորդ, և բան, և բժիշկ,,: (Ճարտ. Շնորհ. առաջին պետ. ճառ չորրորդ է. 8):

,,Որք արածիք խաշինք ի մարգս և յարօտս բանից հովուին ձերոյ և առաջնորդին՝ այժմ յայսմ կենցաղոյս օր, թէ կամիք յայտ առնել,,: (Նար. Լամբ. ի Մեկն. Պատ. յեր. 45):

Ը.—Որո՞յ նմանութիւն ունէր մորենին, որ վառէր և ոչ այրէր:

Պ.—Սրբոյ կուսին Մարիամու. յորում վառեցաւ հուրն աստուածային, և ոչ այրեցաւ արգանդն կուսական. ըստ այնմ. ,,Ընդ յաջոր բուսաւ Յեննայէ մորենին Մարիամ, յոր վառեցաւ հուրն աստուածային, զոր եռեաս Մովսէս զօրինակ կուսին ի Սինայ լեռնէ լուսոյն անմատոյց,,: (Ի Շարականի):

Ը.—Թէ՝ ,,Հուրն կենդանի՝ որ ի մորենին վառեցաւ, զոր անվնաս յարգանդի քումմէ կրեցեր, և ծնար Ըստուած և մարդ,,: (Նոյն, անդ):

,,Որ ի սկիզբն փրկութեան մերոյ օրինակի երևեցար մարգարէին Մովսիսի, աստուածային վառեալ բոցով՝ զմորենին անկիզելի՝ ի նմանութիւն կուսական ծննդեան,,: (Նոյն, անդ):

Ը.—Ո՞րչափ է գոչէն հրեշտակին առ Մովսէս, մի՛ մերձենար այսր. այլ՝ լոյծ զկօշիկս ոտից քոց:

Պ.—Բանն Ըստուածային, որ գոչէ առ քահանայս և պատարագողս կենարար մարմնոյ և արեան, զի անարատք իցեն, և մի՛ անմաքրութեամբ և անուսուցք հոգւով մերձեսցին ի սեղանն սուրբ ի սրբութիւն սրբոց. այլ խրթև զմաքուր հրեշտակս սպասաւորեսցեն ահեղ խորհրդոյն. զորոյ օրինակի ցուցանէ քահանայն ի ժամ մատուցման սուրբ խորհրդոյն. հանելով զհողաթափս ոտիցն. զի քահանայք մեզսասէրք և

չարք պատժեացին յԱստուծոյ ծանր ծանր պատուհասիւք. ըստ այնմ. ,,Վա՛յ անօրինին, չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա,,: (Եսայի Գ. 11):

,,Օ՛ի դու զինուոր Թիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ, զի մի՛ ևս քահանայասցիս ինձ,,: (Ովսեայ Դ. 6):

,,Եւ արդ՝ այս պատուէր է իմ առ ձեզ՝ քահանայք. եթէ ոչ լսիցէք՝ և ոչ դնիցէք ի սրտի ձերում տալ փառս անուան իմոյ . . . առաքեցից ի վերայ ձեր անէծս,,: (Մաղաք. Բ. 1):

,,Օ՛ի թէ Մովսիսի ասացաւ Աստուծոյ, ոչ կոխել մեռեալ մարթոյք զտեղին՝ ուր երևեցաւ հուր Աստուածութեանն, որքան մեզ արժան է լուծանել նախ զմեռելութիւն մեղաց ի մէնջ և ապա յաստուածայինն մերձենալ խորհուրդ. զի ոչ միայն խօսել ընդ Աստուծոյ . . . այլ և ձեռօք շօշափել զանշօշափելին, և ըղձութեամբ համբուրել զսէրն, և բերանովք ճաշակել զկերակրիչն՝ ամենայնի, և ի սիրտս ընդունել, և հոգւով միանալ ընդ նմին, և լինել աստուած շնորհօք՝ ընդ Աստուծոյ միաւորելովն,,: (Ներ. Ը. Նորհ. ի Թուղթն առ դասս քահանայից յերես 36):

,,Լակ առ ի միաս՝ մեռեալ մարթ է կօշիկն՝ որով վարժէ զաշակերտս ճշմարտութեանն՝ զմեռելութիւն ախտից ոչ զգենուլ այլ մերկ և անինչ. որպէս զի գերկնիկ լիցին ոտք աւետարանչացն,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ. Կին. Մատ. Ժ. 10):

,,Եւ անարատն ասել՝ զընաւին առաքինին նշանակէ. յորում և ոչ սպի մեղաց, ոչ կարկամութեան սեւութիւն. և ոչ մասն չարի երևի. այլ ամենայնիւ յար և նման ճշմարիտ քահանայապետին մերոյ լինի: Օ՛ի որ ոչ այսպէս ունիցի ոչ է արժանաւոր կոխել զսուրբ երկիրն, և ոչ արժանաւոր զանարատն պատարագս մատուցանել ի հաճոյս Աստուծոյ,,: (Սարգ. Ը Նորհ. Ը. Պետր. Ճառ երրորդ. Բ. 4):

Ը.—Օ՛րինէ՞ է այն, թէ ինձ վերկել զնոսա ի ձեռաց Եդիպտացւոց, և զինչ տանելն յերկիր բարձր և ընդարձակ՝ որ բղխէ զկաթն և զմեղր:

Պ.—Ինձանէն ի վերկել զնոսա ի ձեռաց Եդիպտացւոց՝ է օրինակ իմման Յանէն Աստուծոյ յաշխարհ առ ի վերկել զմարդն ի դժոխոց և ի յաւիտենական դատապարտութենէ. զորմէ խորհրդաբար խօսի մարգարէն. ,,Եւ ես հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, և Աստուած քոց յինէն ոչ ծանիցիս. և փրկիչ ոչ գոյ բաց յինէն,,: (Ովսեայ Յ. Գ. 4):

Նոյն երկիրն բարձր և ընդարձակ՝ է օրինակ վերին Երուսաղեմի, և ակեղցւոյ Աստուծոյ դասեր վերինն Սիոնի. կաթն և մեղրն են երկու ստինքն, այսինքն զգալի և իմանալի կերակուրն հոգւոց՝ զորմէ գովաբանէ փեսայն Քրիստոս ի պիտոյ հարսին եկեղեցւոյ. ըստ այնմ. ,,Օ՛ի գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարսն, զի գեղեցկացան ստինք քո ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո՝ քոյր իմ հարսն, մեղր և կաթն ի նեղքոյ լեզուի քո. և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի,,: (Երգոց. Դ. 10):

,,Ընչ մայր հոգեւոր երկնաւոր լուսաւոր՝ քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր, զիս գգուեաց որպէ՝ կաթն տեառնց սորա՝ արիւնն Քրիստոսի,,: (Նարեկ. Ծ. 14):

,,Ինչեր առ ողորմութեամբ քո յաշխարհ, և զմեռեալ բնութիւնս ի կեանս վերափոխեցեր,,: (Ի Շարականի):

,,Նկն փրկել զժողովուրդն՝ ոչ ի յայտնի պատերազմացն որ ըստ աշխարհի, և ոչ ի մարմնական ծառայութենէ, այլ ի մեղաց և յապականութենէ,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Ցակ. Ճառ. առաջին):

Ը.—Մի թէ եկեղեցիս մեր օրինակ է վերնոյն Սիոնի:

Պ.—Ա՛յո. որպէս գովաբանէ հրեշտակակրօն Նարեկացին ասելով. Ա՛յս յարկ չքնաղ և աստուածընկալ ազատ է միանգամայն ի յամենուստ ծառայութենէ. ո՛չ օրինակ վերնոյն Սիոնի. քան թէ ձշմարտութիւն նմին ձանաչէ,,: (Նարեկ. ՟Ն. 13: Խօսրով ի Մ՚ենկն. Ժամա. յեր. 423):

,,Ա՛յլ՝ վերինն Երուսաղէմ ազատ է՝ որ է մայր մեր ամենեցուն,,: (Գաղատացւոց. Դ. 26):

՟.—Օ՛րինչ են եօթն ազգքն. որ տիրէին երկրին Ա՛ետեաց:

Պ.—Ն՚ն օրինակ եօթն մահացու մեղաց և բազմատեսակ կռապաշտութեանց. որք յաղագս յանցանաց նախահօրն տիրէին բանական եկեղեցւոյ մերոց, այն է հոգւոցս. նոյնպէս և նիւթականին, մինչև ևկն առիւծն յաղթէն Յուդայ Յիսուս Քրիստոս. յաղթեաց և եւս մեզ զինւորութիւնս հոգևորս, ըստ այնմ. ,,Օ՛ր զէն զինւորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ՝ զօրաւոր Աստուծոյ առ ի քակելոյ զամուրս. զեորհուրդս քակմամբ: Եւ զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ. և գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի,,: (Ր. Կորն. Ժ. 4):

Եւ փոխանակ այնր հաստատեաց զեօթն խորհուրդս եկեղեցւոյ. որովք և սրբեալ ազատեցաք ի մեղաց. ըստ այնմ. ,,Ի՛մաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն,,: (Առակ. Թ. 1: Տնկր. Լամբ. ի Մ՚ենկն. Օ՚աքար. Գ. 9):

,,Ա՛յսուհետև զօրացարուք տէրամբ և կարողութեամբ զօրութեան նորա. և զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ. զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Օ՛ր ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան՝ որ ի նեղքոյ երկնից, վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ. զի

կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին՝ յաւուրն չարութեան. և իբրև զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զգեզի կալջիք սնդեալ զմէջս ձեր ձշմարտութեամբ. և զգեցեալ զդրահն արդարութեան, և ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնիւ առէք զվահանն հաւատոց. որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարան փրկութեան, և զսուսեր Հոգւոյն՝ որ է Բանն Աստուծոյ,,: (Եփես. Օ. 10—17: Մեծն վ՚արդ. ի Մ՚ենկն. Սաղմոսաց ԽԳ. 3):

,,Եւ մերժեաց յերեսաց նոցա զեօթն ազգսն հանդերձ զեւօք իւրովք,,: (Յովհ. Ծործոր. ի Մ՚ենկն. Մատ. Ժ՚Ր. 45. յեր. 289):

,,Եւ ի բնութիւնս որպէս և ախտիցն պատերազմ. և վաւաշոտութեանցս՝ որ ի յայն ցանկութեանց սկսանի՝ որ զօրացեալ է յանդամս մեր, և զմիտսն մեր գերի առեալ տանի զդատաւորն բնութենէս՝ և ապա զՀոգին անխնայ խոցոտեալ սպանանէ,,: (Սարգ. Շ՚նորհ. ի Մ՚ենկն. Յակ. ձառ իններորդ Գ. 1):

՟.—Օ՛րինչ է կեանն եօթանց ազգացդ յերկրին Ա՛ետեաց. ջնջեցելոց ապա ի ձեռն որդւոց Իսրայէլի:

Պ.—Ն՚ օրինակ անկելոց հրեշտակացն դասուց. որք յառաջն բնակէին ի լուսեղէն խորանս երկնից. այլ իբրև հպարտացան և ապստամբեցան յամենազօր Ա՚րարչէն. թօթափեցան և ընկեցան ի խորս անդնդոց: զորոց անդր եւս մեզ Աստուած ի ժառանգութիւն. ըստ այնմ. ,,Ի՛ցէք զտեղի անկելոցն ապստամբողական թշնամւոյն, որ ի յերկնից վայր անկաւ,,: (Ի՚ՀԱր):

Եւ թէ ,,Նա հնեքեալ ի լուսոյն, և ես միացեալ ընդ գառանցն, նման ոչ խոստացաւ հանդիսանալ և յերկրի, և ինձ զերկինս սեփհականաց): (Նար. ԿՆ. 1):

Հ.— Որո՞մ գոտւոյն օրինակ գաւազանն Մովսիսի:

Պ.— Մխածնի Բանին Աստուծոյ. որ է գաւազան էնթեան ձեռին Հօր ամենակալի. և ի ժամանակին բղխեալ յարմատոյն Յեսսեայ՝ եղև ծառ կենաց անմահական գաւազանին. ըստ այնմ. ,,Եւ բղխեսցի գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի, և հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ,,: (Եսայի ԺԱ. 1):

,,Հաւատամք և ի մի տէր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ, ծնեալ յԱստուծոյ Հօրէ Մխածին: այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ. լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած,,: (Ի Հանգանակին):

,,Ընդէր կենաց և փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ, ի յարմատոյն Յեսսեայ բղխման գաւազանի հասեալ ժամու՝ շնորհաղարդ պայճառացոյ զգաւազան իշխանութեան մերոյ հայրապետին,,: (Ի Ղ. արականն):

Հ.— Օ՞րինչ գուշակէ արկանիլ գաւազանին ի գետին:

Պ.— Օ՞րինակ Բանին Աստուծոյ յաշխարհ: ըստ այնմ. ,,Արկ ի Հօրէ, և եկիր յաշխարհս,,: (Յովհաննու. ԺԷ. 18):

,,Իջեր յերկնից Որդի Աստուծոյ. և մարմնացար ի սրբոյ կուսէն, որ անմեկնելիդ ես ի Հօրէ,,: (Ի Ղ. արականն):

,,Իջեր յերկնից միածին անմեկնելիդ ի Հօրէ. հովանացեալ սուրբ Հոգւոյն՝ Բանդ մարմնացար ի կուսէն,,: (Նոյն անդ):

Հ.— Օ՞րինչ է օձ լինելն գաւազանին:

Պ.— Է այն, զի յորժամ նախամայրն Եւայ. լուաւ ձայնի բանսարկու օձին և պարտեաց զնախահայրն, Թոյն նորին փոխադրեցաւ ի մեզս. և տարածեալ սփռեցաւ ար. ամենայն ազգս մարդկան. ուստի և Աստուածն ամենայնի խոնարհեաւ ի սորինս՝ էառ յինքն, և եղև ապաթոյն օձ անսերմն յզու-

թեամբն ի կուսէն. և այս Համարեցաւ նմա մեզս ըստ առաքելական ձայնին, թէ ,,Օ՜ի զայն որ ոչն գիտեր զմեզս, վասն մեր մեզս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ,,: (Ա. Կորնթ. Ե. 21):

,,Որ զանկնդան ցուպ գաւազանին, ի կերպաւորութիւն առ ի զքոյդ մերով նկարագրել, այլ և յօտարազնիցն ընտրութիւն, ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապ նմանեալ ցուցեր,,: (Նարեկ. ԿԹ. 1):

,,Կամեաք Հօր հմուտ (Բանն Աստուած) յարգանդ կուսին, և ոչ գոլշեցաւ. վասն զի ինքն է սկզբիլ ամենայնի,,: (Գրիգ. Լուս. յԱգաթան.):

,,Զթածարար զմերս զգեցաւ մարմին կամաւ Հօր և Հաճութեամբ սուրբ Հոգւոյն,,: (Ներս. ի Մ.ևն. Յամանակ.):

,,Զար սերմանցն՝ չար և յղացութիւն, չար յղացութեանն չարաչար և ծնունդն, զոյն պայս և մարդարէն առաւելութեամբ ասաց: յղացաւ պղտօս և ծնաւ զանօրէնութիւն. արդարև ցաւք հոգւոց են մեզք զի որ չերմին սատակագին՝ այնպէս գիտէ չարչարել զմարմին, որպէս մեզք զհոգին և կամ որ կեղ, ցաւ զոր ժանգն անասանն՝ գիտէ այնպէս փտղալ ոսկի զմարմինն, որպէս անօրէնութիւն՝ զհոգին: . . զի որպէս յղութիւնն ի ժի որ ծնանելոյն ոչ անասյ. այլ առ չարութեանն պատասխ զպրաւայնն և ելանէ սպանանելով զծնողն. կրկին և քաղմապատիկ էչար մեզաց յղութիւնն, վասն զի ծննդական մասունս ոչ ունի ի սերմանէն, զի ևկամաւոր և ոչ բնական. սորին վասն ի ծնանելն զծնող հոգին սպանանէ,,: (Սարգ. Ղ. Նորհ. ի Մ.ևն. Յակ. ձառ երրորդ. ա. 15):

Հ.— Օ՞րինչ յոյսանկ անկենդանութիւն գոյին:

Պ.— Օ՞անմարմին գոլն Բանին Աստուծոյ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. քանզի կենդանութիւնն՝ որ առաջն, մարմին և մեր-

դեղութիւնն նշանակէ, բայց Աստուած միշտ է կենդանի և կեն-
դանացուցիչ ամենից գոյութեանց. ըստ այնմ. ,,Օ՜ի որպէս
Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որ-
ոլի զորս կամի՝ կենդանի առնէ,,: (Յովհ. Ե. 21: — Տիմոթէոս
Ա. 13):

,,Ընձայս ծնունդ դիրակային,
Ծածկեալ ի ծոց Հօր իսկական
Աներևոյթ անառեսական.
Լոյս ի լուսոյ անմարմնական,,
(Ներսէս Շնորհ. ի բան հաւատ):

Հ.—Օ՞ի՞նչ է արկանելն Մովսիսի զաջ ձեռն ի ծոց իւր:

Պ.—Ի մարդեղութիւն Բանին Աստուծոյ. վասն զի աջ ձե-
ռըն է ինքն Բանն Աստուած. իսկ ծոցն էութիւնն Հօր. որպէս
յայտ է ի Հանգանակն ի Նիկիական, ուր ասի, (Հաւատամք)
,,Եւ ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծը-
նեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այս ինքն յէութենէ Հօր,,:
Եւ թէ՝ ,, Էակզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և
Աստուած էր Բանն. նա էր էակզբանէ առ Աստուած. ամենայն
ինչ նովաւ եղև,,: (Յովհ. Ա. 1):

,,Նորա է ծով՝ և նա արար զնա, և զչամաք ձեռք նորա
ստեղծին,,: Սաղմոս Ղ. 5. 7: Յովհ. Ոսկեբեր. ի Մեկն.
Մատ. Իե. 7. էկր. 366):

,,Ձեռք քո արարին և ստեղծին զիս ի հողոյ, ի յօրհնել ըզ-
քեզ Աստուած յաւիտեան,,: (Ի Շարականի):

,,Իսկ հաստատանել ձեռին զՈրդւոյ զմարմնաւորութիւնն նը-
շանակէ, զի Որդի ձեռն Հօր է. որ խոնարհեալ եհաս յօգնա-
կանութիւն մեզ վշտացելոցս, մարմնով իւրով. կամօք դեր-
ծելով զսրբութիւն մեր խաչելն իւրով,,: (Յովհ. Ոսկեբեր. ի
Մեկն. Մատ. Ը. 4:—Իե. 6):

Հ.—Օ՞ի՞նչ է բորոտութիւն ձեռացն Մովսիսի, և վերստին
հաստատելն յառաջին կերպ իւր՝ յարկանելն ի ծոցն:

Պ.—Ի այն, զի ազգամայնոս բնութիւն վերաւորեալ ի մեղ-
սասիրէն՝ բորոտացաւ ի բորոտութիւն մեղաց. այլ աջն ան-
ղէն Հօր Բանն Աստուած առաքեալ յաշխարհ, էառ զամե-
նայն՝ որ ինչ էր ի մարդն՝ բաց ի մեղաց, ըստ առաքելոցն.
,,Կոյսն Մարիամ՝ յորմէ մարմին առ Քրիստոս, ի մեղանչա-
կանին Ադամայ բնութենէն էր, սակայն միաւորեալ ընդ բնու-
թեանն Աստուծոյ, մեղանչականն եղև անմեղ, և ապականա-
ւորն՝ արտաքոյ անդրանկելի և ապականութեան կրից, որպէս և
հրահալելի նիւթ՝ յորժամ ընդ հրոյ միանան, ժանգ ապակա-
նութեան ևթէ էցէ ի նոսա՝ ծախի, իսկ բնութիւնն մաքրելով
յապականութենէն՝ անծախելի ծնաց,,: (Ներս. Շնորհ. ի
Թուղթն առ Ալէքս. Հրես 57):

Եւ նովաւ շրջեալ ի վերայ երկրի խաչեցաւ, թաղեցաւ, յա-
րեաւ և սրբեալ զբնութիւնս, համբարձեալ անտու յերկինս
մարմնով՝ ևմուտ ի ծոց Հօր. և նստաւ ընդ աջմէ նորա, որպէս
և սուրբն Գրիգոր Նարեկացին ասէ. ,,Որ զերջանիկ ձեռն ա-
ջոյն Մովսիսի ի ցոյց տեսութեան ապագայիցս հրաշից մար-
գեղութեանդ քո, բարձրեալ, և քեզ ախտաւոր մարմնոյս մա-
քուր լինելոյ անվոխուխս փոխատարութեամբ երկինգոյշակեցը,,:
(Նար. կԳ. 1):

,,Կրեաց զամենայն կիրս մարմնոյ և հոգւոյ բաց ի մեղաց,,:
(Գրիգ. Լուս. ի Յաճախապ. ձառ ԻԳ):

Հ.—Օ՞ի՞նչ է ասկն. Երթ և դնա առ Խարայէլ, զի մեռան
որք խնդրէին զանձն քո:

Պ.—Ի այն, զի յորժամ Որդին Աստուծոյ ընդ Յովսեփայ
և ընդ Մարիամայ փախեաւ Հերովդիսոս յերեսաց մանկակո-
ւորն Հերովդի. ի վախճանին նորա վերստին եկն յերկիրն Իս-

բայելն, ըստ պատմելոյ սրբազան Ըհեռաբանչին։ ‹‹Եւ ի վախճանին Հերովդէ. ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեր Յովսեփայ յԵգիպտոս, և ասէր. արի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն Իսրայէլ. զի մեռան որք խնդրէին զանձն մանկանդ,,։ (Մատ. Բ. 19)։

՚.—Ո՞ւմ օրինակ է Ըհարոնն զևտական, որ եկ ընդ առաջ Մովսիսի եղբօր իւրոյ։

պ.—Յովհաննու մկրտչին Քրիստոսի, զի որպէս Ըհարոնն եկն ամեայ ժամանակաւ յառաջ ծնեալ ասի քան զՄովսէս, նոյնպէս և Յովհաննէս քան զՔրիստոս՝ վեց ամսեայ ըստ յԼուկիայ, բայց Քրիստոս մեծ և առաջնի է քան զնա աստուածութեամբ, որպէս վկայեաց և ինքն Յովհաննէս ասելով։ ‹‹Սա է՝ վասն որոյ ես ասէի. զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև զի յառաջ իսկ էր քան զիս,,։ (Յովհաննու Ա. 30)։

‹‹Զ Լևտական քահանայութեանն յԸհարոնէ ի քեզ կատարումն, և ճշմարիտ քահանայութեանն որ ի Քրիստոսէ, ի քէն սկիզբն հաստատութեան,,։ (Ի Ջ ոտականի)։

՚.—Օ՞րինչ են տասն հարուածքն՝ զորս կրեաց Եգիպտոս։

պ.—Եւ հարուածքն՝ զորս հոսեաց Տէր Յիսուս ի ժամ խաչելութեանն ի վերայ դժոխոց և Թագաւորի նորին սատանայի ըստ սահմանին Յովհաննու, թէ ‹‹Այժմ է դատաստան աշխարհիս այսմիկ, այժմ իշխանն աշխարհիս այսմիկ արտաքս հանի։ Եւ ես եթէ բարձայց ի երկրէ, զամենեսեան ձգեցից առ իս,,։ (Յովհ. ԺԲ. 31. 32)։

‹‹Այժմ ասացեք և յայնոսիկ՝ որք ընդ ահեկէն լեալն, երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա,,։ (Մատ. ԻԵ. 41)։

‹‹Պատանի գործոցն ճաճանչք՝ յայտնին ի մեծ հրապարակին, և դողալով ընթանան ի յանվախճան ի տանջանս,,։ (Ի Ջ ատականի)։

‹‹Ընտանքնեմ ցուցանել զի և նեղբքին զոր՝ և կամ զի ճանր և չօշափելի է խաւարն արտաքոյ մարմնական խաւարիս, զի քնաւին ոչ լուսաւորի լուսով. կամ թէ կիզը արտաքոյ յաշխարհիս ժողովեալ մրուրն հրոյ առանց լուսոյ սեղմ տանջանաց տանայի և խրոցն,,։ (Յովհ. Ծործոր. ի Մեկն. Մատթ. Ը. 12. Ի. 45. էջ. 192 և 598)։

՚.—Որո՞մ գտանի օրինակ վիշապաձև գաւազանն, որ եկոլ զգաւազանսն գիւթական։

պ.—Որոյ խոչին, որով ազատեալ օձնայնացաւ գիւթական խորհրդանկութիւնն սատանայի, և ի ձեռն նորա ապրեցաւ Իսրայէլ՝ բանական հոտիս մեր ըստ այմ, ‹‹Գաւազանաձև եւ ըմբևաւ եգիպտական ազգին ցուցանելով զզօրութիւն սրբոյ խաչին՝ յաղթահակեալ զգաւազանսն գիւթական,,։ (Ի Ջ ար)։

՚.—Օ՞րինչ ցուցանէ եռօրեայ խաւարն Եգիպտացւոց և լոյսն Իսրայէլացւոց։

պ.—Եռօրեայ Թագուհին Յիսուսի և իջանելն բանական հոգւովն ի դժոխս, և պատերն խաւարաւ մեղայ զդժոխս և զսատանայ, և լոյս ծագելն ի վերայ սրբոց իւրոց՝ ասելով. ‹‹Ասել կապելոյ՝ թէ ելէք. և որք ի խաւարին իցեն՝ թէ յայտնեցարուք,,։ (Ղսայի ԽԹ. 9)։

Եւ Աստուած ասէ՝ ‹‹Ի սոյն սրբոց քոց լոյս մեծ էր, զորոց ըզբարբառն միայն լսէին, և զկերպարանսն ոչ տեսանէին. զի և նո-

քա՝ որք զայնպիսի չարչարանս կրեցին, երանելին: Եւ դժոխոցն ասէ ՝՝Վա՛յ ան զի արժանի իսկ էին նոքա վրիպակոյ ի լուսոյ և արգելլոյ ի խաւարի. որք արգելականս պահէին զոգիսն քո, որովք հանդերձեալ էր անեղծ օրինացն լոյս կենաց աշխարհի պարգևել,,: (Համառ. ԺԲ. 1. ԺԲ. 4):

՝՝Որ լուծեր կենարար մահուամբ քով տէր՝ զերկուսին մահու. իջանելով ի դժոխս՝ վեր ածեր ընդ քեզ զհոգիս արդարոց մարգարէից ի լոյս անստուեր,,: (Ի Շարականի):

՝՝Իջ ի դժոխս, և ած ետես անտի զարթեալսն ի դժոխոց,,: (Գրիգ. Լուս. յԱգաթան.):

՝՝Իջեալ ի վայրս խաւարային դժոխոց. ետես զկապուտան իբրեւ ընտանեղէծ ի կապանաց օձոտին,,: (Նարեկ. ՀԱ. 7):

՝՝Ոչ՝ն էջ յանդունդս դժոխոց. զի և անտի զարդարան փըրկեցէ,,: (Կիւրեղ. Ներսես. ի Կոչ. ընծայ. գլուխ Գ.):

Հ.—Ո՞ւմ օրինակ է անդրանիկին փարաւոնի՝ որ սպանաւ:

Պ.—Մեղաց և մահու. որ անդրանիկն ենախաչարին սատանայն. վասն զի այնու սպան զնախահայրն, և մահուամբ անդրանկին մեռաւ մահ. և շինչան կայթոց՝ մահու, բարձան մեղք և կորեան ունայնութիւնք կռապաշտութեանց. ըստ այնմ՝ ՝՝ի ձեռաց դժոխոց ապրեցուցից զնոսա, և ի մահուանէ փրկեցից. ո՛ր է մահ, յաղթութիւն քո, ո՛ր դժոխք, խայթոցն քո. մխիթարութիւն ծածկեալ է յաչաց իմոց,,: (Ովսեայ ԺԳ. 14: Երր. Ը. 14: Ա. Կորնթ. ԺԵ. 54):

՝՝Հայրենատուր աւանդութիւն Թուխ ինձ ետէ զառաջին մարդոյն անհնազանդութիւնն ասէ, և զպատուհրանազանցութիւնն, որով՝ մեղք յաշխարհս մտին. և ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, և եղև նոցա իբրև ի հօրէ աւանդեալ ժառանգութիւնն, զոր ո՛չ ոք կարաց լուծանել. ո՛չ Թագաւորք մեծութեամբ իւրեանց, և ո՛չ քահանայք ողջակիզօք իւրեանց, և ո՛չ մարգարէք պատգամօք իւրեանց, և ո՛չ արդարք արդարութեամբք իւրեանց, այլ՝ մեծագունին անսային աղաւաւթեան,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Ա. պետ. ճառ, երրորդ. Ա. 19):

՝՝Օ՛ձն Թագաւորն Քրիստոս բարեբանեցէ՛ք, որ ի յանձն էառ զմահ խաչի, և խափանեաց զմահու Թագաւորութիւնն,,: (ի Շարակ):

՝՝Ընդմանն մարմնով՝ վասն փրկութեան մերոյ զմահ ճաշակեաց, և խափանեաց զմահու Թագաւորութիւնն,,: (Նոյն անդ):

Հ.—Որո՞ւմ օրինակ է արիւն զատկական ոչխարին, զոր հրամայեաց Մովսէս առնել ժողովրդեանն:

Պ.—Քրիստոս, որով սրբեալ ի մեղաց՝ ապրեցաք ի դժոխոց, ի սատակչական մահուանէն յաւիտենից և ի սրոյ բարկութեան Հօր, ըստ այնմ. ՝՝Քանզի զատիկ մեր զինաւ Քրիստոս,,: (Ա. Կորնթ. Ե. 7):

Եւ թէ՝ ՝՝ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռելս և իշխան Թագաւորութեանց երկրի, որ սիրեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբ իւրով: (Յայտնութեան. Ա. 5):

՝՝Օ՛ի զոր օրինակ ջրհեղեղն լուաց զամենայն աշխարհս ի մեղաց, նմանապէս և դուզնաքեայ շնիքն արեան Քրիստոսի ջրհեղեղ եղև ամենեցուն մեղաց՝ լուաց, ողողեաց և սպիտակացոյց քան զձիւն սպիտակ՝ և քան զաւազ մաքուր,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Ա. Յովհ. ճառ, Ե. ա. 7):

՝՝Մարգարէս՝ այժմ՝ տիրապէս զՄովսէս և զեբրայն իմանամք. որք ընկալան զօրէնսն նեցուկ ամրութեան տատանեալս բնութեան: Սա յարոյց և զքահանայութիւն օրինակ ճշմարիտ քահանայութեան, և զզոհսն ողջակիզաց ապացոյց ճշմարիտս պատարագի. ըստ որում և առաքեալ ի Թուղթն որ առ եբ-

բայց նման կարգաւորապէս առնէ սոցին բաղդատութիւն. որ ոք կամ վերահասու սոցին լինել, զառաքելականն մատնի ծանիւ զքրօնութիւն,,: (Ներքան 1. ամբր. ի Մակ. Պատ. յիրես. 93):

Հ.—Օ, ինչ է տարբեր կատարեալ թիւն զատկական ուխարին:

Պ.—Ի կատարելութիւն ամաց Յիսուսի ի սկսանելն յայտնել զանձն իւր աշխարհի, և ի պատրաստելն ի խաչ մահու վան մեր. ըստ այնմ, ,,Դե ինքն Յիսուս էր ամաց իբրև հնգետասնից՝ սկսեալ:,, (Ղուկ. Գ. 23: Եվես, Գ. 13: Հրբայ. Թ, 11):

Ընդ՝ ըստ մարդկութեան. իսկ ըստ աստուածութեանն կատարեալ և սկիզբն է քան զամենեսեան, որպէս ասէ. ,,Ես եմ Ալֆայ և Ովմ, սկիզբն և կատարած. առաջին և վերջին,,: (Յայտնութեան. Ա. 8: ԻԲ. 13: Ներ. Հնորհ. գրեալ ի Թուղթ առ Ման. յեր.—76):

,,Ոչ նա յառաջ քան զյաւիտեանս ընդ Հօր Ընտուած Ընտուածոյ,,: (Ներսէս. ի ձառ այլակերպութեան):

,,Յառաջ քան զյաւիտեանս է ծնողն. յառաջ քան զյաւիտեանս և ծնունդն,,: (Եփրեմի. ի ձառ այլակերպութեան):

Հ.—Օ, ինչ ցուցանէ երկիցն, յորում զզատիկն զենուին:

Պ.—Ցուցանէ զերկիցն սարսափելի մեծի ուրբաթուն. յորում յիններորդում ժամու ձայնեաց ի խաչին զատիկն մեր Յիսուս. ըստ այնմ ,,Հանգի ուրբաթ էր. զի մի անդէն ի խաչին ազանիցին մարմինքն մինչև իշխարհն զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ,,: (Յովհ. Ժ-Թ. 31):

,,Ծառարկցաւ լոյսն արևուն՝ ի վեցերորդ ժամ ուրբաթուն. ծանոյց թէ լոյսն արարչական՝ նահատակացն լոյսն եղան. կախեալ զքեզ մերկ ի խաչին՝ քողով ստուերաւն ծածկեին՝ հերքեաւ ի մէնջ զծանրութիւն շնջող դիւին միջօրէին,,: (Ի Հարականն):

Հ.—Օ, ինչ են երկու ժամքն և բարեւորք և մի դուռն առանց Նարայէլացւոց զորն ղրօշմեալ օծանելին արեամբ ոչխարին:

Պ.—Նարայէլ՝ է հոգիս մեր, և առնքն մարմին մեր, ցեամքն, բարեւորք և դուռն՝ հնգեքին զգայութիւնքս, որք հնքեալ և օծմամբ ղրոշմեալ են արեամբն Յիսուսի Քրիստոսի յանուն քրիստոնէութեան, զի մի կարասցէ մատնել սատակիչն անդրանկաց ի տունս մեր. ըստ այնմ. ,,Ընդեան ուժի ահաւորութիւն մանգամայն և սրբութիւն իշխանաւորական խնկաւորութիւն սոսկալի անուանն օծութեան, մինչ զի որպէս ոչ է հաճ մարձակել ուրուք յերկնայնոցս ամառուած անուանիլ՝ այլ ամառուածայինն, նոյնպէս ոչ բերէ մարմին զՔրիստոսէ անուն անձին համարել, այլ՝ զքրիստոնեայն,,: (Ներս. Գ. 14):

,,Ընդ այսպէս ընկալեալ զքոյոցդ բարեաց անհատաստաբ առաքելութիւն՝ Որդի Ընտուածոյ կենդանւոյ, զսրբանուէր այս օծութիւն՝ ի ձակատ գիմացս արեամբ քո գրիմք, և ի բնութիւն շնջոյս հոգւով քո տպաւորիմք հատատացեալ խորհրդով մտացս,,: (Նոյն, անդ. Գ. 23):

,,Ի՛չ է առանց դրոշմի գրեալ քրիստոնեայն,,: (Նոյն. Գ):

,,Գանգի սեամբք գրանց մերոց զգայարանք մեր է. որ արեամբն Քրիստոսի օծանին,,: (Ներ. Հնորհ. ի Թուղթն առ քահանայս Յամայք նահանգի յերես 160):

,,Ընդ յոյնքն զի գրուանք և պատուհանք են առ մեզ զգայարանք մարմնոյս, որք ածեն զանազանապէս համբաւս խոստովանութեան ընդ ինքեանս նկրքինս մարդոյ,,: (Ներ. Լ. ամբ. ի Մեկին. Պատա. յեր. 84):

,,Ոչ կամ դարձեալ, չար ասէ զորս ի բնութենէս ըստնիմք ոչ արարչութեամբ, այլ՝ դրութեամբ. մեզ բաւական է ասէ,

այն ի գաւառապատումն. այլ յաւելուածս ի վերայ այնորիկ մի՛ ընկալցուք, այլ՝ զրուներս զդայութեանց մերոց. զի մի՛ զօրէն աւազակի յաւելուածս մեղայն ի ներքս անկեալ սպանանիցեն զհոգիս մեր,,: (Մարգ. Ը. նորհ. ի Մեկն. Յակոբ ճառ. հինգե. ա. 21: Յովհ. Ծործոր. ի Մեկն Մաա. Ի.Ջ. 17. յեր. 552):

Ա.—Ջինչ ցուցանէ ի գիշերի ուտելն զմիս գառինն խորովեալ հրով, և ոչ պախ եփեալ ջրով:

Պ.—Ջգիշերն յորում յիննևրորդ ամսոյն կայր պէնեալ ի խաչին անարատ գառն Աստուծոյ. վասն զի՝ ի տունջեան յիննևրորդ ամսոյն խաւարեցաւ արեգական և եղև գիշեր, և ի գիշեր կենդաղոյս շնորհեցաւ մեզ միս և արիւն կեանքն մեր Քրիստոս կախեալ գիպայտէ, ըստ այնմ. ,,Ամբարձ Աբրահամ զաչս իւր և եահաս, և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերացն,,: (Ծննդ. ԻԲ. 13):

Այս յաղագս ի գիշերի ուտելոյն. իսկ հուրն է օրինակ Աստուծոյ սիրոյն, զոր ունէր առ Որդին՝ խորովելով զնա ի խաչին յաղագս ժողովրդեանն, նոյնպէս և սիրոյ սուրբ Հոգւոյն, որ իջեալ ի Աւրէ ընկալաւ զողջակիզումն իւրոյ փառակցին. ըստ այնմ. ,,Դու կրակ հուր ի Տեառնէ, և եկեր որ ինչ կայր ի վերայ սեղանոյն. զողջակէզն և զճարպն, և եահաս ամենայն ժողովուրդն և զարհուրեցաւ, և անկան ի վերայ երեսաց իւրեանց,,: (Գ. Եզեկ. Ի. 24: Ի. Մնաց. Ի. 1: Ի. Մակաբ. Ի. 10):

,,Ընդաւէտ է մարդոյ՝ տեսանել զԱստուած դոյն իւրով . . . բայց իբրև ինքնակամ կամօք բարերարութեամբ իւրով զինքն ցուցանէր (Աստուած) . . . ուսեալ՝ լոյս, ուսեալ՝ հուր, թէ ասիցեմք՝ եթէ հուր է, զոր ինչ տեսանեմքն՝ ասեմք. թէ ասիցեմք՝ լոյս է. . . նմանութիւնք ցուցանեմք անտեսութեանն վասն մերոյ անհասութեան,,: (Գրիգ. Նազիան. յԱգաթ):

,,Սովորութիւն է Աստուած վասն մաքրութեանն՝ հուր անուանել, և վասն պարզութեանն՝ լոյս, նաև բազում առնուամբ ի վերայ նորա այսպիսի անուանք, սակայն ոչ եթէ մի ոք ի սոցանէ զէութիւնն նորա առումգէ՝ որ անհասանէ, այլ միայն ըզ ներգործութիւն կամաց նորա մեզ յայտնի ցուցանել,,: (Ներ. Լամբ. յաւետնաբանութիւն):

Ա.—Ջինչ գուշակէ գոլխան ընդ օտիւք խորովելն զպաւեքն:

Պ.—Ջաստուածութիւնն ընդ մարդկութեան հրով սիրոյ Աօրն խորովիլ ի խաչին, վասն զի՝ այրուածոյ բևեռացն չալչատանօքն չարչարիւբ չարչարելեաւն, և անչարչար էր անչարչարելեաւն. ըստ այնմ. ,,Որով անստամբակիւք երասանեաւ սանձաց կրթութեան զստահակութիւնս իմ հանդարտեցոյց, և կամաւ ընծայեալ խաչին ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց ի ծայրս լրութեան անմահականն անկոյ, ի մահ վիրաւորեցաւ՝ աստուածութեանն անընդվիջելի ի մերասերն մարմնոյ. որով կենսացոյց զգործին պարտեաց. արարչութեանն իսկութեան՝ ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ,,: (Նար. Ա՛Ե. 7):

,,Յոլովապէս են ժամանակիս այսորիկ աքանչելիք. Աստուած խաչեալ, արնգակն խաւարեալ, և դարձեալ լուսաւորեալ, վասն զի պարտ էր և արժան ընդ արարչին չարչարակից լինել և արքայացոյց,,: (Գրիգ. Աստուածաբան ի ճառն ի Պասքայն).

—,,Աստուած և տեր փառաց գոլով որդի՝ գոյր յանարգութեան և յանպատուութեան՝ բևեռեալ ի խաչին,,: (Ըթանաս. ի Թուղթ առ Եպիկտիտոն եպիսկոպոս Կորնթացւոց):

,,Մի ի վայր անկցուք անպատուաճաբար եթէ այսոքիկ Աստուածոյ ոչ վայելին արիւն և չարչարանքն և մահն, վասն զի արեամբ Աստուածոյ եղաք փրկեալք և ազատեալք . . . և զի

անմարթ էր մերկ աստուածաբեմամբն զպնդանիկ կրել՝ զկինու ապա մարմնին. զի չարչարելեաւն չարչարեցի, և անչարչարելեաս տուածաբեմամբն վերինոցն զվատարանդեալս ի ծառայութենէ բանսարկուին, և նմանեաւսն զնմանն մաքրեցէ,,: (Աարգ. Ը՝նորհ: Ը, պետ. ձառ. երկրորդ. ա. 19):

,,Զլուսն մեր Քրիստոս փոխանակ ամենեցուն մեր պատուաբաղիր, որպէս զի յամենայն անդամսն զհոգևոր օրհնութիւնն սփռեալ տարածեսցէ յերկրպագութիւն իւրում ողորմութեանն,,: (Ներ. Լ՝ամբ. ի Ա՝ննն. պատ. յեղեւ. 87):

Ե.—Օրինչ ցուցանէ և զիորոյին ընդ գառինն խորհուրդն:

Պ.—Ցուցանէ զկորսումն մօր Յիսուսի և սիրելի աշակերտին՝ որք կային առ խաչին, որոց գալարեին աղիք, և չարչարեալ որդին իւր վասն մեղաւորաց իբրև զառջև անարատ, ըստ այնմ. ,,Ա՝ատուսցէ վասն յանցանացն՝ զոր յանցեաւ Տեառն. և վասն մեղացն զոր մեղաւ, էդ յօդեաց ոտից, կամ ազգ մի յայծեաց վասն մեղացն, և քաւեսցէ վասն նորա քահանայն ի մեղաց անտի, և թողցին նմա մեղքն,,: (Ղեւս. Դ. 6):

Եւ կամ, ,,Որ դժուարընդել դառնիարակաւ խաչն վարժեալ կրեցեալ, Որդւոյ քո կցորդակցութեամբ միաձևական ժուժկալութեամբ, կրելով զերաշխեպ վշտաց ծնեցելոյդ ի քէն տեառն մշտաչարչարն մեռելութեամբ, անձնատուր տրտմով խարուկեալ, իբրև զոտն անարատ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ պեղանոյդ մատեար, ատրաբոյն աաւաղիսակ գեղեցիկ մաքուր պատարագ,,: (Ներսէս. ի գոմանեցք խմբից. հատոր 9):

,,Ա՝ան զի ընդ Քրիստոսի փորձին, և ընդ Քրիստոսի տանջին, և ընդ Քրիստոսի մեռանին, նմին իրի և ընդ Քրիստոսի փառաւորին,,: (Աարգ. Ը՝նորհ. ի Ա՝ննն. Յակ. ձառ. Բ. Ե. 7):

Ե.—Որո՞յ օրինակ հանդիսանելն ասկերաց գառինն:

Պ.—Ի՝ օրինակ ասկերաց խաչելոյն Յիսուսի զոր ո՛չ խորտակեցին զնեւորքն Պիղատոսի ըստ խնդրանացն Հրէից. քանզի զի անպատշաճ էր խորտակիլն և անվայել աստուածային մարմնոյն, ըստ այնմ. ,,Ոսկր նորա երբեք եկին առ Յիսուս և տեսին, զի այն ինչ մեռեալ էր, և ոչ խորտակեցին զբարձս նորա,,: (Յովհաննու. Ի-Թ. 33):

Եւ Թէ՝ ,,Ընդ երեք զի լցցի գիրն՝ երեք ոսկր նորա մի փշրեսցին,,: (Ելոյն Ընդ. Ի-Թ. 36):

Ե.—Օրինչ է գօտի ընդ մէջս, և կօշիկք ոտս և ցուպ ի ձեռին ուտել զպատիկն:

Պ.—Ի՝ օրինակ հաւատոյ, յուսոյ և սիրոյ, ևս և՝ կօշիկն է աւետարանական բանն՝ որով ամրացաք ի հաւատս առ ի կոխել զօձս և զկարիճս, այն է՝ զնաւանայս և զանհաւատսն. իսկ ցուպքն են օրինակ պաղօթից, վասն զի գօտին պնդեալ կապէ պնդիղ ցանկականին, նոյնպէս և մեզ պարտ է կապել զխորհուրդս և զցանկութիւնս աշխարհի բղոտութիւմբ, Թերևս մի գուցէ շարիացուք ի հեշտութիւնս յանցաւորիս և զշլացուցցուք զաչս հոգւոց մերոց, այլ հաւատով և յուսով պնդեսցուք յաւինակալութիւն փառացն յաւիտենականաց ընդ սուրբս՝ յաւուրն արդարութեան արդարոց. ըստ բանին. ,,Ընդհին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալք, և դուք նմանողք մարդկան՝ որք սպասին տեառն իւրեանց՝ Թէ երբ դառնայցէ ի հարսանեացն. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ տէրն՝ գտցէ արթունս, ամէն ասեմ ձեզ. զի գօտի ընդ մէջ ածցէ՛ և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա,,: (Ղուկ. Ի-Ի. 35. 36. 37):

«Եւ ամբդ յոյն բարեաց տնկեալ ի սրտի՝ անձն իմ կոր-ծանեալ, և գօտեաւն հաւատոց պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝ զկրնապղատոր խորհրդոցդ ղցանկականիդ դործարան, խոստովան լեր բարերարին Աստուծոյ,,: (Նարեկ. Խն. 1: Գրի. լուսա. ի Յաճախ. ձառ. երկրորդ: Խոսրով. ի Մեկն. Յամակարգ):

«Ո՛չ միայն զմարմինն պարսպել աստուածծային երկիւղիւն, և ի ձեռն հոգւոյն շնորհայ իբրև գօտեաւ պնդել զնա՝ զի մի խեղեալ ինչ իբրև զաւանակ, մի՝ անվարժ դանկոխն դնասցէ ճանապարհ ըստ իւրում վայրաբեր ընութեանն, այլ և զմիտսն ևս մանաւանդ սանձահարել կապանօք, զի մի ինչ ընդ մարմնոյն վայրաբեր եղեալ հակիցէ ընդ ինքեան քարշելով և զհոգին. այլ որպէս զի վերհամբարձ կացցէ յաւէտ ըստ իմաստս հոգւոյն, իբրև պարտնաւակալ՝ և ունի բանս այսպէս. ընտ որում ասացեալ վերատուչութիւն հոգւոյն սրբոյ առաքելոյն՝ որով կարծրացան ղլուխ մարդկեղէն տկարութեանս ի բաց ընկենուլ՝ և զօրութիւն ճշմարտութեան հոգւոյն գոտի ընդ մէջ ածեալ քաջապէս յաղթելոյն ընդ դիմամամարտ պատերազմողացն. զմիքենայս բանսարկուին լուծանելով և զզօրութիւն նորա յայտ յանդիման խայտառակելով . . . . . իսկ պնդիմք զնա հոգւով և ճշմարտութեամբ կապիս ի գործ պատուիրանաց և անսպրթիք ի հոգևորական ճանապարհն զսպեալ ունելով զպատմուճան մտացն, առ ի չկուրացանել զառնամանիք մարմնական գարշութեանց,,: (Սարգ. Ճ՚նորհ. Ս. պետ. ճառ. երրորդ. ա. 13: Յակոբ. 1. 16):

Հ.—Օ՞ր ինչ ստուգաբանի զատիկդ անուն:

Պ.—Ստուգաբանի զատումն կամ բաժանումն, որով փրկեալ ազատեցաք և զատուցեալ բաժանեցաք ի խաւարէ ի լոյս, ի դժոխոց յարքայութիւն, ի մեղայ յարդարութիւն,

յանհաւատութենէ ի հաւատս ճշմարիտս, և ի կռապաշտութենէ յաստուածպաշտութիւն քրիստոնէական՝ արեամբ գառինն Աստուծոյ, ըստ այնմ. «Պիտասջիք, զի ոչ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօք փրկեցարուք ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն, այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին,,: (Ը. պետ. ա. 18):

«Ընչաւօր զատիկ մեր զինամբ Քրիստոսի. արասցուք ասն ցնծութեամբ նորոգեալք ի Հնութենէ մեղայ ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց,,: (ի Ճ՚արականի):

«Եւ գառն անարատ փոխանակ պղծոյս պատարագեցաւ և իւրով պատուական արեամբն լուացեալ զմեզ ի տղմոյ մեղացն անօրէնութեան. զոր ունայնութեամբ կենցաղոյս ունէաք ի հայրենատուր գնացից,,: (Սարգ. Ճ՚նորհ. Ը. պետ. ճառ. Ե. ա. 18. ի Մեկն. Յակոբ. Ը. 17):

Հ.—Օ՞րինչ նշանակէր յօթին աւուրս զատկոյ բաղարջ ուտելն:

Պ.—Յօթին աւուրքն են օրինակ յօթնեւորդ դարուս աշխարհիս. իսկ հացն անխմոր՝ նշանակէ զանսերմն և զանապականն կուսածին ծնունդ մարմնացելոյ Բանին Աստուծոյ, զորմէ բազում են վկայութիւնք ի սուրբ գիրս. ուստի և մեզ աւանդեցաւ պատուիրակել զՔրիստոս՝ ըստ իսկական օրինակին, նմին իսկ Քրիստոսի Յիսուսի ի սուրբ վերնատանն ի վերջն ընթրիս իւր ընդ դասս առաքելոց, որպէս պատմի ի սուրբ Աւետարանին թէ՝ «Եւ առեալ հաց զոհացաւ՝ եբեկ և եհաց նոցա՝ և ասէ. այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ լինի, զայս արարէք առ իմոյ յիշատակի,,: (Մատ. Ի. Օ. 26. Մարկ. Ժ. Դ. 22. Ղ՚ուկ. Ի՚Բ. 10. Ա. Կորնթ. Ժ. Ը. 24. Ծննդ. Ժ. Դ. 18. Ժ՚Ը. 6. Ժ. Թ. 3):

,,Նա որդիքն Իսրայելի յորժամ հանգերձեալ էին եկանել յԵգիպտոսէ՝ օրինադրեաց նոցա Մովսէս ոչ բառնալ խմորեալ ընդ ինքեանս, այլ անհետ առնել զնա զաւուրս եօթն ի տանց իւրեանց, և բազարջիւ միայն կերակրել զաւուրս եօթանցն. որ երօրինակ բազարջն ակրունական խորհրդոյն, և եօթն աւուրքն՝ եօթն դարուս կենցաղոյս,,: (Ներս. Շնորհ. գրեալ. Թուղթ առ Մանուէլ կայսր. յեր. 81):

Ա.—Օ՞ր ինչ է միաք Քանին, թէ՝ Ամենայն որ ուտիցէ խմոր եալ, սատակեսցի անձն այն յԻսրայէլէ:

Պ.—Ոչ այն, թէ՝ Ո՛ր և ժպրհեսցի թաղուցանել զինքեան զևմորն չարութեան և անարժանապատ հպարտի օտարել զմարմին Տեառն, դատապարտեսցի յաւուրն ահեղի, և ընկղմեսցի յանել գոբ խաւարային անդնդոց, ուր լալ աչացն է և կրճել ատամանց, ըստ այնմ. ,,Ընդ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն. փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ, և ի բաժակէն արբցէ: Քանի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատապարտանս անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ո՛չ խորէ զմարմին Տեառն,,: (Ա. Կորնթաց. ԺԱ. 27—29):

,,Նա թէ ո՛չ բարւոք են պարծանքդ ձեր, ո՛չ գիտէք՝ եթէ փոքր ի խմոր զամենայն զանգուածն խմորէ, սրբեցէք ի բաց զհին խմորն՝ զի եղիջիք նոր զանգուած. որպէս էքդ անխմորքը, քանզի զառիկ մեր զնաւ Քրիստոս,,: (Ա. Կորնթ. Ե. 6. 7: Ղ_ևս. Ք. 14. Ե. Օրինաց. ԺՔ. 3):

,,Որովք օրինադրէ ամենեցուն՝ որք յեգիպտական յանհաւատութենէն ելանիցեն և ի վերին աշխարհն աւետեաց ձանապարհորդիցեն, խմոր մեղաց ոչ բառնալ ընդ ինքեանս. այլ կերակրել անապական և աստուածային հացիւն՝ զղաւեան և

իմանալեաւն, այսինքն՝ մարմնովն Աստուծոյ. և բանիւն՝ որ ելանէ ի բերանոյ նորա . . . . . առնուն զիրք և ի չարեաց օրինակ զնմանէն. որպէս պօղոս ասէ. զառիկ մեր զնաւ Քրիստոս, այսուհետև արասցո՛ք ասէ՝ մի ի խմորս հինս և մի ի խմորս չարութեան և անզգամութեան, այլ յանխմոր ստուգութեան և ճշմարտութեան,,: (Ներս. Շնորհ. գրեալ Թուղթ առ Մանուէլ կայսր. յերես 82):

Ա.—Օ՞ր ինչ ցուցանէ կողոպատելն Իսրայելացւոց զնգիպատացիսն՝ յելանելն իւրեանց յԵգիպտոսէ:

Պ.—Ցուցանէ զկողոպատելն Յիսուսի իշմամբն ի դժոխս ըզհոգիս արդար նահապետաց և այլոց, ըստ այնմ. ,,Ընդ դու առբեամբ ուխտի քո արձակեցեր զկապեալս յանջրդի դրոյ,,: (Զաք. Թ. 11: Մատթէոսի ԺՐ. 29):

,,Քրովբէական կառօքն ստոր իջեալ ի դժոխս, կենագործեաց հզօրեղապէս զերամս արդարոց,,: (ի Շարականի):

,,Որ փոխանակ մեղաւորաց զմեռանիլ յանձն առեր իջանելով ի դժոխս՝ փրկեցեր ի մեղսասէր բանէն զդերեալսն,,: (Նոյն անդ):

,,Որ զմահ գերի առեալ՝ մահուամբ զմահ կոխեցեր, արձակելով զերամս մարգարէիցն յանստուեր քո հանդիսս,,:

Ա.—Օ՞ր ինչ է թլփատելոց միայն հրամայել ուսել զպատիկն:

Պ.—Ոչ հրամայել հաւատացելոց ի մահն Քրիստոսի և մկրտութիւնն միայն ձաշակել ի կենարար մարմնոյ և արեան Տեառն, ըստ այնմ՝ ,,Ոչ կայք կերպայք ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ՝ զոր խառնեցի ձեզ,,: (Ածաք. Թ. 5):

,,Ընդ նախ կատարեսցէ զմկրտութեան գործ, և ապա մատուսցէ զպատարագն սուրբ՝ յորմէ և զմկրտեալն հաղորդեցուսցէ,,: (Ներս. Շնորհ. գրեալ Թուղթ Ընդհանրական, առ դասս քահանայից. յերես 39):

«Եւ զի իւրով անպատճառական մահուամբն կենդանացոյց զմահու դատապարտեալս, և արեամբ իւրով աստուածծայնով զնեաց զմեզ ի ծառայութենէ մեղաց»: (Սարգ. Ճնորհ. ի Մեկն. Յակոբ. ճառ. էջբորդ. ա. 14):

«Օրինակ մահուն Քրիստոսի յինքեան նկարագրէ Պետրոս թիւնաւ ազանին. երից ընկղմէն ի ջուր՝ զերեքօրեայ զթաղումն Յիսուսի Քրիստոսի նշանակէ. իսկ իջանելն յաւազանն և ելանելն՝ զյարութիւնն Տեառն գուշակէ»: (Նոյն, Ընդ. Ա. պետ. ճառ. ա. ա. 3):

Ա.—Օ՛րինչ է ի տան ուտելն զմիսն զառակական, և ոչ հանել արտաքս քան զդուռնն:

Պ.—Տունն է օրինակ եկեղեցւոյ սրբոյ՝ տաճարի Տեառն Աստուծոյ. յորում միշտ պատարագեալ բաշխի Բանն Աստուած անճախապէս. վասն որոյ չէ արժան արտաքոյ եկեղեցւոյ կատարել զաւրհնութիւն հաղորդութեան, ըստ այնմ. «Տարցէ քահանայն օճեալ յարենէ զուարակին ի խորանն վկայութեան: Եւ թացցէ քահանայն զմատն իւր յարենէ զուարակին և ցանեսցէ եօթն անգամ առաջի Տեառն յանդիման վարագուրին սրբութեան»: (Ղեւտ. Գ. 16):

Եւ թէ՝ «Յմասաւորութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն, եղեն զգինիս իւր, և խառնեաց ի խառնարանս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր»: (Առակ. Թ. 1: Տես. Ճնորհ. գրել. առ քահանայս Յամայք նահգի. յիր. 164):

«Բանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ, յանզիման արեգական՝ ի սպասաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել եթէ ոչ ընդ թեւօք սորին պահեսցի»: (Նարեկ. Ծե. 9):

«Կամ զի ոչ երկինիւք բառականանայ այս նուէրք տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան ճաճկոյթ ասնիցի»: (Նոյն. Ծե. 9):

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ.

Ելք պըէ-ոյն Իսրայէլ յԵգիպտոսէ:

Ա.—Յելանելն Իսրայէլի յԵգիպտոսէ ի տանէ ծառայութեան՝ ընդ որ ճանապարհ գնացին յերկիրն Ըեհաեաց:

Պ.—Ընդ ճանապարհ անապատին, որ է մերձ առ Կարմիր ծովն: (Ելից. ԺԳ. 18):

Ա.—Որովք առաջնորդէր նոցա Աստուած ի տունջեան և ի պիշերի:

Պ.—Ամպով ամպոյ ի տուէ, և սեամբ հրոյ ի գիշերի: (Ելից. ԺԳ. 21):

Ա.—Երբև լուաւ արքայ Փարաւոն, թէ փախեաւ ժողովուրդն՝ զինչ արար:

Պ.—Կառեալ ի զէն և ի զարդ զօրաց հնձելովք և հետեւակօք, պնդեցաւ զհետ նոցա: (Ելից. ԺԴ. 3. 8):

Ա.—Որը զամին գնա քանակեալ:

Պ.—Ըս ամամբք կարմիր ծովուն: (Ելից. ԺԴ. 9):

Ա.—Երբև տեսին որդիքն Իսրայէլի զփարաւոն բանակեալ ի Թիխոնա կոյս՝ զինչ արարին:

Պ.—Երկիւղագին ձայնիւ զողոք բարձին առ Տէր, և ասեն ցՄովսէս. ընդէր հաներ զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ սպանանել յանապատի սոսա, մի՛թէ ոչ զոյին գերեզմանք Յեգիպտոս: (Ելից. ԺԴ. 10. 1112):

Ա.—Յայնժամ զի՞նչ արար Մովսէս:

պ.—Քաջալերեսց զնոսա և ասէ, մի երկնչիք. զի Տէր պատերազմի վասն ձեր ընդ Եգիպտացիս։ (Ելից. Ժ.Դ. 13. 14)։

ս.—Որպէս պատերազմեցաւ Տէր ընդ Եգիպտացիսն։

պ.—Ստուածային անսխալութեամբ, քանզի ամբարձաւ հրեշտակն Ստուծոյ՝ որ երթայր առաջի բանակի որդւոցն Իսրայէլի, և չոքաւ զկնի նոցա. և վերացաւ սիւն ամպոյն յերեսաց նոցա, և եկաց ի թիկունս նոցա։ (Ելից. Ժ.Դ. 11. 9)։

ս.—Ո՞ր են նմուտ սիւն ամպոյն։

պ.—Ընդ ամէն եկաց ընդ մէջ բանակին Եգիպտացւոց և բանակին Իսրայէլացւոց. և եղև մէգ և խաւար, և նոցա դիշերն ևս ոչ խաւնեցան զամենայն դիշերն։ (Ելից. Ժ.Դ. 20)։

ս.—Ջի՞նչ էր դործին, որով պատերազմէին նոքա ընդ Եգիպտացիսն։

պ.—Գաւազանն Մովսիսի, որով ըստ նախատուշակ ազդեցութեանն Ստուծոյ եհար զջուրն, և զարձոյց անդրէն զծովն բռնութեամբ հարաւային հողմոյ զդիշերն ողջոյն, և արար զծովն ցամաք, և պատառեցաւ ջուրն։ (Ելից. Ժ.Դ. 21)։

ս.—Ի պատառել ջրոյն զի՞նչ արարին որդիքն Իսրայէլի։

պ.—Մտին ի ծովն իբրև ընդ ցամաք. և ջուրն պարիսպ եղև ընդ աջմէ նոցա և ահեկէ։ (Ելից. Ժ.Դ. 22)։

ս.—Իբրև եռես փարատեն զցամաքիլ ջրոյն, զի՞նչ արար։

պ.—Պնդեցաւ զօրքն իւրովք և խմոտ զկնի նոցա ի ծովն, և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի տեղի իւր, և ծածկեաց զկառս և զհեծեալս և զամենայն զօրութիւնն փարաւոնի, որք մտեալ էին զկնի նոցա ի ծով անդր, և ոչ մնացին ի նոցանէ և ոչ մի։ (Ելից. Ժ.Դ. 23. 28)։

ս.—Իբրև զերծան որդիքն Իսրայէլ ի ծովէ՝ ուր հասին։

պ.—Յանապատն Սինայ՝ առաջնորդեալ[ե] Մովսիսի. նկին ի Մեռայ և ոչ կարէին ըմպել զջուր, զի դառն էր ուստի անուանեցաւ զանունն տեղւոյն այնորիկ դառնութիւն։ (Ելից. Ժ.Ե. 22. 23)։

ս.—Որո՞ք քաղցրացոյց Մովսէս զայն ջուր։

պ.—Ածառ ըստ բանի Տեառն վայտ ի ջուրն և քաղցրացաւ, և անդ եդ նմա Ստուած իրաւունս և դատաստանս, և անդ փորձեաց զնա։ Եւ անտի յարուցեալ եկին Յեղիմ, ուր էին երկոտասան աղբիւրք ջրոց, և եօթանասուն ծառ արմաւենեաց և անդ բանակեցան առ ջրովն, և անտի չուեցին յանապատն ի Սին։ (Ելից. Ժ.Ե. 25. 27. Ժ.Զ. 1)։

ս.—Ո՞ւնէին ընդ ինքեանս կերակուր առտնոյ։

պ.—Ուներին՝ բայց սակաւ. որոյ ի սպառիլն տրանջային զՄովսիսէ, յամաւ աեր և առաքեաց առ նոսա կերակուր և հաց յերկնից։ (Ելից Ժ.Զ. 4։)

ս.—Որպէ՞ս։

պ.—Յառաւօտեան յիջանել ցօղոյն շուրջ զբանակաւն՝ ամէնին զի սփռեալ էր յերեսս անապատին մանր իբրև զկինձ. սպիտակ իբրև զկուժն ի վերայ երկրի, և ասեն այր ցընկեր իւր, զի՞նչ է այս. քանզի ո՛չ դիտէին զինչ էցէ. և առաքէ Մովսէս, այդ է հաց, զոր ետ ձեզ Տէր յուտել, և այն անուանեցաւ երբայեցերէն մանանայ։ (Ելից. Ժ.Զ. 14. 15. 31։)

ս.—Որպիսի՞ եղանակաւ ժողովել հրամայեաց Մովսէս զմանանայն։

պ.—Ամպեսն, թէ՝ ժողովեցէք ի դմանէ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում չափով ըստ գլուխ, ըստ թուոյ անձանց ձերոց, ըստ իւրաքանչիւր վրանացն ձերոց ժողովեցէք, և առնեն որդիքն Իսրայէլի այնպես. . . . . խակ յաւուրն վեցե-

բորդի ժողովեցին կրկին, երկուս չափս առ մի մի: (Ելից. ԺԴ. 16—22):

Ա.—Որո՞վք պահեցին ի մանանայն ի յաջոյ յերկնից:

Պ.—Ոսկեայ սափորով, որպէս պատուիրեաց Մովսէս Ահարոնի՝ ասելով. ա՛ռ դու սափոր ոսկի, և արկցես ի նմա չափով զմանանայ, և դիցես զայն առաջի Աստուծոյ ի պահեստի յազգս ձեր: (Ելից. ԺԶ. 33):

Ա.—Որչա՞փ ժամանակս կերին ի մանանայէ անտի որդիքն Իսրայելի:

Պ.—Մա՛ն քառասուն՝ մինչև եկին ի շէն երկիրն և հասին ի կողմն փիւնիկեցւոց, և ի քառասնամեայ շրջապատութեան իւրեանց հանդերձք նոցա ո՛չ մաշեցան, և կօշիկք ոտից ո՛չ հրնացան: (Ելից. ԺԶ. 35):

Ա.—Երբե՞ւ կերին և յագեցան նոքա վասն անտի. գոհացա՞ն Աստուծոյ:

Պ.—Ո՛չ. քանզի ժողովուրդ խստապարանոց էին, և յորժամ չուեցին ի Սին անապատէ ի Ռաւիդիմ. ո՛չ գո՛յր ջուր ընպելոյ ժողովրդեանն, և արտնջացին ընդ Մովսիսէ և ասեն՝ ընդէ՞ր հաներ զմեզ յԱզիպտոսէ կոտորել աստ ի ծարաւոյ, լսեաւ տէր զարտունջ նոցա և ասէ ցՄովսէս. ե՛րթ առաջի ժողովրդեանդ, և ա՛ռ ընդ քեզ ի ծերոց ժողովրդեան, և զգաւազանն՝ որով հարեր զգետն, կա՛ր ի ձեռին քումմ. և կա՛ց հանդէմ անդ յառաջագոյն քան զքեզ ի վերայ վիմի ի Խորեբ, և հարցես զվէմն և ելցէ ի նմանէ ջուր, և արբցէ ժողովուրդդ, և արար այնպէս առաջի որդւոցն Իսրայելի: (Ելից. ԺԷ. 1—5):

Ա.—Ի յիշմակել զջուրն ի Ռաւիդիմ ո՞վ ևս ընդ առաջ նոցա ի պատերազմ:

Պ.—Ամաղէկ. որդի Ելիփազու, որդւոյ Եսաւայ որդւոյ Աբրահամայ: (Ելից. ԺԷ. 5):

Ա.—Որպէ՞ս յաղթեցաւ Ամաղէկ Իսրայելէ:

Պ.—Ելեալ Մովսէս և Ահարոնն և Ովր ելին ի գլուխ բլրոյն. և լինէր՝ յորժամ համբառնայր Մովսէս զձեռս իւր, զօրանայր Իսրայէլ, և յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր՝ զօրանայր Ամաղէկ. և ծանրէին ձեռքն Մովսիսի, և առեալ վէմ դնէին ընդ նովաւ, և նստէր ի վերայ նորա, և Ահարոնն և Ովր հաստատէին զձեռս նորա, մի աստի և մի անտի, և լինէին ձեռքն Մովսիսի հաստատեալք մինչև ցմտանել արեգականն. և եհար Յեսու զԱմաղէկ, և զամենայն զօրս նորա կոտորմամբ սրոյ,,: (Ելից. ԺԻ. 10—13):

Ա.—Յորժամ վանեաց զպատերազմն Ամաղէկայ՝ զինչ ասրար Մովսէս առ ի թևթևացուցանելոյ չինքեանէ զծանրութիւն դատաստանի ժողովրդեանն:

Պ.—Ուրուք ձայնի աներոյ իւրոյ՝ ընտրեաց Մովսէս յամենայն Իսրայելէ արս զօրաւորս, և արար ի վերայ նոցա հազարապետս, հարիւրապետս և յիսնապետս, և դատէին զժողովուրդն յամենայն ժամ. բայց զբան մեծ հասուցանէին առ Մովսէս՝ և զամենայն բան թևթև ինքեանք դատէին: (Ելից. ԺԻ. 24. 25. 26):

Ա.—Ո՞ման անդրանկացն զի՞նչ ասաց Մովսիսի Աստուած:

Պ.—Սրբեա ասէ. դու ինձ զամենայն անդրանիկ նախածին, որ բանայ զամենայն արգանդս ի մէջ որդւոցդ Իսրայելի ի մարդոյ մինչև յանասունն քանզի իմ է: (Ելից. ԺԳ. 2):

Ա.—Որպէ՞ս էր սրբութիւնն նոցա:

Պ.—,,Ասէ տէր. յաւուրն ութերորդի թլփատեսցէ զմանուկն անթլփատութեան նորա, և զերեսուն և զերիս աւուրս նստցի ի վերայ սրբոյ արեան իւրոյ. յամենայն զոր սուրբ՝ նա մի մերձենայցէ, և ի սրբութիւն մի՛ մտցէ մինչև լցցին աւուրք սրբութեան նորա,,: (Ղևտ. ԺԲ. 3. 4):

ՙ, — Ի լրանալ սրբուԹեանց աւուրց նորա. զինչ առնէին ըստ հրամանին Տեառն:

Պ.—,,Ասէ Տէր. ածցէ զգառն տարեւոր յողջակէզ, և զոչխս պաշտնեայ կամ տասրակի վասն մեղացն՝ ի դուռն խորանին վկայուԹեան առ քահանայն,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 6):

ՙ.—Ո՞ան էր մատուցանէին առ քահանայն:

Պ.—,,Ասէ Տէր. զի մատուսցէ աստուղի Տեառն՝ և քաւեսցէ վասն նորա քահանայն, և սրբեսցէ զնա յաղբերէ արեան նորա. այս օրէն իցէ այնորիկ որ ծննդեան զարու կամ զէգ,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 7:)

ՙ.—Ապա թէ՝ ո՛չ գտանիցի ձեռն նորա բաւական լինել գառամբ, զի՞նչ արասցէ:

Պ.—,,Ասէ Տէր. առցէ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղաւնւոյ՝ զմիոն յողջակէզ, և զմիւսն վասն մեղացն. և քաւեսցէ վասն նորա քահանայն և սրբեսցի,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 8):

ՙ.—Ո՞ան սրբուԹեանց բորոտեալ անձանց զի՞նչ ասաց Տէր ցՄովսէս:

Պ.—Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարովնի և ասէ. մարդոյ ուրուք՝ եԹէ լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ նշան ըսպուոյ, կամ պալար՝ կամ պաղպաջ՝ և լինի ի մորթ մարմնոյ նորա արաճ բորոտուԹեան, եկեսցէ առ Ահարովն քահանայ, կամ առ մի յորդւոց նորա քահանայից, և տեսցէ քահանայն զբաճն ի մորթի մարմնոյ նորա. կամ Թէ՝ մազ արաճին ի սպիտակ դարձեալ իցէ, և տեսիլ արաճին ընատադոյն իցէ քան զմորթ մարմնոյն, արաճ բորոտուԹեան է. և տեսցէ քահանայն և պղծեսցէ զնա. ապա Թէ պաղպաջն սպիտակ իցէ ի մորթ մարմնոյ նորա, և ընատադոյն չէիցէ տեսիլն նորա քան զմորթն, և մազն սպիտակ չէիցէ դարձեալ, և շլադոյն իցէ ինքն, զատուսցէ քահանայն զարաճն զևօթն օր,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 1—4):

ՙ.—Ապա Թէ՝ ո՛չ բժշկեսցի ըստ օրինացս Տեառն զի՞նչ արասցէ նմա:

Պ.—,,Ասէ Տէր, բորոտ՝ յորում իցէ արաճն՝ հանդերձ նորա քակեալ լիցի և զլուխ նորա մերկ, և զերան իւր պատեսցէ, և պիղծ կոչեսցի,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 45):

ՙ.—Մինչև յերբ:

Պ.—Ասէ Տէր. զամենայն աւուրս որչափ իցէ ի նմա արաճն՝ պիղծ եղիցի. և պիղծ է, մեկնեալ նստցի: (Ղ՝Եւ. ԺՂ. 46:)

ՙ.—Ո՞ւր:

Պ.—,,Ասէ տէր. արտաքոյ բանակին եղիցի բնակուԹիւն նորա,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 46):

ՙ.—Յորժամ սրբեալ լինէր ի բորոտուԹենէն իւրմէ, զինչ առնէին նմա:

Պ.—,,Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. այս օրէն եղիցի բորոտի՝ յաւուր յորում սրբեսցի. ածցի առ քահանայն,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 1. 2):

ՙ.—Ահարովն քահանայն զի՞նչ արասցէ:

Պ.—,,Ասէ Տէր. ելցէ քահանայն արտաքոյ բանակին, և տեսանիցէ քահանայն, և ահա բժշկեալ իցէ արաճն բորոտուԹեան ի բորոտէ անտի,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 3):

ՙ.—Ապա զի՞նչ պատուէր ասէ Աստուած քահանային:

Պ.—,,Ասէ Տէր. հրամայեսցէ քահանայն, և առցեն ի սրբելոյն երկուս հաւս կենդանիս սուրբս՝ և փայտ եղևնեայ՝ և կարմիր մանեալ՝ և զոսպայ,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 4):

ՙ.—Յի՞նչ պէտս պատուիրեաց Տէր առնուլ զհաւսն զայնոսիկ:

Պ.—,,Զմին վասն զենման, և զմիւսն վասն ԹաԹաւելոյ յաբեան զենեցելոյն,,: (Ղ՝Եւ. ԺՂ. 5):

Ա.—Որպիսի՞ եղանակաւ առնէին զայն։

Պ.—,,Ասէ Տէր. Հրաման ասացէ քահանային և սպանցին զմի հաւն յանօթ խեցեղէն ի վերայ ջրոյ կենդանւոյ, և զհաւն կենդանի առցէ՝ և փայտ եղևնեայ, զկարմիրն մանեալ՝ և զոսպայն, և թացցէ զնոսա և զհաւն կենդանի յարիւն հաւուն սպանեալոյ ի վերայ ջրոյ կենդանւոյ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 6)։

Ա.—Զի՞նչ առնէին զարիւն հաւուն։

Պ.—,,Ասէ Տէր. և ցանեսցէ ի վերայ սրբեցելոյն ի բորոտու-թենէ եօթն անգամ. և սրբեսցէ զնա, և արձակիցէ զհաւն կենդանի ի դաշտ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 7)։

Ա.—Յորժամ մտանէին յերկիրն Քանանացւոց, եթէ լինէր արաւ բորոտութեան ի տունս երկրին, զի՞նչ առնէին։

Պ.—,,Ասէ Տէր. գայցէ որոյ տունն իցէ՝ և պատմիցէ քահանային և ասիցէ. եթէ արաւ իմն երևեցաւ ի տան իմում,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 35)։

Ա.—Ի լսել քահանային ըստ հրամանի Տեառն զի՞նչ առնէր տունն։

Պ.—Ասէ Տէր. հրաման ասացէ քահանայն թափել զտունն, մինչչև մտեալ իցէ քահանային տեսանել զտունն. և սղծեսցէ քահանայն զամենայն որ ինչ ի տունն կայցէ, և ապա մտցէ քահանայն որոնել զտունն։ (Ղ. Լա. Ժ.Դ. 36)։

Ա.—Յորժամ զատուցանէր զտունն զեօթն օր ըստ հրամանի Տեառն՝ և դարձեալ գայր յաւուրն եօթներորդի, և տեսանէր թէ սփռեալ էր արաւ տանն ընդ որմս, զի՞նչ առնէր։

Պ.—,,Ասէ Տէր. հրաման ասացէ քահանայն և քակեսցին զքարինս յորս արաւն իցէ, և հանցեն զնոսա արտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ, և քերեսցեն զնա ի ներքոյ շուրջանակի՝ և հեղցեն զքերուածն արտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 40—41)։

Ա.—Փոխանակ քարանցն այնոցիկ զի՞նչ դնէին ի տեղի նոցա։

Պ.—,,Ասէ Տէր. առցեն այլ քարինս քերուածոյս՝ և դիցեն փոխանակ այնց քարանց, և այլ հող առցեն՝ և ծեփեսցեն զտունն,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 42)։

Ա.—Ուսկ իւրոյ՝ թէ անդրէն կրկներ արաւն, և երևիւր ի տան՝ յետ քակելոյ՝ և զտունս քերելոյ՝ և սրբանալոյ ծեփելոյ, զի՞նչ առնէին։

Պ.—,,Ասէ Տէր. մտցէ քահանայն՝ և տեսցէ, թէ սփռեալ իցէ արաւն ընդ տունն, քանակ բորոտութիւն է ի տանն. պիղծ է,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 44)։

Ա.—Զի՞նչ առնէին զտունն ըստ հրամանի Տեառն։

Պ.—,,Ասէ Տէր. քակեսցեն զտունն՝ և զփայտ նորա, և զքարինս նորա, և զամենայն հող տանն, և հանցեն արտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 45. 46)։

Ա.—Յորժամ բժշկեալ լինէր տունն՝ յարաւծոյ բորոտութեան, զի՞նչ առնէին։

Պ.—,,Ասէ Տէր. առցէ առ ի սրբելոյ զտունն երկուս հաւս կենդանիս սուրբս, և զփայտ եղևնեայ, և զկարմիր մանեալ՝ և զոսպայ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 49)։

Ա.—Վասն ի՞նչ։

Պ.—,,Ասէ տէր Աստուած. սպանցէ զմի հաւն յաման խեցեղէն ի վերայ ջրոյ կենդանւոյ. և առցէ զփայտն եղևնեայ, և զկարմիրն մանեալ և զզոսպայն, և զհաւն կենդանի, և թացցէ զնոսա յարեան հաւուն սպանելոյ ի վերայ ջրոյ կենդանւոյ, և ցանեսցէ նոքօք զտամբն եօթն անգամ,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 50. 51)։

Ա.—Ընդէ՞ր ցանէին զարիւն հաւուն զտամբն։

Պ.—,,Ասէ տէր Աստուած. սրբեսցէ զտունն արեամբ հաւուն՝ և ջրովն կենդանեաւ, և փայտիւն եղևնեաւ՝ և զոսպայիւն, և կարմրովն մանելով,,։ (Ղ. Լա. Ժ.Դ. 52)։

Հ.—Զհաւն կենդանի թաթաւեալն արեամբ միւսոյն ինչ առնէին։

Պ.—«Եսկ տէր Աստուած. արձակեսցէ զհաւն կենդանի արտաքոյ քաղաքին ի դաշտ. և քաւեսցէ վասն տանն՝ և սուրբ եղիցի։ (Ղևտ. ԺԴ. 53)։

Հ.—Ի պատուիրել Տեառն Մովսիսի դատարկաձեռն մի երևիլ առաջի նորա. ինչ արար։

Պ.—«Ըստ ըստ հրամանի Տեառն զոր ասաց. առնուցուք նաշիհ. և առնիցէք գային երկոտասան պան՝ յերկուց տասանորդաց լինիցի պան մի, և գնիցէք գնոսա երկուս նուէրս. վեց պան զմի նուէրն ի վերայ սեղանոյն սրբոյ առաջի Տեառն. և դիցես ի վերայ նուիրին կնդրուկ սուրբ՝ և աղ, և եղիցի ի հաց յիշատակի առաջաւոր Տեառն. յօրն շաբաթուց գնիցէք առաջի Տեառն. հանապազորդ յորդւոցն Իսրայելի, յուխտ յաւիտենական. և եղիցի Ահարոնի և որդւոցն նորա, և կերիցեն զայն ի սուրբ տեղւոջն, զի սրբութիւն սրբութեանց է այն նմա ի ողհաւորացն Տեառն՝ յօրէն յաւիտենական»։ (Ղևտ. ԻԴ. 5—9)։

Հ.—Ի տալ նոցա զմանանայն դոհացմն զԱստուծոյ։

Պ.—«Ո՛չ բնաւ. զի յորժամ չուեալ ի Հովը լեռնէ ընդ ձանապարհ Արարիա ծովուն՝ պատեցան զնդեմաւ, և յոգնեցան ի ձանապարհին, բամբասեաց ժողովուրդն զԱստուած և զՄովսէս՝ և ասեն. ընդէր հաներ զմեզ Եգիպտոսէ կոտորել յանապատի աստ անհաց և անջուր. և անձինք մեր տաղտկացեալ են ի մնոտի հացէս»։ (Ծուոց. ԻԱ. 4. 5)։

Հ.—Ի կոչել որդւոցն Իսրայելի զերկնային հացն մնոտի և նանիր, զինչ արար Աստուած։

Պ.—«Արիացաւ և առաքեաց օձս կոտորիչս, որք հարկանէին զժողովուրդն, և մեռաւ ժողովուրդ բազում յորդւոցն Իսրայելի, մինչև գարձան առ Մովսէս. զի բարձցէ զպատուհասն. և նա ևկաց յաղօթս վասն ժողովրդեանն»։ (Ծուոց. ԻԱ. 6. 7)։

Հ.—Որպէս բարձաւ այն պատուհաս։

Պ.—«Երբ Մովսէս ըստ հրամանի Տեառն օձ պղնձի, և կացոյց զայն ի վերայ փայտի. և օձահարքն հայելով ընդ օձն պղնձի՝ ապրէին ի վտանգէն»։ (Ծուոց. ԻԱ. 9)։

ՄԵՆՈՒԲԱՆ։

Հ.—Ո՞րչափ ցուցանէ գնալ ժողովրդեանն ընդ ձանապարհ անապատին մերձ առ Կարմիր ծովն։

Պ.—Կարմիր ծովն՝ է օրինակ աւազանին մկրտութեան. և է մկրտութիւն՝ որ լինի ջրով, որպէս մեր ամենից հաստարակաց ի ժամանակի անդորրութեան. և է մկրտութիւն՝ որ լինի արեամբ և սիրով, որպէս մարտիրոսաց՝ ի ժամանակի նեղութեան. վասն որոյ ի խաչելութեանն փրկչին մերոյ Յիսուսի ել ի կողից վտակ արեան և ջրոյ առ ի խրախուսել զամենեսեան ի մկրտութիւն, ըստ այնմ. «Եթէ ոք ոչ ընկալցի զմկրտութիւն. փրկութիւն նմա ոչ դոյ, բայց միայն մարտիրոսաց, որք և առանց ջրոյ առնուն զքաւութիւն։ Ի ժամանակի խրթև եկն Տէրն մեր փրկել զաշխարհ խաչիւն իւրով, և ի կողս խոցեցաւ, եհան անտի արիւն և ջուր. զի ոմանք որ ի ժամանակի խաղաղութեան իցեն, ջուրըք մկրտեսցին. իսկ որ ի ժամանակի հալածանաց իցեն, անդէն յիւրեանց արիւն մկրտեսցին։ Ջի և մարտիրոսութիւն ինքնին գիտէ մկրտութիւն անուանել»։ (Ակնարկ Երրու. ի կոչ. ընծայ. գլուխ Ժ)։

«Սրկին իմն է զօրութիւն մկրտութեան յաւետարանսդ, մի՝ որ զինքեան առնուն՝ նոցա շնորհեալ է ի ջրոյ. երկրորդ այն է՝ որ սրբոյ մարտիրոսաց վճարի արեամբ նոցունց. և այս է ի

փրկութեան կողից անտի արիւն և ջուր,,։ (Նոյն, անդ. գլուխ. ԺԹ։ Նար. Ը՝նորհ. ի Թուղթն առ քահանայս Յամայք նահանգի. յեր. 162)։

,,Մկրտեաց Մովսէս՝ այլ ջրով. և նախ քան զայն յամին և ի ծովն՝ օրինակաւ. . . մկրտեաց և Յովհաննէս ոչ ևս հրեաբար, զի ոչ ի ջուր միայն՝ այլ և յապաշխարութիւն. բայց չև ևս զբովանդակ հոգևոր . . . մկրտէ և Յիսուս, այլ և հոգւով. այս է կատարելագոյնն . . . գիտեմ և չորրորդ մկրտութիւն՝ վկայութեամբ և արեամբ. զոր և ինքն Քրիստոս մկրտեցաւ, և յոյժ քան զայլսն է պատկառելի . . . գիտեմ և հինգերորդ ևս որ արտասուացն է, այլ տաժանելի, որպէս որ լուանային զամենայն գիշեր զմահիճս իւր և զանկողինս արտասուօք,,։ (Գրիգ. Ընտուաճաբան։ Ձառ ի մկրտութիւն Տեառն։ Ը. Կոչն. ԺԱ. 2)։

,,Դակ ի դարուն՝ հինդ մկրտին յամին և ի ծովն Յորդանան հին. տացուք հրաշից՝ ներդոյծողին պատիւ և փառք անեղ Բանին,,։ (ի Շ՝ար.)։

Ա.—Ընդ ևս ոմն օրինակ է պարսիր ծովն. և ձանապարհն յանապատին մերձ առ նա։

Պ.—Որպարքեաղ բոցոյ գնհենին, և ձանապարհն՝ աշխարհիս, զորով պատեալ է մարդկայինս բնութիւն խակզբանէ անտի ոմն ի կեանս, և ոմն ի կորուստ, ըստ այնմ. ,,ի ձանապարհս արդարութեան կեանք. ձանապարհ՝ ոխակալից ի մահ,,։ (Ընտակ. ԺՐ. 28)։

Նոյնք թէ՝ ,,Օ՛ր ուղեղ են ձանապարհք Տեառն. և արդարք գնացին ի նոսա. և ամբարիշտք ակարասցին ի նոսա,,։ (Ովս. ԺՐ. 10)։

,,Ա՛նապարհ գիենոցաց կոչել սովոր են գիրք. ընդ որոյ Քրիստոս ընդ վարան անց, ասէ, և ոչ մեղաւ. զբովանդակ

գմարմնոյ կրեալ գիւրս, այս է, ծնաւ, սնաւ, քաղցեաւ, ծարաւեցաւ, աշխատ եղև, ևկեր, արբ, ղպեցաւ, հոգաց, արտասուեցաւ, արտասուեաց, և որ այլ ևս ի մարմնի բերի՝ յանձն էառ,,։ (Խոսրով. ի Մեկն. պատարագի)։

Ա.—Օ՛րինչ է առաջնորդութիւն ամպեղէն սեանն ի տուէ, և հրեղէն սեանն ի գիշերի։

Պ.—Ի օրինակ ամենասուրբ Երրորդութեան, որ առաջնորդէ հոգւոց արդարոց յերկինս՝ յուցանելովն ամպովն զ՝այր և զ՝ոդին, և հրով զՈրդին Մխածին որով լոյս ծագեաց յաշխարհ, ըստ այնմ. ,,Ա՛նապարհ արդարոց իբրև զլոյս ծագին, առաջնորդեն և լուսաւորեն մինչև տիւն ծագեսցի,,։ (Ընտակ. Պ. 18)։

,,Ընդ այսպէս ասէ Տէր՝ որ փրկեացն զքեզ սուրբն Իսրայէլի. ես եմ Տէր Ընտուած քո՝ ցուցից քեզ գտանել զձանապարհ ընդ որս գնասցես,,։ (Ընտայի. ԽԸ. 17)։

Ա.—Օ՛րինչ ցուցանէ կառօք և երիվարօք և ամենայն զօրօք պնդելն Փարաւոնի զհետ որդւոցն Իսրայելի։

Պ.—Ցուցանէ զանմարմինն Փարաւոն ղսատանայ, որ անդէաձ յերկնից զօրօքն իւրովք՝ միշտ պնդի զհետ արդարացեալ հոգւոց, և պէսպէս հնարիւք մեղաց տայ պատերազմ և ջանայ կլանել և կորուսանել զնոսա, ըստ այնմ. ,,Ընթա՛ւն լերուք և հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ, թէ զո՞ կլանիցէ,,։ (Ը. Պետ. Ե. 8)։

Նոյնք թէ՝ ,,Տեսի զգազանն և զթագաւորս երկրի, և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ հեծեալն էր ի ձին սպիտակ, և ընդ զօրս նորա,,։ (Յայտնու. ԺԹ. 19)։

,,Որ բաժանեաց զծով՝ աշխարհի խաչին խորհրդով, և ազատեաց յանմարմին Փարաւոնէ զնոսա Իսրայէլ,,։ (ի Շ՝ար.)։

«Դակ նա, զորօրինակ ազգք դաղանաց ընդ լեանել շնչոյն առաւել իմն կուրին, նմանապէս և նա մօտ եղեալ ի կատաբած՝ առաւել իմն ջանայ և հնարի ցուցանել զզօրութիւն իւր, պատրանօք և ոչ բռնութեամբ որսալ զմարդիկ, և զհինանկից իւր առնել և հաղորդս չարչարանաց իւրոց»: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յուդայ. ձառ. Ա. աջ. ա. 6: Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յիսիս 5):

Ը.—Օ՞րինչ ցուցանէ ծովիզրն, յորում բանակեալ էին մեք առ ծովիմ կարմիր:

Պ.—Ծովիմ կարմիր, որպէս ի վեր անդր ասացաւ. է օրինակ և դժոխոց, աշխարհի և մեղաց. և եզրն՝ մահու, ըստ այնմ. «Ո՛վ մահ, որպէս դառն է յիշատակ քո մարդոյ խաղաղացելոյ ի վերայ ստացուածոց իւրոց»: (Սիրաք. ԽԱ. 1):

«Օրի որպէս ի միջոյէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ որով ամենեքեան մեղան: Եյլ Թագաւորեաց մահ յԱդամայ մինչև ցՄովսէս. և ի վերայ չյանցուցիչսն, ըստ նմանութեան յանցուածոյն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոյն: Իսկ արդ՝ զի՞նչ պատուղ ունէիք յայնժամ, որով այժմ զամօթի հարեալ էք. զի վախճան նոցա մահ է: Օրի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ի Յիսուս Քրիստոս ի Տէր մեր»: (Հռոմ. Ե. 12. 14: Օ. 21. 23):

«Առաքեցեր (զՄիածին Որդիդ) ի մահ վասն մեղաց մերոց, զի առցէ զմեղս մեր ի յանձն իւր.... և ընդ նմին տարցի ըզպատուհասն յանցանաց մերոց յանձն իւր չարչարանօք խաչին»: (Դրի. Լուսաւորիչ ՀՃգաթանգեղոս):

Ը.—Օ՞րինչ ցուցանէ լալահառն ձայնիւ առ Տէր բողոքել որդւոցն Իսրայելի:

Պ.—Յուցանէ զլաց և զաղաղակ մարդկայինս բնութեան, որ հարեալն էր զանազան վիրօք մեղաց. և զղջմամբ սրտի դարձեալ առ Տէրն՝ խնդրեաց յօգնութիւն հասանել ինքեան՝ ըստ ձայնի մարգարէին. «Ընդ Տէր օգնեաց մեզ, և փրկեաց զմեզ վասն անուան քո»: (Սաղմ. ԽԹ. 26):

«Օրի այսպէս ասէ Տէր Տէր սուրբն Իսրայելի. յորժամ դարձցիս և յոգւոց հանիցես, յայնժամ կեցցես. և դիտասցես՝ թէ ո՞ր իցես:... Եւ Երուսաղէմ լալով եղաց՝ թէ ողորմեացի ինձ. ողորմեացի քեզ. և լուիցէ ձայնի աղաղակի քումի. իբրև հասես՝ լուաւ քեզ»: (Նահ. Լ. 15. 19):

«Ա՞ստն ղի դու ես Աստուած խաղաղութեան. և բայ ի քէն զայլ ոք ոչ դիտեմք. և զանուն քո ամենազօր՝ կարդամք յօդնականութիւն անձանց մերոց»: (ի Ժամակարգ):

Ը.—Օ՞րինչ է քաջալերեին Մովսիսի զժոզովուրդն՝ և ասել. թէ Տէր պատերազմի ընդ Եգիպտացիսն վասն ձեր:

Պ.—Ի՝ քաջալերեին Յիսուսի զբնութիւնս մեր, և ասել. թէ՝ իջեր ես ի Ը.օրէ և միաւորեալ զաստուածութիւնս ընդ մարդկութեան՝ մեծացուցի զնա. և ընդդէմ բռնութեան սատանայի պատերազմիմ վասն նորա մահուամբ իմով և փառաւոր յարութեամբ, ըստ այնմ. «Օրհնեալ Տէր Աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ի պատերազմ, և զմատունս իմ ի ճակատամարտս»: (Սաղմ. ՃԽԴ. 1. Ա Ի. 35):

Եւ թէ. «Երիվար պատրաստի յաւուր պատերազմի, բայց ի Տեառնէ է օգնութիւն»: (Առակ. ԻԱ. 31):

«Օայս խօսեցայ ընդ ձեզ. զի ընդ իս զխաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք. այլ քաջալերեցարուք. զի ես յաղթեցի աշխարհի»: (Յովհ. Ժ.Օ. 33):

Հ. — Օ՞ր է վերանալ հրեշտակին յառաջոյ բանակին և դալն զկնի նոցա. և վերանալ ամպղէն սեանն յերեսաց նոցա, և կալն ի թիկանց։

Պ. — Լինելն յառաջոյ բանակին ցուցանէ զմարմնառութիւն Բանին Աստուծոյ, զորդեն նորա ընդ հոգեղինացս՝ գնալով ի վերայ երեսաց մերոց առ ի կացուցանել մեզ զճանապարհս արքայութեան, և զբարձրանալն ի խաչ մահու վասն մեր. իսկ գալն զկնի նոցա՝ է օրինակ լիզման Աստուածորդւոյն ի դժոխս յայցելութիւն և ի փրկանս տառապեալ հոգւոց նահապետացն՝ որ ի նմին. յորոց միջի յերեսի եկաց Որդին մարդոյ իբրև ա-դատարար և փրկիչ նոցա. ըստ այնմ. ,,Հաւատամք՝ զի և Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց։ Եւ բազում վկայութեամբ զբանն հաստատեալ։ Ընտի ի դրոց արքոց, և ասաի՝ մինչև ցայսօր ժամանակի զյարուցելոյն զօրութիւն արդարութեամբ ցուցանելով. որ միայն միով անձամբ էջ ի դժոխս, և բազմօք այսրէն ել եկ նա ի դժոխոց,,։ (ի կոչ. ընծայ. ձառ. ԺԴ)։

,,Զարմացեալ էր մահ, և կայր հիացեալ, նոր լինն անսիլ անառնէր. զայն՝ որ էջ ի դժոխս, և ի կապանս նորին ոչ արգելաւ խափանեալ։ . . . Պրծանէին արդարքն ամենայն, զոյս կրնայն էլ մահու, զի պարտ և պատշաճ էր այնմիկ՝ որ քարոզիցաւ ի գեղեցիկ քարոզչաց անտի՝ լինել նոցունց փրկիչ։ Եւ ապա իւրաքանչիւր յառաջ մատուցեալ յարդարոց անաի՝ ասէին. Ո՞ւր է յաղթութիւն քո մահ. զի փրկեաց զմեզ յայսթոցն,,։ (կոչ. ընծայ. ձառ. ԺԴ)։

,,Եւս եմ ձանապարհ և ճշմարտութիւն և կեանք, ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ,,։ (Յովհաննու. ԺԴ. 6)։

,,Զի որպէս մարմինդ եղաւ ի գերեզմանի զի յարութեամբն իւրով զմահ խափանեսցէ, և զսատանայ յամօթ արասցէ, և զանենցուն զյարութիւն կենաց աւետարանեսցէ. նմանապէս և հոգւովդ էջ ի դժոխս զի զհոգիսն ազատեսցէ, և զբանարկուն դատապարտեսցէ,,։ (Սարգ. Ճնորհ. ի Մեկն. Ս. Պետ. Ճառ. ութերորդ. գ. 19)։

,,Ուստի և առեալ Քրիստոս զիշխանութիւնն յեր ամենչեցուցանելոյն զատանայ, էջ ի սաոլին վայրս մահու՝ առ կապեալ հոգիս արդարոց. և քարոզեալ ծանոյց ամենեցուն զաստուածութիւնն և զշնորհն Հօր. և ազատեալ զամենեսեան յիշխանութենէ սատանայի, տպարտեաց զնիգս դժոխոցն հզօրեցուսպէս. և եթող ճառ ի ներքոյ խնամոցն Աստուծոյ մինչև յարդարն դատաստան. իսկ զարդարսն՝ որք ըստ պարտեացն Ադամայ, և ոչ ըստ ինքեանց էին ընդունել, ընդ իւր վերացեալ անելով. օն արիք գնասցուք աստի, այսինքն առ Հայրն որոյ և ասէ,,։ (Նկր. Լամբ. ի Մեկն. պատ. յեր. 100)։

,,Իսկ էութիւնն Աստուածական
Յառեալ բնութիւնս նիւթական
Անքակտելի է միական,
Յորովայնէն մինչ յաւիտեան
Ուսաի հոգի իւր մարդկային,
Որ աւանդեաց առ Հայր յերկին,
Հանդերձ բնութեամբ աստուածային,
Էջ ի հոգիսն որ ի բանտին,
Զաւարն առեալ զդերոցին,
Պարձոյց անդրէն առ հայրենին ,,։
(Նկր. Ճնորհալի. բան հաւատոյ)։

Հ. — Օ՞ր է ամպղէն և հրեղէն սեանցն ի խաւար և ի մէջ գառնալ վասն Եդիպատացւոց. և ի լոյս վասն Իսրայելացւոց։

Պ. — Ի օրինակ լիզման Որդւոյն Աստուծոյ ի դժոխս, և այնու լոյս ծագելոյ հոգւոցն արդարոց, և մէգ և խաւար՝ անձանց

մեղաւորաց, ըստ այնմ. «Օ՜ի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոս, բայց ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երևեսցին»: (Ես. ԿԱ. 2: Եղից. Ժ. 22: Յովհաննու. Ա. 9):

«Եւ թէ կարծեցին բռնադատել զազգն սուրբ անօրէնք կապելոք ի խաւարի, և կաշկանդեալք երկայն գիշերոյ. արդեւ լեալք ընդ յարկօք՝ վախճատականք ի յաւիտենական տեսչութենէն անկեալք դնէին»: (Ես. սրբոյ. քոյ լոյս մեծ էր. զոր քոյ զբարբառն միայն լսէին, և զկերպարանսն ո՛չ տեսանէին. զի և նոքա՝ որք զայնպիսի չարչարանս կրեցին, երանէին: (Ի մասն. ԺԱ. 2. ԺԲ. 1. ԺԹ. 16):

«Որք ի լոյս անդ են ցնծան, և որք ի խաւարի անդ են, յոգւոց հանեն»: (Յակոբ. Մծբնայ. Հայրապետ. Օ.):

«Եւ եթէ ոք տարակուսեալ ի բան՝ ասիցէ, զի՛պդ և զհոգիս սրբոցն և արդարոցն ասեմ՝ տանջէր. եթէ ո՛չ զի արդ թէպէտ և ընդ բռնութեամբ նորա անկեալ կային ի տեղւոջ խաւարի և յանելանելի բանտին. սակայն խնամոցն Աստուծոյ ի բացեայ ո՛չ էին»: (Եւ այս յայտ է ի Ղազարոս և ի մեծատանն օրինակէ, որ ահագին վկաւն ի միմեանց ի բաց որոշեցան. արդարն ի հանդստեան վայելէր անմերձենալի դղոյվ դիւացն, իսկ մեծատունն պատուակեր ի տապոյ անուի չարութեանն դիւաց, և ելս իրացն և մխիթարութիւն անտանելի սգոյն ո՛չ գտանէր . . . . . : Օ՜ի՞նչ արդեօք քարոզեաց զթողութիւն, կապելոցն ընդարձակութիւն, կորուսելոցն զդիւտ, խաւարելոցն զլոյս, անդարամեծականաց զդրախտն, աղքատացելոցն զմեծութիւն»: (Պարգիս. Ը՝նորհ. Ա. պատ. ճառ, իններորդ. բ. 19):

«Ինքն սրբութիւն սրբոյ՝ լուսաւորիչ է բանական բնութեանս մերոյ»: (Դրի. Լուսա. ի յաճախ. ճառ, Ը):

«Աստեղին անդադարամիտք,
Ի յաւանդէն առ Հայր զհոգիդ,
Որ ի դժոխս իջեր նեղբին,
Ի բանտ մահու և խաւարին:
Պատրաստ զիշխանն մահաճին,
Հաներ զհոգիսն որ ի բանտին»: (Ի Շարականի):

Հ. — Օ՜ի՞նչ նշանակէ ձգելն Մովսիսի զձեռն դաւազանաւն ի վերայ ծովուն, և բանութիւնամբ հարաւային հողմոյ դարձուցանել զնա ի ցամաք պատառելով զջուրսն:

Պ. — Նմանն օրինակ էր դժոխոց. հարաւային հողմն՝ Հոգւոյն սրբոյ. դաւազանն Մովսիսի՝ սրբոյ խաչին. և ձեռն՝ Բանին Աստուծոյ՝ որ ի ձեռն սրբոյ խաչին և զօրութեամբ սուրբ Հոգւոյն պատառեաց զխորս դժոխոց, և ցամաքեցուցեալ զզօրութիւն մահու, աւերեաց և ի հեղն անտի զկապուտն իւրաստեղծ զհոգիս մարդկան, ըստ այնմ. «Եւ զամենայն կապուտ նորա և զանառուն աւերն իրենց յաւարի տարդիքն Իսրայելի, բայց՝ զնոսա զամենեսին սատակեցին սրով սուսերի. մինչև կորուսին զնոսա, և ո՛չ թողին ի նոցանէ և ո՛չ մի շնչաւոր»: (Ես. ԺԱ. 14):

«Բանալ զաչս կուրաց, հանել զկապեալս ի բանտէ և ի տանէ կապանաց՝ որք նստէին ի խաւարի»: (Ես. ԽԲ. 7. ԻԲ. 7. Եր. ԺԱ. 14):

«Եւ թէ՝ վասն այսորիկ արդարք կողոպտեցին զամբարիշտս, և օրհնեցին Տէր, զանուն քո սուրբ, և զձեռս քո՝ որ մարտս չիւր ի վերայ նոցա՝ օրհնեցին միանգամայն»: (Իմաստ. Ժ. 12. 20):

«Եւ աջնորդ ցուցաւ սիւնատեսիլ փայլմամբ ժողովրդեանն Իսրայելի՝ զաւազանաւսա հերձմամբ զկեռնացեալ կուտակու-

մըն ջուրցն ի կարծրութիւն՝ փոխարկեալ վիմի,,։ (Ի Հ՚արա-
կանի։ Տես. Հ՚նորհ. առ. քահանայս. յերես. 162)։

,,Ելիցէ ի վայրս խաւարային դժոխոց՝ Հհան զկապուտան
իւրաստեղծ ի կապանաց օձտողին,,։ (Տարեկ. Ե՚. 7)։

Ե.—Օ՚ի՞նչ է պարիսպ լինել ջուրցն ընդ աջմէ նոցա և ա-
հեկէ։

Պ.—Ի՚ այն, զի ջուրք սուրբ աւազանին պարիսպք և օգ-
նական լինին ընդ աջմէ և ընդ ահեկէ մկրտելոցս նշանաւ սուրբ
խաչին որպէս գրի. ,,Տէր է իմ օգնական, և ես ո՚չ երկեայց, զի՛
արասցէ ինձ մարդ։ (Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնա-
միս իմ։ Սաղմոս. Ա՚ԺԸ՚. 6. 7)։

,,Ընչաւոր ի հին սրտմտութենէն փոխեցաք և որպէս նոր ի-
բայէլ ապրեցաք,,։ (Օրհնութիւն. Ջրոյ զոր ասացեալ է սրբոյն
Ղարսղի. Կեսարացւոյ։ Ի Ա՚աշոց. երես. 16)։

,,Օգնական ընդունելի եղև իմ Տէր ինձ ի փրկութիւն. սա
է՝ իմ Ընտուած, և փառաւորեցից զսա,,։ (Ի Հ՚արականի)։

,,Զառակուսի ազանց հովանի և պահապան ի յիւս և ի
մուտս, փրկութիւն ի յայսոց և պարիսպ ամրութեան։ Դրօշմ
զգայութեան և կնիք ի դէմս ամենից. դու և յաստուածայինն
կատարիս խորհուրդ, յորմէ արեգակնային փայլին ճառագայթք։
(Ղևոն անդ ի պանոն. Ժաչէ)։

,,Ես տուր զօրութիւն սմա, արժանաւորիլ հասանիլ մաք-
րութեան սուրբ աւազանին անբիծ և անարատ կենացն. ի ժա-
ռանգութիւն որդեգրութիւն յարքայութեանդ երկնից. Տե-
բամբդ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ։ Ի՚նդ որոյ Ե՚օր՝
միանգամայն և Ե՚ոգւոյդ սրբոյ վայել է փառք իշխանութիւն,,։
(Ի Ա՚ճ. Ա՚աշտոցն. ի կանոն Ա՚կրտութեան)։

Ե.—Ե՚ւ ես զի՞նչ օրինակ է պարիսպ լինել ջուրցն ընդ
աջմէ նոցա և ընդ ահեկէ։

Պ.—Ի՚ այն, զի Հուր գնհինին ո՚չ վերձնայր առ սուրբն և
առ արդար նահապետս, և ո՚չ այրեալ տոչորէր զնոսա. քան-
զի ի ինամն մեզք ո՚չ էին, որք վասն յանցանաց նախնւոյն Ադա-
մայ արգիլեալ կային, ըստ այմ՚. ,,Ելիցէ անցանիցես ընդ ջու-
րըս՝ ընդ քեզ եմ. և գետք զքեզ մի՛ ողողիցեն, և երթէ ան-
ցանիցես ընդ հուր՝ մի՛ այրեսցիս. և բոց նորա գքեզ մի՛ կիզ-
ցէ,,։ (Ես սայի. ԽՓ՚. 2)։

,,Ես արար ի մէջ հնոցին իբրև զՀողմն՝ որ ցօղագին չնչեցէ.
և ո՚չ վերձնայր ամենևին հուրն ի նոսա. ո՚չ տրամեցուցանէր՝
և ո՚չ նեղէր զնոսա,,։ (Դանիէլ. Գ՚. 50)։

,,Ի Սանդարամետս ընդ կապանօք մահու դնէին նախ քան
զգալուստն Քրիստոսի, և մեզային նորա փրկագործ գալստեանն՝
արդեւլեալք ի ճանապարհէ դրախտին վասն յանցանացն Ադա-
մայ,,։ (Սեբիանոս. Տաւաք. ի Ա՚ևկն. Պատ)։

Ե.—Օ՚ի՞նչ ցուցանէ ճաճկիլ ջրոցն զկաս և զհեճեճալս
և զամենայն զօրութիւն փարաւոնի, և ազատութիւն որդւոցն
Իսրայէլի։

Պ.—Օ՚հղձումն ցուցանէ և զընկղմել անմարմին փարա-
ւոնի համայն զօրօք իւրովք. և հնոյ մեզաց ի ջուրս սրբոյ աւա-
զանին, որպէս գրի. ,,Յաւուր յայնմիկ եղիցի ամենայն տեղի
ապէ՚ղ բացեալ տանն Դաւթի՛ և բնակողացն Երուսաղէմ
ի լուացումն մեղաւորի և դաշտականաւորի։ Եւ եղիցի յա-
ւուր յայնմիկ բարձցէ Տէր զանուանս կռոց յերկրէ՛ և ո՚չ
ևս եղիցի յիշատակ նոցա։ Եւ զսուտ մարգարէսն՝ և զայս
ևս եղիցի յիշատակ նոցա։ Եւ զսուտ մարգարէսն՝ և զայս
պիղծս բարձից յերկրէ,,։ (Զաք. ԺԳ՚. 1. 2)։

,,Զայս գիտասջիք՝ զի հին մարդն մեր խաչակից եղև նմա.
զի խափանեսցի մարմին մեղաց, մի՛ ևս ծառայել մեզ մեղա-
ցըն,,։ (Ես ռովմ. Զ՚. 6)։

«Անիմք այսուհետև եղբարք՝ համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբ Յիսուսի։ Օր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի իմեն վարագուրին, այսինքն է մարմնոյ իւրոյ. և քահանայն մեծ ի վերայ տանն Աստուծոյ։ Մատիցուք ճշմարիտ սրտիւք՝ լրութեամբ հաւատոյ, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց՝ և մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան»։ (Եբրա. ժ. 19. 2. 21. 23)։

«Յառաջընթաց լինէին կանայք, զի կարկեցի անձեսցի մահ. զի որ ապրեալս իցեմք, ամենեքեան ասել մարթասցուք. Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո. ո՞ւր է դժոխք, խայթոց քո. զի լուծանի մահուն խայթոցք ի ձեռն միրուրթեան։ Ընդ՝ իջանես դու զմեզս քո զգեցեալ ի ջուր անդր, այլ շնորհացն բարբառ կնքէ զոգիս քո. և ոչ ոտայ թոյլ յահեղ գազան վիշապէ անտի կլանել զքեզ. մեղօքն հանդերձ՝ մեռեալ իջանիս դու ի ջուրն, և ելանես անտի կենդանացեալ արդարութեամբ։ Օ՛ի եթէ տնկակից եղեր դու նմանութեան մահու միրկչին, և յարութեան նորա արժանի լինիս։ Եւ զոր օրինակ՝ Յիսուս գաշխարհական զմեղսն կնքն առ յանձն իւր, և մեռաւ. զի և ըզ մահ սպանցէ. և զյարութիւնն հաստատեսցէ յարութեամբ իւրով. այնպէս և դու իջեալ ի ջուրն, և իբրև գրեթէ թաղեալ ի ջուրս անդ, որպէս նա ի վիմին, յարիցես ի միւսանգամ ի նորոգութիւն և ի կենդանութեան ձեմեցեալ»։ (Միւբեդ. Նրոս. ի Պօչ. ընծայ. ձառ. հրրորդ)։

Հ.—Ել և զի՞նչ ցուցանէ ծածկիլ ջրոցն զկառս և ըզ հեծեալս և զամենայն զօրութիւնն փարաւոնի, և ազատութիւն որդւոցն Իսրայէլի։

Պ.—Ցուցանէ զընկղմիլ անմարմինն փարաւոնի համայն զօրօքն իւրովք ի խորս դժոխոց, և ազատիլ հոգւոց մարդկան ի գերութենէ սատանայի, հրաշափառ յարութեամբն Քրիս-

տոսի Յաւուրս միաշաբաթուն, ըստ այնմ. «Տիսանէի յայնժամ ի բարբառոյ մեծամեծ բանիցն, զոր եղջիւրն այն խօսէր, մինչև բարձաւ գազանն և կորեաւ, և մարմին նորա տուաւ յայրումն հրոյ»։ (Դանիէլ. Է. 11)։

«Եւ ըզկեր՝ պատեր շուրջ զհնոցաւն. և այրէր զօրս գահներ ի քաղդէացւոց անտի»։ (Նոյն անդ, գ. 49։ Յակ. Ա. Օ. 12)։

Եւ թէ՝ «Ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առաջի նորա, և զորս մոլորեցոյց և նոցա առնուլ զդրօշմ գազանին, և զերկրպագուս պատկերի նորա, և կենդանւոյն արկին զնոսա ի լիճ հրոյ այրեցիչ ծծմբով»։ (Յայտ. ժ. 20։ Մարկ. Ժ. 47։ Ղուկ. գ. 17։ Ռ. Պետ. Ռ. 4։ Յուդայ. Ը. 6)։

Հ.—Օ՛ի՞նչ էր դառնութիւն ջուրցն Մեռայի, և քաղցրանալն փայտիւ։

Պ.—Ընհատատութիւն մահու մարդկային յանգուգն բնութեան, որ դառնացուցեալ զընթերհան Աստուծոյ՝ չէզև արժանի ընդունելոյ զայն կինքն. սակայն փայտիւն կենաց, յորում մահաբեր Աստուածն ամենից, բժշկեալ քաղցրացաւ. ըստ այնմ. «Ո՛չ ապաքէն ի փայտէ քաղցրացեալ է ջուր դառն»։ (Ա՛ր բաք. Ա. Ը. 5)։

Եւ թէ՝ «Ար զՄեռային դառնութիւն, իբրև զմահ անհատանութիւն, կենացն փայտիւ ի քեզ յարմարեալ պիտանի արարեր»։ (Եսար. ԽԹ. 1)։

Հ.—Օ՛ի՞նչ են երկոտասան աղբիւրքն Եղիմայ և եօթանասուն ծառքն արմաւենեաց։

Պ.—Նկատմ է օրինակ սրբոյ եկեղեցւոյ. երկոտասան աղբիւրքն՝ երկոտասան Առաքելոցն Քրիստոսի. և եօթանասուն ծառքն արմաւենեաց՝ եօթանասուն աշակերտացն, որով շի-

նոցա, ծաղկոցաւ և զուարճացեալ ցնծացաւ քաղաքն Ասորեստանի մայր Միւռն, ըստ այնմ. «Գնացք գեւաց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն»: (Սաղմ. խե. 5):

Եւ թէ՝ «Որ ըմբռնէ զմաճ, և որ պարծի վարչեաւ, խթանեաւ զերինս ձնպիսցէ, և պահի ի գործս նոցա, և ճառ նորա յորդիս ցլուց: Առանց սոցա ոչ շինեսցին քաղաքք»: (Միրաք. է. 26. 36. 37):

Եւ թէ՝ «Տնկեալք եղիցին ի տան Տեառն, և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին»: (Սաղմ. ՂԲ. 14):

«Որ զօրինակ երկոտասան առաքելոց քոց Քրիստոս, և զեօթանասունն ընտրելոց աշակերտացն, յաւաջագոյն ծանուցեր ի թիւ արմաւենեաց և աղբերացն Յաղիմայ»: (Ի Ճ. աբ.):

Հ.—Օ՞րինչ է արանջել որդւոցն Իսրայելի վասն սովուն, և իջանելն երկնային հացի՝ ցօղովք առաւօտեան:

Պ.—Սովուն՝ իմանի զրկեալ զտանելն մարդկայինս բնութեան ի շնորհացն Աստուծոյ՝ հեռանալով ի պատուիրանաց նորա, զորմէ դուշակքն ծանուցին մեզ՝ ասելով. «Օ՛վ յաւուրս բազումս նստցին որդիքն Իսրայելի առանց Թագաւորի և առանց իշխանի, և առանց պատարագաց, և առանց ժողովոյ, և առանց յայտնութեանց»: (Ովս. Գ. 4: Եմով. Ը. 11: Ե. Թագ. Գ. 1: Ր. Մնաց. ԻԵ. 3):

Իսկ արտունջ որդւոցն Իսրայելի վասն սովուն՝ նշանակէ զգ դարձ սովեալ բնութեանս առ Աստուած, և փափագանօք սըրտի խնդրել առաքել յերկնից զՀացն կենաց զՈրդին Միածին, ըստ այնմ. «Եւ յետ այսորիկ դարձցին որդիքն Իսրայելի, և խնդրեսցին զՏէր Աստուած իւրեանց, և զԴաւիթ արքայ իւրեանց, և զօրասցին ի Տէր»: (Ովս. Գ. 5):

Ուսոյի և Հայրն երկնաւոր խնայեալ յարտասուս իւր՝ առաքեաց զՄիածինն իւր յաշխարհ. որ եկեալ մարմնացաւ ի քաղցրածաւալ ցօղոյ առաւօտուն ի սրբոյ կուսէն Մարիամայ, և զկենդանարար մարմին իւր և զարիւն նա մեզ կերակուր անապական, ըստ այնմ. «Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցի. որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի: Ես եմ հացն կենդանի որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան. և հացն՝ զոր ես տայ՝ մարմին իմ է. զոր ես տայ վասն կենաց աշխարհի»: (Յովհ. Ձ. 35. 51: Սաղմ. ՃԺ. 22: Եսայի. ԻԶ. 20: Միրաք. ԻԳ. 29):

«Տեսանի հաց և դինի. և մարմին իմանի որդւոյն Աստուծոյ. և վիրհական կոչի. վասն զի վիրկից աք նովաւ և վիրկիք ի կեաղն և ի մեռանիլ»: (Խոսրով. ի Մ Նկն. պատարագի):

«Այլ և զմանանայն որ օրինակ էր կենացս հացի՝ ըստ պօղոսի, անխմոր և ոչ խմորեալ ուտէին յանապատին»: (Ներ. Ճնորհ. ի թուղթն առ Մանուէլ կայսր. յեր. 82):

Հ.—Օ՞րինչ է լինել մանանային իբրև զդինձ, և ապիտակ իբրև զկորեանդ:

Պ.—Գինձն՝ որ համեմ ասի, նշանակէ զհամեղութիւն Բանին Աստուծոյ, որ քաղցրացոյց զլեառնացեալ բնութիւնս մեր. և հղեալն սպիտակ՝ է օրինակ արդարութեանն Աստուծոյ, ըստ գրիցելոյն. «Օ՛վ ոչ գոյ սուրբ իբրև զՏէր, և ոչ արդար՝ իբրև զԱստուած մեր, և ոչ գոյ սուրբ բաց ի քէն»: (Ա. Թագ. Բ. 2: Ր. Մակ. Ա. 25):

Եւ թէ՝ «Հաւատով և համեստութեամբ իւրով սուրբ արար զնա. և ընտրեաց զնա յամենայնէ մեղուոյ»: (Միրաք. խե. 4):

«Որք արժանապէս ճաշակեն զՀացն երկնից իջեալ՝ զտուողն կենաց աշխարհի, և բնակեն զարիւնն անմահացուցիչ կենդան-

ւոյն Աստուծոյ, ... աստուածասեռակիք եղեալ և յԱստուած միացեալ՝ ձանաչեն, զի քաղցր է Տէր. և գիտեն զայս խորհրդազգածք խորհրդոյն. նոցա թողութիւն խմանալ: Նա թէ ոք առանց խղճի մտաց մերձենայն ի սուրբ սեղանն, և ճաշակէն զմարմին անարատ գառինն, և ըմպէն զմեղսաքաւիչ զարիւնն. որքան ուրախութեամբ լնուն ընդ Աստուած միանալովքն: Նա թէ ուժեք սիրելի իցէ սակս խորհրդականն սեղանոյ՝ և մարմնոյ՝ և արեան Քրիստոսի խմանալ զգան մարդարէին. ոչ ինչ կարէ օտարասյուսանիլ ի բանէ խմաստից: Նմիթ ոք արժանապէս ճաշակին յերկնից իջեալ զտուրոն կենաց աշխարհի: և ըմպին փրկանակ կաթին զարիւնն անմահացուցիչ կենդանեացն Աստուծոյ, որքան քաղցրութեամբ լնուն աստուածասեռակ հղեալ և յԱստուած միացեալ ձանաչեն,,: (Սարգ. Ընորհ. Ե. պատ. ձառ. բ. Ն. 3):

,,Օ՜ ճաշակեմք՝ և գՏէրն քաղցրութիւն իմանամք, ասէ ինձ. զլոյն. զի թէ զլոյն մոծք՝ ընդ զգալեն հացին ոչ ուտեմք, գՏէրն քաղցրութիւն ոչ կարեմք ճաշակել: Ապա թէ ունիցիմք առաջի սուրա՝ զոր վասն մեր մահն. և զ՞օր նուաճ հաշտութիւնն, և զ՞ոգւոյն սրբոյ վասն այնր յիշատակի մարմնովն Քրիստոսի ի մեզ անցանելն, արդարև ի վեր ճանալով սեասանելք քան զարժանս մեր գՏէրն առ մեզ քաղցրութիւն. որպէս ցուցեալ է ընդարձակ բանիւ,,: (Ներս. Լամբ. ի Մեկն. պատ. յերես 158):

,,Անդան լի՝ իմաստութեամբ և գիտութեամբ աստուածայնոյն, զմարմինն աերուեական և զարիւնն իւր սուրբ, քաղցր ճաշակողացն և ախորժ քան զմեղր և խարիսխ,,: (Յովհ. Օրոծոր. ի Մեկն. Մատ. ԻԲ. 4. յերես 465):

—Օ՞րչ է չափ շատինն և նուազին նոյնչափ:

—Պ.—Այն, զի ընորհաբաշխութիւնն՝ որ ի կենարար մարմնոյ և յարիւնէ Տեառն պարգևի արժանապէս ճաշակողաց, հաւասարաչափ մատակարարէ զանկրևոյթ զօրութիւնս իւր այնմ՝ որ զշատն էառ, և այնմ՝ որ զսակաւ. ըստ այնմ. ,,Նա ամենեքին զնոյն հոգևոր կերակուրն կերին,,: (Ա. Կորնթ. ժ. 3):

Նա թէ՝ ,,Որ զբազումն էառ՝ ոչ առաւելաւ. և որ զսակաւն՝ ոչ նուազեաց,,: (Ա. Կորնթ. Ը. 15):

Ընդ այս առ քեզ օրինակ զշող արեգականն՝ որ ծագի ի հայկլսոջ. զի եթէ ի մանր մասունս բեկանիցես զհայելին, յիւրաքանչիւր մասունսն տնօրանիս զարեգակն հաւասարաչափ և ամբող ջ, ոչ մեծ և ոչ փոքր, այսպէս և կենարար մարմին և արիւն Տեառն հաւանարակի բաշխէ զանձառելի ընորհս իւր յաւուրսն ի շատ և ի սակաւ, ըստ այնմ. ,,Ընդ և մարմին նոր բան անապական՝ ոչ ման մանն բաժանեալ լինի հաւատացելոց. այլ իւր վիճակաւ, զլորըն բոլորօք ճաշակին՝ որք հաւատով մերձենան ի նա, և լցաւսաւորին,,: (Յովհ. Օրոծոր. ի Մեկն. Մատ. ԻԲ. 36. յեր. 594):

—Օ՞րչ նշանակէ սափորն ոսկի, յոր եդաւ մանանայն:

—Պ.—Նշանակէ զսուրբ կոյսն Մարիամ. որ տարաւ զանապատ նելլեն ի յարգանսի. և զանխմանալին կրեաց ի ծոց իւրում սեւնկին, ըստ այնմ. ,,Ամին ժրագլուխ եթէ ոք գտանիցէ, պատուականագոյն է այնպիսին քան զականս պատուականս,,: (Առակ. Լ. Ը. 10):

Նա թէ ,,Փափկութեան պրախտին բացող բանալի, Քրիստոսի բարձող նմանող երկնից. սափոր ոսկիղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ, տաճար լուսոյ մայր,,: (ի Հ. արականի):

«Սրբուհի Մարիամ սափոր ոսկի, և տապանակ կտակարանաց, որ ի վերուստ զհացն կենաց պարզևեցեր քաղցեալ բնութեանս»: (Նոյն անդ):

Ա.—Ո՞րչափ նշանակին աղքն քառասուն, յորս ևկեր Իսրայել զերկնատուզաց մանանայն, և զի՞նչ անմաշ մնալն հանդերձից նոցա և կօշկաց:

Պ.—Քառասուն ամն կատարեալ թիւ է և նշանակէ զկեանցաղս, յորում ցվախճան կերակրիւք զգալի հացիւ և գինեաւ իբր ընդ հայելի օրինակաւ. իսկ ի կատարածի ի յորմէ թեան մեռելոց արժանաւորիւք տեսանել դէմ յանդիման, ըստ այնմ. «Այժմ տեսանիմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման»: (Կորնթ. ԺԳ. 12):

«Քանզի հաց՝ ոչ զդիւրածախելին խնդրեմ, այլ զհանապազորդն. զկամն ինձ այնորիկ խնդրեցի ունել որպէս ի վիրայ երկնաւորացն, զի և զերկնաւորացն հաց ի նմանէ առից յաւուր կենացդ: Ո՛չ լուար՝ զհաց հրեշտակաց կերեալ մարդկան. զայն կերակուրն ունել աղօթեմ. որ հանապազորդ ի յուսանէն ոչ ծախի, և չքմեղին ոչ նուազի. զկերոյն յայտնացուցանէ, և ինքն չինչնութեան ամբողջ մնայ»: (Եկեր. Լամբ. ի Մեկն. պատ. յիրես 143).

Իսկ անմաշ մնալ հանդերձիցն և կօշկաց՝ են օրինակ խորհրդոյն մկրտութեան և դրօշմի, որք չաւելին մնան անաղարտելի, ըստ այնմ. «Ընդհնար է մի անգամ մկրտուլոյն . . . միւսանգամ (մկրտութեամբ նորոգել) յապաշխարութիւն, և վերսին ի խաչ հանել անձանց զորդին Աստուծոյ՝ և դարձեալ խայտառակել»: (Եբր. Ո. 4. 6):

«Քանզի անպակաս են շնորհքն՝ Աստուծոյ և կոչումն»: (Հռոմ. ԺԱ. 29. Ո. 9):

«Մի՛ ի սմա լուացուածն ի մահն Քրիստոսի. զի՝ մի՛ յանդէպս անարգեալ աստուածութեանն ի ծանուցելումն զնախանձն կրեսցէ»: (Նար. Ա. 9):

«Նաչն՝ մկրտութիւն ասի. և մկրտութիւնն՝ խաչ. ապա ուրեմն որ երկրորդ անգամ մկրտի, ցուցանէ՝ թէ Քրիստոս երկրորդ անգամ խաչեցաւ. յորում չէք հնար լինել»: (Նարսես. ձառ. ի Մեկն. Մարկ. ԺԹ. 49):

«Աչնոքիկ՝ որ զերկուս մկրտութիւնս բերեն, զխաչելութիւն որդւոյ Աստուծոյ և զայսաւառականս նորա խնդրեն՝ այլ խաչելութիւն եղև միանգամ, և այլ ոչ ևս լինի. և մկրտութիւնն արդարացուցիչ առաւ, և դարձեալ երկրորդումն մեղաւորի նա ոչ լինի առնել»: (Ներսես. ի Մեկն. Նբբայ. Ո. յիրես 208):

«Նմանապէս և մեք նման ճշմարիտ որդւոյն Աստուծոյ լինելոց եմք, այսինքն՝ ճշմարիտ փառս նորա զկատարեալն ընդունելոց եմք. և ի կերպարանս նորա կերպարանելոց եմք: Նաև ի մարմին գոլով մեր, իբրև ընդ հայելի օրինակաւ տեսանիմք. վասն զի և ոչ տանի ակար բնութիւնս այլ ազգ զհրաշալի և զսոսկալի տեսիլ նորա ցնաւն»: (Սարգ. Շնորհ. Ա. Յովհ. ձառ. Հինգերորդ. գ. 2):

Ա.—Ո՞րչափ ցուցանէ ծարաւել Հոգովդեանն ի Սափիթիմ, և արանչինն զՄովսիսէ առ ի տալ գՋուր:

Պ.—Ցուցանէ զընութեանս առ Աստուած ծարաւելն՝ հեռանալով յաղբերէն կենաց. և տապկոմն ի հուր մեզաց, զորմէ Դաւիթ ի դիմաց բնութեանս ազաղակէր. «Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ՝ Աստուած: Ծարաւ է անձն իմ առ քեզ՝ Աստուած հզոր և կենդանի, երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ: Աստուած Աստուած իմ. հս առ քեզ առաւօտ առ-

նեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս և մարմին իմ,,: (Սաղմ. ԽԲ. 2. ԿՒ, 1):

,,Դու արդեօք խնդրէիր ի նմանէ՝ և տայր քեզ ջուրն կենդանի,,: (Յովհ. Դ. 10):

,,Ի վերջնումն աւուրն մեծի տօնին կայր Յիսուս ազաղակեր և ասէր, եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս՝ և արբցէ,,: (Նոյն անդ. Է. 37):

,,Ուրախ լեր աղբիւր հնչեալ ջրոյն կենդանութեան, զոր ծարաւեցոյ բնութեանս եառուր ի յարբուն,,: (Ի Հարականի):

Իսկ տրանջելն՝ օրինակ էր տրանջանաց Հրէիցն զՅիսուսէ. տրանջեցին զնմանէ Հրեայքն՝ զի ասաց, թէ՝ ,,Ես եմ հացն կենաց իջեալ ի յերկնից,,: (Յովհ. Զ. 41):

Հ.—Զի՞նչ օրինակեր վէմն, յորմէ բխեցաւ ջուրն, և զի՞նչ ջոյց զպատք ժողովրդեանն:

Պ.—Նշանակեր զՏէրն մեր Յիսուս Քրիստոս. որոյ ի կողէն եկն վտակն արեան և ջրոյ. և հրդեհեալ բոցակիզեաց զմեզս մարդկան, ըստ այնմ. ,,Ես ամենեքին զնոյն հոգևոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգևոր վէմէն՝ որ երթայր զհետ նոցա. և վէմն էր ինքն Քրիստոս,,: (Ա. Կորնթ. Ժ. 4: Յայտնութեան. ԻԲ. 17: Սուրբ, Եփրեմ. ի Մեկն Թուոց. Գ Հ. գ:)

,,Ի վիմէն կենդանութեան ճաշակեցաք զի քաղցր է Տէր. և յիւղ սրբութեան օծաք հաւատով,,: (Ի Հարականի):

,,Որ յատենի կացեր անպարտ կողին պատրանաց, և արբուցեր մեզ ի կողահոս աղբերէդ,,: (Նոյն անդ):

,,Որ զդիր պարտեաց կողածնին լուաց՝ հրահոս վտակաւքն ի սիգելոյ կողէն բղխեալ, զոր արբոյց սիրելեաց,,: (Նոյն անդ: Սարգ. Հ նորհ. Ա. Պետ. Ե. 7,,: Մեծ. Վ արդ. ի Մեկն: Սաղմոսաց. ԺԶ. 17):

Հ.—Ո՞ւմ օրինակ է Ադամն:

Պ.—Ընդարմին Ադիւաբ սատանայի. որ նախանձու լցեալ միշտ՝ եղանէր, և եղանէ ընդդէմ մարդկային հոգւոյ ի պատերազմ՝ առ ի ընկղմել ի խորս դժոխոց. զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս ընկղմեաց իւր հրաշափառ յարչարանաւք՝ խաչիւ, մահուամբ, իջմամբ ի դժոխս և յարութեամբն. ըստ այնմ. ,,Որ դիմեալ դայ Հնդովմայ բարձրացեալ փողով՝ յարուցեալ ի պատերազմ ընկղմեաց զանէրևոյթն Ադամայ. զիջեալ Ղանն ի դժոխս ձայնիւ երդով օրհնեացուք,,: (Ի Հարականի):

Հ.—Զի՞նչ ցուցանէ համբարձումն ձեռացն Մովսիսի մինչև ցմուտս արեգական, և կոտորումն Ամաղեկայ:

Պ.—Զբազկատարածութիւն ձեռաց Որդւոյն միածնի համբերութեամբ և գործակցութեամբ Հօր և Հոգւոյն սրբոյ յաւուր ուրբաթու. որոյ մինչ ցժամն իններորդ ի վերայ խաչին կալովք կործանեցաւ սատանայ զօրօք իւրովք ի խորս անդնդոց. ըստ այնմ. ,,Ներդործեալ հրաշս խաչանիշ համբարձմամբ ձեռացն Մովսիսի ընդդէմ Ամաղեկայ՝ ի մարտի պարտեր զԱդիւաբ, և ձուլադրոշմն ձուլիւք ենթադրեալ կորզեր,,: (Ի Հարականի):

,,Որ բարձրացեալ բազուկս ի վերայ խաչին, խորտակեաց զապստամբ զԹշնամին. իջանելով ի սաորինս աղատութիւն շնորհեաց նստելոցն ի խաւարի,,: (Նոյն անդ):

,,Որ զօրութեամբ բազկի քո խնդրեցեր զվէմս յատելեաց՝ և հաստատեցեր զհաւատացեալս ի քեզ, նշանաւ խաչիւդ աղատեցեր յաւիտենից ի մահուանէ,,: (Նոյն անդ):

Հ.—Ո՞ւմ օրինակք են, հազարապետք, հարիւրապետք, յիսնապետք, և տասնապետքն, զորս ընտրեալ կացոյց Մովսէս դատել զժողովուրդն:

Պ.—ԵՒաքելոց, մարգարէից, աւետարանչաց, հովուաց և վարդապետաց, որք ընկալեալ զշնորհս իշխանութեան ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ եդան ի մէջ եկեղեցւոյ հովուել

զժողովուրդ Տեառն սեպհական, ըստ այնմ. ‘‘Նա եղ զոմանս նըս՝ առաքեալս, զոմանս՝ մարգարէս, զոմանս՝ աւետարանիչս, զոմանս՝ հովիւըս և վարդապետս, առ ի հաստատուԹիւն սըրբոց, ի գործ պաշտաման, ի շինուած մարմնոյն Քրիստոսի,,: (Եփես. Գ. 11):

‘‘Քարեկամք Քրիստոսի և հազարապետք աստուածային խորհրդոցն, ընդունող զԱնան կենաց և լուսաւորիչք ամենեցուն,,: (ի Հ՚արականի):

‘‘Հազարապետք աստուածային խորհրդոցն. և բացօդք ըրբանն արքայուԹեան երկնից,,: (Նոյն անդ):

‘‘Իսկ քահանայքն վասն մեծիմ հաւատարմուԹեանն Աստուծոյ՝ գործակիցք եղեն. առեալ իշխանուԹիւն ի վերայ սոցա աստուածաբար՝ կապել և արձակել, և շնորհս բաշխել: Ան և յաստուածակոյս կողմնն, ըստ որում ասաց առ նոսա Տէրն, զձեզ ոչ ևս կոչեցից ծառայս. զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցից բարեկամս. զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ,,: (Յովհ. ԺԵ. 15):

‘‘Ապա յայտ է՝ Թէ հազարապետք են խորհրդոցն Աստուծոյ, և համարձակ առնա՝ որպէս զգործակից և զիշխանակից,,: (Նոր. Լ՚ամբ. ի Մ՚ևկն. Պատ. յերես 31):

‘‘Եւ ոչ ընչեցն՝ զոր սեպհականն, այլ հազարապետք և վերակացուք նորայնոցն, յորոց խնդիր լինելոց է, ըստ Պօղոսի. խնդիր է ի մէջ հազարապետաց՝ Եթէ ոք հաւատարիմ գտցի,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ՚ևկն. Մատ. ԻԴ. 45):

Հ.—Այլ ևս ունի՞ են օրինակք:

Պ.—Եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց և դպրաց, որք ընկալեալ զաԹոռ և զիշխանուԹիւն առաքելոց, են մատակարար շնորհաց՝ և խորհրդածուք հազարապետք խորհրդոցն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր աստիճանաց. և մի ինչ շնորհ առանց նոցա ոչ ի գլուխ ելանէ, ըստ այնմ. ‘‘Դուբաքանչիւր որ որպէս և ընկալաւ շնորհս ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապետս պէս պէս շնորհացն Աստուծոյ,,: (Ա. Պետ. Դ. 10):

‘‘Զկնի ինչ շնորհ՝ զոր առանց առաջնորդաց (իմա. եպիսկոպոսաց և քահանայից) տայ Աստուած, այլ վերսին ծընունդեանն որ ի Հոգւոյն, և կենարար մարմնոյ և արեան Տեառն բաշխումն, ԹողուԹեան մեղաց գարձելոցն ի խոստովանուԹիւն ապաշխարուԹեան, և ամուսնուԹեամբ զուգուԹեան . . . և կամ այլ ինչ աստուածատուր պարգևի միջնորդով՝ առաջնորդ եկեղեցւոյ լինին,,: (Խոսրով. ի Մ՚ևկն. ժամակարգ.):

‘‘Հոգիս այս սուրբ զօրացուցանէ զձեռս քահանայապետին՝ ի շնորհաբաշխուԹիւն, քահանայից՝ ի նուիրագործուԹիւն սարկաւագաց՝ ի սպասաւորուԹիւն եկեղեցւոյ սրբոյ,,: (Ներ. Լ՚ամբ. ի Նարեկ. ի գալուստ սուրբ Հոգւոյն):

Հ.—Ո՞րինչ ցուցանէ սրբուԹիւն անդրանկաց, և ընծայումն զնոսա Տեառն:

Պ.—Ընծայումն և զսրբուԹիւն անդրանկանն Հօր. Քիսուսի Քրիստոսի, որ անձամբ ծնանելով ի կուսէ սրբեալ զանսի ծնունդս մարդկան՝ ընծայեաց Հօրն երկնաւորի, ըստ այնմ. ‘‘Եկն ի տաճարն քառասնօրեայ ըստ օրինացն Յուդայեցւոց. զի զմարդկային բնուԹիւնս ինքեամբ ընծայեսցէ Հօր ի բարձունս,,: (Ներ. Հ՚նորհ. ի Թուղթն առ Ալեքս. յեր. 57):

‘‘Այսօր անսկզբնական ծնունդ հայրական ծոցոյ Բանն երկաւորեալ ի տաճարն, ընծայէ զարարածս Հօր ի յերկինս,,: (ի Հ՚արականի):

,,Որ փառաբանեն ի բարձունս համանալի զօրութիւնքն, այսօր ի տաճարն եկիր յընծայուին Քրիստոս, որ ընծայես զարարածս բարձրելոյ քումմ Հօր,,: (Նոյն անդ):

,,Ընսկզբնական Հանդ Աստուած. ի վերջին աւուրս յանձն առեր լինիլ մարդ ի կուսէն, և արարիչդ յաւիտենից՝ փակեցար ընդ ժամանակաւ. սուրբդ Տէր սրբութեանց և անկարօտ մաքրութեանց. եկիր ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն,,: (Ի Ժամամուտս):

Հ.—Ո՞վ ինչ ցուցանէ քառասնօրեայ աւուր սրբութիւնն:

Պ.—Ո՞ քառասնօրեայ կեանն ի սուրբ յայրին Ներսիսեմ, յորում անբիծ, անարատ, սուրբ և անապական ծնանելով՝ կատարեաց զինքնադիր զօրէնս իւր, և մեռեալ ընդ օրինօք դնեաց զմեզ յօրինացն անտի, ըստ այնմ. ,,Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէսն. ոչ եկի լուծանել. այլ՝ լնուլ,,: (Մատ. Ե. 17. Ղուկ. Ժ.Ո. 17):

,,Եայլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդին իւր՝ որ եղև ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք. զի զնոսա որ ընդ օրինօքն էին, գնեսցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալցուք,,: (Գաղատացւոց. Դ. 4):

,,Օ՜ի թէ Աստուած էր, և եղև մարդ. չթողեալ զոն Աստուած եղեալ մանն արարածոյ՝ արարչէն բնութեամբ. ընդ օրինօքն՝ օրէնսդիրն Աստուած՝ և ի կերպարանս ծառայի, և անընկեց ի տերութենէ անտի՝ միածինն՝ եղև անդրանիկ ի բազում եղբարս,,: (Նեբ. Լամբ. ի Մեկն. պատ. յերես. 56):

Հ.—Ո՞վ ինչ նշանակէ ածելն ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն:

Պ.—Ո՞զալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի քառասնօրեայ ի տաճարն հանդերձ ծնողիւքն կատարել զօրէնս Տեառն ի վերայ նորա. զոր ընկալեալ Սիմէոն ի զիրկս իւր և օրհներ զԱստուած, ըստ այնմ. ,,Այս եկն հոգւովն ի տաճարն. և իբրև ածին ծնօղքն զմանուկն Յիսուս, առնել նոցա ըստ սովորութեան օրինացն ի վերայ նորա. և նա առ ընկալաւ զնա ի զիրկս իւր, և օրհնեաց զԱստուած,,: (Ղուկ. Ե. 27):

,,Ներուն այսօր Սիմէոն՝ հոգւովն գայր ի տաճարն՝ երեւելով քերովբէից վհատցոյն. որոց թևօքն սաւառնեալ ոչ իշխէին նայիլ ի յահեղ փառացն, սա ի զիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս և գոչէր որպէս զմանուկ. և առզերսելով հայցէր արձակիլ ի խաղաղութիւն: Որ բարձեալ Սիմէոնի զանպարագրելիդ ի զիրկս իւր, հայցէր, որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս ի խաղաղութիւն: Վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէոնի վերապոչեմք առ քեզ Տէր. սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քովք ի փրկութիւն մեզ Քրիստոս Աստուած փառք քեզ,,: (Յամամուտս Տեառն ընդ առաջն):

Հ.—Ո՞ւմ գանին օրինակ երկու տատրակքն կամ երկու ձագք աղաւնեաց:

Պ.—Յովսեփայ շնորհօք Աստուածահօրն, և Մարիամու բըռնութեամբ Աստուածամօրն Յիսուսի Քրիստոսի. որ են կուսութեամբ ողջախոհ իրրև զտատրակս, և սրբամիտ որպէս ձագըն զաղաւնեաց. զի կուսութիւն սուրբ ողջախոհ տատրակաց նմանի, որպէս ասացեալ է վասն Յովհաննու Մկրտչի. ըստ այնմ. ,,Լամեալ լինջոյս արբեցութեան յաւուրս ծննդեան մահաբերին. զքեզ որ խայտալով ծնար տատրակդ անապական. կաքաւելով լնդրեաց ի մահ դուստր Հերովդիադայ: (Ի Շաբաթի):

,,Խորանայարկ կամարանման յօրինեցար սուրբ կոյս Աստուածածին. զանհասանելի զԱնն Աստուած բնաւորապէս անսերմնաբար կրեցեր ի քում որովայնի,,: (Նոյն անդ):

,,Եւ զարձեալ՝ մահն նորա տուաւ օժիտս լկտութեան. որ խայտալով ծնաւ և կաքաւելով կատարեցաւ տատրակին անապատի,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ Կին. Մատ. Ժ Դ. 11: Եկեր. 321):

Ը.—Ո՞ւմ գտանին օրինակք բորոտեալ անձինքն:

Պ.—Ադամային բոլոր բնութեանս. որ սկզբնական մեղօք ապտամբեալ յԱստուծոյ, բորոտեալ եղև ըստ հոգւոյ ոտից մինչև ցգլուխ. և անհնազանդ գտեալ Աստուծոյ, տարածեցաւ յամենայն սերունդս նորա, ըստ այնմ. ,,Անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն,,: (Հռովմ. Ե. 19):

,,Յայսմ ժամու՝ ապստամբութեան մերոյ (յԱստուծոյ) եղև սկիզբն. և զպտուղ փայտին ճաշակել՝ նախամեծար քան զաստուածականն համարեցաք. մոլար խրատուն խաբեալք վասն որոյ մերկացաք ի փառացն, և մահու դատապարտեցաք. և զանիծին ընկալեալ զկեանս, և ընդ մեղաց թագաւորութեամբ անկեալ եղաք,,: Թողում ասել որ յայսցանէ ազգի մարդկան ախտք զանազանք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ և օտարութեան յԱստուծոյ. և պատուհասք բազմօրինակք. և որք յայսցանէ թշնամութիւնք և ախտալից կեանք և մահ դժնդակ, և որ ի հանդերձեալն համբարեալ կան անհնարին և անհանդուրժելի և անսպառ տանջանք: (Խոսրով. ի Մ Կին. Ժամանակարգ.):

,,Ընդ հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն. տիրեցոյց ի բորոտութեանցն գալստեանն համոյն ախտացեալ՝ ամենայնիւ սպառեալ մարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռոյց Աստուծոյ: Ոյժն պալար՝ փայլունակ տգեղ լայնացեալ. ճնացուած ինչ պահեալ նախնական երկդիմի կերպին, որ ըստ կրկին անմաքրութիւնն նշանակէ. պարծանացն նշոյլ՝ ամենևին ինձ շինչաս,,: (Նար. Ի Դ. 2):

,,Դակ առ ի միոս բորոտ էր բնութիւնս որ խայտաբղէտ եղև յետ յանցանացն, որոյ բնութիւնն աղաչէր զարարիչն իւր, կամօք նորին սրբել ի յանցանացն. իսկ հասուցանել ձեռինն՝ զորդւոյ զմարմնաւորութիւնն նշանակէ. զի ձեռն որդի է ըստ որ խոնարհեալ եհաս յօգնականութիւն մեզ վշտացելոցս մարմնով իւրով. կամօք գործելով զսրբութիւն մեր խաչին իւրով,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մ Կին. Մատ. Ը. 4. յեր. 188):

Ը.—Ո՞րչափ ցուցանէ բորոտութիւն տարաճեալ:

Պ.—Ո՛չ սկզբնական մեղս Ադամայ, որ նման բորոտութեան ախտի տարաճեալ սփռեցաւ յամենայն ծնունդս նորա ի տղայոց մինչև ցծերս ի նահապետս, ի մարգարէս, ի յարդարս, իբրև հայրենատուր աւանդութիւն, ըստ այնմ. Ընօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ,,: (Աղամ. Ծն. 7: Եփրեմ. ի Մ Կին. Ընտարանի. Համաբարբ. գլ. ԻԸ):

,,Ո՛վ իցէ սուրբ յաղտոյ, և ո՛չ ոք այլ. թէ և միոյ աւուր լցեն կեանք նորա ի վերայ երկրի,,: (Յոբ. Ժ Դ. 4):

,,Հայրենատուր աւանդութիւնս՝ թուի ինձ, եթէ զառաջին մարդոյն անհնազանդութիւնն ասէ և զպատուիրանազանցութիւնն, որով մեղք յաշխարհ մտին, և ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարաճեցաւ մահ. և եղև նոցա իբրև ի հօրէ աւանդեալ ժառանգութիւն,,: (Սարգ. Ճնորհ. ի Մ Կին. Ը. պետ. ձառ. ը):

Ը.—Ո՞րչափ նշանակէր քակեալ հանդերձն, մերկութիւն գլխոյն և պատուճն բերանոյն:

Պ.—Ո՛մերկութիւն զանպատում փառաց նախաստեղծիցն զոր Տէրն փառաց զոչէր զնա յապաշխարութիւն և դարձ՝ . . . յասելն յԻւրում, ,,Ադամ ո՞ւր ես,, և նա յամառեալ ի մեղս, պատճառէր զպատճառս մեղաց որով դատապարտեալ մերկա-

ցաւ ի լուսոյն և լսեալ դադարեաց յաստուածային վիառա-
բանութենէ, ըստ այնմ. ,,Ողբասցուք զՀօրն (զԱդամայ) ըզ-
վասնզ՝ որ մերկացաւ մեզօք զփառս արարչին իւրոյ,,: (ի Շա-
բականի):

,,Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն,,: (Նոյն
անդ):

,,Ընկաք ի փառացն՝ որ տուան ի քէն, և ելաք ի դրախտէն.
և ընդ մահուամբ և ընդ ապականութեամբ դատապարտեցաք.
ի հոգս և ի տրամութիւնս և յաշխատութիւնս, և յաղքի
ազգի ցաւս, և ի տառապանս և ի տարակուսանս խորշիմք զըր-
կեալք ի տեսութենէ աւուրք երկայնդ քոյ. . . և եղկելիք ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ՝ և ըստ մահց եմք. քանզի նոյն և իսկ
բնութիւնս հակառակ մեզ կանգնեցաւ,,: (Խոսրով. ի Մեկն.
Ժամակարգ):

,,Եւ ի բանակէ արտաքսելն յեկեղեցւոյ զորոշելն յայտնէ, ի
պատառել հանդերձին և բանալ գլխոյն՝ զպատառուհին սրտին
և զյայտնապէս խոստովանութիւնն նշանակէ,,: (Յովհ. Օրո-
ծոր. ի Մեկն. Մատ. Ժ. 8. էր. 230):

Հ.—Ո՞րինչ նշանակէ արտաքոյ բանակին բնակութիւն նորա:

Պ.—Արտաքսելն Ադամայ ի վայելութեան դրախտէն յա-
ւերժական կենաց, յորում քաղաքակցեալ ընդ հրեշտակս
ցնծացեալ զուարճանայր. և արտաքսեալ Աստուծոյ բնակեցոյց
պանդխտութեամբ յայս անցաւոր, ցաւալից, և յարտմալից
կեանս, ըստ այնմ. ,,Յորում ցնծայր զուարճացեալ անապըհ-
բական խնդութեամբ. քանզի զԱստուած տեսանէր միշտ խո-
նարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ ապաւորէր
ի յինքեան,,: (Ի Շարականի):

,,Ընդ պատժօք պատուհասիւք անկեալ (մարդն յիւր պա-
տուիրանազանցութեանն՝) յարդարութեան դատաստանին
դրաւեցաւ ի ներքոյ մահուն, վիրաւորեալ խոցեցաւ ի հոգս,
ի ծուխս, յաշխատութիւնս, ի քրտունս ցաւոց,,: (Գրիգ.
Նարեկացի յԱդամանդեղոս):

,,Ի ձեռաց Ադամայ եւ ապականութիւն վասն ուտելոյ ի
փայտէն դիտութեան զպատուէն. և ապականեցան մարդկան ո-
գիք մեղացն ախտիւք, և մարմինք ցաւալից վտանգիւք. ի հող
դառնալ և յերկիր ապականիլ վճռակեցաւ,,: (Խոսրով. ի
Մեկն. Ժամակարգ):

Հ.—Ո՞րինչ ցուցանէ զալ բորոտին առ քահանայն յաւուր
յորում սրբեսցի:

Պ.—Զգալն բնութեանս առ քահանայապետն Յիսուս
Քրիստոս, և միացեալ անբաժանելի և անշըռթի միաւորու-
թեամբ դերամաքուր անապական, և անարատ յարգանդի Ա-
ստուածածնի սրբոյ կուսին Մարիամու ընդ աստուածութեան
իւրում, և եղեալ մի, սրբեալ մաքրեցաւ յամենայն աղտ,
մեղաց՝ որպէս զոսկի ի հուր, ըստ այնմ. ,,Եւ առնըլ զըբ-
նութիւն Ադամայ՝ ոչ զըր յանմեղութիւնն և ի դրախտին, այլ
զըր յետ մեղանացն և ապականութեանն, զի և կոյսն Մարիամ
յորմէ մարմին առ Քրիստոս, ի մեղանչականին Ադամայ բնու-
թենէն էր, սակայն միաւորելով ընդ բնութեանն Աստուծոյ,
մեղանչականն եղև անմեղ. և ապականացուն՝ արտաքոյ ան-
դոմնելի և ապականութեան կրից. որպէս և հրահալելի նիւթք՝
յորժամ ընդ հրոյ միանան. ժանգ ապականութեան ևթէ էցէ
ի նոսա՝ ծախի,,: (Տներ. Շնորհ. ի թուղթն առ Մանուէլ
կայսր. էր. 57):

,,Որդին Աստուծոյ էառ զկերպարանս Ադամայ ի նմանու-
թիւն ծառայի. . . զի ծառայական մարմնովն զամենայն ար-
դարութիւնս կատարեսցէ. . . զի որպէս ընդ միոյ ապականա-
մարմնոյն պարտաւորեցան (մարդիկ). և ընդ միոյ սէրունական

մարմնոյն ազատեսցին ի ծառայութենէ մեղաց,,: (Գրի. Լ. ուսուցիչ ՅԱգաթանգեղոս):

,,Օ հարկաւորութիւն իրացն՝ նախ ցուցանէ. քանզի գոլով մարդիկ մեր, և ի սկզբան ստեղծմանն մերոյ նախատային կերպարանաւն զեղազանեալք, և զինի այսր, ի պատրանաց չարասէր հակառակամարտին գողացեալք, յեղծուածն ապականապործ մեղաց և մահու վատթարեալք. ծառայէ անմիտ և վնասող ախտից բազմաց, յորոց ազատիլ անկարացեալ. իսկ արարիչն բարեբնութեանն՝ ի բարի բարերար կամաքն հայրենի վասն մեր մարդկան. ի վայր անկելոց և տարապրելոց ի հայրենական դասուառէ. և կաշկանդելոցս ի դժնեայ ծառայութիւն վնասողացն զմեզ ախտից, և վասն փրկելոյ զմեզ յանբնականացն զմեզ ծառայեցուցչաց, իջեալ ի բարձանց. ըստ այնմ. թէ ,,Նստիր ի ձախակողմեայ իմում՝ և եկի յաշխարհ,,: (Յովհ. Ժ.Օ. 28): Նա եթէ հա ի ձախակողմն նստի և եկի. այսինքն անմարմին իսկական Միածինն Բան. այսքան հարկաւորի խոնարհութեամբ, զի և մարմնանայ ըստ մեզ գեր ի վերոյն քան զերկինս. և զերկնաւոր իմանալիսն էութիւնս, և մարմնանայ ոչ յեղափոխմամբ՝ որպէս չարափառացն ևրևի. այլ ի մարմին մարդկեղէն բովանդակի, ըստ առաքելոյն. զի ասէ. ,,Բնակեաց ի նմա լրումն Աստուածութեան մարմնապէս,,: (Կողոս Բ. 19): ,,Բանզի որ ինչ էր, Բանն բնութեամբ միացաւ ի մարմնի. պահելով ի նոյնութիւն զհատկական էութիւնն ի չարաճառնութենէն ըստ մեզ. վասն որոյ ոչ յափշտակութիւն համարեցաւ էանալն հաւասար Աստուծոյ: Բանզի ի նոյնումն պատուական է հաւասարութեամբ. և յայսպիսեմ զիջման և խոնարհութեան, յորժամ զկերպարանս ծառայի էառ, և խոնարհեցոյց զինքն կամօք Բանն Աստուած. զմերս զգենուլով մարմին բանականաւս հոգւով և մտաւոք. վասն որոյ և գմարդացաւն յաւել. զի մի հերովդիանոսք և ապողինարիտք կիսամանեայ զմերակերպութիւնն բազարկեցեն. և զլսելիս և զմիաս ախտարաց ժանգացուսցին: Բանզի որ Աստուածն է Աստուծոյ. և լոյս ի լուսոյ. սապէս մարդ, նոյն ինքն ի սրբոյ կուսէն, լի՛ և կատարեալ ամենայնիւ բաց ի մեղաց, զնա ասացին հարքն սուրբք. իջեալ մարմնանալ և մարդանալ և յառաջ ելանել տեսլեամբ մարդոյ ըստ մեզ,,: (Ներ. Լամբ. ի Ծնկն. Պատ. յեր. 55):

Ա.—Օ,ի՞նչ նշանակէ ելանելն քահանային արտաքոյ բանակին, և տեսանելն՝ թէ բժշկեալ իցէ արածն բորոտութենէն:

Պ.—Օ ելանելն որդւոյն Աստուծոյ յէութենէ Հօր, և գալն ցաւալից յաշխարհս վայրենացեալ բնութիւնս մեր, տեսանել թէ դառնայ ի զղջումն խոստովանութեան և ապաշխարութեան, այլ յորժամ տեսեալ բնութենս զքահանայապետն մեր Յիսուս Քրիստոս, եցոյց զնոցաձս վերին մեզոյ իւրոյ ըստ այնմ. ,,Օ մրուրն մահու փոխեցի. զպալատս հոգւոյս խոցաձոց Քահանայապետիդ Քրիստոսի բացի,,: (Ներսէհ. դէ. 1):

,,Ո՛չ թէ վայրապար խնդրէ զհայելն Քրիստոսի. առ որ այսքան զհոգաբանեաց. այլ գիտէ զի յաւնելն զհայցուածս նորա ուղիղ առ մեզ ամենակատար սրբութեամբ սրբիմք. և ո՞է որ ուսուցանէ զնս. եթէ ոչ հայի յիս Քրիստոս նեղքին խիղճ մտացս այս, որ անամօթ սազտանէ,,: (Ներ. Լամբ. ի Ծնկն. պատարագի. յերես 74):

Ա.—Ո՞ւմ գտանին օրինակ երկու հաւքն՝ փայտն եղևնեայ, կարմիր մանեակն՝ և զոպոյն:

Պ.—Աստուածային և մարդկային բնութեանց, որ անբաժանաբար և անշփոթապէս միացեալ ընդ միմեանս եղև մի անձն, մի դէմ և մի բնութիւն, ոչ փոփոխելով և ոչ յեղաշրջելով զյատկութիւն բնութեանցն. այլ՝ կալ և ճնալ պար-

զապէս յիւրումն յատկութեան. և որպէս զհաւ ընդ թևօք իւրովք ժողովեաց զչրուեալս զմեզ փայտն սրբոյ Խաչին. կարմիր մանեակն անապական արեանն. և զոպային՝ սրսկմանն ի մեզ, ըստ այնմ. ,,Տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա. և բարձեալ բերէր զնա ի վերայ միջնոցաց իւրոց,,: (Բ. Օրինաց. ԼՒ. 11):

,,Պցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. և նմանեցայ ես հաւալասան անապատի,,: (Սաղմ. ՃԲ. 5):

,,Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն՝ և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք,,: (Մատ. ԻԳ. 37):

,,Աբրահամն՝ անուն, ոչ սոսկ մարդկութեան է և ոչ լոկ աստուածութեան, այլ Աստուած և մարդ ասի, այսինքն՝ յերկուց միացեալ անշփոթաբար և անձառապէս. ոչ որպէս ջուր ընդ գինի խառնեալ և շփոթեալ՝ և յերկուցն զրկեալ բնութեանցն. զի ոչ ջուր է և ոչ գինի ի խառնիլն ի միասին. այլ աստուածային բնութիւնն ի միաւորիլն ընդ մարմնոյն՝ զերկոցունցն յատկութիւնն անշփոթ պահեաց. որպէս հոգի մարդոյ ի մարմնի. թէպէտ և տիրապէտ ոչ է ապացոյց. զի Բանին Աստուծոյ մարմին լինելն ի վեր է քան զհասողութիւն մտաց,,: (Ղևոսրով. ի Ա Կին. Ժամակարգ):

,,Բանն մարմին եղև, ոչ երթէ ի մարմնի յիւրափոխեցաւ՝ կորուսեալ զանմարմին բնութիւնն. քաւ լեցի. այլ՝ ի մարմնի Թանձրացաւ. և յիւրմէ անմարմին բնութենէն ոչ անջատեցաւ,,: (Սարգ. Շնորհ. ի Ա Կին. Ը. Յովհ. ճառ. ա):

,,Միացաւ ի մարմնի անշփոթաբար, զի ոչ փոխարկումն կամ ի բաց բարձումն արար աստուածային կամ մարդկային բնութեանցն. այլ միացոյց զնոսին, զնոյն գոլ Աստուած,

և զնոյն՝ մարդ. որպէս զի Բանն Աստուած մարմին եղև. և որ ի կուսէն մարմնացաւ, Աստուած՝ և նոյն՝ ինքն՝ Աստուած և մարդ. և Մարիամն որ ծնաւ զԱստուած Բանն. Աստուածածնին և կոյս,,: (Նիկ. Լամբ. ի Ա Կին. պատարագի):

Հ.—Ո՞րչափ ցուցանէ զմի հաւն սպանանելն, և միւսն թաւթաւելն յարիւն սպանելոյն:

Պ.—Այն. զի աստուածային բնութիւնն ըստ ինքեան անչարչարելի և անմահ է. չարչարեցաւ և մեռաւ մարդկային բնութեամբ. զի մարդ էր, որչափ ինքն կամեցաւ. որպէս հաւն կենդանի ընդ սպանեալ հաւուն սպանեալ է. վասն զի արիւն սպանելոյն ունի ընդ թևս իւր օծմամբ անբաժ թաթաւեալ. և սպանեալ հաւն կենդանի է ընդ կենդանի հաւուն. վասն զի արիւն իւր բարձեալ ի վերայ կենդանւոյն թիկանց տանի. վասն այսորիկ ասի չարչարանք Աստուծոյ, մահ Աստուծոյ, արիւն Աստուծոյ. ոչ ոմն չարչարեալ և մեռեալ. և ոմն անչարչար և անմահ. այլ ինքն չարչարեալ և մեռեալ. և նոյն ինքն անչարչար և անմահ. ըստ այնմ. ,,Չարչարեցաւ, զի զարիւն չարչարանաց բարձեալ ունէր ի վերայ թևոց իւրոց. այլ ոչ չարչարեցաւ. զի ահա կենդանութիւն նորա քարոզէ ի վերայ զթպարտութեանն. որ եղեալ էր ի թիկնամէջս նորա,,: (Նիկ. ի Ա Կին. Գ. Եւտաց. Գ):

Բանզի որ ինչ մարդկեղէնն չարչարիւր մարմին Բանին, զայս ընդ նմին գոլով Բանն յինքն վերաբերէր, զի մեք բանիւ աստուածութեանն հաղորդել կարասցուք. և լինէր յոյժ հրաշափառապէս իրս, զի ինքն էր որ չարչարիւր, և ինքն էր որ ոչ չարչարիւր, չարչարիւր չարչարելեաւն, քանզի իւր ինքեան չարչարիւր մարմին. և ի նմին ի չարչարելումն էր ինքն առանց չարչարանաց անբաժանելի ի չարչարեցեալ մարմնոյն, զի Աստուած գոլով Բանն անչարչարելի էր բնութեամբ. սակայն ընդ

չարչարելի մարմնոյն միացեալ անմահմինն՝ և մարմինն ունէր յինքեան զանչարչարելի բանն ջնջիչ ակարութեան նորին. զայսոսիկ Ըթանասիոս,,: (Տես. Հ նորհ. ի Թուղթ առ քահանայս Յամայք նահանգի. յերես 154):

,,Օր որ ինչ մարդկութենն չարչարիւր մարմին Բանին, զայս ընդ նմին գոլով Բանն. իւր համարէր և իսկ յինքն վերաբերէր՝ ինքն էր՝ որ չարչարիւր, և ինքն՝ որ ոչն չարչարիւր. չարչարիւր չարչարելիսն, քանզի իւր ինքեան չարչարիւր մարմին, և ի նմին ի չարչարելութեն էր իսկ անչարչարելի,,: (Ըթանաս. ի Թուղթ առ Եպիկտիմոն եպիսկոպոս. Կորնթ. գիւտ ի գիրս պարապմանն. յերես 499):

,,Ո՛չ բնութիւն անմահին Աստուծոյ չարչարեցաւ և մեռաւ . . . այլ՝ մի և նոյն Աստուած և մարդ. մեռաւ ըստ մարդկութեանն, և անմահ մնաց ըստ աստուածութեանն . . . և զան այսորիկ Աստուած խաչեալ ասի, և չարչարանք Աստուծոյ և արիւն և մահ,,: (Տես. Հ նորհ. ի Թուղթն առ քահանայս Յամայք նահանգի. յերես 151):

Հ.—Ո՞րչափ նշանակէ հղեհնայ վայրին ընդ ջուր և ընդ արիւն հաւուն Թաթաւելն կարմիր մանելովն:

Պ.—Ո՝ներկիլին սրբոյ խաչին ի տիզախոց կողահոս յաղբերացն ի զինաւորէն. որով Նինն Աստուած անբաժանելի է միշտ յաւիտեան ի նմանէ, ըստ այնմ. ,,Եւ ի գլխոյմ խաչն քոյոյ նշանիպ, զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր. և ի նոյն շնորհ որդեդրութեան զմեզ մկրտեցեր. և ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր այսու պարգեւօք աստուածականօք. ամաչեսցէ սատանայ,,: (Նարեկ. Կ. Գ. 2):

,,Սա պատկ զարդարեալ ի շնորհաց Հոգւոյն լուսոյն. և եւ դեալ ի գլուխ մեղուցելոյն, վայելուչ երանգօք ներկեալ արեամբ և ջրով ի տիզախոց կողէդ գոր ի զինաւորէն ընկալաք,,: (Ի Հ ՚արականի):

Հ.—Ո՞րչափ ցուցանէ զջուրն կենդանի և զալիւն հաւուն եօթն անգամ սրսկելն ի վերայ սրբեցելոյն:

Պ.—Ո՝մկրտութիւնն և՛ հաղորդութիւնն, որ ի քառաթև խաչին ի կողահոս աղբերէն սրսկեցաւ ի վերայ մեր հաւատացելոցս. զի մկրտեալ ի սուրբ աւազանն Հոգւոյն ընդ Քրիստոսի ի մահն նորա. և հաղորդութեամբ միանամք ընդ նմա. որպէս յարեաւ Քրիստոս և եւս մեզ յոյս յարութեան ի յեօթներորդ նուագի յաւուր վերջին դատաստանի. բուսուցանէ զընկեցեալս ի հողոյ ըստ կանխադուշակ առաքելոյն, և մարդացելոյ, և վարդապետացս. ըստ այնմ. ,,Յօղեա յիս մշակաւ՝ և սուրբ եղեց. լուա և քան զձիւն սպիտակ եղեց,,: (Սաղմ. ՃԾ. 6):

,,Յարիցեն մեռեալք քո. և կանգնեսցին որք իցեն ի գերեզմանս, և ուրախ լեցին յերկինս. զի ցօղն՝ որ ի քէն էբժշկութիւն է նոցա. բայց երկիր ամբարշտաց կործանեսցի,,: (Ես. սայի. Ի.Զ. 19):

,,Յօղդ որ ի քոյդ կողէ ցօղեալ՝ բժշկեսցէ զհանգուցեալսն. իջցէ ի հող մահու նոցին՝ և բուսուսցէ յօրն վերջին. կենդանարար ձայնիւդ քո՝ կոչեա զնոսա ի կեանս քո. և դասեցո ընդ արդարոցն երգել քեզ փառս ընդ զուարթնոցն,,: (Ի Ժամագիրս):

Հ.—Ո՞րչափ նշանակէ զհաւն կենդանի ի դաշտ արձակելն:

Պ.—Ո՝համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկինս, որ առեալ ի մէնջ մարմնովն համբարձեալ ընդ լուսափայլ ամպս երկնից, թառուցեալ ի վեր քան զիւրաքանչիւր դասս հրեղինաց, և մտեալ ի ներքին կողմն վարագուրին, նստաւ ընդ աջմէ Հօր ծնողին իւրոյ. յորմէ յաւիտեան ո՛չ մեկնեսցաւ.

և գալոց է նովին մարմնովն և փառօք ։ օր դատել դկենդանիս և զմեռեալս. ըստ այնմ. ,, Եւարտեալ զանօրինականացն ըզփրկանաւորն զանահաւատութիւն, ասատւածապէս վերակինցադեաց . . . համբարձեալ գեր ի վերոյ ամենայն երկնի. նստաւ ձախակողմն յաթոռն իւրական սկզբնաժառանգ ։ օրն հաւատալոյ թեան . . . անկորուստ առեցելոյն ,, : (Նարեկ. Լ. Գ. 5):

,, Սուրբդ որ նստիս ընդ աջմէ ։ օր, ընդ աջմէ հօր ասելովն. պորդիական պատիւն յայտ առնէ . . . զի նստիլն զիշխանատորութիւնն յայտ առնէ տէրութիւն փառացն հայրենի ,, : (Խոսրով ի Մ'ենկն. Ժամակարգ.):

,, Ըստ որում Յանն Ասատւծոյ յաւիտեանցն արարիչ մըշտանջինաւոր էր ընդ աջմէ Ասատւծոյ (վասն զի այս է պատիւ Միածնին. ընդ աջմէ ։ օր նստիլն). ի նոյն պատիւ առեալ վերացոյց զմարդկութիւնն զոր զգեցաւ, և ընդ աջմէ ։ օր նստոյց յաթոռ փառաց ,, : (Ստրգ. Հնորհ. ի Մ'ենկն. Ը. Պետ. ձառ, ութերորդ):

։ — Օ՞ր է բորոտութիւն տանցն:

Պ. — Այն. զի մեղքն յերկուս բաժանին, սկզբնական և ներգործական. սկզբնականն Ադամայ առ մեզ սերմանեալ, որ աւազանաւ սրբեալ լինի. գորմէ կանխաւ ասացաք. իսկ ներգործականն է, որ յետ մկրտութեանն գործեմք իւրաքանչիւր ըստ կամաց մերոց. և այնու գարձեալ բորոտեալ լինիմք. ըստ այնմ. ,, Յարկս բանական՝ ուռնոզս բորոտութեան, հարուածեալ խրատու քերմանն, օրինիւ կազդուրեալ, օծեալ կաւմէ՝ ողոքական հեղութեամբն. անձարակ գտեալ յերս հնարից, քակտեալ վերատին ձեռամբ շինողին, արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ՝ հրամանաւ հզօրին ի տեղի անտուրբ. հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ. ամենայնիւ առանց խնայելոյ ,, : (Նարեկ. Ր. 1):

,, Ախտք անհնարինք և հիշատացուցիչք զմեզ վայրաքարշ առնեն. և պատրոյն գող, և մարմինս օգնական, և զգայութիւնս խեղիկիչ, և հիշողութիւնն ձգիչ, և կարիքն ի ձեռին, և անմտութիւնն մերձ. և ծուլութիւնն խաւարեցուցիչ, յորոց յայսցանէ տիրապէս զերծանիլ անհնար է ումեք. զի որ միանգամ մարմին զգեցեալ է, և զպարշապարս իւր յերկիր հաստատեալ, յայսցանէ սուրբ և անարատ զերծանիլ ոչ կարէ ,, : (Ստրգ. Հնորհ. ի Մ'ենկն. Ը. Պետ. ձառ. չորրորդ յորդորակ):

։ — Օ՞ր ինչ ցուցանէ անառն բորոտեալ տանն գալ առ քահանայն և պատուէն զարած տանն իւրոյ.

Պ. — Զգալն անձին մեղուցելոյ զղջմամբ առ խոստովանահայր քահանայն. որ խոստովանեալ պատուեսցէ ստուգիւ զչանցանս մեղուց իւրոց առաջի նորա արտասուամբ աչօք՝ և փղձկեալ սրտիւ, ըստ այնմ. ,, Ըսա դու նախ զանօրէնութիւնս քո. զի արդարասցիս ,, : (Ես. Խգ. 26):

,, Եւ բազումք ի հաւատացելոցն գային և խոստովան լինէին. և պատմէին զգործս իւրեանց ,, : (Գործ. Ժթ. 18):

,, Խոստովանել (պարտ է) զչանցանս, և զղջանալ ,, : (Կիպր. Լուսաւ. Ա'գաթանգեղոսի ի Յաճախապատում. գլուխ Օ):

,, Առանց խոստովանութեան չէք հնար քաւութիւն գտանել. վասն այսորիկ պարտ է փութալ ի խոստովանութիւն, քահանային խոստովանել միանգամ. և Ասատւծոյ՝ հանապազ ,, : (Խոսրով. ի Մ'ենկն. Ժամակարգ. երես 348):

,, Որպէս զի մի բնաւին անյոյս մեռանիցին մարդիկ, և չիա միանգամ զղջմանն համակ ի մեզս կայցեն, սահմանեն զապաշխարութիւն, զխոստովանութիւն և զարտասուս. և զայս ի լուծումն անողորմ և անբարեսէր և անգորով կամաց Նաւատեայ հերձուածին, քանզի նա և զերս ի հալածականն գորութեան . . . ,, : (Նել. Լամբ. ի Մ'ենկն. Պատարագի երես. 61):

Ա.—Ո՞ինչ է քահանային հրաման տալն Թաւիթ զտունն և պղծելն զամենայն ինչ, որ ի տանն էր:

Պ.—Ի այն. դի յորժամ գայցէ խոստովանողին առ իւր խոստովանահայր քահանայ խոստովանել և պատմել զմեղս իւր, պարտ և պատշաճ է քահանային՝ ուղիղ ունկնդրութեամբ ունկն դնել և լսել զխոստովանութիւն նորա. Թողուլ զմեղս, և իւրաքանչիւր վերացն պատշաճ դեղս դնել. առաջել՝ յանդիմանել, խրատել և դարձեալ մխիթարել, ողջել առաւածային քաղցր յորդորական բանիւ ըստ առաքելոյն. և պատուէր տալ յայնմհետէ ի բաց կալ և հրաժարիլ ի գաղտալից մահաբեր Թունից, և այլ մի՛ւս մեղանչել, ըստ այնմ. «Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին, և ասէ ցնա. ահա առիր ողջացար. մի՛ւս մեղանչեր. զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ»: (Յովհ. Ե. 14):

Ա.—Ո՞ինչ ցուցանէ ևօթն օր զատուցանելն զտունն, քակել զքարինս, և հանելն արտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ:

Պ.—Ո՞հանելն զապաշխարողն ի բաց արտաքոյ եկեղեցւոյ ի դուրս նորա յաւուրս քառասնորդաց պահոց ի յեթնեորդումն շաբաթու ի սուգ կալ յապաշխարութեան հեծեծանաց. ըստ այնմ. «Մի ոք յերեխայից, մի ոք ի թերհասատից և մի ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս: Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և աղօթեցէք»: (Ի Յոամակարգ.):

«Ընդ կին և ապաշխարողացն և անմաքրիցն հրամայէ սուրբն Դիոնէսիոս՝ ընդ երեխայիցն արտաքս դնալ, մեք ոչ հանեմք. էր վասն, դի մի՛ զկնոցուք ի սատանայէ»: (Կեր. Լամբ. ի Մեկին. Պատա. յերես 70):

Ա.—Ո՞ան էր արտաքոյ եկեղեցւոյ կացցէն:

Պ.—Ո՞ան քաւելոյ զմեղս լալով և արտասուօք աչաց. և պարձեալ մտից նորա արժանաւորել յարութեամբն Քրիստոսի, ըստ այնմ. «Ընդ նախաճօրն տրտմութեան, որ վասն եղեցն ի դրախտէն կենաց, ընկալցուք և մեք զտրտմութիւն ապաշխարութեան. զի յարութեամբն Քրիստոսի արժանասցուք մտից դրախտին եկեղեցւոյ»: (Ի Հարականի. կանոն երկրորդ. կիւրա. աղոս.):

«Ապաշխարութեան արտասուօք աւազան լինի և լուանայ զթաղտմութիւն մեղաց. սովաւ շնորհեա յառաջ քան զվախճան զքաւութիւն և զմեծ քո գողորմութիւն»: (Ի Յամագիրքն.):

«Թէ և բիւր չարեօք յառաջինն վերաւորեալ էիմք. հաւատացուք ի մարդասիրութենէն Քրիստոսի քաւութիւն և թողութիւն գտանել»: (Նոսրով. ի Մեկնու. Ժամակարգ.):

«Ամենայն մեղաւորաց ապաշխարութեամբ լինի թողութիւն»: (Նփրեմ. ի Մեկն. Ընե.):

«Համարձակութեամբ ասեմ. թէ չէք մեղք որ ապաստամբին և ապաստամբեացին յապաշխարութենէ»: (Նոյն անդ):

«Մեծ շնորհ եղև այս Աբեմայ Յաստուծոյ, զիտել զապաշխարութիւն յետ յանցանացն առակս մարմնոյն. որում ոչ գըտաւ արժանի բանսարկուն. «Առնեմ որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց»: (Ղուկ. ԺԶ. 8: Ներսէս. Լամբրոն. ի Մեկնու. պատարագի. յեր. 49(:

Ա.—Ո՞ինչ է յետ քակելոյ զտունն և ձգելոյ ի չորքին յարաձոյ, քակէն զտունն:

Պ.—Ի այն. եթէ յետ այնքան քարոզելոյ և խրատելոյ քահանային յետս ոչ պատնայ ի մեղայ առնուլ զլուծ քաղցր

ապաշխարութեան՝ և տալ զպտուղ բարութեան, հատանի մահուամբ և արկանի ի յաւիտենական հուրն անշէջ դժոխոց. ըստ այնմ. ,,Օ՛ի ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ՝ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի,,: (Մատ. Գ. 10):

,,Ընտց և զառակս զայս: Թզենի մի էր ուրուք՝ տնկեալ յայգւոջ իւրում. և եկն խնդրել պտուղ ի նմանէ. և ոչ եգիտ. ասէ տնտեսին. ահա երեք ամք են, յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ, և ոչ գտանեմ. արդ՝ կտրեա զդա. ընդէր և զերկիրդ խափանէ: Նա պատասխանի ետ և ասէ. տէր, թող զդա այս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից, և արկից աղբ. թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ, յամէ ևս հատցես զդա,,: Ղուկ. (ԺԳ. 6):

,,Եւ մերձ դնելն, և ոչ հատանելն նոյն ժամայն՝ ներելոյ է նշան, զի եթէ պողաբերիցէք ասէ պիտանիս անկողին. ոչ ինչ մեղանչէ ձեզ տապարն,,: (Ներ. Հնորհ. ի Մեկն. Մատ. Գ. 10. յերես 59):

,,Օ՛ի թէպէտ և այնպէս Աստուած մատոյց, սակայն զձեզ արար առաքս կարելոյ կամ չկարելոյ. զի թէ գառնայցէք և լինիջիք պիտանացուք. անցանէ և չմեղանչէ ինչ ձեզ տապարն. Ապա եթէ անդրէն ի նմին չարիս հաստատեալ կայցէք. արմատաքին տակակատոր լինէ զձառն,,: (Յովհ. Ոսկեբերան. ի Մեկն. Մատ. դիրք առաջին. Ճառ. ժա. յերես. 159):

,,Պանղէ մեղքն որ յառաջ քան զմկրտութիւնն գործէին, յորովայնին ծառայ լինելոյ մտին,,: (Նոյն անդ. Ճառ. ԺԳ. յերես 183):

՟.—Օ՛ի՞նչ նշանակէ սրբութիւն տանն արեամբ հաւուն՝ և կենդանի ջրովն լուանին:

Պ.—Օ՛րբութիւնն երկրորդ աւազանաւ. այսինքն արտասուօք ապաշխարանաց լուանալն զմեղս, և մեղսաբաւիչ մարմնով և արեամբ Տեառն մաքրիլ յաղտոյ մեղաց, որպէս գոսկի ի հրոյ. որ արժանապէս հաղորդողաց լինի զնդ վերայ և բուժիչ ցաւոց իւրոց, ըստ այնմ. ,,Դնդ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս,,: (ի Խորհրդատետր):

,,Դնդ առէն. քանզի հիւանդացաք ի կենդանութենէն. զոր ի մկրտութեանն առողջացաք, հոսանուտ վճռակիւ բնութեան. վասն այսորիկ տամ քեզ նուէր նախ զհացս և զգինիս խորհրդով Միածնիդ քո չարչարանաց. որպէս զի դու ընկալեալ զսա ի մէնջ հաշտ ակամբ թողութեան՝ մեզ դնդ հոգւովդ զնոյն ընձեռեսցես,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատ. յեր. 83):

,,Եւ հալիսցի ի հրոյս յայսմանէ գայթագղութիւնս մեր. որպէս մարգարէին կենդանախառըկ կայծակամբն ի ձեռն ուներևացն մատուցման,,: (Նար. Լ. Գ. 5):

,,Սրբութիւն սովորիմք կոչել զմարմին և զարիւնն Քրիստոսի. զոր միշտ ճաշակիմք, և սրբիմք նովաւ,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Նաղմ.):

,,Ոյք արժանապէս ճաշակեն զհացն յերկնից իջեալ զոհուղն կենաց աշխարհի. և ըմպեն զարիւնն անմահացուցիչ կենդանւոյն Աստուծոյ՝ աստուածատեսակ եղեալ և Աստուած միացեալ՝ ճանաչեն զի քաղցր է՝ Տէր: Եւ զիտեն զայս խորհրդազգածք խորհրդոյն, նոցա թողում իմանալ. եթէ ոք առանց խղճի մատց մերձենայն ի սուրբ սեղանն. և ճաշակէն զմարմին անարատ գառինն, և ըմպէն զմեղսաքաւիչ արիւնն, ոչքան ուրախութեամբ ընուն ընդ Աստուած միանալովն,,: (Յարգ. Հնորհ. ի Մեկն. Ա. Պետ. Ճառ, յորորդ):

՟. Ո՞ւմ պատնի օրինակ հացն առաջաւորաց:

պ.—Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. որ ծնեալ մարմնով ի կուսէ յանդաստանն յերկրի, կամեսայլեալ ի վերայ խաչին. հատան անմահութեան թաղեցաւ յերկրի, բուսեալ ի կոյս զերեզմանէ հացն առաջաւոր պարգևն մարդկային սեռի, յարուցեալ և համբարձեալ առաջին պտուղն ննջեցելոց և զլուխն յաղթական եկեղեցւոյ, նստաւ ընդ աջմէ ՚ օր զօրութեան. և կայ ի վերայ սեղանոյ յերկինս առաջի աչաց նորա յաւիտենական, ըստ այնմ. ‘‘ Եյլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. առաջին պտուղն ննջեցելոց. քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց ,,: (Ա. Կորնթ. ԺԵ. 20: Թէսաղոնիկեցւոց. Ե. 15):

‘‘Զոր նա է զլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն, անդրանիկ մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ ,,: (Կող. Ա. 18: Յայտ. Ա. 5):

‘‘Որ առանց ընդ երկինս երկնից՝ ինքնիշխան կամօք զօրութեամբ, և մեռա հրաշապէս ի ներքին կողմն վարագուրին անձառելի հիացմամբ. և եղ յանդիման Աստուծոյ ՚ օր՝ զառհաւատչեայն ի մարդկանէ, բարեխօս վասն մեր ,,: (Ներ. Լ. ամբ. ի ներբող. ՚ օգոստոսի սրբոյ դալստեան):

‘‘Եւ մտեալ ի ներքին կողմն վարագուրին՝ ընծայեաց պատարագ ՚ օր՝ քահանայն մեծ զպատուականն իւր արիւն ,,: (Ընդն անդ):

‘‘Եղև առաջին պտուղ ննջեցելոց. և անսուաճահրաշ յարութեամբն իւրով հրաւիրեաց զմեզ յիւր արքայութիւնն ,,: (Մաշտոց. Ներ. Ը նոր. ի Մեկն. Մատ. Ա. 25. յհր. 37):

‘‘Վասն որոյ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ՝ լինել մեզ նմանակից հացի անմահութեան, ոչ միայն ի մշանջենաւոր անմահութեան, այլև զմեզ մարմնով հատոյ կենդա-

նութեան. զի բազում արասցեն արդիւնս ,,: (Ի Մաշտոց):

‘‘Յայտ արարեալ այսու, թէ զքեզ ունիմք առաջի աչաց մերոց ի ժամ յայս, և որպէս մարմնոյ աչօք զդալն քո նշանակս նկատեմք տեսանել՝ և փափագիմք ողջունել , այսպէս և զաչս մտաց անդր ի ներքին կողմն վարագուրիդ համարձակաւթէս ածաք ընդ ճանապարհն՝ զոր նորոգեցեր մեզ Յիսուս, մարմնոյ քո վարագուրաւ. և տեսանեմք որպէս աստ զքեզ մարմնով ի սպանդ սրբոյ սեղանոյս պատարագ հաշտութեան մեր, այսպէս և այդր զմարմին քո ի վերայ սեղանոյ աստուածութեանդ՝ ջինդանի և բարեխօս վասն մեր. և բարեխօս ոչ վայրապար, այլ՝ փորձիւ ակարութեանս փորձանաւորացն օգնական ,,: (Ներ. Լ. ամբ. ի Մեկն. Պատ. յհրես 88):

՚.—Եյլ և ոճ օրինակ զտանի հացն առաջաւոր:

պ.—Մարմնոյն Քրիստոսի որդւոյն Աստուծոյ, որ առեալ բաղարջ հաց ի սեղանոյ ի վերնատանն ետ առաքելոցն. ասելով այս է մարմին իմ. և պատուիրեաց առնել զայն յիշատակ մահուան իւրոյ. և յետ համբարձմանն երկոտասան առաքելքն աւանդեցին մեզ. և ըստ կանոնի սրբոյ հայրապետացն՝ առաքելաբար աւանդեալ եղև սրբազնագործ սպասաւորաց եկեղեցւոյ, զհացն սուրբ սրբութիւնն սրբոյ դնել ի վերայ սրբոյ սեղանոյն զամենայն աւուրս առաջի Աստուծոյ, և փոխարկել զայն ի կիւրակէից ի կիւրակէ աւուրս ըստ առաջաւոր հացին. ըստ այնմ. ‘‘Եւ զարձեալ՝ յորժամ հրամայեաց Աստուած Մովսիսի ունայնաձեռն ոչ երևիլ առաջի նորա. զհացն զառաջաւորութեան օրինադրեր դնել ի սեղանն քաւութեան յիւրաքանչիւրում աւուր՝ յօրինակ մարմնոյն Քրիստոսի. և զի բաղարջ էր այն և ոչ խմորուն, յայտ առնէ բանն Աբիաթարու քահանայապետի առ Դաւիթ ասացեալ, հաց սիղծ

ասէ, այսինքն՝ խմորիալ՝ ոչ գոյ ի ձեռին իմում. այլ հացն սուրբ առաջաւորութեան՝ որ է բաղարջն,,: (Տես. Շնորհ. ի Թուղթն առ Մանուէլ կայսր. յերես 2):

,,Ընժան է և զհացն անխմոր և զգինին անապակ հանել ի սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի. զի սուրբ Լուսաւորիչն յօրինականէն բերեալ զայս առաքելաբար հրամանս ետ կատարել իւրոց վիճակելոցն. և մեզ ի նմին պարտ է յարանալ, և չառնել նորաձևս ինչ,,: (Յովհ. իմաստ. ի կանոնն Ը. տես. ի պատմ. Հայ. հատոր Ժ. յերես 649):

,,Հաց ջերմ (այսինքն՝ թարմ) և բաժակ անապակ հանցի ի սեղան ձեռամբ սարկաւագաց. և քահանայն օրհնեսցէ և կատարեսցէ զխորհուրդն. (է մի ի կանոնացն՝ զորս Մակարիոս պատրիարգ Երուսաղեմի գրեաց և առաքեաց առ սուրբն Վլադիմէս որդի Լուսաւորչի՝ ըստ խնդրանաց նորա. յամի Տեառն 340,,: տես ի կանոնագիրս. և ի պատմ. Հայ. հատոր, Ը. յեր. 422):

,,Ընդարձակ կարօտիմք զայսր խորհրդոյ զօրութիւն ուսանել ի Հոգւոյն. թէ մարմին և արիւնն Քրիստոսի՝ զոր նախ նուիրեմք Հօր. այս է յիշատակ նորա՝ մարմին լինելոյն. և մարմնաւորացս կրից՝ հաղորդ,,: (Տես. Լամբ. ի Մեկն. պատ. յեր. 75):

,,Երդ՝ եդեալ առաջի Ըստուծոյ Հօր զմարմնական նշանակս, եդ առաջի նորա զՔրիստոսի մարմնով անօրէնութիւնն պեսպես և զանաղանս՝ որք եղեն ի պէտս մեր փրկութեան. և զնոսա նուէրս հաշտութեան մաղթէ ի մէնջ, Ըստուծոյ Հօր ընդունել, որպէս ընկալաւ և միշտ ընկալցի,,: (Տոյն անդ. 83):

,,Տանղն զՈրդի Ըստուծոյ զՔրիստոս՝ և զմահ նորա անմեղ՝ փոխանակ մեր Հօրն իւրում տամ. և յուսամ առնուլ ի նմանէ ըստ յայտնեալ պարգև. ոչ միայն զմեղաց մեր թո-

ղութիւն. այլ և զբաշխումն Հոգւոյն առատապէս,,: (Տոյն անդ. 88):

,,Յայտ առնէ թէ ինքն որ գիտէր զնորհուրդս կամաց քոց. որպէս սկրեցեալ ծառայից զայս յայտնեաց մեզ. և մեք յառաջբերել զսոյն տամք ի ձեռս քո, զո՛ զնորհուրդն փրկական մարմնոյն և արեան Միածնի քո,,: (Տոյն անդ):

Հ.—Ո՞վ է պատեհն ժողովրդեան զնգումս և յոգնիլն ի ձանապարհին. և սնոտի ասելն զհացն երկնային:

Պ.—Նգովմ օրինակ է որկորամոլութեան և դժոխոց. զորովք պատեաց բնութիւնս մարդկան. և յոգնիլն ի ձանապարհին է անկանիլ մեզաց ի մեզս և յորոգայթից յորոգայթս. իսկ սնոտի ասել զհացն երկնային, նշանակէ թէ մարդկային բնութիւնս տակաւին ի դրախտի անդ չհաւանեալ անմահական պաղպաղն կենաց՝ մոլեցաւ զհետ որկորամոլութեան. և ձաշակեալ յարգելեալ պաղպաղն՝ զրաւեցաւ յանմահական կենացն և անկաւ յանարգութիւն, ըստ այնմ. ,,Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից. և նմանեցաւ նոցա,,: (Սաղմ. ԽԸ. 13):

,,Ոլբասցուք զՀօրն (Ադամայ) զվտանգ՝ որ մերկացաւ մեղօք զփառս արարչին,,: (ի Շարականի կանոն մեծի երկուշաբաթին):

,,Պատրանօք փայտին ձաշակեցաք զմահ,,: (Տոյն անդ: Յովհ. ոսկերբերան. ի Մեկն. Մատ. պլուխ. Ը. ձառ. մեծաւաներորդ):

Եյսպէս և Հրեայք զակառակել զհետ մեղաց որկորամոլութեան, յաղագս անձնասիրութեան իւրեանց և աշխարհասիրութեան անարգեցին զհացն կենաց՝ զՈրդին Միածին՝ ասելով. ,,Ոչինչդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել,,: (Յովհ. Ձ. 53):

,, Ո՛չ ի մոլորեցուցիչն կարդալ զքեզ աստուածասպանիցն զօդուած ծնօտիցն բաժանեցեր ,,: (Նաբակ. Լ. Օ, 2):

,, (Հրեայք) ի բարի առաջնորդաց պակասակաւք՝ յաստուածասպանութիւն ժպրհեցան ,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Առակ. ԺԵ. գլ.):

Հ.—Ո՞րչ են օձքն կոտորիչք:

Պ.—Ընդ յերկնից թօթափեալ զօրքն սատանայի՝ ըստ Յովհաննու, որ խայթոցաւ մեղաց և դառնութեան մահու ապականեալ մահացոյց զմեզ ի կենաց, ըստ այնմ. ,,Բանզի յորժամ նոցա անհնարին բարկութիւն գազանացն ևհաս ի վերայ, և հարուածով կամակոր օձիցն սատակէին ,,: (Իմաստ. ԺՈ. 5):

Նո՛ թէ՝ ,,Խայթոց մահու մեղք են, և զօրութիւն մեղաց օրէնք ,,: Ա. Կորնթ. ԺԵ. 9. ԺԱ. 56: Յայտ. ԺՐ. 9):

,, Ի սառնդանէին Ադամայ ի կենսատրճ ի դրախտին, խաբմամբ պատրանօք վիսալին ծառոյն գիտութեան, օձաջամբ պատրանօքն ձաշակեալ ի պտղոյն, և նովև վայրաբնակիլ մայրաքաղաքն Երուսաղէմ ,,: (Ի Շարականի):

,, Օձի մահուն խրտով խափանեսցէ զայն, որ վիշտանութիւն մահուն ունէր. այսինքն է՝ սատանայ ,,: (Ներս. Ր. 14):

Հ.—Ո՞րչ նշանակէին օձն պղնձի, և վիսան՝ յորոյ վերայ բարձրացաւ օձն:

Պ.—Օձն պղնձի է օրինակ մարմնացեալ Բանին Աստուծոյ. և վիսան՝ քառաթև սուրբ խաչին, յոր եկեալ բարձրացաւ արարիչն արարածոց և փրկեաց զմարդն ի յանիծից մահու, ըստ այնմ. ,,Ո՛չ մինչև խոպատ յամեաց բարկութիւն քո. այլ ի խրատ առ սակաւ մի խռովեցան, զի նշանակ վերկութեան ունիցին առ ի յիշելոյ զպատուիրան օրինացդ քոց ,,: (Իմաստ. ԺՈ. 6):

Նո՛ թէ՝ ,,Որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ ,,: (Յովհաննու. Գ. 14):

,, Երևելք ի դրախտին ընծայեցին զփայտ խաչին, և եկեալ կատարիւք ի տեղւոջ կառափման, բարձրանայր ի դիտին տարբերդին փայտակերտն՝ սուրբ քառաթեւն պահապանն անձանց մերոց ,,: (Ի Շարականի):

,, Զողաբարձ նպատակ օրինակեալ քառաթև սուրբ խաչին. ձեւացուցանէր Մովսէս Իսրայելեան բանակին զօձն պղնձի. ապրեցուցանել զվերաւորեալսն ի խածանող սողնոց թունից ,,: (Նոյն անդ):

,, Պարծանք Պօղոսեան՝ գառանեալ զքեզ աստուածային Բանին՝ տէրն և զնաւարան. քանզի քեւ ապրեցաք ի խածանող և յանմարմին գազանէն. և ի վերայ քո հեղեալ շնթք անապական արեանն՝ զկողածնին ջնջեաց զմեզս ,,: (Նոյն անդ):

,, Հին մարդն խաչակից քեզ արարեր, և զնայթոց մեղացն շնջուցեր ,,: (Նոյն անդ):

,, Եղեալ ի բարձրաւանդակ խաչն Որդին Աստուծոյ իբր ի վերայ բարձր դիտի ,,: (Ղեւոնդեան):

,, Բանզի կենսարարաւն մեռաւ, և բարձրանալով անապատին ի բարձունս խաչին խոյտառակեցաւ. և այժմ մեռեալ և անպտրճ և անկենդանիս, ձեռով ցուցեալ ըստ ողջախոհութեան Մովսիսեան օձին, որ առակեցաւ և ցուցաւ յանմեղ մարմին սէրունի. Այս է ներպտրճութիւն սէրունի յարութեան, որոյ լիսո համբարձման նորա դիցի դաւանութիւն ,,: (Ներ. Լամբ. ի Մեկ. պատ):

,, Օձի որպէս անդ յօձին ցցումն ոչ ամենեքեան, այլ որք հաւատացին՝ զերծանէին ի խածմանէ թունաւոր օձիցն. նոյնպէս և աստ ի բարձրանալն որդւոյ մարդոյ՝ որք հաւատացին ի

նա անմեղ մարմնով վասն մեր պատարագեալ, տացէ նոցա զկեանսն յաւիտենականսն,,: (Յովհ. Ոսկեբեր, ի Մեկն. Մատ. Ի.Ջ. 28. յերես 561):

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Յեսու որդի Նաւեայ, պատերազմող որդւոցն Իսրայէլի յերկիրն Ընեթեայ:

Ա.—Յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի Տեառն՝ ոմն առաջնորդեաց որդւոցն Իսրայելի յերկիրն Ընեթեայ:

Պ.—Յետ վախճանելոյն Մովսիսի խօսեցաւ Տէր ընդ Յեսու որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի և ասէ. Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ՝ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու և ամենայն ժողովուրդ քո. յերկիրն զոր ես տացու որդւոցն Իսրայելի,,: (Յեսուայ Ընդ. 1. 2):

Ա.—Որպէս առաջնորդեաց Յեսու:

Պ.—Ընդ առաքեաց նախ ի Սատիմայ զերկուս երիտասարդս՝ լրտեսել զերկիրն գաղտաբար, և ասէ. ,, Երթեք լրտեսեցէք զերկիրն և զՆերիքով,,: Յեսուայ Ի. 1):

Ա.—Ի ժամանել երիտասարդացն Ներիքով՝ ոմն մտին:

Պ.—Ի տուն կնոջ միոյ պոռնկի, որոյ անուն էր Ռախաբ, ուր և կալան օթևանս,,: (Յեսուայ Ի. 1):

Ա.—Երբև լուաւ Ռախաբ պոռնիկ, թէ իմացեալ է արքայն Ներիքովի զդալ լրտեսացն. զի՞նչ արար զլրտեսսն Յեսուայ:

Պ.—Ածեալ զնոսա ի տանիսն՝ թագոյց ընդ խրձամբք կըտաւոյ՝ զոր դիզեալ ունէր անդ. և ի գիշերի կախեալ զնոսա ընդ պատուհանն. զերծոյց անվնաս,,: (Յեսուայ Ի. 6. 15):

Ա.—Նոքա առ այնպիսի մարդասիրութիւն կնոջն պոռնկի զի՞նչ խոստացան նմա:

Պ.—Խոստացան ապրեցուցանել զտուն նորա յառնման քաղաքին՝ և ասեն. ,,Մեք յորժամ մտանիցեմք ի մասն ինչ քաղաքիդ. դիր դու նշանակ զլարդ կարմիր՝ կապելով ընդ պատուհանն՝ ընդ որ զմեզ իջուցեր. և զհայր քո, և զմայր, և զեղբարս և զամենայն տուն հօր քո ժողովեսցես առ քեզ ի տունս յայս,,: (Յեսուայ Ի. 18):

Ա.—Երբև դարձան լրտեսքն առ Յեսու, և պատմեցին թէ երկիրն այն դիւրաւ մատնի ի ձեռս մեր, զի՞նչ արար Յեսու:

Պ.—Կանխեալ ընդ առաւօտն չուեցին ի Սատիմայ և եկին մինչև ցՅորդանան և բանակեցան առ ափամբք նորա. իսկ յետ երից աւուրց խօսեցաւ Յեսու ընդ քահանայսն և ասէ. առէք զտապանակ ուխտի Տեառն, և գնացէք առաջի ժողովրդեանդ,,: (Յեսուայ Գ. 1. 6):

Ա.—Երբև բարձին քահանայքն զտապանակ ուխտին Տեառն մատանել ի Յորդանան, զի՞նչ պատահեցաւ:

Պ.—Ի մատանել քահանայիցն կրողաց զտապանակ ուխտին ի Յորդանան. ոտք քահանայիցն մխեցին յեզր ջրոյն Յորդանանու, և Յորդանան լցեալ գոյր դարիւ դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ, և կացին ջուրքն որք իջանէին ի վերուստ միաձոյլք անջրպետեալք հեռացեալք յոյժ յոյժ յԱդամիտէս քաղաքէ, որ է մատն Կարիաթարիմայ. և որք իջանէին՝ իջին ի ծովն Ընթացոց՝ ի ծովն Ընդ, մինչև խափան նուազելոյ. և ժողովուրդն կայր յանդիման Ներիքովի. և քահանայքն կացին՝ որք կրէին զտապանակ ուխտին Տեառն ի վերայ ցամաքի ի մէջ Յորդանանու պատրաստութեամբ. և ամենայն որդիքն Իսրայէլի անցին ընդ ցամաք,,: (Յեսուայ Գ. 15—17):

Ը.—Ի ցամաքել Յորդանանու զի՞նչ բարձին որդիքն Իսրայելի ի միջոյ Յորդանանու յոտնաւոդեաց քահանայիցն ի յիշատակ։

Պ.—Բարձին ըստ հրամանին Յեսուայ զերկոտասան քարինս ըստ թուոյ երկոտասան ցեղիցն Իսրայելի. և տարան զնոսին ընդ իւրեանս ի բանակն և եդին անդ. և կանգնեաց Յեսուա այլ և երկոտասան քարինս անդէն ի Յորդանան, ի տեղւոջ ուր կացին ոտք քահանայիցն՝ որք կրէին զտապանակ ուխտին Տեառն և էին անդ մինչև ցայսօր ժամանակի։ Նոյնս զքարինս զերկոտասանսն բարձեալս ի Յորդանանէ արանց երկոտասանիցն՝ զորս զկնի կանգնեաց Յեսու ի Գաղգաղայ,,։ (Յեսուայ Դ. 8. 9. 20)։

Ը.—Յետ թլփատելոյն Յեսուայ զանթլփատութիւնն որդւոցն Իսրայելի ի Գաղգաղայ. և գալոյն Աերիքով ոտիցն սին զնա։

Պ.—Տեսին զի վաղեալ և ամրացեալ էր Աերիքով յոյժ յոյժ՝ մինչ չկարել ուժիք մտանել ի նա և ելանել։ (Յեսուայ Ջ. 1)։

Ջհաթդ կարացին մտանել որդիքն Իսրայելի։

Պ.—Ըզկնոյթեամբն Աստուծոյ շուրջ եկեալ տապանակ ուխտին Տեառն զքաղաքսն, զնաց անդրէն ի բանակն և անդ ագաւ. իսկ յաւուրն երկրորդի յարեաւ Յեսու ընդ առաւօտն, և բարձին քահանայքն զտապանակն Տեառն, և եօթն քահանայքն առին զեօթն փող, և երթային առաջի Տեառն, և քահանայքն հարին զփողն. և անփողքն դնացին ընդ նոսա զարձեալ ի բանակ անդր, և ապա մտանէին մարդիկքն և անփողք զկնի տապանակին Տեառն. և երթալով հարկանէին զփողն զեղջերայս, և պատեցին զքաղաքսն յաւուրն երկրորդի միանգամ ի մօտոյ, և դարձեալ անդրէն դնացին ի բա-

նակն. և արարին այնպէս մինչև ցվեց օր. և յաւուրն հօթներորդի յարուցեալ ընդ առաւօտն ըստ նմին օրինակի շրջեցան հօթն անգամ զքաղաքսն. և յհօթներորդումն նուագի հարին քահանայքն զփողսն։ Ասէ Յեսու ցորդիսն Իսրայելի. արդ՝ աղաղակեցէք. քանզի մատնեաց Տէր ի ձեռս մեր զքաղաքս զայս. և եղիցի քաղաքն նզովեալ. ինքն և ամենայն որ ինչ իցէ ի նմա՝ ի Տեառնէ զօրութեանց. բայց զՌահաբ պոռնիկ ապրեցուսջիք, զնա և զամենայն ինչ որ իցէ ի տան նորա։ Վասն զի՝ թագուցեալ զհրեշտակսն զորս արձակեցի։ Իսկ դուք զգուշացարուք ի նզովեալ ընչեցն. գուցէ ցանկացեալ առնուցուք ինչ յայնցանէ. և կարգիցէք զբանակ որդւոցն Իսրայելի ի նզովս, և ջնջեցէք զմեզ. ամենայն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ եղիցին սուրբ Տեառն, և ի գանձ Տեառն մտցին։ Ազաղակեաց ժողովուրդն, և հարին քահանայքն զփողսն. աղաղակեաց ամենայն ժողովուրդն առհասարակ մեծ և ուժգին աղաղակաւ, և անկաւ պարիսպն. և էլ ամենայն ժողովուրդն և էառ զքաղաքն, և նզովեցին զնա. և որ ինչ էր ի քաղաքին յառնէ ցկին և յերիտասարդէ մինչև ցծերն, յարջառոյ մինչև ցոչխար և ցէշ արկին ի բերան սրոյ։ (Յեսուայ Ջ. 11—21)։

Ը.—Իբրև աւերեցին զքաղաքն, զի՞նչ արարին զՌահաբ պոռնիկ։

Պ.—Ապրեցուցեալ զնա Յեսու հանդերձ հայրենի տանն և ատացուածովք. բնակեցոյց ի մէջ Իսրայելի։ (Յեսուայ Ջ. 25)։

Ը.—Ո՞ւմ Յեսու զերկիրն Աբեսեաց ի ժառանգութիւն որդւոցն Իսրայելի։

Պ.—Ա,յո. եւս և բազում պատերազմաւ և քաջութեամբ ապան զքսանևինն թագաւորս յայնկոյս Յորդանանու. և զամենայն սահմանս նոցա եւս ի ժառանգութիւն որդւոցն Իս-

բայելի. և ի ծերութեան իւրում յանձնեաց բնակեցուցանել ի միացեալ երկրին զծերս և զդպիրս պատուոյ որդւոցն Իսրայելի. և ինքն յաւելաւ առ հարս իւր ի հասակի հարիւր և տասն ամաց։ (Յեսուայ ԺԴ. 7—24. ԺԶ. 1. Ի Դ. 30)։

ՄԷՆՈՒԱՆ.

Հ.—Ո՞ւմ օրինակ է Յեսու առաջնորդն Իսրայելի։

Պ.—Յեսուայ Նրիսաոսի Որդւոյն Աստուծոյ, որ առաջնորդեաց մեզ ի վերինն Երուսաղէմ, ըստ այնմ. ‘‘Տէր Աստուած երթայցէ առաջի երեսաց քոց. նա սատակեսցէ զազգսն զայնոսիկ յերեսաց քոց,,։ (Ե. Օրինաց. Լ, 3։ Ներ. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ա. 2. յեր. 34)։

‘‘Օ՛ի և Յեսու յետ Մովսիսի՝ տանէր զժողովուրդ որդւոցն Իսրայելի յերկիրն պարզեւաց։ Տեսեր զօրինակն, հայեաց և ընդ ճշմարտութիւնն. նա յերկիրն պարզեաց, և սա յերկինս՝ և յերկնաւոր բարութիւնն. նա յետ վախճանելոյն Մովսիսի, սա յետ դադարելոյ օրինացն։ Նա իրրև զօրավար, և սա իրրև թագաւոր. Այլ զի մի լուեալ զՅիսուսն անուն՝ անուանակից անուամբն մոլորիցիս, ասէ անդրէն առ նմին։ Յիսուսի Նրիսաոսի որդւոյ Դաւթի. քանզի նա չէր ի Դաւթայ, այլ յայլմէ ազգէ,,։ (Յովհ. Ոսկեբե. ի Մեկն. Մատ. գիրք. Ա. ճառ. Ջ. յերես 22)։

‘‘Իսկ նա սատակեսցէ զազգսն զայնոսիկ յերեսաց քոց. Յեսուայ որդւոյ Նաւեայ յորջորջումն անուան թէպետև սքանչելոյն էր և մեծին օրինակ. և կոչմամբն և իրօքն՝ փրկիչ և առաջնորդ յեղանակելով. սակայն օրինակին փոխանորդ էր, և ոչ ճշմարտութեանն անուանակիր, առաջնորդելով ժողովրդեանն յերկիրն Աւետեաց, և ոչ յերկիր կենդանեաց. և փըր-

կելով ի յայնմէ պատերազմաց՝ և ոչ յաներեւելոյ,,։ (Սարպ. Շնորհ. Ա. Պետ. ճառ. ա. 1։ Ներ. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ա. 21. յեր. 34)։

Որ զՅեսու որդի Նաւեին,
Ընտրեալ իշխան յետ Մովսիսին,
Այն որ սնեալ ի խորանին,
Եւ ի լերինն էր ընդ նմին.
Ընուանակիրն աքանչելին,
Ընուանեղը քոմ փրկականի։
(Յիսուս որդի Ն՚ Ն)։

Հ.—Ո՞ւմ օրինակ են երկոքին լծանաքն, զորս առաքեաց Յեսու լծանալ զերկիրքով։

Պ.—Ընաքելոց և մարգարէից, զորս առաքեաց Մխածին Որդին Աստուծոյ նախ քան զգալուստ իւր յաշխարհ՝ առ ի լծանալ զանական երկիրս՝ զհոդիս մարդկան, և ծանուցանել զառաջին գալստինէն, ասելով. ‘‘Ինձէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր,,։ (Սազմոս. Հե, 6)։

‘‘Եւ գու Ռխէլ զհէմ, տուն Եփրաթայ, սահաւաւոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ լինձ լինել իշխան Իսրայելի, և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի,,։ (Միք. Ե. 2)։

‘‘Ընդ կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ,,։ (Եսայի. Է. 14)։

‘‘Եւ մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ՝ զոր դուքն ոչ գիտէք։ Որ զկնի իմ գալոցն էր՝ որ առաջի իմ եղև, որում չեմ արժանի, եթէ լուծից զերացս կօշկաց նորա,,։ (Յովհան. Ա. 26)։

Հ.—Ո՞ւմ օրանակ է Նախաբ պատնէիկ, առ որ օթևանս կայան լծանաքն։

Պ.—Մեղանչական բնութեանս, որ զմարդարէսն և զառաքեալս ունէր ի հողեղէն յարկս իւր. սակայն զնաց և պոռնկեցաւ ընդ սատանայի ի զանազան մեղս, ըստ այնմ. ‘‘Դատեցարուք ընդ մօր ձերում, դատեցարուք, զի նա ոչ է իմ կին, և ես ոչ եմ այր նորա. և բարձից զպոռնկութիւն նորա յերեսաց իմոց, և զշնութիւն նորա ի միջոյ սեանց իւրոց,,: (Ովս. Ր. 2: Եսայ. Ծ. 1: Դատ. Ր. 17):

‘‘Երդ պոռնիկա այս օրինակ էր եկեղեցւոյ հեթանոսաց, որ յԱստուծոյ ի բաց կալով պոռնկեցաւ իբազմաստուածութիւն կռապաշտութեան,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յակոբ. Ճառ. եօթներորդ. Բ. 25: Նկր. Շնորհ. ի Մեկ. Մատ. Ե. 5. յեր. 26):

Հ.—Ովքինչ է թագուցանել հնոջն զլըտեսն ի տանիս ընդ խրձամբ կտաւոյ:

Պ.—Տանիքն բարձրանիսա ցուցանէ զբարձրագոյն առաքինութիւնս սրբոյ՝, յորս թագուցեալ էր բնութիւնս մեղանչական. և նոքա փախուցեալ ի մահառիթ փառաց կենցաղոյս, գնացին ընդ ուղիղ ճանապարհ առ Տէր Աստուած, ըստ այնմ. ‘‘Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ, սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է,,: (Յովհ. ԺԷ. 16. 17):

‘‘Տեսէք՝ որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք և մեք: Վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ճանեաւ զնա,,: (Ա. Յովհ. Գ. 1):

‘‘Եւ թէ՝ սոքա ընտրեցան ի մարդկանէ առաջի Աստուծոյ և դատին: Եւ ի բերանս նոցա ո՛չ գտաւ սուտ. զի անբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ,,: (Յայտ. Ժդ. 4):

Հ.—Ովքինչ ցուցանէ ազատութեան նշանակ լարն կարմիր կապել ընդ պատուհանն:

Պ.—Օձարիւնն Յիսուսի Քրիստոսի հոսեալն ի պատուհանէ կողին. որ ապրեցոյց զի կողէն Ադամայ եղեալ բնութիւնս՝ զմարդարէս և զառաքեալս, որք իբր ի պատուհանէ չուեաւաւ ևկին յաշխարհս, որոյ փոխանակ, եղ ի կողէն Յիսուսի արիւն և ջուր՝ վասն կենդանութեան համայնից, ըստ այնմ. ‘‘Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս և ի եկեղեցի,,: (Եփեսացւոց. Ե. 32):

‘‘Եւ թէ՝ ի նորոց կատարանայ միջնորդն Յիսուս, և ի հեղումն արեան նորա. որ առաւել խօսի քան զԱբելին,,: (Եբրայեցւոց. Ժ-Ր. 24: Նկր. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ե. յեր. 27):

‘‘Եւ որպէս Նախաբ և առնայն տուն նորա ապրեցան նըշանաւ կարմրով, և ո՛չ կորեաւ ընդ անհաւատսն. այսպէս և եկեղեցի փրկեցաւ արեամբ միածնին յաստուածային սրոյ բարկութեան՝ որ յայտնելոցն է անհաւատիցն,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յակոբ. Ճառ. եօթներորդ. Բ. 25):

‘‘Օվ որպէս անդ ի կողէին Ադամայ շինեցաւ Եւայ՝ մարմին ի մարմնոյ նորա և ոսկր յոսկերաց նորա, այնպէս և եկեղեցի ի կողէ երկրորդն Ադամայ եղև Տէրն Քրիստոս. ըստ Յովհաննու թէ՝ որ ունի զՀարսն՝ նա է փեսայն. վասն որոյ թողեալ զՀայրն յերկինս՝ և զմայրն մերձ առ խաչին՝ չոգաւ ի մահ ի դժոխս, և շինեաց իւր մարմին և դշխոյ պանծալի զսուրբ զեկեղեցին,,: (Յովհ. Ոսկեբեր. ի Մեկն. Մատ. ԺԹ. 6. յեր. 400):

Հ.—Ո՞ւմ օրինակ է տապանակ ուխտին Տեառն, զոր բարձեալ տանէին քահանայքն և ղեւտացիք:

Պ.—Տիրածին սուրբ կուսին Մարիամու, սրբոյ եկեղեցւոյ և մարդկութեանն Քրիստոսի. որ զուգախառնեալ միաւորեցաւ անշփոթապէս, և ունի յերկուց անշփոթ խառնմանցն մի մարդ

կատարեալ և Աստուած ճշմարիտ. և շրջեալ ի վերայ երկրի ամս երիսուն, եկն ապա ի Յորդանան մկրտիլ ի Յովհաննէս յերիցուն. և եղեալ ի մարտ պատերազմի՝ սպան զվիշապն կամակոր. ուստի և զրե սրբազան աւետարանիչն։ ,,Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտիլ ի նմանէ,,։ (Մատ. Գ. 13)։

Եւ թէ՝ ,,Յաւուր յայնմիկ ածեցէ Աստուած զջուրն սուրբ և զհեծ և զհզօր ի վերայ վիշապին փախուցիչոյ, և ի վերայ վիշապ օձին կամակորի, և սպանցէ զվիշապն ի մէջ ծովուն,,։ (Եսայի. ԻԷ. 1)։

,,Որ զհոգիդ անապական տնօրինութեանդ քո ի սրբոյ կուսէն, տպաւորիլով առապանակին աստուածային ուխտի կաւակարանաց Բանիդ Աստուծոյ, փառաց անեղիդ տուր հանդաման,,։ (Ի Շարականի. կանոն սրբոյ Տապանակին.)։

,,Այսպէս և առնայն մարդ ասէ. որ բերկրի հոգւովն ի դրծոյս առաքինութեան՝ պարտական է սաղմոս ասել, կաքաւել և ծափս հարկանել հոգւով, և սաղմոսարանաւ ի պարս անցանել առաջի տապանակի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի,,։ (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Յակ. ճառ, մեռսասաներորդ. ե. 13)։

,,Իսկ առ ի միտս՝ քանզի Եդեմն առաջին երևնաւեայ լուսեղծեալ ընկալաւ զիչխանն հոգւոյն, և ո՛չ պահեաց. երկրորդ Եդեմն տէր, առեալ նորին բնութեամբ զհօմնեկի շնորհս յիջմանէ ՚ոգւոյն ի Յորդանան և ետ համօրէն ծննդոց նորին՝ աւազանին՝ վերստին ծննդեամբ. այլ յաղագս այսոցիկ պատճառաց՝ գայր ի Յորդանան մկրտել ի Յովհաննէ,,։ (Ներ. Շնորհ. ի Մեկն. Մատ. Գ. 13)։

,,Եւ դու մի միայն աստուածութեանդ փառք, այլ և տապանակաւ մարմնոյդ՝ որ երկրպագեցար Աստուած մի դովաբերկնաւորաց և երկրաւորաց, քանզի այդ է. որ սուրբ հա-

տապազ առնուլ մեզ զողորմութիւն, և դովաբ յաղթման և բեաց ՚օրդ՝ քահանայապետիս մեզ, և այս՝ թէ ոչը տագաւ. ինքն յայտ առնէ ասելով,,։ (Ներ. Լատ. ի Մեկն. պատարագի։ յերես. 3)։

,,Կանչի անդ՝ զԿրիտոս առապանակաւ մարմնոյն յարեցոյց առաջի ՚օրն. և կացուցեալ զնա յանդիման՝ խնդրեր վասն նորա ոչ դարձուցանել զերեսս, այլ զգեցուցանել երիցանցն գարդարութիւն,,։ (Նոյն անդ. յերես 5)։

՚.—Օ՞ր նշանակեր կանգնել Ջուրցն Յորդանանու ի մտանելն անդր քահանայից։

Պ.—Օ՛այն, զի յորժամ եկն Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի Յորդանան ի մկրտութիւն, տեսեալ զնա՝ սարսեցին Ջուրք գետոյն Յորդանանու. և յետս փախչելով վտակ առ վտակ պատդամաբար լինէր. թէ արարիչն եկեալ է և մկրտի, ըստ այնմ. ,,Օ՛րէ քեզ ծով, զո՞ տեսեր և փախեար. կամ դու Յորդանան, զի՞ դարձար անդրէն,,։ (Սաղմ. ՃԺԴ. 3. և 5)։

,,Յորդանան լուեալ փախստական դառնայր, վտակ առ վտակ պատդամաբար լինէր,,։ (Ներ. Շնորհ. ի տաղն Ջրօրհնութեան. և սաղմոսերգուն)։

Դարձեալ Եւ սաղմոսերգուն գաւթէ ասէր. ,,Ծով եւտես և փախեաւ, և Յորդանան անդրէն դարձաւ,,։ (Սաղմ. ՃԺԴ. 3)։

՚.—Օ՞ր նշանակեր միաս ունի Յորդանանու լցեալ գալն դարձիւ դարձիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ. և կալ Ջրոցն իջելոց ի վերուստ միաձոյլք անջրպետաձոյլք հեռացեալք յոյժ յոյժ։

Պ.—Ունի այս միաս զի մկրտեալքն ի սուրբ յաւազան լուացարանն մեղաց՝ սպիտակացեալ հօմնարփեան շնորհիւ ՚ոգւոյն սրբոյ՝ իբրև զցօրեան հնձեալ սուսերաբ՝ բանիւ և սիրովն Աստուծոյ՝ մշակութեամբ առաքելոց՝ և ոսկեձոյլ ձուլմամբ

ձուլեալ և վերացեալ յերկրէ յերկինս, բարձրացեալ ի դասակարգութիւնս հրեշտակաց, և համբարձեալ ի շահմարանս յաղթայութեան երկնից, պալակցեալ ցնծան ընդ նոսա. ըստ այնմ. ,,Ոչվէմն զոր եառս առաջի երեսաց Յեսուայ. ի վերայ վիմին եօթն աչք են,,: (Զաք. Գ. 9):

,,Այլ ևս չորք ամիսք են, և հունձք գան, ահաւասիկ ես ասեմ ձեզ. համբարձէք զաչս ձեր, և տեսէք զարտորայսն, զի սպիտակացեալ են՝ և ի հունձս հասեալ,,: (Յովհ. Դ. 35):

,,Դու որ հնձէն՝ վարձս առնուս, և ժողովէ զպտուղ ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէն՝ և որ հնձէ՝ հասարակ ցընծասցին,,: (Յովհ. Դ. 36: Ա Թես. Ե. 37: Ղուկ. Ժ. 2):

,,Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր,,: (Մատ. Ժ. 34):

,,Որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք ի նորոգութեան կենաց շրջեսցուք,,: (Հռոմ. Զ. 4):

,,Նորածնեալքս մկրտութեամբ սուրբ աւազանին, այսօր ծնանիմք ուրախութեամբ նշանաւ խաչի,,: (Ի Շարականի):

,,Որ արարչակից ես Հօր և Որդւոյ (Հոգիդ սուրբ), որով կենդանածնեալք ի ջուրս արարածք այսօր որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց,,: (Նոյն անդ):

,,Նովաւ այսինքն Հոգւովն սրբով աւազանն զմեզ վերստին ծնանի որդի Աստուծոյ. ազատելով ի մեղաց, և կենդանարծելով ի կեանս,,: (Ածսրով ի Մեկն. պատարագի):

,,Ո՛չ Յեսուայ՝ որ ի Յովսեդեկեայ, այլ Յիսուսի՝ որ ի Մարիամայ կուսէն, առաջի ընորհացն՝ որ հեղաւ ի նմանէ և լուսաւորեաց զմեզ, եղ առաջի հայր զկենդանի իւր զվէմն հաստատուն՝ որ յաղթող է դրանց դժոխոց, ի վերայ սորա եօթն աչք են, այսինքն՝ Հոգի սուրբ՝ որ էջն ի Յիսուս, և հանդեաւ ի վերայ նորա եկեղեցւոյ, հաստատեցաւ ի վերայ սիոնի եօթն

դօրութեամբ. որպէս ասաց՝ Հոգի Տեառն ի վերայ իմ. քանզի ի վերայ մեր եղև մարգարել նորա Հոգի սուրբ,,: (Ես. Ա. Ա. ի Մեկն. Օգաբարեայ. Գ. 9):

,,Որ զՅորդանանոյ ջրոյն սրաշարժ վայրեկութիւն, հրաշալոր անդրադարձութեամբ՝ ի յետնորդս հեթանոսաց լուսաւորեաց աւազանին՝ ի Թիւրքաստան առաքեցեր,,: (Նար. ԿԳ. 1):

,,Դու ապա զգեցուցանէ հանդերձ սպիտակ և նոր, և կապէ գինարօսն, և տայ զերկու վառեալ մոմեղէն ի ձեռն, և քահանայն ասէ. օրհնեալ ես բարեխնամող Աստուած, որ զգեցեր ծառայի քումմ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. և եդեր սաղաւարտ փրկութեան և պսակ շնորհաց ի գլուխս սորա և զէն անվթար ընդդէմ հակառակամարտին,,: (ի Մաշտոց):

—Հ.—Ո՞րպէս ցուցանէ իջանելն ջրոյն այնոցիկ՝ (որք իջանէին) ի ջուրն Ըրաթացւոց. և հասանել ի ծովն Ղզի, մինչև խափառ նուաղելով:

Պ.—Ղզի ծովն Ըրաթացւոց օրինակ է աղտաղտուկ մեղաց ծովու աշխարհիս. և դառնացեալ դժոխոց՝ բնակարանին սևադէմս այսոց չարաց դիւաց. իսկ ջուրքն որ իջին անդր՝ նշանակեն զմեզաւորսն զայնոսիկ զհեթանոսն, որ ոչ մկրտեալ ի մահն Քրիստոսի և ոչ դրօշմեալ ի քրիստոնէական անուն՝ անապաշխար իջին ի դժոխս պատապարտեալք մեղօք հնոյն Ադամայ. որք զրկեալ իսպառ յերանաւէտ տեսութենէ Աստուծոյ, տադռնապահ ի խղճէ մտաց, զարհուրեալ ի դիւաց, և յուսաթեկ լքեալք տանջին ընդ նոսա յաւիտենից. ըստ այնմ. ,,Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ. զի ծնեալն ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի է,,: (Յովհ. Գ. 5):

‘‘Որ ոչն հաւատայ դատապարտեսցի,,։ (Մարկ. Ժ.Ց. 16)։

‘‘Որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ կեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա,,։ (Յովհան. Գ. 36)։

‘‘Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն,,։ (Մատ. Է. 23։ Յովհ. Ծորբոր. ի Մեկն. Մատ. Գ. 19. յեր. 83)։

‘‘Որ թերահաւատէ Որդւոյ՝ ոչ տեսանէ կեանս յաւիտենից . . . այլ բարկութիւն Աստուծոյ ի վերայ նորա բնակեալ է,,։ (Գրիգ. Լուսաւորիչ. Ընդաթանգեղոս)։

Հ.—Ո՞րչափ են երկոտասան քարինքն զորս քարձին երկոտասան անձինք ի Յորդանանէ, և այլ և երկոտասան քարինքն զորս եդ անդ Յեսու։

Պ.—Երիստաս է հիմն և հիմնադիրք քրիստոնէական հաւատոց. և արքն երկոտասան են օրինակ երկոտասան առաքելոց Երիստասի. և քարինքն պատուականք օրինակ հանգանակի ուղղափառ հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ. ուստի և գրի, ‘‘Հիմն այլ ոք ոչ կարէ դնել (քրիստոնէական հաւատոյ) քան զեզեալն՝ որ է Յիսուս Երիստաս,,։ (Ա. Կորնթ. Գ. 11)։

‘‘Ամենայն հաւատոյ մերոյ հիմն հաստատուն և ճշմարիտ՝ է ինքն Տէրն մեր Յիսուս Երիստաս. և ի վերայ այսր վիմի հաստատեալ են հաւատք. և ի վերայ հաւատոյն՝ շինուածն մինչև ի կատարած իւր. բայց հիմն նա ինքն է ի սկզբանէ շինուածոյ ամենայնի,,։ (Յակ. Մծբնայ. Ճառ. Ը. վասն հաւատոյ)։

‘‘Եւ կանխեալ Մովսիսի ընդ առաւօտն՝ շինեաց սեղան ի ստորոտ լերինն. և երկոտասան վէմս կանգնեաց, ըստ երկոտասան ազգացն Իսրայելի,,։ (Ելից. ԻԴ. 4)։

‘‘Ո՞աշտեալ եմ ընդ քեզ առաւպիալդ և խախտիալդ, մինչև մխիթարեացիս. ահաւադիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո. և զհիմունս քո շափիղայ,,։ (Եսայի. ԾԴ. 11)։

‘‘Եւ հիմունք քաղաքի յամենայն ականց պատուականաց. հիմն առաջին պարսպին յասպիս, երկրորդն շափիղայ, երրորդն պղնձագոյն, չորրորդն զմրուխտ, հինգերորդն եղէգնաքար, վեցերորդն ածղիսն, եօթներորդն ոսկեքար, ութերորդն բիւրեղ, իններորդն ապազիոն, տասներորդն քրիսոպրասոս, մեասանն յակինթ, երկոտասանն ամեթիստ,,։ (Յայտ. ԻԱ. 19)։

‘‘Եւ հինն այնր քաղաքի՝ առաքեալք և մարգարէք, և շինուածք՝ դասք ամենայն արդարոց. նոքին դարձեալ՝ են և բնակիչք . . . ի այս քաղաք եկեղեցի՝ որ ի վերայ երկնային լերին հաստատեալ է, ոչ թաքչի. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն,,։ (Ներս. Շնորհ. ի Մեկն. Մատ. Ե. 16. յեր. 104)։

Հ.—Ո՞րչափ է զաղղաղայն, յորում կանդնեաց Յեսու զքարինսն։

Պ.—Ի կաթուղիկէ սուրբ եկեղեցին. զի Տէր Յիսուս ընկալեալ զդաւանութեան պետրոսի զինքն Որդի Աստուծոյ, ի վերայ այնր դաւանութեան հաստատեաց զեկեղեցի իւր, ըստ այնմ. ‘‘Դու ես վէմ. և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն,,։ (Մատ. Ժ.Ց. 18)։

‘‘Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտից միաձև, և իւրաքանչիւրոյն դրունք էին, մի մի դուռն՝ ի միոյ միոյ մարգարտէ, և ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս ապակի պայծառ,,։ (Յայտ. ԻԱ. 21)։

,,Եւ կանգնեցից զաշտարակս քո յասպիս, և դրունս քո յականց վանեաց՝ և ածից շուրջ զքեզ պարիսպ յընտիր ընտիր ականց պատուականաց,,: (Եսայի. ԽԴ. 12):

,,Որ օրինակ գոլ գերապանցութեան սրբոց առաքելոցն որք ի հողեղէն բնութենէս գոլով, դերակատար առաքինութեամբ քան զհրեղէնան գերապանցեցին նոքա. և քարինք սուրբք դոլով հաստատեալ ի վերայ վեմի. յորոց խորհուրդ դնեմք կոտսան վէմն ի հիմունս եկեղեցւոյ,,: (Յովհ. Ծործոր. ի Մ՚ին. Մաա. Ժ. 1. էր. 223):

Հ.—Ո՞վ է փակիլ և ամրանալն Երիքովէ յերեսաց յորդւոցն Իսրայելի:

Պ.—Երիքով է օրինակ դժոխոց. իսկ փակիլն և ամրանալն՝ բռնութեան սատանայի, որ յինքն ժողովեալ զնահապետս և զմարգարէս և զամենայն արդարս, յամառեալ մնայր յամբարտաւանութեան իւրոմէ. մինչև ելին Յիսուս, ետ պատերազմ և ոսպատակեալ պարտեաց զնա, ըստ այնմ. ,,Որ զպատուական պարիսպն Երիքովէ յօրինակ կործանման բռնութեանն սատանայի՝ իբր զթեթևութիւն յարգի ցնդեցոյց,,: (Նար. ԿԳ. 1):

,,Եւ նշանակաբար Երիքով է օրինակ դժոխոց՝ զոր քակեաց Յիսուս. այսպէս ի փրկչին ձայնէ՝ որ ի վերայ խաչին, քակտեցան յատակք դժոխոց և փշրեցան դրունք նորա խոնարհութեամբն և կուսութեամբն. որ և իջանելովն անդ բնական հոգւովն՝ զանտեալ հոգիսն առ ինքն ձգեաց,,: (Յովհ. Ծործոր. ի Մ՚ին. Մաա. Ի. 29. էր. 430.):

,,Որ լուծեր կենարար մահուամբ քո Տէր, զկրկնես մահու. իջանելով ի դժոխս՝ վերածեր ընդ քեզ զհոգիս արդարոց մարգարէիցն ի լոյն անաստուեր,,: (ի Շ՚արակ):

Հ.—Ո՞վ է տապանակաւ կործանիչն Երիքովի:

Պ.—Ի օրինակ կործանման դժոխոց ամենազօր խաչիւն Քրիստոսի. յորոյ վերայ բարձրացեալ մարմնով՝ մեռաւ. և հոգւովն իջեալ ի դժոխս, պատեաց զնովաւ և աւերեալ քանդեաց զայն, ըստ այնմ. ,,Որ ի կեանս վերադարձի բնութեանըս դարձմամբն Յորդանանու օրինակեցեր. և զբռնութիւն մահու և դժոխոց կործանմամբն Երիքովի տապանակաւ խաչին հրաշագործեալ նոր Իսրայելի,,: (ի Շ՚արականի):

,,Ինքանելով քո ի դժոխս գերապանծ իշխանութեամբ՝ յաղթեցեր մահու հզօր զօրութեամբ՝ կենագործելով զմբռնեալսն առ ի նմանէ,,: (Նոյն անդ):

,,Օխասչեցելոյն՝ պատմեսցուք զքաջութիւն, որ գոչմամբ ձայնի զպատերազմի չարին վանեաց, և մահուամբ զմահացեալսըն կենագործեաց. զիջելոցն ի դժոխս վերածեաց զհոգիսն,,: (Նոյն անդ):

Հ.—Ո՞վ ցուցանէ ազատութիւնն Ռահաբ պոռնկին Երիքովէ:

Պ.—Ազատութիւն մարդկայինս բնութեան ի դժոխոց՝ արեամն Յիսուսի, ըստ այնմ. ,,Ո՞վ Տէր է՝ որ առնէ քեզ զայդ, Տէր սարաւօթ անուն նորա, և որ փրկեաց զքեզ, նոյն Ընտրեաց Իսրայելի ամենայն երկրի կոչեսցի,,: (Եսայի. ԽԴ. 5):

,,Ո՛չ իբրև եթէ իբրև զկին մի լքեալ տարակուսեալ կոչեաց զքեզ Տէր. և ոչ իբրև զկին մի ատելի ի մանկութենէ,,: (Նոյն անդ. ԽԴ. 6):

,,Եւ թէ՝ լուացի զքեզ ջրովք քաւմամբ. և օծի զքեզ քեզ իւղով. և զգեցուցի պէս պէս, և ոտուցի քեզ գիրկ նապոյնն, և ածի ընդ մէջ քո բիհեզ, և արկի զքեզ անդուս,,: (Եզեկիէլ. ԺԶ. 9):

,,Բրովբէական կառօքն սաւրիջեալ ի դժոխս, կենագործեաց հզօրն զգեցեալ զերան արդարոյ,,: (Ի Շ՚արականի):

«Որ փոխանակ մեղուորաց զմեռանիլ յանձն առնէր, ի՛ջա-
նելով ի դժոխս՝ փրկեցեր ի մեղսասէր բանտէն զգերեալսն»։
(Ղոյն անդ)։

«Որում սպասէին արդեւնալքն ի մեղսասէր բանտին աղա-
տեցուցիչ յուսոյ գալստեան Աստուածորդւոյն ի յերկինից»։
(Ղոյն անդ)։

«Ի սանդարամետս ընդ կապանօք մահու դնէին նախ քան
զգալուստն Քրիստոսի, և ձեռին նորա փրկագործ գալստեանն՝
արդեւնալք ի ձանապարհէ դրախտին վասն յանցանացդ Ադա-
մայ»։ (Ասեռիանոս. ի հաւաքմունս մեկն. պատմ.)։

Հ.—Ո՞վ է յանձնեալն զժառանգութիւն ձեացեալ վի-
ճակաց որդւոցն Իսրայելի՝ դատաւորաց յետ ինքեան։

Պ.—Ոչ այն, զի յորժամ հանդերձեալ էր Քիստոս համա-
բառնալ յերկինս յաթոռ աստուածութեան իւրոյ, զառաք-
եալսն կացոյց իշխան և դատաւոր ի վերայ արեւմտից գնեալ
հօտի իւրոյ, և պատուիրեաց նոցա մկրտել զհեթանոսս յա-
նուն սրբոյ Երրորդութեան և առնել զնոսա ժառանգս արքա-
յութեան երկնից, ասելով. «Ա՛կրտեցէք զնոսա յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն՝
զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա-
մենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»։ (Մատ. ԻԸ.
20)։

Եւ թէ՝ «Յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց
իւրոյ, նստջիք և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկո-
տասան ազգն Իսրայելի»։ (Մատ. Ի֊Թ. 28)։

«Եւ իբրև ձաշեցին. ասէ ցՍիմոն Պետրոս Քիստոս. Սիմոն
Յովհաննու, սիրես զիս առաւել քան զդոսա. ասէ ցնա. այո
Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա զոչ
գառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա. Սիմոն Յովհաննու, սիրես զիս.

ասէ ցնա՝ այո Տէր և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ։ ասէ ցնա՝
արածեա զոչխարս իմ. ասէ ցնա երիցս անգամ, Սիմոն Յով-
հաննու սիրես զիս. տրտմեցաւ Պետրոս. զի ասացն ցնա երիցս՝
թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես և դու
գիտես՝ զի սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս. արածեա զոչխարս իմ»։ (Յովհաննու. ԻԸ. 15–17)։

«Ա՛ստի կալայց ի յանկղծութիւն փրկութեան ածնեցեալ
յուսոյն ընդ առաջնորդացն կինաց, ակզբնաշնորհիցն պատուոյս՝
փառաւորեալն դասուց, գեղոյն բանականաց, աւետարանչացն
բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագա-
պճնելոցն, ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծա-
ռացելոց, իւրովն զուարթութեան տեղական լուսոյն կատարե-
լոց»։ (Նարեկ. ՁՐ. 2)։

«Որ տիրականդ իշխանութեան հաղորդս արարեր զսուրբ
զառաքեալսն, կապել և արձակել զորդիս մարդկան յերկինս և
յերկրի. և աթոռակից լինել քեզ խոստացար յորժամ նստիս
յաթոռ դատողական»։ (Ի Շարականի)։

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Դա–ԼԸ արժայ Իսրայէլ.

Հ.—Ո՞վ փոխանակ Սաւուղայ կացուցին թագաւոր ի վե-
րայ Իսրայելի։

Պ.—Ոչ կրտսեր որդին Յեսսեայ զԴաւիթ. որ արածէր զխա-
շինս հօր իւրոյ։

Հ.—Ո՞ր աստուածաբանի Դաւիթ անուն։

Պ.—Առաքեանաձիոն, կամ սիրելեաւ։

Հ.—Որո՞ւ ձեռն օծաւ նա ի թագաւոր։

Պ.—Ի ձեռն Սամուէլի ամէնքին Մարգարէից: (Ա. Թագ. Ժ.Ջ. 1):

Ա.—Չիա՞րդ եղև օծումն նորա:

Պ.—Տեսեալ Սամուէլի զորդիսն Յեսսեայ, եհարց. այդէ՞պ են քո մանկունք. և իբրև լուաւ թէ ի միւս ևս փոքրիկ, որ արածէ զխաշինս, առաքեաց կոչեաց զնա. և նա էր գեղեցիկ աչօք և բարեձև տեսլեամբ: Եւ ասէ Տէր ցՍամուէլ. արի՛ և օծ զԴաւիթ, զի դա է բարի. և էառ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, և էօծ զնա ի թագաւոր. և խազաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ. և յարուաւ Սամուէլ և գնաց յՐամաթեմ: (Ա. Թագ, Ժ.Ջ. 11. 12. 13):

Ա.—Յետ օծմանն առ ո՞ առաքեցաւ Դաւիթ:

Պ.—Նաւ Յեսսէ արդու մի հացի, և սիկ մի գինւոյ, և զուլ մի յայծեաց. և առաքեաց ի ձեռն Դաւթի առ Սաւուղ. և եմուտ Դաւիթ առ Սաւուղ, և կայր ի սպասու առաջի նորա. և սիրեաց զնա յոյժ Սաւուղ, և արար իւր կապարճակիր: (Ա. Թագ. Ժ.Ջ. 20. 21):

Ա.—Ընդ կենդանութեամբն Սաւուղայ զի՞նչ գործէին այլազգիքն ընդ Իսրայէլացիսն:

Պ.—Ժողովեալ ի պատերազմ ընդդէմ Իսրայէլի, գումարեցան ի Սոկքով Հրէաստանի, և բանակեցան ընդ Սոկքով և ընդ Ազեկայ յԱփեսդոմմին. իսկ Սաւուղ և արք Իսրայէլի բանակեցան ի հովիտսն, և ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն: Այլազգիքն կացին ի մի կողմն լերին, և Իսրայէլ ի միւսն. և հովիտն ի մէջ նոցա: (Ա. Թագ. Ժ.Ի. 1.—3):

Ա.—Ո՞ր նախ եղ ի ճակատէ այլազգեացն, և անարգեաց զճակատն Աստուծոյ:

Պ.—Գողիաթ անուն այր ոմն զօրաւոր և հուժկու ի Գեթայ. որոյ բարձրութիւն էր վեց կանգուն և թզաւ, և ունէր սաղաւարտ ի գլուխն, զրնգեալ էր զրահս վերտս, և կշիռ զրահիցն էր հինգ հազար սիկղ պղնձոյ և երկաթոյ. և առնապանք պղնձիք ի վերայ բարձից նորա, և վահան պղնձի ի վերայ թիկանց նորա, և բուն գեղարդեան նորա իբրև զաստիճան ոստայնանկաց, և տեգ նորա ի վեց հարիւր սիկղ երկաթոյ, և զինակիրն նորա առաջի նորա երթայր,,: (Ա. Թագ. Ժ.Ի. 4—7):

Ա.—Որպիսի՞ ամբարտաւանութեամբ անարգէր նա զԻսրաէլ:

Պ.—Եւ հանդէպ Իսրայէլի, և ասէ. ընդէ՞ր ելանէք ճակատիլ ի պատերազմ ընդ մեզ. ո՞չ ապաքէն ես այլազգի եմ. և դուք Եբրայեցիք ծառայք Սաւուղայ. ընտրեցէք դուք ձեզայր մի, և իջցէ առ իս. եթէ կարիցէ կռուիլ ընդ իս և հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ծառայք. ապա եթէ ես յաղթեցից և հարից զնա, դուք եղերուք մեզ ի ծառայս: Ընդ ես նախատեցի զճակատն Իսրայէլի յաւուր յայսմիկ: (Ա. Թագ. Ժ.Ի. 8—10):

Ա.—Ո՞վ եղ և ճակատեցաւ Իսրայելացւոց ընդդէմ այլազգւոյն այնմիկ:

Պ.—Դաւիթ որդի Յեսսեայ, որ հրամանաւ հօրն կանխեալ ընդ առաւօտն, եթող զոչխարսն և գնաց ի ճակատ պատերազմի ընդդէմ այլազգւոյն: (Ա. Թագ. Ժ.Ի. 12—20):

Ա.—Ո՞վ ինչ խոստացան առ Դաւթի, եթէ հարկանիցէ զայլազգին:

Պ.—Խոստացան և ասեն, եթէ ոք սպանանիցէ զայլազգին զայն, մեծացուսցէ զնա արքայ յոյժ, և զդուստր իւր տացէ նմա ի կնութիւն, և զտուն հօր նորա արասցէ ազատ ի մէջ Իսրաէլի: (Ա. Թագ. Ժ.Ի. 25):

Ա.—Որպիսի՞ զրահս զգեցուցին Դաւթի առ ի պատերազմել:

պ.—Ովարապանակս Սաուղայ. և զսպազաւարան պղնձի եդին ի գլուխ նորա. այլ ի գնալն իւրև գթեաց երկիցս և երիցս. ընկէց զղբահսն, էառ զյուսպ իւր ի ձեռին, ընտրեաց և զհինգ քարինս ողորկս ի հեղեղատէն, և եդ ի մախաղն իւր հովուական. էառ ի ձեռին և զպարսատիկն, և նոքօք մերձեցաւ առ այրն սյլազդի: (Ա. Թագ. ԺԷ. 38—40):

Հ.—Յորժամ ետես սյլազդին զԴաւիթ, զի՞նչ արար:

պ.—Ճրջնալ այսր անդր՝ մերձեցաւ առ Դաւիթ մռնչելով. և տեսեալ զնա մանուկ խարտիշագեղ և չքնաղ, արհամարհեաց զնա յոյժ: (Ա. Թագ. ԺԷ. 22):

Հ.—Ովի՞նչ գործեաց յայնժամ Դաւիթ:

պ.—Զգեաց զձեռն իւր ի մախաղն, էառ անտի զքար մի, եդ ի պարան, և հկաւ զսյլազդին ընդ ճակատն. էանց քարն նոյն հետայն ընդ սպազաւարան և թափանցեաց ի ճակատն. և անկաւ սյլազդին ի վերայ երեսաց իւրոց յերկիր, զոր տեսեալ Դաւիթ՝ զօրացաւ, և ի վերայ հասեալ՝ էառ զսուր նորին, և այնու սպան զհսկայն ամբարտաւան: (Ա. Թագ. ԺԷ. 49—51):

Հ.—Ոչ այն տեսեալ սյլազդեաց զի՞նչ արարին:

պ.—Իբրև տեսին, թէ մեռաւ զօրավար իւրեանց, փախան զարհուրեալ և ահաբեկ. որոց զհետ մտեալ արք Յուդայ, կոտորեցին զնոսա մինչև ի դրունս Ակարոնի չարաչար յոյժ, և դարձան աւարառ բանակին. իսկ զգլուխ սյլազդոյն առեալ Դաւիթ՝ եբեր Յերուսաղէմ, և զզէնս նորին եդ յապարանս իւր: (Ա. Թագ. ԺԷ. 52—54):

ՄԻՆՈՒԼԱՆ.

Հ.—Ո՞ւմ օրինակ է Դաւիթ:

պ.—Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ, որ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, ծնաւ վերստին յարմատոյն Յեսսեայ առիւծ և կորիւն առիւծու, ըստ գուշակութեան Յակոբայ նահապետի. թէ "Կորիւն առիւծու Յուդայ. ի շառաւիղէ եղեր որդեակ իմ, եղեր բազմեցար. ննջեցեր իբրև զառիւծ. և իբրև զկորիւն առիւծու. ո՞ յարուցանիցէ զքեզ,,: (Ծննդ. ԽԹ. 9: Ր. Օրին. ԺԸ. 18: Դան. Թ. 24):

Եւ ըստ Դաւթի, թէ "Տէր ասաց ցիս որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ,,: (Սաղմ. Բ. 7):

"Դաւիթ անուամբ՝ զորդին Դաւթի կոչեմք զՅիսուս, որ Թագաւորեաց ի վերայ տանն նորա ի յաւիտեան, և խնդրեաց ի նմանէ զհնձանոս ի ժառանգութիւն, յորժամ ծնաւ այսօր ըստ մարմնոյ,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. Պատար. յեր. 1):

"Սինեն (այսինքն Դաւիթ) իբրև զթագաւոր և առաջնորդ ժողովրդեան և նահապետ ըստ մարմնոյ գալատեանն Քրիստոսի. և միւսն (այսինքն Քրիստոս) իբրև զՏէր և փրկիչ. որոյ եղբայրքն զվայելչական օրհնութիւնս երգէին ի գալատեան նորա յաւանակաւ Յերուսաղէմ. և մշտնջենաւոր երկիրպագանեն նմա՝ ոչ միայն որդիք հօր նորա՝ որք ի Հրէից, այլ և յամենայն ստեղծուածոց զերկրպագութիւն առնու ի սերովբէից և ի քերովբէից,,: (Սարգ. Ճնորհ. Ա. Պետ. ձառ չորրորդ. է. 9):

"Օի է զօրութեամբն թագաւորական՝ ի դէմս Քրիստոսի առեալ. եղեր ասէ՝ բազմեցար ննջեցեր իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու. և ո՞վ է՝ որ զարթուցանէ զքեզ,,: (Նոյն անդ. ձառ. երկրտասաներորդ. է. 8):

Հ.—Որո՞մ օրինակ է թագաւորութիւնն Դաւթի:

պ.—Ընտանեաց թագաւորութեանն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ՝ որ յարեաւ ի բնութենէս. և մարդացեալ աստուածութեամբն թագաւորեաց երկնի և երկրի, տանս Յակոբայ. ըստ այնմ. "Ընդ այնմ աւուրք գան ասէ Տէր, և յարուցից

Դաւթի ծագումն արդարութեան, և թագաւորեսցէ թագաւոր, և իմաստասցի և արասցէ իրաւունս և արդարութիւն, ի վերայ երկրի,,: (Երեմ. ԻԳ. 5):

Նա թէ՝ ,,Ելից հարկեսցին Տեառն Աստուծոյ իւրեանց, և զԴաւիթ արքայ իւրեանց յարուցից նոցա,,: (Նոյն անդ. Լ. 9: Նահայի. Գ. 2. Ժ. 11: Դան. Բ. 14: Զաքար. Ը. 32):

,,Օրհնացարուն Աբրահամ բարեբանեցէք՝ որ ի յանձն էառ զմահ խաչի, և խափանեաց զմահու թագաւորութիւնն: Նա ինքնիշխանութեամբ յարուցեալ՝ զմահու ելոյծ զիշխանութիւն,,: (Ի Շարականի):

Ը.—Օ՛ի՞նչ ցուցանէ հովուութիւնն Դաւթի:

Պ.—Ցուցանէ զքաջ հովուութիւն հովուապետին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ հովուեաց զմեզ զբանաւոր հօտս յարօտս աստուածային բանից և ճշմարիտն աստուածաճաճանութեան, ըստ այնմ. ,,Ես կացուցից ի վերայ նոցա հովիւ մի, զծառայ իմ զԴաւիթ. և նա հովուեսցէ զնոսա. նա եղիցի նոցա հովիւ. և ես Տէր եղէց նոցա յԱստուած. և Դաւիթ ծառայ իմ իշխան ի մէջ նոցա. ես Տէր խօսեցայ,,: (Եզեկիել. ԼԴ. 23. ԼԵ. 24: Նահայ. Ժ. 11:

,,Ես յիս այնորիկ գնձեցին զարդիւքն Իսրայէլի. և խնդրեսցին զՏէր Աստուած իւրեանց. և զԴաւիթ արքայ իւրեանց. և զօրասցին ի Տէր՝ և ի բարութիւնս նորա յաւուրս վախճանի,,: (Ովս. Գ. 5: Յովհ. Ժ. 11):

,,Օ՛ի զոր մարգարէքն ամենայն և մկրտիչն Յովհաննէս հովիւ և ուխտ և զառն անուանեցին, տեսեալ զհեզութիւն նորա և զանբարկանալի բնութիւնն, զայն առեալ պօզոս՝ քահանայապետ և պատարագ և խորան և վարագոյր անուանէ. զներգործութիւն անօրէնութեանն յանդիման կացուցանելով. վասն զի հանդերձեալ էր Տէրն մեր վասն մեր չարչարիլ և մեռանիլ՝ և զարիւն իւր հեղուլ,,: (Մարգ. Շնորհ. Ը. պետ. ձառ. երրորդ. ա. 19):

,,Երկնաւոր հօտս ընտրեալ. զոր հովիւն քաջ թողեալ յերկինս՝ և եկեալ ի խնդիր մեզ մոլորելոցս. որով լցեալ զթիւ հարիւրոցդ՝ արար ուրախութիւն ի յերկինս երկնաւորացդ, ազաչեմք,,: (Ի Շարականի):

,,Հովիւն երկնաւոր եկն խնդրել զոչխարն մոլորեալ ի վերայ լերին բարձու. և առեալ զնա եդ ի վերայ կինասրեր ուսոյն իւրոյ. դարձուցանելով ի հայրենի բնակութիւնն, ուսոփ արտաքսացաւն արդարութեամբ. և զանիծիչն և զցաւոցն ելոյծ զպատասխանութիւն իւրով անպատժապարտ մահուամբ,,: (Ակաթիստ. յաղօթս յարձակումն ապաշխարողաց):

,,Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յաւիտենական, նոյնպէս և այլ արժան բանաւոր հօտի քո. զոր ժողովիցեր առ քեզ զթութեամբ քով,,: (Ի Յոհաննէսէ):

,,Ընդ այն թէ նա քահանայապետ է մեր, յայտ է՝ թէ մեք ժողովրդ նորա ենք. եթէ նա հովիւ քաջ է, որ եդ զանձն ի վերայ հօտիս. մեք հօտ ենք՝ և խաչն արօտի նորա: Այլ զի՞նչ է ասելն մեք ժողովուրդք նորա՝ ոչ վայրապար. այլ և խաչն արօտի նորա. արօտ՝ մեզ դնէ զաստուածաշունչ բանս գրոց սրբոց. որովք միշտ կերակրին զհոգիս մեր հոգին սուրբք. ըստ որում և այլուր ասէ. Սա ի վայրի գալարաւոջ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս,,: (Մաղմ ԻԳ. 2. Նկր. Լամբ. ի Մեկն. պատարագի. էրես 44):

Ը.—Ո՞ւմ օրինակ է մատրարէն Սամուէլ, որ էօճ գԴաւիթ:

Պ.—Յովհաննու Մկրտչի, որ ձեռնադրեաց զՔրիստոս ի յորդանան Յորդանանու՝ ըստ Աւետարանական անուաւ պատմութեան, թէ՝ ,,Ես եղև յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի

Նազարեթէ Գալիլեացւոց. և մկրատցաւ ի Յովհաննէ ի Յորդանան (գետ),,: (Մատ. Գ. 11: Մարկ. Ա. 9):

,,Որ յանապատէ կոչեցար ի Տեառնէ մկրտել զբոլորից բարձողն մեզաց,,: (ի Հարականի):

,,Յոր վիցթէևան սերովբէքն ոչ իշխէին հայել ի փառս քո Քրիստոս, սա արժանապէս ձեռնադրեաց զքեզ ի յորձանսն Յորդանանու,,: (Նոյն անդ):

Հ.—Ովքինչ ցուցանէ փոքրկութիւնն Դաւթի յիղբարս իւր:

Պ.—Ցուցանէ զժամանակաւ փոքր համարիլն Յիսուսի Քրիստոսի առ մարդկութեանս ի մէջ եղբարց իւրոց. այլ աստուածութեամբն է յառաջ քան զամենայն, ըստ այնմ. ,,Ելից անուն Տեառն օրհնեալ զի յառաջ քան զարև է անուն նորա,,: (Սաղմ. Ճ. 17):

Եւ թէ՝ ,,Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեանց. ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսակ ծնայ զքեզ,,: (Նոյն անդ. ՁԸ. 28. ՃԾ. 3):

,,Օ՜ի որպէս զերախտաւոր բնութիւնն խոնարհեցաւ ի մերս, զի զմեզ բարձրացուսցէ. և լցուցիչն ամենայնի թափեցաւ յիւրոցն փառաց առ փոքր մի, զի զմերս ունայնութիւն լցցէ ի լրութենէ իւրմէ,,: (Ներ. Հնորհ. ի Թուղթն առ Մանուէլ կայսր. յերես 90):

,,Օ՜ի նչ այլ նմա վայելչութիւն և փառք, բայց եթէ ամենասուրբ մարմինն միացեալ ընդ աստուածութեան՝ զոր զգեցաւ. յորժամ կամեցաւ ոիրել ի վերայ աշխարհի իրաւամբք. և վայելչացաւ և շքեղացաւ, փոքր ի խոնարհեալ քան ըզհրեշտակս Յիսուս իւրով նուաստանալովն,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յերես. 18):

,,Պակաս նմանեալ Քրիստոսի խոնարհութեամբ, որպէս նա՝ ի մարդկութեան փոքր մի խոնարհեցաւ քան զհրեշտակսն,,: (Նոյն անդ):

Հ.—Ովքինչ է եղջերբ իւղոյ օծանելին Դաւթի որդւոյ Յեսսեայ, և յօրէ անտի խաղայր Հոգւոյն ի վերայ նորա:

Պ.—Ի օրինակ օծութեան Խանին Աստուծոյ, որ յարգանդի կուսին մարդացեալ՝ օծաւ ի Հօրէ Աստուծոյ Հոգւովն սրբով, և զՔրիստոսն անուն ժառանգեաց՝ որ է Օծեալ. և ի Յորդանան՝ իջմամբ փառակցին ի վերայ նորա, ըստ այնմ. ,,Գտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա,,: (Սաղմ. ՁԸ. 21):

Եւ թէ՝ ,,Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զերկնալս սրտիւք, քարոզել գերելոց զթողութիւն, և կուրաց տեսանել,,: (Ներս. ԿԸ. 1: Ումվս. Գ. 13: Դան. Թ. 25: Համբով ի Մեկն. Ժամակարգ.):

,,Տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ ի յօծմանէ անտի (այսինքն յիւր մկրտութեան) սկսար քարոզել զաւետարանն արքայութեան վկայեալ անդրստա ի Յովհաննէ՝ օծեալ և գաւաճ Աստուծոյ բարձող մեղաց աշխարհի,,: (Ներ. Գ. 7):

,,Ո՞վ կայեաց Հոգին որ հանդիաւ ի վերայ նորա ի մկրտել նորա՝ թէ նա է Հովիւ, զի ընկալաւ նա ի ձեռն Յովհաննու զքահանայութիւն, զարքայութիւն (իմա՝ զթագաւորութիւն) և զմարգարէութիւն,,: (Նփրեմ. ի Մեկն. աւետ. համաբարբ. չորրորդ. գլ.):

,,Ընկալիցէն Խանդ Հօր, ի վախճան աւուրցս խոնարհեցաւ և առեր զկերպարանս ծառայի՝ իբրև զմարդ գտանել, եկիր մկրտել ի Յովհաննէ. և Հոգւով օծեալ՝ վկայեցար ի Հօրէ՝ դա է որդի իմ սիրելի,,: (ի Մեծ Աշխոցի):

,, Պարձեալ և զայս մի ոք ապիտասցի, թէ նոյն ինքն զՊԸ-
բիստոսն (զօծեալն) անուն՝ Տէրն մեր՝ ՚ոչ ոյլոյն սեպհակա-
նեաց ներգործութեամբ, որ եկացն ի վերայ նորին մարմնոյ ի
Յորդանան,,: (Նկր. Լատ. ի Մ ևին. պատարագի):

,, Տէր անուն՝ հասարակ է ընդ ՚օր իւրում. զի ամէն ամե-
նայնի իբրև զհայր, յայտ է զի իւրոցն արարածոց. քանզի առ-
նէր և նա ընդ ՚օր իւրում յամենայնի, ըստ որում էրն միշտ
անժամանակ. և ի վեր քան զսկիզբն ամենայնի: Իսկ Յիսուսն
անուն՝ փրկութեան և ազատարար զօրութեան, և Քրիստոսն՝
օծութեան և միւռոնութեանս, որք անօրէնութեանս վերջնոյ
պատշաճին: Նա զի նորա են սեպհական և այսոքիկ, և նախա-
ծանօթ մեզ ազգակցաբար. և ի կանուխ գիտութեանն Ա-
ստուծոյ ՚օր նկարագրեալ անորոշաբար ի սկզբանս շարագասին
ի յայանութեան անձնաւորութեան որդւոյ. յորժամ ասէն,,:
(Նոյն անդ. յերես 53):

՚.—Օ՞րինչ է առաքինին Յեսսեայ առ Սաւուղ ի ձեռն
Դաւթի զարդու մի հացի. և սիկ մի գինւոյ:

Պ.—Սաւուղ է օրինակ մարդկայինս բնութեան. և արդուն
հացի և սիկն գինւոյ է բանն աստուածային, որ ի ձեռն Յի-
սուսի քարոզեցաւ մարդկութեանն, և լցոյց զսիրելսն հոգևոր
ուրախութեամբք, ըստ այնմ. ,, Օ՜ի ուսանիցին որդիքն ք՝
զորս դու սիրեցիր՝ Տէր, եթէ ոչ արալք արմատաց կերակրեն
զմարդ, այլ ք՝ բանն զհաւատացեալսն ի քեզ պահէ,,: (Ի-
մաստութիւն. ժ.Օ. 26):

,, Ծանի՛ր ո՛րչափ առի վան ք՝ նախատինս յարհամար-
հողաց բանից քոց, վախճանեա զնոսա. և եղիցի բան ք՝ լինի
յուրախութիւն՝ և ցնծութիւն սրտի իմոյ. զի կոչեցեալ է ա-
նուն ք՝ ի վերայ իմ Տ՛ր Ամենակալ,,: (Երեմ.
ժ.Ե. 16: Ր. օրին. Ը. 3. Ղուկ. Գ. 4. Մատ. Գ. 4):

,, Օ՜ր վան սննդատուր զօրութեանն և կատարելագործ ի-
մաստութեանն՝ կաթն և մեղր անուանեաց. և ասա ճաշ կոչէ.
որում ըղձացաւ տարփող հոգին, թէ՝ երանի որ կերիցէ ճաշ
յարքայութեան Ամենակալ,,: (Յովհ. Ծորձոր. ի Մ ևին.
Մատ. ԻՐ. 4. յեր. 466):

,, Նա ոչ այնոքիկ էցեն, ո՛չ միայն այնք զոր խօսեցաւ
Ամենաճ ընդ Մովսիսի, և ընդ այլս ի մարգարէիցն, կամ զոր
Բանն Աստուծոյ յաշխարհի, այլև ամենայն գիրք՝ որ զպատու-
էիրանս Աստուծոյ ուսուցանեն մարդկան, Աստուծոյ են բանք.
և եթէ այլն. ո՛րչափ և աւետարանեն ինքնախօսութեան բանք.
Նկր. Հ՚նորհ. ի Մ ևին. Մատ. Գ. 4. յերես. 73):

,, Ընօտ մեզ գնէ զաստուածաշունչ բանս գրոց սրբոց. ո-
րովք միշտ կերակրեն զհոգիս մեր հարքն սուրբք . . . Օ՜ի այս
խաշլին՝ բանական բնութեանս՝ չէք այլ ինչ սեպհական արօտ,
քան համաբուն նորին՝ բանն և իմաստութիւն,,: (Նկր.
Լատ. ի Մ ևին. Պատ. յերես. 44, 45):

՚.—Օ՞րինչ ցուցանէ ժողովել այլազգեացն ի Սոկքով
՚բէաստանի՝ և տալ պատերազմ ընդ Իսրայէլի:

Պ.—Սոկքով նշանակէ զներքին կողմն երկնից. և այլազգի-
քըն՝ զգունդս չարաց, որք յորժամ տեսին զանկանգնելի ան-
կուճն իւրեանց, սկսան նախանձել ընդ աստուածատուր փառս
մարդկան և պատերազմել ընդ նոսա. յորոց զգուշացուցանէ
զմեզ բանն առաքելական, թէ. ,, Օ՜ի ոչէ մեզ պատերազմ ընդ
մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պե-
տութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս
չարութեան՝ որ ի ներքոյ երկնից,,: (Ւփես. Օ. 12: Ր.
Կորնթ. ժ. 4: ՚ռոմ. ժԳ. 12):

,, Նա թէ՝ ևս ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատե-
րազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս

Ըստուծոյ, և ունէին զվկայութիւնն Յիսուսի ,, : (Յայտ. Ի՚. 17):

,,Օ,ի թէպէտև պատերազմն սաստիկ է, սակայն մի՛ դանդիւռեսցուք. զի թէպէտ և դարանակալութիւն թշնամւոյն պէ՛սպէս են՝ և զանազան, սակայն մեք մի՛ երկիցուք գնալ ի մէջ նոցա՝ իմաստութեամբ. զի թէպէտև նա նենգաւո՛ր է և բազմուռնի և անելոյթ և անմարմին, սակայն մեք մի՛ սարսեսցուք կոխել զգլուխն նորա Երրորդութեամբն պարսպեալք ,, : (Սարգ. Ը՚նորհ. ի Ա՚ԵԿն. Յակոբ. ճառ, հինգերորդ. ա. 27. յորդորբակ):

Ը՚. – Օ,ի՞նչ է ժողովրդն Իսրայելացւոց ի հովիտն:

Պ.—Ը՚ովիտն է օրինակ արտաքին կենցաղոյս, յորում բըռնակեալ են որդիք մարդկան ի ցաւս և ի արտմութիւնս և ի հեծութիւնս. արտաքոյ մարթ՝ և ի ներքոյ արհաւիրք. յորմէ աղաղակէ մարգարէն ելանել և մտանել ի հանգիստն. ըստ այնմ. ,, Երանեալ է այր. որոյ օգնութիւն իւր ի քէն է. և ել եդ մտի իւրում ի հովտէս արտմութեան ի տեղւոջ՝ յորում ուխտաց ,, : (Սաղմ. ՀԳ՚. 6: Ածաք. ԻԳ՚. 13. Նար. Ը՚Ր. 3. Վ՚արդ. ի Ա՚ԵԿն. Սաղմ. ՀԳ՚. 6):

,,Վ՚ասն զի անթիւք են արտեցուցիչքն՝ և պէսպէս պատճառք պանդխտութեան. որ ի ներքո՛ւստ՝ և որ արտաքուստ վշտացուցանեն զմեզ. զոր և Պօղոսի յայտ արարեալ՝ ասաց. արտաքո՛ւստ մարթք, և ի ներքո՛ւստ արհաւիրք ,, : (Սարգ. Ը՚նորհ. ի Ա՚ԵԿն. Ը՚. Պետ. ճառ, երրորդ. ա. 17):

,,Պատ՝ զօտարութիւն սրբոց ասէ՝ ի կենցաղոյս իրաց. քանզի դիպուած վարկան զնոքեանց գալն յաշխարհս, և ո՛չ սնպհական տեղի ,, : (Յովհ. Ծորճոր. ի Ա՚ԵԿն. Ա՚ատ. ԻԱ՚, 3):

,,Թագաւորին երկնից զննուար արքայութեանն աւետաւոր, խնդրեա դնել կս ի սրտի՝ առ ի հովտէս արտմականէ՝ յուխտառեալ տեղին տէրունական՝ ի խոստացեալն որդւոց մարդկան ,, : (ի Ը՚արականի: Խոսրով ի Ա՚ԵԿն. Ծամակ. յեր. 216):

Ը՚. — Ա՞ըմ օրինակ է հակայն Գողիաթ որ ելիճակատի այլազգեաց:

Պ.—Օ,օրաւարի սանդարամետականացն դասուց. որ ի մարտ պատերազմի յարուցեալ ընդդէմ բնութեանս, զմանս հեղձոյց, և ոմանք ապրեցան, ըստ այնմ. ,, Եւ զարմացաւ ամենայն երկիր ընդ գազանն. զի ետ նմա վէշապն զթագաւորութիւն իւր. և երկիրպագին վէշապին՝ որ ետ զիշխանութիւնն գազանին, և ասէին. ո՞վ իցէ նման գազանիս, կամ ո՞վ կարիցէ պատերազմիլ ընդ դմա ,, : (Յայտ. ԺԳ՚. 4):

,,Եւ զոր ասես՝ այս է ահագին և յանդուգն պատերազմող է բնութեանս մերում •բանսարկուն. և սովորեցաւ գազանի նետաձիգ լինել ի մարդիկ, և ընդ խաւար խոցոտել զայնոսիկ՝ որք ուղիղ են սրտիւք ,, : (Սարգ. Ը՚նորհ. ի Ա՚ԵԿն. Ը՚. Պետ. ճառ. երկոտասաներորդ. է. 8):

Ը՚.—Օ,ի՞նչ է ասէն. թէ՝ Ը՚հաւասիկ ես նախատեցի զճամբան Իսրայելի յաւուր յայսմիկ, տո՛ւք զայր մի, և ես և նա մենամարտիցուք:

Պ.—Ի՝ անվիտ խրոխտումն չարին. որ խնդրէր գտանել ի մէջ բնութեանս զայր հզօրագոյն, և նախատէր զնահապետս և զմարգարէս՝ էդիտելով, թէ Որդին Ըստուծոյ տիպն և արմատ Դաւթի եկեսցէ գաղտաբար և յաղթեսցէ նմա՝ ըստ գրեցեալսն. ,, Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր ի նմա՝ ունէր աղեղն, և տուաւ նմա պսակ, և եկն յաղթողն. զի յաղթեսցէ ,, : (Յայտ. Ը՚. 2):

,,Օ,յաղթողն ի մարտ պատերազմի՝ դիմեալ կամաւ ի մահ խաչին. գովեցէք որ էառ աւար բաշխեաց որդւոց մարդկան բարձրացեալ վողով ,, : (Ի Ը՚արականի):

ՀԱՅԿԱԶՅԱՆ

«Օրհնեցուք զՏէր և զյաղթող զօրութիւն նորա վասն ողբ երգեցուք նմա»։ (Նոյն անդ)։

«Օ՜յաղթող քո Քրիստոս՝ զովմամբ զզօրութիւնդ. քանզի վանեցեր զընդդիմամարտ թշնամին. և զարձուցեր զգերութիւն»։ (Նոյն անդ։ Վարդան. ի Մեկն. Սաղմ. ՃԿ. 21)։

Ճ.—Օ՞րինչ է Թողուլն Դաւթի զչխարսն ի տուարածս կանս. և իջանելն ի դաշտ պատերազմի։

Պ.—Յուցանէ զԹողուլ Լանին Ասուածոյ զանմոլար հօտ իւր զգաստ հրեշտակաց ի լերինն յերկինս, և գալն յաշխարհ ի գիւտ մոլորեալ ոչխարի բնութեանս. ըստ այնմ. «Օ՜խթդ Թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, և մոլորիցի մի ի նոցանէ. ոչ Թողուցու զիննսունն և զվեցն ոչխարն ի լերինս. և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն»։ Մատ. Ի. Ը. 12։ Ղ.ուկ. Ի. 4. Ի. Ժ. 10)։

«Երկնաւոր հօտ ընարեալ, զոր հովիւն քաջ Թողեալ յերկինս, և եկեալ ի խնդիր մեզ մոլորելոցս, որով լցեալ զԹիւ հարիւրոցդ, արար ուրախութիւն ի յերկինս երկնաւորացդ»։ (Ի Շարականի)։

«Յորժամ եկն (ասէ)՝ ի խնդիր մոլորելոցդ հովիւն քաջ. և գտեալ՝ ի վերայ ուսոյն եբարձ, յայնժամ գարձայք. զի ո՛չ եթէ նոքա ի խնդիր եղեն՝ և գտին զնա, և դարձան առ նա. այլ՝ նա եկն ի խնդիր մոլորելոցս, Թողեալ զիննսուն և զվեցն ոչխարսն յանապատին՝ ըստ իւրում առակաւոր ձայնին»։ (Սարգիս Շնորհ. ի Մեկն. Ը. պետ. ձառ. վեցերորդ Ք. 25)։

Ճ.—Օ՞րինչ է խոստանալն Սաւուղայ տալ զդուստր իւր Դաւթի ի կնութիւն։

Պ.—Ե՛ այն, զի բնութիւնս նախ ուխտեաց ընդ Ասուածոյ գալ ազատել զմեզ յանմարմինն Գողեաթէ. և խոստացաւ հրաժարիլ ի մեղայ և մատանել ընդ դրօշակաւ կենսատու

ստուրբ խաչին աներկիւղիւ հաւատով. ըստ ասից սրբազան առաքելոյն. «Նախանձեցուցանեմ զձեզ ի նախանձն Ասուածոյ. զի խօսեցայ զձեզ առն միում. իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի»։ (Բ. Կորնթ. ԺԱ. 2)։

«Նա՛ և առաւել բիւրապատիկ քան զնոցայն. զի նոքա նախ չարչարանաւքն արդարացան՝ և ապա փրկեցան. իսկ որք ոչ արդարացան՝ կորեան. այլ զձեզ ի միջոյ մեղացն առեալ՝ և ի կռապաշտութեանցն և ի պէսպէս անօրէնութեանցն, ձրի շնորհօք կեցոյց. մկրտութեամբն լուաց ի մեղաց, սրբեաց և արդարացոյց՝ և Ասուածոյ մերձաւոր կացոյց»։ (Սարգ. Շնոր. ի Մեկն. Ը. պետ. ձառ. ութերորդ. ք. 21)։

Ճ.—Օ՞րինչ է հանելն Դաւթի յանձնէն զզրահն Սաւուղայ։

Պ.—Օ՞րահքն են անուամբ պաճուճանք աշխարհասէր մարդկան, զորս մերժեաց Յիսուս՝ ասելով. «Ոչ զփառս ի մարդկանէ ոչ առնում»։ այլ խնդրեմ զփառս այնորիկ, որ առաքեացն պիս»։ (Յովհ. Ե. 41. 30)։

«Որով չկարէք դուք ազատել եթէ ո՛չ միայն արեամբ իմով, ըստ այնմ. «Գխոստովիք, զի ո՛չ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն. այլ պատուական արեամբն Քրիստոսի. իբրև անբիծ և անարատ գառինն»։ (Ը. պետ. Ը. 18)։

«Ոչ ո՛չ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցաք. այլ՝ չարչարանօքն Քրիստոսի. որ ջրովն՝ հոսեցելովն յաստուածային կողէն՝ լուաց զմեզ աւազանաւն ի մեղաց, հաղորդս արար մարմնոյ և արեան իւրոյ»։ (Սարգ. Շնորհ. Ը. պետ. ձառ երրորդ. ա. 18)։

,, Աստուծոյ զգենուլ՝ զոր ո՛չ ուներ զօրութիւն ո՛չ ասի, զի նա միշտ է զօրաւոր. այլ յայտ է թէ՝ ի մարմնաւորու-թիւնն ասի ի վերայ նորա. որ զգեցաւ զօրութիւն, և ած ընդ մէջ իւր, զոր զօրութիւն. թերևս հրացանութիւն, կամ սաստ, կամ պատուհաս, որով զօրացաւն, ո՛չ բնաւ. այլ զի՞նչ. զսկարութիւնն և զչարչարանս ած ընդ մէջ իւր, և այնու սպառազինեալ մարտեաւ ընդ թշնամին մարդկան և յաղ-թեաց նմա: Ո՞ոք լուաւ. ո՞ոք կասս զէն արքայի որպէս զմերումս տեառնս և թագաւորի զօրաւոր, որ ի մարտ դի-մեալ ինքն անէծք եղև, և զանէծսն կոյծ. ինքն չարչարե-ցաւ, և զչարչարանսն խափանեաց. ինքն դատեցաւ, և զթշնա-մին դատապարտեաց. ինքն արտաքոյ դրանն մեռաւ, և զիշխան աշխարհիս ի յաշխարհէ ընկեցեալ արտաքս. այս է զօրու-թիւն, զոր կասս վայելչապէս ընդ մէջ ածեալ մարգարէս ,, : (Ընդ. Լամբ. ի Մահն. Պատ. յերես. 18):

Հ.—Ովքինչ են ցուպն, պարան, մախաղն, և հինգ քա-րինքն, որովք սպան Դաւիթ զհսկայն անձառնի:

Պ.—Ցուպն՝ և պարան նշանակին զսուրբ խաչն. մախաղն՝ զմարմինն. և քարինքն՝ զհինգ զդայարանսն. որովք կռ Տէրն ի վերայ քառաթև սուրբ խաչին, և ետ մխիթարութիւն մե-լորելոցս ի խաւարի արտմութեան, ըստ այնմ. ,, Ցուպ քո և գաւազան նորա մխիթարեսցին զիս. պատրաստ արարեր առա-ջի իմ զսեղան ակն յանդիման նեղչաց իմոց ,, : Սաղմ. ԻՓ. 4):

,, Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ի Սիովն, և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց ,, : (Նոյն անդ. ՃՀ. 2):

,, Որ զչարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քոյ Քրիստոս Աստուած, գաւազան զօրութեան ետուր մեզ ,, : (Ի Շարականի):

,, Ընդ յօր պատուական խաչիւ քո ապրեցուցեր զժողովուրդս քո, որ ես գաւազան զօրութեան և փայտ կենաց ,, : (Նոյն անդ):

,, Լոկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կե-նաց մարդկան և յոյս հաստատութեան ,, : (Նոյն անդ):

,, Գաւազան զօրութեան զխաչ քո՝ ետուր մեզ Քրիստոս, և սուաբ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն ,, : (Նոյն անդ):

Հ.—Ովքինչ ցուցանէ խարտեաշ և գեղեցիկ լինելն Դա-թի:

Պ.—Խարտեաշն ցուցանէ զդոյն մարմնոյ Տեառն մերոյ և զարդարութիւն նորա. զի էր խարտեաշ մարմնովն, և գեղեցիկ և ահաւոր աչօքն իբրև զբոց հրոյ. ըստ այնմ. ,, Գու ահաւոր ես. և ով կարէ կալ առաջի քո. որպէս երևեցար դու յերկ-նից, յայտնի եղև բարկութիւն քո ,, : (Սաղմ. Հե. 8):

,, Եւ թէ՝ գլուխ նորա և հերքն իբրև զասր սպիտակ, և որ-պէս զձիւն. և աչքն նորա որպէս զբոց հրոյ ,, : (Յայտ. Ա. 14):

,, Սուրբ, սուրբ, սուրբ ես ձշմարտապէս և ամենասուրբ ,, : (Ի Խորհրդատետր.):

,, Աստուած ի վերէ քան զսրբութիւն . . . սուրբ՝ է Աստ-ուած, ո՛չ որպէս մեզ է հասանելի. այլ որպէս ինքեան վայե-լուչ է դիտելի ,, : (Խոսրով. ի Մահն. Ժամակարգ. յերես. 17):

,, Այսու զմարմին և զարիւն մարդկութեանն՝ զոր ա՛ռ ի սուրբ կուսէն, ասէ սպիտակ և կարմիր. վասն զի մարմնով և արեամբ գոյացեալ է ի կուսէն. բայց թէպէտ և այսպէս, այլ ո՛չ ի սերմանէ առն յղութիւն ունելով Աստուածածինն, և ո՛չ ապականութեամբ ծնունդ, այլ ի հոգւոյն սրբոյ յղու-թիւն. և ի կուսէն ծնունդ, կոյս և յետ ծննդեանն մնալով նոյն կուսին, զրամբք փակելով եղեալ. անհամեմատ յայլոց

ծննդեանց. վասն այնորիկ ասէ. թէ ընդունել ի բիւրուց. զի ո՛չ երկուքնք ի ծննդեանն, և ո՛չ ցաւք, և ո՛չ տրտմութիւնք. այլ որպէս հրեշտակն զուարթութիւն և զերկրկրութիւն աւետարանեաց կուսին, նոյնպէս և եղև ուրախութեամբ լի ծնունդն,,: (Դրի. Նար. ի Մեկն. Երզոց. Ե. 10):

,,Ընդիճն ասել, և անարատ՝ ոչ յատուկ վասն աստուածծութեանն ասէ, (քան զոր ոչ ինչ է սրբագոյն, և մաքրագոյն), այլ սակս մարդկութեանն,,: (Սարգ. Շնորհ. ի Մեկն. Ը. Պետ. Ճառ. երրորդ. ա. 19):

,,Ո՛չ ի միոյ կողմանէն սուրբ է, և ի միւսմէն ոչ այնպիսի, այլ ամենևին սուրբ, ամենևին յատակ, բոլորովին ազատ: Ընդնութեամբ և էութեամբ ունի զսրբութիւնն, ոչ ևկամուտ, և ոչ ատացական: Եւ ամենեցուն սրբութիւն ի նմանէ է՝ մարդկան և հրեշտակաց,,: (Նոյն անդ):

,,Այլ սուրբ մինդ, մաքուր՝ միայնակդ, անախտ մարմնով՝ մինդ միայն ի մարմնաւորացս, պարծանք մեր յերկինս երկնից դա վերացաւ միայն, զոր բարձրեալ կրես ի ձեռին, առ որ կաթսեալքս նայեցեալ ցնծացաք, յոր հայեցուածովքս միայն սրբեցաք. ընդ որ ի պշնուլս երբէք չապեհնամք: Միայն սուրբ դա է մարմնով. միայն դոյն մեզ աներկ՝ Յիսուս Քրիստոս աստուածդ մեր և փրկիչ, որ ի փառս Աստուծոյ Հօր միշտ հանգուցեալ՝ և յաւիտեանս,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ. յերես 153):

Հ.—Օ՛ինչ ցուցանէ մի քարն. որ եմուտ ընդ ձակատ այլազգեացն և սպան զնոսա:

Պ.—Քարն նշանակէ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս. որ բանական հոգւովն և անբաժանելի աստուածծութեամբն եմուտ ի դժոխս, և աւերեալ կործանեաց զզօրութիւնս սատանայի և մահու, և երթալ զնախատինս մեր՝ առաջնորդելով ազգն

մարդկան յերկինս. ըստ այնմ. ,,Ջօրացաւ մահ և եկուսլ. և դարձեալ եհատ Աստուած զամենայն արտօսր յամենայն երեսաց, և զնախատինս ժողովրդեանն եբարձ յամենայն երկրէ. զի բերան Տեառն խօսեցաւ, և զտապան հովանեաւ ամպոյ, և զբազուկս հզօրացս խոնարհեցուսցէ,,: (Եսայ. ԻԵ. 8: Յայտ. ԻԸ. 4. Յ. 27: Ե. Կորնթ. ժ. 4):

,,Եւ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի Յաստուծոյ ընտրեալ և պատուական է . . . Պանդղ կայ իսկ ի գրի, թէ ահաւասիկ դնեմ ի Սիովն վէմ ընտիր՝ դլուխ անկեան պատուական, և որ ի նա հաւատացեցէ՝ ոչ ամաչեսցէ,,: (Ե. Պետ. Բ. 4. 6):

,,Եւ եկ աղաւնի իմ ընդ հովանեաւ վիմիդ, մերձ ի պատուար պարսպիդ,,: (Երզոց. Բ. 14):

,,Ընդ հովանեաւ վիմիդ, վէմ՝ զՔրիստոս կոչէ, զի առաքեալ ասէ, թէ վէմն էր հնձն Քրիստոս: Եւ պարիսպք ըզպատուիրանն ասէ. որպէս կայի պիրս,,: (Դրի. Նար. ի Մեկն. Երզոց. Բ. 14).

,,Եւ վէմ խամանակ զՏէրն՝ ըստ բարբառոյ մարգարէիցն, որպէս լոյս, և ճշմարտութիւն, և անապականութիւն, և արդարութիւն. ի ձեռն որոյ ճանապարհն հոգևոր՝ սալայատակ յարդարի. յորմէ որ ոչ խոտորի յերկուս կողմանս, մաքուր պահէ զհետն՝ որ մատուցանէ առ նորայն մերձաւորութիւն, ոչ իւիք ազմով հնշտութեանց շաղախեալ,,: (Սարգ. Շնոր. ի Մեկն. Ը. Պետ. Ճառ. չորրորդ. ե. 3):

,,Յաղագս որոյ ամենայն խորհուրդք անճառք և ամենայն բանք աստուածայինք՝ մատակարարեալք լինէին. եթէ Բանն Աստուծոյ՝ մարդ լինելոց է և վէմ անուանելոց. և ի հիմունս Սիովնի դնելոց, ... իսկ նա առեալ՝ կարծրացոյց և կենդանացոյց միանալովն ի նմին. և վէմ հիման և քար գլուխ անկեան

ի հիմն այսր շինուածոյ եղաւ. որպէս զի ամենայն մարդկութիւնս յամենայն յազգաց և լեզուաց հաւատովք և առաքինութեամբք ի վերայ նորա շինեալք, անսասանելի կացցեն մնասցեն ի կործանմանէ հեղհղացն՝ կամ ի շնչմանէ հողմոյն, ի նմա հաստատեալք,,: (Նոյն անդ. է. 6):

Հ.—*Ո՞վ ինչ ցուցանէ առնուլն Դաւթի զսուր Գողիաթու, և նովին հատանելն զլուխ նորա:*

Պ.—*Այն, զի սատանայ կուրացոյց զմիտս մարդկան պաշտել զտարերս, զքարինս և զփայտս փոխանակ Աստուծոյ՝ յորգալաստ ճշմարիտ որդւոյն Դաւթի. որոյ եկեալ բարձրացաւ ի փայտ մահու, և նովին արար զմարդիկ երկրպագուս հնձեան, և մերկաց զիշխանութիւնս և զպետութիւնս, ըստ այնմ.* ,,*Ջնջեաց զձեռագիրն մերոյ հակառակութեանն հրամանօք իւրովք: Որ կայր մեզ հակառակ՝ երբաձ զայն ի միջոյ՝ և բեւեռեաց ընդ խաչափայտին: Մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւրում ի յարութեան իւրում*,,: (Կողոս. Ե. 14. 15: Եփես. Ե. 2. 14):

,,*Առաքեցեր (զՄիածին Որդիդ) ի մահ վասն մերոց մերոյ, զի առցէ զմեզս մեր ի յանձն իւր, . . . և ընդ նմին տարցի ընդ պատուհասն յանցանաց մերոց յանձն իւր չարչարանօք խաչին*,,: (Գրի. Լուսա. ՀԱզաթ.):

,,*Յառ Աստուածորդին մարմին ի կուսէն. . . նովին մարմնով պարտաւորեաց զմեզս*,,: (Նոյն անդ):

,,*Քանզի աստուածական դատաստանաւն իրրև գտաւկնաքաւ մարմինս մեր ունէր զդատապարտութիւն (Որդին Աստուծոյ) խաչին և մահուան. զպատմելինն՝ զոր ունէր տուեալ մարմնի, ի դատաստանէ, զմեզն գտատապարտութիւն. ի բաց բարձեալ ի մեզ մարմնին՝ դատապարտեալ՝ ամենայն*

մարմնոյ աղատութիւն շնորհեցէք,,: (Նոսրով. ի Մեկն. ժամագր. յերես 299):

,,*Որ և զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պղծոյն ճաշակման նշանաւ ամենայաղթ խաչն քո ի ժամուս յայսմիկ ենթադրեալ ի կենդանութիւն փոխեցեր. և զանօրէնութիւնս մեր ի նմա բևեռեալ՝ կեանք անապական և նորոգութիւն կենաց յուսացելոց ի քեզ խոստացար*,,: (Ի ժամակարգ.):

,,*Տէր զօրութեանց՝ որ կամաւոր մահուամբ քով ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ի մեռելութենէ մեղաց մերոց. և բևեռեցեր զկնիք դատապարտութեան մերոյ ի խաչին. և շնորհեցեր ազատութիւն ազգի մարդկան ի ծառայութենէ սպանութեան յազատութիւն փառաց՝ հեղմամբ արեան քո սրբոյ*,,: (Նոյն անդ):

,,*Սա է մարմնացեալ Բանն Աստուած, որ ի խաչին զմեզս սպան*,,: (Ի Շար.):

,,*Սուրբ խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք*,,: (Նոյն անդ):

,,*Սա է զէն յաղթութեան սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ*,,: (Նոյն անդ):

,,*Ոյք այլ ի վերայ իմ թշնամիք յարուցեալք, եթէ ոչ անզղջ մահանօք պատերազմակից քն. ի նոսա եաս ակն իմ: զի՞նչ, զի խաչիւն կործանեցան. կենարարին կրիւք յիշխանութենէն և ի պետութենէն մերկեցան, կոխան ի ներքոյ ոտից մարդկան տուան. անդործ եղև խայթոց չարացն՝ օր ըստ օրէ թողութեամբ՝ զոր ընդունիք*,,: (Ներ. Լամբ. ի Մեկն. պատ.):

,,*Սոսկալիդ սերովբէից և ահաւորդ քերովբէից. խոնարհեցար ի չարչարանս, չարչարելի բնութեամբ մարդկան ի խաչին մեղս սպաներ, և զդատաւկնիք մահու լուծեր*,,: (Ի Շարականի):

ՑՈՒՑԿ

ԳԼԽՈՑ ՄԱՏԵՆԻՄ

		Եր֊ես֊ներ֊ես֊
ՅԱՌՈՒՋԱԲԱՆ·		
Գլ· Ա·	Յաղագս Երրեակ անձնաւորութեան ամենասուրբ Երրորդութեան	1
Գլ· Բ·	Արարչագործութիւն աշխարհի·	9
Գլ· Գ·	Յաղագս կազմութեան մարդոյն, և զրախտին զոր տնկեաց Աստուած յԵդեմ ընդ արեւելս, և եդ անդ զմարդն	26
Գլ· Դ·	Ծնունդ Կայենի և Հաբելի	63
Գլ· Ե·	Զրհեղեղ և կազմութիւն Նոյեան տապանին	82
Գլ· Զ·	Աբրահամ Հայր հաւատոյ և զննումն Իսահակայ·	139
Գլ· Է·	Ծնունդ Յակոբայ և Յեսուայ	177
Գլ· Ը·	Յովսէփ գեղեցիկ	208
Գլ· Թ·	Նախամարգարէն Մովսէս փրկէ զԻսրայէլ ի բռնութենէ Եգիպտացւոց	215
Գլ· Ժ·	Ելք որդւոցն Իսրայելի յԵգիպտոսէ·	247
Գլ· ԺԱ·	Յեսու որդի Նաւեայ, առաջնորդ որդւոցն Իսրայելի յերկիրն Աւետեաց	304
Գլ· ԺԲ·	Դաւիթ արքայ Իսրայելի	321

